

Կարելա-Ֆիննական գրականություն, Էպոս, Ժողովրդական բանահյուսություն

Արձակ պատմեց Հմայակ Սիրասը

13+

## Կալեվալա

### Ռունա Ա

Վեյնեմեյնենի ծնունդը

Իմ թանկագին եղբայր, մանկությանս ոսկե բարեկամ, արի միասին երգենք, ասենք մեր խոսքը սերունդներին:

Դե, տուր ձեռքդ եղբայր, թող մեր բարեկամները լսեն մեր երգերը, թող երիտասարդները սովորեն ու գալիք սերունդներին հաղորդեն հայրենի նվագները, որ մենք հավաքել ենք ժողովրդի ընդերքից:

Երգենք ու հիշենք Վեյնեմեյնենին, Իլմարինենին, Կաուկոմեյլին և Իռուկախայնենին. երգենք երգերն այն, որ մեր նախնիները երգեցին Կալեվալայի Հյուսիսային տափաստաններում:

Այս տողերը երգում էր հայրս, երբ կացինն էր սրում, սովորեցնում էր ինձ մայրս, երբ երգելով թեշիկն էր մանում:

Ես այն ժամանակ դեռ շատ փոքր էի և միայն կաթով էի սնվում, բայց լսում էի երգեր Սամպոյի հրաշագործությունների և նենգ Լոուխիի դավադրությունների մասին: Եվ Սամպոն երգերում հավերժացավ, և կործանվեց դավադիր Լոուխին:

Այդ երգերը ես քաղեցի մեր աշխարհի մշտադալար թփերից, պոկեցի մեր ծառերի դալար ճյուղերից և մեր բուրավետ արոտներից: Երբ հովիվ էի և քայլում էի հայրենի ճամփաներով՝ հավաքեցի այս երգերն այն մարգագետիններում, ուր մեղուն ծաղիկներից մեղր էր քաղում:

Շատ ցուրտ ու սառնամանիքներ եկան ու անցան մեր երկրով, շատ հողմեր ու փոթորիկներ անցան մեր աշխարհով, շատ ծփծփացին ծովի ալիքները, բայց երգերն այս չխամրեցին, և ահա՛, եկավ ժամանակը, որ ես ոսկյա արկղը բացեմ և երգերի կծիկը քանդեմ:

Թե որ ինձ գարեջուր մատուցեք, հետն էլ տարեկանի հաց՝ իմ երգերը կինչեն դուրեկան, բայց եթե գարեջուր չլինի, մի թաս աղբյուրի ջուր դնեք իմ առաջ, միևնույն է, ես կերգեմ: Կերգեմ, որ երեկոն ուրախ անցնի, և նույնպիսի ուրախությամբ սկսվի մեր վաղվա օրը:

Ես շատ երգեր լսեցի հավատարիմ Վեյնենեյնենի՝ Կալեվի իմաստուն երգչի մասին, որին աշխարհ բերեց այն չքնաղ կույս Իվնաթարը:

\* \* \*

Օղեղեն բարձունքի դուստր Իվնաթարը շատ ժամանակ կույս մնաց, շատ դարեր ապրեց մեր ընդարձակ հարթությունների վրա շնկշնկացող օդի ոլորտներում:

Եվ Իվնաթարը ձանձրացավ. այլևս չէր կարող միայնակ ապրել օդի անսահման տարածություններում: Եվ ահա՝ կույսն իջավ ծովափ, թեքվեց ալիքների վրա: Փչեց կատաղի քամին, ծովը փոթորկվեց, փրփրադեզ ալիքները վեր-վեր բարձրացան:

Իվնաթարն ընկավ ծովի ալիքների մեջ: Ուժեղ քամուց ու ծովի հորձանքից նա հղիացավ:

Լրիվ յոթ հարյուր տարի նա հղի մնաց: Մարդկային ինը սերնդի կյանք նա տառապեց, սակայն պտուղը լույս աշխարհ չէր գալիս:

Ալիքներն Իվնաթարին մեկ դեպի արևելք էին տանում, մեկ դեպի արևմուտք, մեկ դեպի հարավ, մեկ էլ դեպի հյուսիս: Տառապում էր կինն իր որովայնի ծանրությունից, բայց ծննդաբերության օրը չէր հասնում:

Կույսը շատ հուզվեց. սկսեց լալ ու գանգատվել:

«Ճակատագիր, ինչո՞ւ ես տանջում ինձ, թշվառիս. օդային տարածություններից ընկա ջուրը և ալիքներն ինձ քշում են ծովի անհուն հարթությունների վրա: Երանի թե օդի դուստր մնայի և այսպես չտառապեի: Յուրտն ու խոնավությունն են այստեղ այժմ իմ միակ բաժինը: Ո՛հ, դու Ուկկո, բարձրյալդ Աստված, դու որ երկնքի տերն ես, իջի՛ր ծովի ալիքների վրա, շտապ օգնության հասիր, ազատիր ինձ այս տանջալի ցավերից, շտապի՛ր, աղերսում եմ»:

Քիչ անց, ահա, ծովի վրա սկսեց սավառնել մի գեղեցիկ բաղ. նա թևերն է թափահարում և բույն է փնտրում: Թռչում է արևմուտքից արևելք, հարավից հյուսիս և չի գտնում մի փոքրիկ ցամաք տեղ, որտեղ իր համար տուն ու բույն սարքի: Ու թռչունն ասաց.

«Թե քամու վրա բույն դնեմ, թե ալիքների արանքում տուն սարքեմ, իմ բույնը կցրեն քամիները, իմ տունը շուռ կտան ալիքները»:

Իվնաթարը լսեց այս խոսքեր. և ստեղծիչ ոգու դուստրն ուները դուրս հանեց ջրից, ապա ալիքների միջից դուրս հանեց ծունկը, որպեսզի թռչունն այնտեղ բուն դնի:

Միրունիկ բաղը թռավ մոտ եկավ. կապույտ ջրերի մեջ տեսավ ծովամայր Իվնաթարի ծունկը, և կարծեց, թե դա իր ուզած կանաչ ճիմն է:

Բաղը մեկ էլ պտույտ կատարեց Իվնաթարի գլխավերևում և եկավ նստեց նրա ծնկան վրա, ինչպես իր բույնի վրա և ածեց վեց ձու, ապա ածեց յոթերորդը, այն էլ երկաթե ձու:

Եվ բաղը թուխս նստեց ձվերի վրա: Անցավ երկու օր. Իվնաթարը ձվերն ու թխսկանը պահում էր ծնկան վրա, բայց երրորդ օրն արդեն չդիմացավ. ծնկան մաշկն այնպես տաքացավ, կարծես այրվում էր բոցերի մեջ. ծովամայրն ուժեղ ցնցվեց. ձվերը ծնկան վրայից ջուրը թափվեցին, ջարդվեցին:

Բայց ջարդված ձվերն ալիքների ու տիղմերի մեջ չկորան, նրանք հրաշալի ձևեր ստացան:

Ձվի ներքևի մասից ստեղծվեց մայր-Երկիրը:

Ձվի վերևի մասից ստեղծվեց բարձր երկնակամարը:

Ձվի դեղնուցից հուրհրան արևն ստեղծվեց:

Եվ մյուս կտորներից ստեղծվեցին աստղեր ու ամպեր:

Եվ տարին անցնում է տարվա ետևից. արևն է փայլում երկնքում, լուսինն է շրջան անում խավար գիշերում: Ջրերի մայրը դեռ օրորվում է ալիքների վրա:

Նորից անցնում է տաս տարի և ահա Իվնաթարը գլուխը հանում է ջրից և սկսում է իր արարչագործությունը:

Ձեռքը երկարում է թե չէ՝ հրվանդաններ են ստեղծվում ծովափին: Որտեղ սեղմում է ոտքը՝ ձկների համար փոսեր են առաջանում: Իսկ երբ կանգնում է ծովի հատակին, անդունդներ էին գոյանում:

Այսպես էլ ծովի ալեբախության պահերին հասնելով ցամաք՝ ժայռեր ստեղծեց. բարձունքներ և հովիտներ առաջացան հարթ տարածությունների վրա, բայց միայն Վեյնեմեյնենը դեռ չէր ծնվում:

Եվ հավատարիմ Վեյնեմեյնենը դարձյալ երեսուն տարի ապրեց մոր արգանդում, բայց արդեն շատ էր նեղվում. կարոտում էր հուրհրան արևին, կարոտում էր պայծառ լուսնին:

Եվ նա այսպիսի խնդիրք արավ.

«Ով դուք արև, լուսին և աստղեր, շուտ, ազատեցեք ինձ այս նեղ բնակարանից: Ուզում եմ տեսնել արևն ու լուսինը, ուզում եմ Մեծ Արջ աստղից իմաստություն սովորել»:

Վերջապես Իվնաթարն ազատվեց իր երկունքի ցավերից: Ծնվեց Վեյնեմեյնենը և ընկավ ալիքների մեջ, հանձնվեց ծովի խնամքին:

Ապրեց ծովի մեջ Վեյնեմեյնենը հինգ տարի, վեց տարի էլ տատանվեց ծովի ալիքների վրա:

Անցավ դարձյալ յոթ և ութ տարի. նա լողաց ծովի անհուն տարածություններում և վերջապես մեկ օր էլ հասավ ցամաք: Անձանոթ վայր էր այդ ցամաքը և բոլորովին անտառ չէր երևում այնտեղ:

Ձեռքերի վրա հենվեց, ոտքի կանգնեց Վեյնեմեյնենը, որ տեսնի արևն ու լուսինը, որ իմաստություն սովորի Մեծ Արջից:

Ահա այսպես ծնվեց հզոր երգասաց Վեյնեմեյնենը, ստեղծիչ ոգու դասեր՝ Իվնաթարի որդին:

## **Ռ-ունա Բ**

Վեյնեմեյնենը շենացնում է հայրենի աշխարհը

Ահա՛, Վեյնեմեյնենը սկսեց քայլել ծովափով, ապա անցավ մի կղզի, բայց հարթ տարածության վրա ոչ խոտ էր բուսնում, ոչ ծառ. ամեն կողմ չոր է ու ցամաք: Տարիներ շարունակ նա ապրեց այդ անմարդաբնակ կղզում և գիշեր-ցերեկ մտածում էր, ո՞նց անել, որ ամեն տեղ բուսականություն լինի, հողն ամուլ չմնա:

Այս մտքերի մեջ էր մեծ երգիչը, երբ նրա դեմ ելավ մի պատանի, ուսից մի պարկ գցած:

Վեյնեմեյնենը հարցրեց.

«Ո՞վ ես դու»:

Այսպես պատասխանեց աշխույժ պատանին.

«Ես Սամպսա Պելլերվոյնենն եմ. եկել եմ քեզ օգնեմ, որ աշխարհը շենանա»:

Եվ Վեյնեմեյնենի բարի խորհուրդով դաշտերի գավակ Պելլերվոյնենը գործի անցավ:

Իր պարկից հանեց սերմերը և շաղ տվեց աշխարհով մեկ: Բոլոր բլուրները, ճահիճները, հարթությունները, լեռները, ամբողջ երկիրը կանաչազարդեց պատանին: Աճեցին և բոյ քաշեցին բարձրաբերձ բարդիներ և սոսիներ, կեչիներ և եղևնիներ: Ամեն թումբից ծաղիկների բուրմունք էր տարածվում օդում, ամեն պուրակից էլ պտուղներով լի ծառերի շրշունն էր լսվում: Հայրենի աշխարհը նոր կյանք առավ:

Նայեց ծերունի Վեյնեմեյնենը ու տեսավ, որ պատանին լավ է աշխատել, ամեն տեսակ ծաղկունք և ծառ աճեցրել է, բայց միայն հաստարմատ կաղնին չէր

անում: Սկսեց մի քանի օր ու գիշեր, բայց աստվածային ծառը՝ կաղնին չէր անում:

Մի օր էլ տեսավ, որ ծովից չորս աղջիկ դուրս եկան, ապա նաև հինգերորդը: Նրանք սկսեցին քաղ անել. քաղում էին ցողաթաթախ խոտը, քաղում էին և կիտում իրար վրա:

Ահա ծովից դուրս եկավ Տուրասա դյուցազնը: Նա կրակ տվեց և աղջիկների կիտած խոտը բոցավառվեց. ծուխն ամպ դարձավ և քիչ անց խոտից մնաց մոխիրների կույտ:

Այդ մոխիրների կույտի մեջ դյուցազնը մի տերև դրեց և տերևի կողքին էլ կաղնի:

Կաղնու բունն սկսեց աճել, բերրի հողի ծոցում խոր արմատներ գցեց և, բոյ քաշելով, հսկա ու փարթամ ճյուղեր արձակեց:

Փարթամ, կանաչ ճյուղերը հասան մինչև երկինք. արդեն խանգարում էին ամպերի ընթացքը, մարդկանցից ծածկում էին արևը, չէր երևում պայծառ լուսինը:

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնենը մտածեց. ո՞վ է այն ուժեղ մարդը, որ կարողանա տապալել այս կաղնին. չէ՞ որ եթե արևը չփայլատակի վերևում, լուսինը շողեր չարձակի, մարդկանց կյանքը տխուր կլինի, ձկներն էլ կդժվարանան լողալ ջրերում:

Այդպիսի ուժեղ դյուցազն չգտնվեց, որ կարողանար բարձրաբերձ բազմանյուղ կաղնին տապալել:

Այն ժամանակ ծերուկ Վեյնեմեյնեն այսպիսի խնդիրք արավ:

«Ստեղծիչ ոգու դուստր, մայր իմ հարազատ, ջրերի խորքից ինձ գորություն առաքիր. ահեղ է ջրի ուժը. առաքիր այնպիսի գորություն, որ կարողանա տապալել այս հսկա չար կաղնին, որ նորից արևն հուրհրա, նորից փալփլի լուսինը»:

Եվ ահա ծովի ալիքներից դուրս եկավ մի դյուցազն. ոչ աժդահաների չափ էր, ոչ էլ շատ փոքր: Մի թզուկ. պղնձե գլխարկ ուներ նա, ոտնամանները, ձեռնոցներն ու քամարն էլ նույնպես պղնձից էին: Քամարից մի մատնաչափ կացին էր կախված և մի եղունգի չափ էլ սուր:

Հավատարիմ Վեյնեմեյնենը մտածեց. տեսքով սա դյուցազնի է նման, բայց բոյը՝ թզուկի. մի հարցուփորձ անեմ, տեսնեմ ինչացո՞ւ է:

«Ո՞վ ես դու, ո՞ր դյուցազներից ես. ի՞նչ գորություն ունես»:

Ծովային թզուկ հերոսը պատասխանեց.

«Այո՛, իրոք, ես ծովի ալիքներից ելած հզոր դյուցազն եմ. եկել եմ, որ այս հսկա կաղնին տապալեմ»:

Վեյնեմեյնեն ասաց.

«Բայց ինչպես տեսնում եմ, դու ստեղծված չես այսպիսի դժվարին գործի համար. կկարողանա՞ս արդյոք հսկա կաղնին տապալել»:

Բայց դեռ այս խոսքերը չէր ավարտել, մեկ էլ տեսավ, որ թզուկն այլափոխվեց, դարձավ մի հսկա մարդ: Ոտքերն ամուր սեղմեց գետնին, գլուխն առավ ամպերին. մորուքն իջնում էր մինչև ծնկները, գլխի մազերը մինչև կրունկները:

Հսկան իր կացինն ու սուրն սկսեց հեսանի վրա սրել: Ապա երբ այդ գործն ավարտեց, սկսեց քայլել. առաջին քայլին ոտքը դրեց ծովափի փխրուն ավազին, երկրորդ քայլին հասավ սևահողին և երրորդ քայլին կանգնեց կաղնու արմատի մոտ:

Մրած կացնով նա զարկեց մեկ անգամ, երկրորդ անգամ, ապա երրորդ զարկին կայծեր ցայտեցին կացնից և արդեն ճաքճաք կաղնին տապալվեց գետին:

Կաղնու բունը նա դրեց արևելյան կողմը:

Սաղարթները նետեց դեպի հարավ:

Ճյուղերը սփռեց դեպի հյուսիս:

Նա, ով ճյուղն է վերցնում, հավերժորեն երջանիկ էր դառնում, ով սաղարթից էր մի թուփ տուն տանում, նա կախարդության շնորհք էր ձեռք բերում, ով մի տերև էր պոկում-տանում՝ սիրտը մխիթարվում էր:

Տաշեղներն ու չոփերն էլ ցիրուցան եղան. մի մասը ծովը թափվեց, մի մասն էլ գետերը: Ծովի ալիքները և գետի հոսանքները տաշեղները քշեցին տարան շատ ու շատ հեռուներ: Քամու թևերով էլ շատ չոփեր թռան հասան ուրիշ աշխարհներ:

Քամին Պոխյոլա էլ հասցրեց կաղնու տաշեղներից:

Այնտեղ ծովափին, մի հրվանդանի մոտ, Պոխյոլայի աղջիկը մի մեծ գլխաշոր էր լվանում. լվաց, նորից ողողեց ջրում, ապա փռեց քարին, որ չորանա:

Աղջիկը նկատեց տաշեղը, վերցրեց դրեց տոպրակի մեջ և տարավ հանձնեց կախարդին, որ նա դրանից կախարդական զենք սարքի:

Իսկ Կայեվում, երբ արդեն կաղնին տապալված էր, նորից արևն սկսեց փայլատակել երկնքում, և լուսինն էլ շող էր արձակում գիշերներին:

Փարթամորեմ անեցին անտառները, պուրակներում կանաչին տվին դալար տերևները. ճյուղերին սկսեցին ճախրել բազմաթիվ թռչուններ. կեռնեխները գեղգեղացին և կկուներն էլ կու-կու կանչեցին:

Պտուղներով բեռնվեցին ծառերը, ոսկեգույն ծաղիկներ անեցին ամեն տեղ, բանջարով և դալար կանաչով էլ ծածկվեցին դաշտ ու անտառ:

Բայց միայն գարի չէր բուսնում. հացն էր պակաս աշխատող մարդուն:

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնենը քայլում էր ծովափով և մտորում էր. այնտեղ գտավ գարու վեց հատիկ, վերցրեց դրեց պարկի մեջ և գնաց, որ հատիկները ցանի Կալեվալայի հողերում-Օսմոյի դաշտերում, ուր հոսում էր հորդառատ գետը:

Եվ ահա երաշտահավը կլկչաց.

«Օսմոյում գարին ծիլ չի արձակի, Կալեվայում վարսակ չի բուսնի. այնտեղ դաշտը մաքրված չէ, այնտեղ, ուր վար ու ցան պիտի անես, ծառերը չեն կտրված, չեն այրած, որ մոխիրը խառնվի հողին և հողը բերրի դառնա»:

Ծերուկ Վեյնեմեյնենը կացինը ձեռքն առավ և սկսեց անտառը կտրել. բոլոր ծառերը կտրեց, միայն կեչին թողեց, որ նրա տերևներին թռչուններն հանգստանան և կկուները կուկու կանչեն:

Վերևում սավառնում էր արծիվը. մոտեցավ կեչու կատարին և հարցում արավ.

«Ինչո՞ւ կեչի ծառին ձեռք չտվիր. նրա գերակազմ բունը ինչո՞ւ կանգուն պահեցիր»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Կեչին թողեցի, որ նրա ճյուղերին հանգստանան թռչունները, որ արծիվը երկնքից թռչի, նստի նրա կատարին»:

Երկնապաց արծիվն ասաց.

«Շատ գովելի է քո հոգատարությունը, թող թռչունները հանգստանան այնտեղ. ես ինքս էլ գամ և նստեմ կատարին»:

Եվ արծիվը կրակ բերեց. Վեյնեմեյնենը կտրած ծառերն այրեց, հողը փափկացրեց, մոխիրը խառնեց հողին: Ծերուկը պարկից հանեց գարու վեց հատիկները, ցանեց պարարտ հողի մեջ, ապա երգեց.

«Ահա ես ցանում եմ սերմերը, ցանում եմ ամենազոր աջովս: Մայր երկիր, դու ուժ տուր հողին, որ նա անեցնի սերմերը: Չարթիր հարազատ հող. այնտեղ, ուր ես քրտնաջան աշխատեցի, թող սերմերը ծիլ արձակեն, թող հազար ու հազար հասկեր հասունանան: Ով դու բարձրյալը Ուկկո, Հաստիչո երկնային, դու որ հրաման ես տալիս կայծակներին և ամպրոպներին, դու արևելքից և հյուսիսից, արևմուտքից և հարավից ամպեր հավաքիր, անձրև առաքիր, որպեսզի ցողունն ամրանա, որպեսզի հասկերն այստեղ անեն և շրշյուն արձակեն»:

Երկրային հայր Ուկկոն բարի խորհուրդ արավ և չորս կողմից ամպեր առաքեց: Առատ անձրև տեղաց, ոռոգեց արտերը, և փափուկ հողի վրա փարթամորեն աճեցին գարու հասկերը:

Վեյնեմեյնենը շատ ուրախացավ. չէ՞ որ գարու ամեն մեկ հասկը վեց անկյունանի էր՝ լիքը, տռուզ հաստիկներով: Վեր նայեց տեսավ կկուն թառել էր կեչու ծառին:

Ծերուկը երգով դիմեց թռչնին.

«Երգի՛ր, թռչնակս, երգի՛ր լուսարացին, երգի՛ր կեսօրին և գիշերին, երգի՛ր և ուրախացրու մարդկանց: Թող դաշտերը փարթամանան, թող անտառներն ավելի գեղեցիկ երևան, թող մեր ծովափնյա աշխարհը հարստանա, մի ծայրից մյուսը լցվի հացի առատ բերքով»:

## Ռունա Գ

Իռուկախայնենը գալիս է մրցելու Վեյնեմեյնենի հետ

Կաղնու թավուտների մեջ, իր հայրենի Կալեվալայում ապրում էր Վեյնեմեյնենը, ապրում ու երգում էր մեծ իմաստության երգերը:

Երգում էր ցերեկները, երգում էր գիշերները. երգում էր անցած օրերի մասին, հերոսների փառքի և սխրագործությունների մասին:

Նրա երգի համբավը տարածվեց աշխարհեաշխարհ:

Պոխյոլայում ապրում էր մի լղարիկ երիտասարդ՝ լապլանդացի Իռուկախայնենը: Մի օր նա հյուր գնաց ծանոթների մոտ և լսեց մի քանի բաներ, որ բոլորովին դուր չեկան նրան: Իբրև թե անտառաշատ Կալեվալայում ապրում է մի մարդ՝ Վեյնեմեյնեն անունով, որ շատ ավելի դուրեկան և իմաստուն երգեր է երգում, քան այն, ինչ երգում է ինքը, քան այն երգերը, որ հորինել է իր հայրը:

Շատ զայրացավ Իռուկախայնենը, նախանձի թույնով լցվեց սիրտը, որ բոլորը գովում են Վեյնեմեյնենին, նա գնաց ծնողների մոտ և հպարտ-հպարտ ասաց.

«Զէ՛ որ ես էլ երգիչ եմ. կերթամ կմրցեմ Վեյնեմեյնենի հետ»:

Մայրն աղաչանք է անում, թե մի՛ գնա, որդի, գլուխդ մի վտանգի. իսկ հայրը խրատում է.

«Մի գնա, որդիս. Կալեվալայի թավուտներում գլխիդ փորձանք կգա, քեզ կկախարդեն, և այլևս դու ոչ ձեռքերդ կկարողանաս շարժել, ոչ էլ ոտքերումդ ուժ կմնա»:

Իսկ ջահել Իռուկախայնենը պարծենում է.

«Հայր իմ, դու շատ բանիբուն մարդ ես, մայրս էլ շատ բան գիտի, բայց ես ավելի շատ բան գիտեմ: Թե որ միտքս դրել եմ մրցել, ես ամենալավ երգչին էլ կհաղթեմ, կախարդներին ինքս կկախարդեմ: Այնպես կերգեմ, որ ով եղել է առաջինը, նա իմ դիմաց կդառնա վերջինը: Ես նրան քարե շորեր կհագցնեմ, գլխին քարե թասակ կդնեմ, որ այլևս չհանդգնի իմ դեմ խոսել»:

Համառ տղեն ձի լծեց ոսկեգօծ սահնակին ու քշեց. ձիու ռունգերից կրակ էր ցայտում, սմբակները կայծեր էին արձակում: Եվ ահա հայրենի տունը մնաց հեռվում: Տղան ավելի արագ քշեց սահնակը. անցավ մեկ երկու օր և երրորդ օրվա վրա հասավ Կալեվալայի աշխարհը, կաղնիների թավուտ անտառը:

Ծերուկ, հավատարիմ Վեյնեմեյնենը հենց այդ պահին սահնակով անցնում էր անտառի միջով: Երիտասարդ տաքարյուն Իռուկախայնենը քշեց իր սահնակը Վեյնեմեյնենի վրա և սահնակների քաշաններն այնպես թափով դիպան իրար, լծասարքերն այնպես թափով զարկվեցին մեկը մյուսին, որ երկու երգիչներն էլ ձգեցին սանձերը և կանգ առան, տեսան որ սահնակների քաշաններից գոլորշի է բարձրանում. իսկ լծասարքերի աղեղներից ջուր է ծլծլում:

Վեյնեմեյնենը կշտամբեց տաքարյուն տղային.

«Դու ո՞ր աշխարհից, ո՞ւմ տոհմից ես, որ այդպես խելացնոր արշավում ես ուրիշի վրա. ինչո՞ւ ջարդեցիր իմ խամուրթը և դալար ճյուղերից սարքած լծասարքը. դու ինչո՞ւ ջարդեցիր իմ սահնակը»:

Տղան այսպիսի ամբարտավան պատասխան տվեց.

«Ես երիտասարդ Իռուկախայնենն եմ, իսկ այժմ դու ինձ ասա, ո՞վ ես դու, ի՞նչ անպիտան տոհմի ծնունդ ես»:

Ծերունի Վեյնեմեյնենը տվեց իր անունը և հանգիստ ասաց.

«Դու ջահել ես ինձնից, ով Իռուկախայնեն, ճամփա տուր ինձ»:

Ամբարտավան ջահելն այսպիսի խոսքեր ասաց.

«Այստեղ կարևոր չէ, թե մեզնից ով է ծեր և ով է ջահել: Ով շատ բան գիտե, և ով ավելի իմաստուն է, ապա նա պետք է առաջ անցնի և մյուսը նրան ճանապարհ տա: Ուրեմն, ծերուկ, հավերժական երգասաց Վեյնեմեյնեն, պատրաստվենք երգերով մրցելու միմյանց հետ»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Դե ես անհայտ, անփորձ երգիչ եմ, իմ հայրենի երկրում ման եմ գալիս և լսում եմ միայն կկուներին: Դե, ուրեմն, երգիր, որ իմանանք, թե դու իրոք գերազանցում ես ուրիշներին և շատ բան գիտես»:

Եվ երիտասարդն սկսեց.

«Այ, ես շատ լավ գիտեմ, որ երդիկից է ծուխ բարձրանում, իսկ օջախը տան մեջ է՝ վառարանի ներքևում: Միգը ձկնկիթ է դնում, իսկ հավը ձու է ածում: Ջյան վրա սահում է սահնակը, իսկ ծովի վրա կարելի է ճամփորդել նավակով: Եթե չհամոզվեցիր, որ ես իմաստուն եմ, դեռ էլի շատ բաներ կարող եմ ասել, — հյուսիսում եղջերուներ են լծում սահնակին, իսկ հարավում ձիով կամ եզներով են վար ու ցանք անում»:

Վեյնեմեյնենն ասաց.

«Այդ բոլորը մանուկներն էլ են թոթվում, ասածդ սովորական բաներ են, որ ամեն մի հետամնաց տանտիկին էլ գիտի. թե կարող ես պատասխանիր, ի՞նչ գաղտնիքներ ունի բնությունը»:

Երիտասարդը շարունակեց.

«Բոլոր տեսակի դեղերից ամենահինը ջուրն է. փրփուրը կախարդանքի համար են գործածում: Պտուղը ծառերի վրա է աճում, իսկ մեղրը ծերպերի մեջ է գոյանում: Հաստատ գիտեմ, որ կեռնեխը երգող թռչուն է, իսկ օձը սողուն է: Գիտեմ, թե եռացող ջուրը թափվի մարդու վրա, նրա մաշկը կայրվի, իսկ ուժեղ ցրտի ժամանակ մարդ կսառչի: Ամենայն ժամանակներից Աստված է մարդկանց ցավերից բուժողը: Ջրերը լեռներից են սկիզբ առել, իսկ կրակն ընկել է երկնքից:

Սկզբում ամեն տեղ ճահիճ է եղել: Բոլոր ծառերից տարիքավորը ուռին է: Առաջին տները կառուցել են սոճուց, իսկ քարերից սարքել են առաջին ամանները»:

Վեյնեմեյնենն ասաց.

«Գուցե էլի բաներ հիշես, թե՞ բարբառեցիր բոլորն, ինչ կար քո խելապատակում»:

Երիտասարդ Իռուկախայները պատասխանեց.

«Չէ, դեռ էլի հիշելիք բաներ ունեմ. հիշում եմ հին-հին ժամանակները... Ես ծովի հատակն էի հերկում՝ ստեղծում էի անդունդները, ձկների համար փոսեր էի փորում: Լճեր փռեցի չորս կողմ, սարեր ստեղծեցի ու մեծ-մեծ ժայռեր էի շուռ տալիս:

Ես նշանավոր դյուցազների շարքում յոթերորդն էի: Ստեղծեցի ես այս աշխարհը, օդին սահմաններ գծեցի, և կառուցեցի երկնականարը: Ես լուսնին երկինք հանեցի, ստեղծեցի հուրիրան արևը, Մեծ Արջը երկնքի կենտրոնը դրի ու շուրջն աստղեր սփռեցի»:

Ծերունի Վեյնեմեյնենն ասաց.

«Դու ստում ես պատռած բերնով, դու երբեք դյուցազուն չես եղել, երբեք չգիտես, թե ինչպես են հերկել ծովի հատակը, ինչպես են գոյացել նրա անդունդները, և

ինչպես են ձկների համար փոսեր փորել: Դու չգիտես, թե ինչպես են ստեղծվել լճերը, ինչպես են վեր խոյացել սարերը, ինչպես են շուռ եկել ժայռերը:

Ոչ ոք քեզ չի տեսել այնտեղ, երբ ստեղծում էին աշխարհը, երբ օդին սահմաններ էին գծում, երբ երկնքում հաստատում էին արևն ու լուսինը, Մեծ Արջն ու աստղերը»:

Երիտասարդ Իռուկախայները բարկացավ ու ասաց.

«Եթե ես բանականությունս կորցրել եմ, ուրեմն սրով կնվանեմ այն. հապա, ծերուկ Վեյնեմեյներն, դու երգիչդ մեծաբերան, արի չափվենք մեր սրերով, տեսներք, թե ո՞ւմ սուրն է ավելի կտրուկ»:

Վեյնեմեյներն ասաց.

«Ինձ բողբոջվին չի սարսափեցնում ո՛չ քո սուրը և ո՛չ էլ քո իմաստությունը, ո՛չ զենքերդ, ո՛չ էլ խորամանկությունդ. իմացի՛ր, ով անպիտան թշվառական, դու արժան չես, որ ես քեզ հետ սրով չափեմ իմ ուժերը»:

Փրփրեց Իռուկախայներն, գայրույթից բերանը ծռմռեց, գլուխը թափահարեց և այսպես խոսեց.

«Ով վախենում է ինձ հետ մենամարտել, ով սիրտ չունի սուր ձեռք առնել, ես այդպիսի արհամարհելի մարդուն իմ երգերով խոզ եմ դարձնում, նետում աղբանոց, կամ փարափի մի անկյունը շարտում»:

Վեյնեմեյներն մռայլվեց, շատ խիստ գայրացավ, ապա սկսեց երգել: Ոչ տղայական երգեր էր երգում նա, ոչ էլ զվարճալի տաղեր՝ անբան կանանց համար. նրա երգը հերոսական երգ էր և այդ ցասումնալից երգը տարածվեց չորս կողմ, լճերը փոթորկվեցին, լեռները դողացին, ժայռերը ճաքճքեցին: Եվ լապլանդացու ձին դարձավ ջրվեժի մոտ ընկած ժայռի մի բեկոր, նրա շունն էլ դարձավ մի գլաքար: Ամբարտավան երիտասարդը զրկվեց ամեն ինչից:

Երգում էր Վեյնեմեյներն և Իռուկախայներն մինչև ծնկները, հետո մինչև կուրծքը խրվեց ճահճի մեջ:

Նոր միայն Իռուկախայներն գլխի ընկավ, որ ինքը սխալ գործ է բռնել, հասկացավ, որ ինքը չէր կարող մրցել հզոր երգասաց Վեյնեմեյներնի հետ:

Ուզեց ճահճից դուրս գալ, բայց տեսավ, որ ոտքերին քարե ոտնամաններ էին հագցված և չէր կարող տեղից շարժվել:

Շատ խիստ վախեցավ լապլանդացին, ըմբռնեց, որ ընկել է թշվառության մեջ. այսպիսի խոսքերով նա դիմեց ծերուկ երգասանին.

«Ո՛վ դու իմաստուն Վեյնեմեյներն, հավերժական տեսանող. վերցրու այս կախարդանքը, ազատի՛ր ինձ ծանր վիճակից: Ես քեզ կտամ անբավ փրկագին, ինչ բան և ինչքա՛ն ցանկանաս»:

Վեյնեմեյնեն ասաց.

«Ի՞նչ կտաս ինձ, թե վերացնեմ կախարդանքը, ազատեմ քեզ այս թշվառ վիճակից»:

Տղան ասաց.

«Ես ունեմ երկու սքանչելի աղեղ. մեկը գերազանց նշան է առնում, մյուսը խփում է անվրեպ. ընտրիր, որը կուզես»:

Վեյնեմեյնեն ասաց.

«Չեմ ուզում քո աղեղները, հիմար տղա, ինչի՞ս են պետք դրանք. իմ տան բոլոր պատերին կախված են շատ աղեղներ, իմ աղեղներն իրենք իրենց գնում են անտառ և առանց ինձ խփում են անվրեպ»:

Երիտասարդ Իռուկախայնենը պաղատեց.

«Ես ունեմ երկու սքանչելի նավակ. մեկը նրանցից թռչում է ինչպես հավք, մյուսը բեռներ է տանում: Ընտրիր, որը քեզ դուր կգա»:

Ծերուկ Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ես քո ոչ մեկ նավակի պետքն էլ չունեմ. իմ ծովափին ես շատ նավակներ ունեմ. նրանց մի մասը շարժվում է քամու ուղղությամբ, մյուսը քամուն հակառակ»:

Տղան ասաց.

«Ունեմ երկու հիասքանչ ձի, մեկը թռչում է ինչպես քամի, մյուսը շատ ուժեղ լծելու ձի է. ընտրիր որը կուզես»:

Հավերժական երգասացն ասաց.

«Քո գոված ձիերից ես շատ ավելի ընտիրներն ունեմ իմ գոմերում. քո ձիերից ոչ մեկն ինձ պետք չէ»:

Տղան նորից աղաչանք արավ.

«Ով ծերուկ Վեյնեմեյնեն, ասա՛ արբազան խոսքեր, վերացրու կախարդանքը, քեզ կտամ իմ ոսկե գլխարկը, լիքը արծաթով. այդ գլխարկը հայրս բերել է ռազմի դաշտից»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ես քո ոսկու և արծաթի կարիքը չունեմ, իմ սնդուկները լի են ոսկով ու արծաթով»:

Հուսահատվեց տղան ու դարձյալ աղաչեց.

«Ո՛վ դու, ծերուկ Վեյնեմեյնեն, ազատիր թշվառիս այս ծանր վիճակից և ես քեզ կտամ իմ լայնարձակ դաշտերի ամբողջ հացահատիկը»:

Այսպես խոսեց ծերունին.

«Ես քո դաշտերը չեմ ուզում, բոլորովին հացի կարիք չունեմ: Իմ աշխարհի որ կողմը նայես, այնտեղ հացառատ դաշտ է ու ամեն տեղ հատիկների շեղջեր են դիզված»:

Վեյնեմեյնենը նորից երգեց և Իռուկախայնենը այս անգամ մինչև կոկորդն ու ծնոտը խրվեց ճահճի մեջ: Մամուռներն արդեն մտան բերանը: Այս անգամ ամբարտավան տղան բոլորովին սարսափահար՝ աղերսեց.

«Ո՛վ դու իմաստուն Վեյնեմեյնեն, ազատիր ինձ այս ծանր վիճակից, վերացրու կախարդանքը, խնայիր իմ կյանքը, ոտքերս քիչ է մնում պոկվեն, աչքերս արդեն մթնդում են. թե որ այս դաժան կախարդանքը վերացնես, իմ քրոջը՝ Այնոյին ես կտամ քեզ, որին շատ է սիրում մայրը: Իմ քույրը թող քո կինը դառնա, թող քո տունն ու դուռը մաքրի, թող լվանա քո շորերը, թող հյուսի թանկագին վերմակներ, թող քեզ համար մեղրահացեր թխի, որ ծերության օրերին չտխրես»:

Հավերժական երգասաց Վեյնեմեյնենը շատ ուրախացավ, որ տղան քրոջը՝ Այնոյին իրեն կնության է տալիս: Եվ այսպես խոսեց.

«Ա՛յ, այդ մեկը շա՛տ լավ ասացիր, վաղուց եմ ցանկանում ամուսնանալ: Մենմենակ շատ եմ տխրում: Երբ տանից դուրս եմ գալիս, ոչ ոք ձեռքը չի թափ տալիս ու ինձ հրաժեշտի խոսքեր չի ասում. երբ տուն եմ վերադառնում, ոչ ոք ինձ «բարի վերադարձ» չի ասում: Ես մենակ եմ, ինչպես որորը ծովում, ինչպես ցցուն ժայռը ալիքների մեջ, ինչպես սոսին լերկ սարի վրա... այո՛, շատ լավ ասացիր, այ այդ խոսքերից սիրտս մխիթարվեց»:

Եվ ծերուկը նստեց ժայռին, երգեց մեկ երգ, հետո էլի մի ուրիշ երգ և ապա ասաց սրբազան խոսքեր ու կախարդանքը վերացրեց:

Տղան դուրս եկավ ճահճից, քար դարձած ձին կենդանացավ, շունն իր կերպարանքն առավ, սահնակն էլ պատրաստ՝ իր սարք ու կարգով:

Տղան շտապ սահնակը նստեց և մեծ աղմուկով դեպի տուն շտապեց: Շտապելուց սահնակը կպցրեց տան դրուներին, ջարդվեց քաշանը, փչացավ լծասարքը:

Հայրն ու մայրը վախեցած դուրս եկան ու հարցրին, թե ինչ է պատահել: Տղան դառն արցունքներ թափելով լացեց, գլուխը քաշ գցեց, շրթունքները սեղմեց. դեմքն էլ արդեն խիստ սփրթնած էր:

Մայրն ուզեց իմանալ, թե ինչ է պատահել և հարցրեց.

«Ինչո՞ւ համար ես լալիս, իմ անգին որդի»:

Տղան պատասխանեց.

«Ո՛հ դու, իմ հարազատ մայր, ես մեծ փորձանքի մեջ ընկա, իզուր տեղը չեմ լալիս. հարյուր տարի էլ անցնի իմ արցունքը չի ցամաքի. ես այսուհետև բնավ չեմ ուրախանա. չէ՞-որ իմ ազիզ քրոջը, քո հարազատ աղջկան՝ Այնոյին կնուխթան տվի այդ ծերուկ Վեյնեմեյնենին, որ նրա տան գործն անի, նրա համար մեղրահացեր թխի»:

Մայրը ծափ զարկեց և ուրախ-ուրախ ասաց.

«Մի տխրիր տղաս, ես շարունակ երագում էի, որ այդ մեծ հերոսը իմ աղջկա ամուսինը դառնա»:

Լսեց այս խոսքերն Այնոն և շատ տխրեց. մայրը դիմեց աղջկան.

«Ինչո՞ւ ես լալիս, իմ ազիզ Այնո, դու մեծահամբավ ամուսին կունենաս, կնստես նրա տանը, հարմարավետ սենյակում՝ լուսամուտի դիմաց և բարիքներով լի կյանք կվայելես»:

Աղջիկը պատասխանեց.

«Օ՛հ, մայր իմ սիրելի, պատճառ ունեմ լալու. ես չեմ ուզում զրկվել իմ մազերի գեղեցիկ հյուսկերից, չեմ ուզում տանը նստել, գլուխս շալով փաթաթել, ծերուկ Վեյնեմեյնենին կին դառնալ ու նրան ծառայել. չեմ ուզում զրկվել մեր արևից, մեր լուսնից, մեր երկնակամարից. չեմ ուզում հեռանալ տնից-տեղից, եղբորիցս, հորիցս»:

Իսկ մայրն ասաց.

«Չէ, աղջիկս, մի տխրիր, իզուր արցունք մի թափիր, քեզ մեծ բախտ է վիճակվել, դու անպայման պետք է մարդու գնաս Վեյնեմեյնենին. նրա երկրումն էլ ամեն ինչ կա. արևն ամեն տեղ էլ պայծառ փայլում է, ամեն տեղ էլ դաշտերում ցորեն և այգիներում մրգեր են աճում: Կամուսնանաս մեծ երգչի հետ և շատ բախտավոր կլինես»:

## **Ռունա Գ**

Գեղեցկուհի Այնոն

Գեղեցկուհի Այնոն անտառ գնաց ծաղիկներ փնջելու: Մի փունջ հոր համար քաղեց, մյուսը մոր համար և մի երրորդն էլ եղբոր համար:

Ծաղիկները գիրկն առած աղջիկն անտառից շտապում էր տուն: Եվ ահա նրա դեմը ելավ Վեյնեմեյնենը. նայեց աղջկան, նայեց նրա գեղեցիկ զգեստներին և այսպես խոսեց.

«Այսուհետև զուգվիր-զարդարվիր միայն ինձ համար, մազերդ հյուսիր և գեղեցիկ ժապավեն կապիր ինձ համար, ծաղիկներ փնջիր ինձ՝ փեսացուիդ համար, պարանոցդ զարդարիր մարգարտե մանյակներով, խաչ կախիր կրծքիդ, ապրի՛ր, ապրի՛ր միայն ինձ համար»:

Աղջիկն այսպես պատասխանեց.

«Ես ոչ մեկի մասին չեմ մտածել, երբ կրծքիս խաչ եմ կախել, երբ մազերս հյուսել և ժապավեն եմ կապել: Ես հասարակ զգեստներ կհագնեմ. ճերմակ հաց չեմ ուզում, ես ուզում եմ իմ հոր տանը մնալ, իմ հարազատ մոր հետ ապրել և հաց ուտել»:

Եվ աղջիկը խաչն ու մարգարիտները հանեց վզից, մատներից էլ ոսկե մատանիները, մազերի հյուսքից քանդեց ժապավենը և նետեց գետին. նետեց, որ հայրենի անտառն իր թավուտներում պահի այդ ամենը: Ապա լաց ու կոծով նա հորական տուն հասավ:

Հայրը կացին էր պատրաստում. հարցրեց.

«Աղջիկս, ինչո՞ւ ես լալիս»:

«Պատճառ ունեմ լալու, հայր իմ, կորցրել եմ կրծքիս խաչը, անգին մարգարիտները»:

Բակում եղբայրն աղեղ էր պատրաստում. հարցրեց.

«Քույրիկ, ինչո՞ւ ես այդպես դառն արցունք թափում»:

«Եղբայր իմ, պատճառ ունեմ լալու, կորցրել եմ ոսկե մատանիներս, մեջքիս արծաթե քամարը»:

Ահա և Այնոյի քույրը: Նա հյուսվածք էր անում. հարցնում է. «Քույր իմ անուշիկ, ինչո՞ւ այդպես հոնգուր-հոնգուր կուլիս»:

«Պատճառ ունեմ լալու, սիրելի քույրիկ, կորցրել եմ թանկագին գինդերս, կորցրել եմ հյուսքերիս գեղեցիկ ժապավենները»:

Այնոն գնաց մոր մոտ: Մայրը ճաշի պատրաստություն էր տեսնում:

«Իմ խեղճ դստրիկ, ինչո՞ւ ես լալիս»:

«Օ՛հ իմ հարազատ, իմ կաթնատու մայր, լալիս եմ, քանզի խորն է վիշտս: Պուրակում ծաղիկներ փնջեցի հայրիկիս համար, քե՛զ համար, մեկն էլ եղբորս համար: Ուզում էի տուն վերադառնալ, մեկ էլ դեմս ելավ Օսմոյնենը<sup>1</sup> և սասաց. «Այսուհետև զուգվիր-զարդարվիր միայն ինձ համար... ծաղիկներ փնջիր ինձ՝ քո

---

<sup>1</sup> Օսմոյնեն, Կալեվայնեն, Ուվանտոլայնեն, Սուվանտոլայնեն — երգասաց Վեյսեմեյնենի տարբեր անուններն են:

փեսացու Կալեվայնենի համար... ապրիր միայն ինձ համար»: Իսկ ես իմ բոլոր զուգս ու զարդարանքը, խաչն ու մարգարիտները հանեցի վրայիցս շարտեցի անտառի մեջ և Օսմոյնենին ասացի. «Ես ամուսնանալու մասին չեմ մտածում. ուզում եմ հորս տանը մնալ, իմ հարազատ մոր հետ ապրել»:

Մայրն այսպես պատասխանեց աղջկան.

«Լաց մի՛ լինիր դստրիկս, մի՛ տխրիր: Ես քեզ լավ կկերակրեմ. կարագ ու կաթնահունց կուտես և շատ ավելի կգեղեցկանաս. խոզի միս էլ կուտացնեմ, որ առույգ ու աշխույժ լինես: Կորցրած զուգս ու զարդարանքիդ մասին էլ մի մտածիր. սարի մոտերքում պահեստ ունեմ, դու գնա այնտեղ և բաց ամենալավ արկղը. կգտնես յոթը հատ սքանչելի երկնագույն զգեստներ և ոսկյա միջակապեր: Երբ աղջիկ ժամանակս անտառ էի գնացել մորի քաղելու, այնտեղ հանդիպեցի արևի և լուսնի աղջիկներին ու նրանք կարեցին ինձ համար այդ զգեստները: Այդ արկղում դու ուրիշ զուգս ու զարդարանք կգտնես, — ոսկյա ժապավեն մագերիդ համար, մետաքսյա շապիկներ, նուրբ գուլպաներ և փափուկ կաշիներից կարված կոշիկներ: Սրտիդ ուզածի պես կհագնվես և շատ ու շատ գեղեցիկ կդառնաս»:

Բայց աղջիկը չի համոզվում. գնում է բակը. էլի լաց է լինում և այսպիսի խոսքեր է ասում.

«Երբ ուղեղումդ լավ մտքեր են ծնվում ու չես կարող դրանք գործադրել ու երջանկանալ, ապա նման ես այն ալիքին, որ առաջանում է դուլլի մեջ, երբ դուլլը շարժում ես, կամ նման փոսում մնացած այն ձյան շերտին, երբ վրա է հասնում գարունը:

Ավելի լավ էր, որ ես ծնված չլինեի և այսքան դարդ ու ցավ չտեսնեի: Երանի թե ութ օրական չդարձած մեռնեի. այն ժամանակ ինձ քիչ բան էր պետք՝ մի կտոր քաթան և մի փոքրիկ փոս: Մայրս մի քիչ լաց կլինեք, հայրս ավելի քիչ, իսկ եղբայրս բոլորովին լաց չէր լինի»:

Օրերն անցնում էին և Այնոն չէր դադարում լալուց: Մայրը կրկին հարցրեց, թե ինչո՞ւ է լալիս աղջիկը:

«Ինչպես լաց չլինեմ. ավելի լավ էր դու ինձ ծովը նետեիր, որ ձկներին ընկերություն անեի, քան թե ծերուկին խոստանայիր, որ ինձ կնության կտաս: Ծերուկն ինձ հարմար ամուսին չէ. նա քայլելիս կսայթաքի-կընկնի, ես պիտի նրան օգնեմ՝ ոտքի կանգեցնեմ, ուտելիս՝ վրան կթափթփի կերակուրը և ես հա՛ նրա շորերը պիտի մաքրեմ»:

Եվ մի օր էլ աղջիկը գնաց սարը, գտավ պահեստը, հագավ ամենալավ զգեստները, վիզը զցեց ոսկյա մանյակ, մագերին մետաքսյա ժապավեն կապեց, մատներին էլ հագցրեց անգին քարերով զարդարված մատանիներ: Բայց սիրտն ուրախ չէր. անցնում էր դաշտերով ու անտառներով և թախիծով ինքն իր հետ խոսում.

«Այո, հասավ ժամանակը, որ ես հրաժեշտ տամ աշխարհին, ինձ նետնեմ ծովը: Չէ՞ որ հայրս ինձ համար լաց չի լինի, մայրս էլ ինձ չի խղճում, քույրս ու եղբայրս էլ շատ չեն տառապի ինձ համար»:

Գնաց մեկ օր, երկու օր, երրորդ օրվա վրա հասավ ծովափին: Մութ գիշերը վրա հասավ. դժբախտ աղջիկն ամբողջ գիշերը լաց եղավ. երբ լույսը բացվեց, տեսավ երեք աղջիկներ, որոնք ուզում էին ծովը մտնել լողանալ: Աղջիկը շորերն հանեց վրայից, կոշիկները մի կողմ շարտեց, գուլպաները կախեց ծառի ճյուղից, ծովափի ավազի վրա դրեց ոսկյա մանյակն ու մատանիները:

Երբ Այնոն ջուրը մտավ, տեսավ աղջիկները հասել են ափից մի քիչ հեռու սպիտակին տվող քարերին: Ինքն էլ լողաց ու հասավ սպիտակ քարին. ուզեց նստել հանգստանալ: Նստեց-չնստեց ժայռի բեկորը պոկվեց և Այնոյին էլ հետը ծովի հատակը տարավ:

Եվ ծովի խորքից լսվում էր աղջկա աղիողորմ կանչը:

«Ես ծովը մտա, որ լողանամ, բայց դժբախտություն եկավ գլխիս: Իմ սիրելի հայր, իմ հարազատ մայր, ես ծովի հատակը սուզվեցի, այժմ ձկներին քույր դարձա, նրանց հետ պիտի հավերժորեն ապրեմ: Հայր իմ սիրելի, մինչև մահ-գերեզման այստեղ ձուկ չորսաս, այստեղ, ո՛ւր քո ջահել աղջիկը սուզվեց մութ ջրերում: Մայր իմ հարազատ, մինչև կյանքիդ վերջին օրն այստեղից ջուր չվերցնես ոչ խմորի, ոչ լվացքի համար, այստեղ, ուր քո սիրասուն աղջիկը սուզվեց մութ ջրերում: Եղբայր իմ սիրելի, մինչև մահ-գերեզման այս ծովի ջրերում չլողացնես քո ձիուն. այն ալիքները, որ խփում են ավազոտ ափերին, այդ ալիքները քո քրոջ արյունն են, իմ ոսկորներն են շաղ տված այստեղ, իսկ քարերի արանքում բուսած մամուռներն էլ քո խեղճ քրոջ գիսակներն են»:

Չայնը հասավ մոր ականջին. մայրը գոջաց, որ ստիպում էր աղջկան ամուսնանալ ձերուկի հետ. դառն արցունք թափեց ու ասաց.

«Մայրեր, եթե ձեր աղջիկներին գոռով, իրենց կամքին հակառակ պիտի ամուսնացնեք իրենց չսիրած մարդու հետ, ավելի լավ է, որ նրանց չխնամեք, չնեճացնեք»:

Եվ այնքան լացեց մայրը, որ նրա արցունքներից երեք առուններ գոյացան. ամեն առվի մեջտեղը մի թումբ բարձրացավ, իսկ թումբերի վրա կեչիներ անեցին՝ երեք բարձրաբերձ կեչիներ: Ամեն մի կեչու վրա նստեց ոսկեգույն կկու:

Եվ կկուները երգում էին անընդհատ:

Մեկ կկուն «սե՛ր, սե՛ր» էր գեղգեղում:

Մյուս կկուն՝ «փե՛սա՛, փե՛սա՛» էր կանչում:

Երրորդ կկուն՝ «երջանկությո՛ւն, երջանկությո՛ւն» էր խոստանում:

Եվ գիշեր ու ցերեկ չէր լռում կկուների կչկոցը:

Բայց աղջիկը սիրո փոխարեն մահն էր գտել ծովում:

Փեսացուն մնացել էր վշտահար ու մենակ:

Իսկ մայրը՝ երջանկության փոխարեն ամբողջ կյանքում պետք է լաց լիներ:

Մայրը նորից ողբաց ու ասաց.

«Այսուհետև կկունների կանչը չպիտի լսեմ. հենց որ լսում եմ, սրտիս կսկիծը սաստկանում է և արցունքս վարարում է գետի նման. վա՛յ իմ գլխին, որ աղջկանս անբախտացրի, ծովի մութ ջրերին բաժին դարձրի»:

## Ռունա Ե

Վեյնեմեյնենը գնում է ծովափ, փնտրում է Այնոյին

Լուրը հասավ Վեյնեմեյնենին: Ծերուկ երգիչը լաց-լացեց ամբողջ օրը. գիշերը մինչև լույս ողբաց իր սիրեցյալ աղջկա, չքնաղ Այնոյի այդպիսի տխուր վախճանի համար:

Մյուս օրը նա տխուր-տրտում գնաց ծովափ: Թախիծով նայում է ալիքներին — գուցե թե աղջիկը մի հրաշքով դուրս գա ծովի փրփուրների միջից: Բայց չէ՛, ալիքները բախվում էին ափերին, իսկ Այնոն չկար ու չկար:

Այն ժամանակ Վեյնեմեյնենը պարկից հանեց պղնձյա կարթը արծաթյա երկար թելով և ոսկյա խայծով: Կարթի կոթն ամուր պահեց ձեռքում և թելը ոսկյա խայծով նետեց ծովը. «Գուցե թե ծովի խորքից կարողանամ դուրս բերել աղջկան» — մտածում էր ծերուկը:

Ամբողջ գիշերը նա նստեց կարթը ձեռքին, և երբ արդեն լուսացել էր, նկատեց, որ կարթաթելը շարժվում է. շտապ դուրս քաշեց և տեսավ, որ խայծին կպած է մի ձուկ: Չգուշությամբ ձուկն ազատեց խայծից ու դրեց ավազին: Ձուկը թաքտում էր, բայց նման չէր մինչ այդ ծերուկ երգչի տեսած ձկներին:

Ծերուկն ուշադիր նայեց ձկանն ու ասաց.

«Չարմանալի ձուկ է, ոչ սիգի է նման, ոչ լոսդու, ոչ տառեխի. այսպիսի ձուկ առաջին անգամն եմ տեսնում»:

Հանեց դանակն և ուզում էր կտրտել ձուկը, մի փոքր ակռատ անել, մի մասն էլ պահել ճաշի, մյուս մասն էլ ընթրիքի համար: Դեռ դանակը չէր մոտեցրել փորին, որ ձուկը թաքտաց և սոթ տալով՝ Վեյնեմեյնենի ձեռքից ազատվեց ծովն ընկավ:

Ձուկը շփշփոցով սկսեց ափին մոտիկ լող տալ. մերթ երևում էր մի կողով, մերթ մյուսով. երբեմն էլ պոչն էր դուրս հանում, վերջը գլուխը բարձրացրեց ալիքների միջից և խոսեց.

«Ո՛վ դու ծերուկ Վեյնեմեյնեն, ես նրա համար դուրս չեկա ծովի հատակից, որ դու ինձ կտոր-կտոր անես և քեզ համար ակռատ, ճաշ և ընթրիք սարքես»:

Վեյնենեյնենը հարցրեց.

«Հապա ինչո՞ւ ծովի խորքերից բարձրացար ալիքների վրա»:

Ձուկը պատասխանեց.

«Նրա համար բարձրացա ալիքների վրա, որ քո կինը դառնամ, մտնեմ քո տունը, ամբողջ կյանքումդ քեզ ուրախացնեմ, քեզ համար մեղրահաց թխեմ, փրփրուն գարեջուր մատուցեմ... որ քո անկողինը կարգի բերեմ, գլխիդ տակ փափուկ բարձեր դնեմ, որ տունդ ու բակդ մաքուր պահեմ, փայտ կրեմ և վառարանում բոցը միշտ անշեջ պահեմ: Ախր ես ձուկ չեմ: Ո՞նց դու ինձ չճանաչեցիր. ախր ես Իռուկախայնենի քույրն եմ, իմ անունն է Այնո... ես այն եմ, որին դու փափագել ես ամբողջ սրտով և ամբողջ կյանքումդ ձգտել ես գտնել... իսկ հիմա տեսնում եմ, ով դու ծերուկ, որ խելքդ թոցրել ես... էլ ինձ չես կարող բռնել, ես ծովի ամենաչքնաղ հավերժահարսը կդառնամ»:

Ծերուկ Վեյնենեյնենը աղաչանք արավ.

«Ուրեմն դու Իռուկախայնենի քո՞ւյրն ես. իմ չքնաղ Այնո՞ն... ո՛հ, դուրս արի ծովից, շուտ դուրս արի, որ քեզ տանեմ իմ երկիրը, իմ օջախը շենացնեմ»:

Բայց ձուկ աղջիկը ծովի խորքը սուզվեց և այլևս չվերադարձավ:

Ծերուկ Վեյնենեյնենը խորը մտատանջության մեջ ընկավ: Մեծ ուռկան սարքեց և շատ տեսակի ձկների որսաց, բայց այլևս չկարողացավ բռնել այն սիրունիկ ձուկ-աղջկան, որի համար ինքը տառապել էր և որը ծովի չքնաղ հավերժահարսը դարձավ:

Ծերուկը գլուխը քաշ գցեց և ինքն իր հետ խոսեց.

«Ո՛հ, չե՞ որ ես թե խելք ունեի և թե զգայուն սիրտ: Մի՞թե այդ ամենը կորցրել և հիմարացել եմ: Մի՞թե ծերությունը հաղթահարել է ինձ և անպետք մարդ եմ դարձել: Նրան ում երագում ու ձգտում էի, գտա, բայց ինչպե՞ս եղավ, որ չճանաչեցի իմ սիրելի Այնոյին, նույնիսկ ուզեցի կտոր-կտոր անել. աղջիկն էլ փախավ-ազատվեց ձեռքիցս և ծովի մութ խորքերը գնաց»:

Տխուր-տրտում քայլում էր նա, ծանր հոգոց էր քաշում և մտածում, — չեմ հասկանում, թե ի՞նչ անեմ, էլ ինչպե՞ս ապրեմ այս աշխարհում. այսպես թափառելով ո՞ւր կհասնեմ: Ա՛խ, երանի մայրս ողջ լիներ. նա ինձ խորհուրդ կտար, որ այս դառն ցավերից չտանջվեի և մի բանով մխիթարվեի:

Եվ հանկարծ մայրը ծովի խորքից ձայն տվեց.

«Իմ սիրելի որդի, քո մայրը չի մեռել. մի՛ տխրիր, մի՛ հուսահատվիր, որ զրկվեցիր քո սիրած Այնոյից: Արիացի՛ր և գնա Պոխյոլա. այնտեղ շատ գեղեցկուհիներ կան: Գնա, ընտրիր ամենագեղեցիկ, ճկունհիրան, արագաքայլ աղջկան և հետն ամուսնացիր, բախտավորվիր»:

## ՌՈՒՆԱ 2

Իրուկախայնեն իր նետով ուզում է պատուհասել Վեյնեմեյնենին

Ծերունի երգասաց Վեյնեմեյնենը պատրաստվեց գնալ այն հեռավոր ցուրտ ու մշուշապատ աշխարհը:

Հեծավ իր աշխույժ, փրփրաբաշ ձին ու ճամփա ընկավ: Իր հայրենի լուսառատ Կալեվալայի դաշտերով անցավ, հասավ ծովեզրի քարքարոտ ափերին:

Եվ ահա՛ երիտասարդ Իրուկախայնենը, այդ անպիտան լապլանդացին, որ դիտվ էր լցված դեպի ծերունին և խիստ նախանձում էր նրան, ուզեց կործանել երգչին:

Նա պղնձից աղեղ շինեց: Աղեղալարն էլ արագավազ եղջերուի ջղերից սարքեց: Ապա նետեր սարքեց երկաթից և նետերի ծայրերին էլ օձի թույն քսեց:

Չար տղան դարանակալ սպասում էր, թե երբ կերևա Վեյնեմեյնենը: Ու մի առավոտ նա տեսավ, որ արշալույսի շողերի միջով իր ձին է քշում ծերունի երգիչը, սկսում է դեպի Պոխյոլա:

Մայրը մոտեցավ որդուն և հարցրեց.

«Ո՞ւմ համար ես պատրաստել այդ աղեղն ու թունավոր նետերը»:

Տղան պատասխանեց.

«Այս նետերը ծովերի բարեկամ Վեյնեմեյնենի համար եմ պատրաստել, այն երգչի համար, որ ինձ հաղթեց. այնպես պիտի խփեմ, որ նետը թիկունքից մտնի և սիրտը ծակելով դուրս թռչի»:

Մայրը բռնեց տղայի ձեռքն ու ասաց.

«Կալեվալայի երգիչ Վեյնեմեյնենին ձեռք չտաս, նա ինձ ազգական է: Եթե այդ հզոր երգչին սպանես, ուրախությունը կքչանա աշխարհից: Ինչքան կարող եմք, պետք է ուրախ ապրենք այս աշխարհում, թե չէ բոլորս էլ վերջ ի վերջո Տուոնելիի ստորերկրյա աշխարհն ենք գնալու, իսկ այնտեղ ամեն ինչ մռայլ է և հավիտենական խավար»:

Տղան մի պահ մտքերի մեջ ընկավ, բայց նախանձը շատ խորն էր բույն դրել հոգում, ասաց.

«Թող աշխարհից վերանա ուրախությունը, թող երկրից չքանա երգը. ես ուղիղ նշանառությամբ Վեյնեմեյնենին կսպանեմ և նորից կդառնամ առաջինը բոլոր երգիչների մեջ»:

Նենգ տղան մոր աղաչանքը չսեց, վազեց հասավ ճամփի եզրին, որտեղից պիտի անցնէր Վեյնեմեյնենը և թաքստոցից լարեց աղեղը:

«Թռիկ իմ նետ, եղջերուի ջիղը լավ եմ պնդացրել. թռիկ և պատուհասիր Վեյնեմեյնենին: Թե նշանս նրա սրտից ցած լինի, դու թռիկ վեր. թե նշանս նրա սրտից բարձր լինի, դու թռիկ ներքև և խոցիր երգչին»:

Ասաց ու աղեղնալարը ձգեց. նետը շատ վերև թռավ և կորավ ամպերի մեջ:

Երկրորդ նետը էլ բոլորովին ներքև թռավ և խրվեց ավազների մեջ:

Այս անգամ արդեն նա երրորդ նետը հանեց պայուսակից, ավելի պինդ լարեց աղեղը և նետեց:

Բայց երրորդ զարկին էլ նետը չպատուհասեց Վեյնեմեյնենին: Թունավոր նետը կպավ ձիուն և նրա մեկ թիակի տակից մտնելով, մյուս թիակի տակից դուրս ցցվեց:

Ձին սայթաքեց ու ընկավ ծովը: Այստեղ սուկայի փոթորիկ բարձրացավ, ծովն ավելոծվեց և, Վեյնեմեյնենին պոկելով ձիու մեջքից, ալիքների վրայով քշեց խորերը:

Իռուկախայնենը ասից տեսավ այս բոլորը. նրա չարնախանձ սիրտը հրճվեց ու նա բարձր-բարձր խոսեց.

«Ո՛հ, ծերուկ Վեյնեմեյնեն, դու այլևս երբեք արևն ու լուսինը չես տեսնի, Կալեվալայի փարթամ-ընդարձակ դաշտերում այլևս երբեք քո երգը չի լսվի: Յոթը տարի օրորվիր ծովի ջրերի վրա, ութը տարի էլ բաց ծովում թող հողմը քեզ տաշեղի նման քշի այս ու այն կողմ: Հետո սուզվիր սև ջրերի խորքը. քո ոտքն այլևս չի դիպչի հայրենիքիդ հողին»:

Տղան տուն դարձավ. մայրը հարցրեց.

«Մի՞թե դու սապանեցիր Կալեվի որդուն»:

«Այո՛, ես սապանեցի Վեյնեմեյնենին. նա ընկավ ծովի պոտոր ալիքների հորձանքում, և փոթորիկը նրան քշեց, սուզեց սև ջրերի անդունդը»:

Մայրը շատ ափսոսաց և ասաց.

«Դու, թշվառակա՛ն, շատ վատ բան արիր. ինչպե՞ս ձեռքդ գորեց Կալեվալայի երգչին սապանել: Դու սև նախանձից շատ ստոր ու չար գործ արիր»:

**Ռ-ունա Է**

Վեյնենեյնենը արծվի թևերին նստած հասնում է Պոխյոլա. մռայլ երկրի տիրուհին խոստանում է երգչին կնության տալ իր աղջիկը, եթե նա սարքի հրաշք-ինքնադաց Սամպոն

Ծերուկ հավատարիմ Վեյնենեյնենը վեց ցերեկ և վեց գիշեր լողաց ծովի ալիքների վրա: Ներքևը անդունդ, վերևը՝ կապույտ երկինք: Էլի երկու օր հորձանքը նրան սոճու տերևի նման քշում էր այս ու այն կողմ: Ծատ հոգնեց երգիչը. եղունգները պոկվեցին մատներից և նա այսպես խոսեց.

«Վայ՛ ինձ թշվառ ծերուկիս, թողի հեռացա իմ հայրենի հողից և ահա ընկել եմ ծովի ամենակուլ հորձանքի մեջ: Չգիտեմ ինչպես սալեմ այս ցուրտ ծովում. մի՞թե եկել է իմ կյանքի վերջը. չե՞ որ ծովի ալիքների վրա տուն չի կարելի սարքել»:

Եվ ահա Լապլանդիայից թռավ հասավ մի արծիվ. նրա մի թևը դիպչում էր ծովի ջրերին, մյուսը հասնում էր ամպերին. պոչով ալիքներին էր փարվում, կտուցով խփում էր ժայռերին:

Արծիվը տեսավ Վեյնենեյնենին և հարցմունք արավ.

«Ով դու դյուցազն, ինչու ես ընկել այս կապույտ ալիքների մեջ»:

Վեյնենեյնենը պատասխանեց.

«Պատմեմ, իմացի՛ր, թե ինչո՛ւ ես, դյուցազնս, ընկել եմ ծովի կապույտ ալիքների մեջ. գնում էի Պոխյոլա, այնտեղից աղջիկ ուզելու. ձիս արագ սլանում էր ծովափով և ահա՛ լուսադեմին, հանկարծ սուր նետով սպանեցին իմ ձիուն. ինձ էլ ուզում էին սպանել, բայց ես ծովն ընկա: Եվ քամիներն ինձ քշեցին ծովի խորերը. չգիտեմ ինչ կլինի իմ վերջը, քաղցի՞ց կմեռնեմ, թե՞ կսուզվեմ անդունդն ու կխեղդվեմ»:

Երկնապագ արծիվն այսպես պատասխանեց.

«Դու բոլորովին մի տխրիր. նստիր իմ մեջքին, և ես քեզ կտանեմ, որտեղ ցանկանաս: Ես լավ եմ հիշում այն օրը, երբ դու Կալեվալայի անտառում ծառերն էիր այրում, որ բացատ ստեղծես, հողը պարարտացնես և վար ու ցանք անես: Դու բարձրաբերձ-գեղակազմ կեչի ծառը պահպանեցիր, որ թռչունները հանգստանան նրա վրա, որ ես էլ գամ ու թառեմ նրա կատարին»:

Վեյնենեյնենը շատ ուրախացավ. համարձակ լողաց, մոտեցավ արծվին և նստեց երկնապագի մեջքին:

Արծիվը երգասացին մեջքին առած, թռավ, անցավ քամիների միջից, հասավ Հյուսիսային աշխարհը՝ Պոխյոլան. ծերուկին իջեցրեց մի հրվանդանի մոտ և ինքը նորից թռավ անհայտացավ:

Վեյնեմեյնենը նայեց չորս կողմը և դառն-դառն լաց եղավ. տեղն անձանոթ էր, ինքն էլ մեջքին ու կողերին հարյուր վերք ուներ, մազմորուքն էլ անել ու թափվել էր. չէր գտնում մի ճամփա, որ վերադառնա այն աշխարհը, որտեղ ինքը ծնվել և ապրել էր հանգիստ ու իր երգով հիացրել բոլորին:

Օրերից մի օր, Պոխյուլայի տիրուհու աղախինը գոմը մաքրեց և աղբը տարավ ու թափեց արտի եզրին. տուն դարձավ թե չէ, տիրուհուն ասաց.

«Ես ծովի կողմից հեկեկոցի ու լացի ձայն առա»:

Պոխյուլայի տիրուհին՝ Լոուխին, որ ասամները թափած մի պառավ էր, տանից դուրս եկավ, լսեց լացի ձայնը և ասաց.

«Այսպես ոչ երեխաներն են լալիս, ոչ էլ կանայք, այսպես լալիս են միայն դուրսգազուն տղամարդիկ»:

Պառավը նավակ նստեց և հասավ հրվանդանին, որտեղ Վեյնեմեյնենը կուչ եկած լալիս էր: Պոխյուլայի տիրուհին հարցրեց.

«Ա՛խ, իսեղն ծերուկ, դու ընկել ես օտար աշխարհ»:

Վեյնեմեյնենը մղկտաց.

«Գիտեմ, որ ընկել եմ օտար աշխարհ. ես իմ հայրենիքում հայտնի մարդ էի, և շատ էր տարածված իմ փառքն ու համբավը»:

Լոուխին հարցրեց.

«Ես կուզեի իմանալ, և թույլ տուր հարցնել, ի՞նչ մարդ ես դու, ո՞ր դուրսգազուններին ես ընկերություն արել»:

Ծերունի Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ինձ իմ հայրենիքի պարծանքն էին համարում. Կալեվալայի տարածությունների երգիչն էի, իսկ այժմ այս դժբախտ վիճակում, ես ինքս ինձ չեմ ճանաչում»:

Լոուխին ասաց.

«Այդ խոնավ տեղից դուրս արի, մտիր իմ նավակը, որ ինձ պատմես քո ճակատագիրը»:

Լոուխին ծերուկին նստեցրեց նավակի նստարանին, ինքն էլ թիավարեց և քիչ հետո հասան պառավի շքեղ տունը: Տիրուհին քաղցած երգասացին լավ կերակրեց, և ամբողջ մեկ շաբաթ թողեց, որ հանգստանա: Ծերուկն արագ կազդուրվեց, առաջվա նման էի առույգացավ: Նոր միայն Լոուխին սկսեց իր հարցուփորձը:

«Այժմ պատմիր Վեյնեմեյնեն, ինչո՞ւ էիր դու այդպես դառն արցունք թափում ծովի ափին»:

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Շատ պատճառներ ունեմ լալու. քանի՛ օր ու գիշեր ես լողում էի փոթորկոտ ծովի վրա և շատ տառապեցի փրփրոտ ալիքների հարվածներից:

Նրա համար եմ լալիս ու տանջվում, որ հեռացել եմ իմ Հայրենիքից և ստիպված եմ բախել օտար դռներ: Այստեղ ամեն ինչ ինձ խորթ է, ծառերի ճյուղերն իսկ փշի նման ծակծկում են մարմինս. միայն քամին է ինձ ծանոթ. միայն արևն է ինձ հարազատ այս օտար հորիզոնում»:

Պոխյոլայի տիրուհին ասաց.

«Մի լար, մի տխրիր, ով Վեյնեմեյնեն: Լավ կլինի, որ այստեղ մնաս, քեզ կկերակրեն լավ ձկներով և խոզի ընտիր մսով»:

Ծերունի Վեյնեմեյնենը այսպես խոսեց.

«Օտար աշխարհում ինձ պետք չէ նույնիսկ ամենաընտիր ուտելիքը: Ամեն տեղից լավը մարդու համար իր հարազատ տունը, իր հայրենական օջախն է, ամեն մարդ իր երկրում մեծ պատիվ ունի»:

Ապա ծերուկը վերև նայեց ու խնդիրք արավ.

«Ո՛վ մեծագոր ստեղծիչ, օգնիր ինձ, որ նորից տուն դառնամ, կրկին իմ հայրենի հողը տեսնեմ: Ավելի լավ է մարդ իր սեփական տանը ոտնամանով ջուր խմի, քան օտար երկրում ոսկե ամանով մեղր ուտի»:

Պատավ Լոուիսին ասաց.

«Ի՞նչ կխոստանաս անել ինձ համար, ի՞նչ կտաս ինձ, եթե ես քեզ տանեմ-հասցնեմ քո հայրենիքը, քո տան շենը»:

Վեյնեմեյնեն ասաց.

«Իսկ ի՞նչ կուզես ստանալ, եթե ինձ հասցնես իմ հայրենիքը, որտեղ ես կրկին լսեմ կկունների կանչը, թռչունների դայլայլը. արդյոք գլխարկով լի արծա՛թ կուզես, թե՛ ոսկի կուզես ստանալ»:

Պոխյոլայի տիրուհի ատամնաթափ Լոուիսին պատասխանեց.

«Ո՛վ դու իմաստուն Վեյնեմեյնեն, հավերժական երգասաց, ես ոսկու սիրահար չեմ, արծաթի կարիք չունեմ. ոսկին նրա համար է, որ երեխաներին խաղալիքներ սարքեն, արծաթով էլ ձիերի թամբերը զարդարեն: Կարո՞ղ ես դու արդյոք սարքել Մամպո: Ինքնադաց Մամպո սարքել, որ ինչ բարիք պետք է մարդուն, նա ստեղծի ինձ համար: Կարո՞ղ ես բաղի փետուրից, ոչխարի բրդից, կովի

անապական կաթից և գարու հատիկից ինձ համար սարքել հրաշալի ինքնադաց, որ երբ ուզենամ այլուր աղա, երբ պետք լինի՝ աղ, իսկ մի կողմից էլ փող դուրս գա: Եթե ինձ համար գեղեցիկ, պսպղուն կափարիչով Սամպո սարքես, այն ժամանակ իմ աղջիկը քեզ կնության կտամ և քեզ քո տունը կհասցնեմ, որպեսզի դու քո հայրենի աշխարհի կկուների կանչը լսես և թոշունների դայրայունով հմայվես: Իսկ եթե Սամպոն չսարքես, այլևս քո հայրենի աշխարհը չես տեսնի»:

Ծերուկ Վեյնեմեյնեն ասաց.

«Չեմ կարող ես Սամպո սարքել, Սամպո, որ գեղեցիկ, պսպղուն կափարիչ ունենա և բարիքներ ստեղծի: Բայց երբ տուն վերադառնամ, ճարտար դարբին Իվարինենին կուղարկեմ: Հիասքանչ դարբին է նա և աշխարհի մեջ նրա նման ուրիշը չկա. նա քեզ համար կկոփի, կկառուցի Սամպոն»:

Չար պառավ Լոուիսին պատասխանեց.

«Լավ, հավատում եմ քո խոսքին: Հիմա քեզ ցույց կտամ քո Հայրենիքի ճամփան: Բայց իմացի՛ր, իմ գեղեցիկ աղջկան, իմ ուրախ թոշնակին ես միայն նրան կտամ կնության, ով ինձ համար կսարքի հրաշք-ինքնադաց Սամպոն»:

Եվ Լոուիսին մեկ ընտիր ձի հանեց ախոռից, լծեց սահնակին ու ասաց.

«Լսի՛ր, ով դու ծերուկ Վեյնեմեյնեն, քանի դեռ ձին չի հոգնել և մթնշաղը չի ընկել, քանի դեռ չես մոտեցել տանդ, դու գլուխդ չբարձրացնես և երբեք չնայես երկնքին: Եթե պատվերս մոռանաս, գլուխդ բարձրացնես և երկնքին նայես, մեծ փորձանքի կհանդիպես և ճակատագիրը քեզ չարաչար կպատժի»:

Վեյնեմեյնենը մտրակեց ձիուն. ձին խրխնջալով ճամփա ընկավ ու ծերունի երգասացը հեռացավ Պոխյոլայի մռայլ ու դաժան աշխարհից:

## **Ռ-ունա Ը**

Վեյնեմեյնենը Պոխյոլայի գեղեցկուհու համար նավակ է սարքում, բայց կացնով վիրավորում է իր ծունկը

Շտապում է ծերուկ Վեյնեմեյնենը, որ շուտ հասնի ու տեսնի իր հայրենի դաշտերն ու պուրակները, չքնաղ Կալեվալայի մարգագետինները:

Ձին այնպես արագ է սլանում, որ նրա սմբակներից կայծեր են թոշում:

Եվ հանկարծ երգասացը գլխավերևում ինչ-որ դժվժոց լսեց: Մոռացել էր նա պառավ Լոուիսիի պատվերը. գլուխը վեր բարձրացրեց և ինչ-որ տեսավ — զարմացավ. անկշտում նայում էր: Յոթնագույն ծիածանի վրա նստել էր Պոխյոլայի չքնաղ աղջիկը և մանարանի վրա թել էր մանում: Նրա քնքուշ

ձեռքերում, ինչպես թռչնակը, խլվում էր արծաթյա մաքուրը և մատների արանքից ձգվում էր ոսկյա թելը:

Վեյնենեյնենը ձիու սանձը քաշեց. կանգ առավ և դիմեց գեղեցկուհուն.

«Ո՛վ դու երկնքի և երկրի զարդ. ձանձրալի՞ չէ մենակ աշխատել այստեղ: Վար իջիր, նստիր իմ սահնակը, ես քեզ կտանեմ իմ հայրենիքը, դու կլինես իմ տան տիրուհին, մեղրահացեր կթխես, փրփրուն գարեջուր կպատրաստես, զվարթ երգեր կերգես և ուրախ օրեր կանցկացնես Կալեվալայի հարթավայրերում»:

Գեղեցկուհին այսպես պատասխանեց.

«Ես գնացի դաշտը, ման եկա մինչև իրիկուն. տեսա ծառի ճյուղին թառած կեռնեխին: Սիրունիկ թռչունը երգում էր. հետո տեսա երաշտահավին. մեկից, ապա մյուսից հարցրի. «Ասա անուշիկ թռչնակ, ինչպե՞ս է լավ ապրել աշխարհում, մնամ հայրիկիս ու մայրիկիս տա՞նը, թե՛ ամուսնանամ և դառնամ մարդուս հնազանդ կինը»: Թռչնակն ինձ պատասխանեց. «Արևը ջերմացնում է, քայց ծնողական սերն ավելի ջերմ է: Սառնամանիքին երկայթն անգամ կուչ է գալիս, իսկ ամուսնու տանն աղջկա համար նույնն է, ինչ տաք օջախից ընկնես սառնամանիքի մեջ: Հորական տանն աղջիկը ոնց որ մի քաղցր պտուղ է ծառի վրա, իսկ ամուսնու մոտ՝ ոնց որ շոթայված շուն: Ստրուկը հազվադեպ է քնքշանքի արժանանում, իսկ կինը երբեք փաղաքշանք չի տեսնի»:

Վեյնենեյնենը պատասխանեց.

«Դատարկ խոսքեր են դրանք: Չամուսնացած աղջկան միշտ երեխայի տեղ են դնում, իսկ ամուսնացածներին բոլոր հերոսները հարգում են: Իջիր, իջիր գեղեցկուհի և նստիր սահնակը: Ես ոչ մեկ փեսացուից վատը չեմ և դյուցազունների շարքում էլ վերջինը չեմ»:

Պոխյուլայի գեղեցկուհին այսպես խոսեց.

«Ես չգիտեմ, թե դու ինչով ես նշանավոր. քո սխրանքների մասին ոչինչ չեմ լսել: Այ, եթե մազը կտրես բուրժ դանակով, այն ժամանակ կհավատամ, որ հերոս ես և կդառնամ քո կինը»:

Վեյնենեյնենը շատ չմտածեց. մորուքից մի մազ պոկեց, գրպանից հանեց դանակը և բուրժ կողմով մազը մեջտեղից երկու կես արեց:

Իսկ գեղեցկուհին ասաց.

«Ես այնքան ժամանակ չեմ նստի քո սահնակը, մինչև սառույցից ինձ համար միլեր չսարքես, և այնպես սարքես, որ սառույցի ոչ մեկ կտորը չփշրվի»:

Վեյնենեյնենը դանակի սուր ծայրով այնպես վարպետությամբ սառույցից միլեր սարքեց, որ ոչ մի կտոր սառույց չփշրվեց:

Իսկ գեղեցկուհին նորից գոհ չէր, ասաց.

«Մազ կտրել կարող է նույնիսկ երեխան, սառույցից միլեր սարքելն էլ մեծ բան չէ: Ես այն մարդու հետ կամուսնանամ, այն մարդուն հերոս կանվանեմ, ով իմ թեշիկների կտորտանքից ինձ համար նավակ կսարքի: Եվ նավակն էլ այնպես պիտի ջուրն իջեցնի, որ ոչ ձեռք տա նավակին, ոչ էլ սրունքներով կամ մեջքով հրի նավակը»:

«Այս երկնքի տակ չկա մեկը, որ ինձ նման նավակ սարքի. դա իսկական իմ գործն է» — պատասխանեց Վեյնեմեյները:

Վերցրեց ջարդված թեշիկների կտորտանքը և սայրասուր քարերի վրա սկսեց տախտակներ պատրաստել: Աշխատեց մեկ օր, երկու օր: Աչքերն էլ լավ էին տեսնում, ձեռքերն էլ վարժ էին աշխատում: Բայց երրորդ օրը կացնի ձայնը հասավ անտառի չար ոգի Հիյսին: Չայրացավ Հիյսին և որոշեց հանդուգն մարդուն դաս տալ:

Եվ ահա՛, երբ Վեյնեմեյները նորից բարձրացրեց կացինը, որ փայտը տաշի, այդ պահին չար Հիյսին կախարդանք արավ. կացինը սուր բերանով ամուր կպավ ժայռին, դիպավ և կարծր ժայռից թափով ետ թռավ ու նույն թափով դիպավ Վեյնեմեյներին սրունքին:

Խորը վերքից հորդ արյուն դուրս ժայթքեց:

«Հիմար, անբան կացին, — մղկտաց Վեյնեմեյները, — ինչո՞ւ դու ինձ այդպիսի ծանր վերք հասցրիր: Ինչ է, կարծում էիր, թե վայրի սոճի՞ն ես կտրում, կամ թե ուժդ ուզում ես փորձել առատանյուղ եղևնո՞ւ վրա, կամ հաստարմատ կեչի՞ն ես ուզում տապալել, երբ այդպես թափով խփեցիր սրունքիս և երակս կտրեցիր»:

Ծերուկը վերքի վրա դրեց և՛ խոտեր, և՛ քարաքոս, և՛ ճահճի մամուռ, բայց աղբյուրի նման հոսող արյունը չի կարողանում դադարեցնել: Արյունը հա թափվում է հողին, ծաղիկներին և ամփի նման հոսում է մարգագետնի միջով:

Ծերունի երգասացը չի հիշում այն խոսքերը, որոնք ամուր վիրակապի նման կապում են վերքը և ինչպես կողպեք փակում են հորդահոս արյան ճամփան:

Մեծ դժվարությամբ Վեյնեմեյները ձին լծեց սահնակին և ճամփա ընկավ, որ գտնի այնպիսի մեկին, որն իր իմաստությամբ նրա վերքը բուժի:

Հասավ մի գյուղ. երեք ճամփա կար: Ծերուկը գնաց ներքին ճամփով. հենց առաջին տան դիմաց կանգնեցրեց ձիուն և տնեցոց հարցրեց.

«Այս տանը չկա՞ այնպիսի մեկը, որ բուժի հերոսին, որ դադարեցնի վերքից հոսող արյունը»:

Վառարանի մոտ նստած մի մանկիկ պատասխանեց.

«Այստեղ այդպիսի մարդ չկա. ուրիշ տեղ հարցրեք, գուցե այնտեղ ձեզ բուժեն»:

Ծերուկը գնաց միջին ճանապարհով. կանգնեց փողոցի մեջտեղի տան առաջ և լուսամուտից այսպիսի հարցմունք արավ տնեցիներին:

«Այս տանը չկա՞ այնպիսի մարդ, որ իմ վերքը բուժի, որ մեղմացնի իմ ցավերը»:

Վառարանի մոտ նստած պառավ կինը պատասխանեց.

«Այստեղ այդպիսի մարդ չկա. մյուս փողոցը գնա, գուցե այնտեղ քեզ բուժող գտնես»:

Ծերուկը ձին քշեց վերին ճանապարհով. կանգնեց ամենավերջին տան առաջ. հարցրեց.

«Այս տանը չկա՞ այնպիսի մարդ, որ դադարեցնի արյան հեղեղը, որ սանձահարի չար երկաթը»:

Այիտակամորուս մի ծերունի պատասխանեց.

«Իմաստուն խոսքով կարելի է ջրվեժի հոսանքն էլ դադարեցնել, վարար գետերի ընթացքն էլ սանձահարել: Ներս արի, ով դու հերոս, ես քեզ կօգնեմ»:

## **Ռունա Թ**

Թե ինչպես է առաջացել երկաթը. բալասան երկաթի առաջացրած վերքի դեմ

Իջավ սահնակից Վեյնեմեյնենը և առանց որևէ մեկի օգնության մտավ ծերունու տունը:

Ծերունին իր փոքրիկ տղային պատվիրեց, որ մի ոսկե թաս բերի: Եվ երբ տղան թասը բերեց ու դրեց Վեյնեմեյնենի առաջ, դյուցազնի արյունը բերներերան լցվեց թասի մեջ ու սկսեց պռունկներից թափվել. բերին յոթը տակառներ. դրանց մեջ էլ չտեղավորվեց հերոսի վերքից հոսող արյունը:

Ծերուկը դիմեց Վեյնեմեյնենին.

«Ասա՛, տեսնեմ, ի՞նչ մարդ ես դու, որ դյուցազուններին ես ընկերություն արել: Գիտեմ, դյուցազն ես, որ այսքան առատ արյուն հոսեց քո վերքից, հիմի էլ հոսում է հողի վրա: Եթե իմանայի, թե ինչպես է ստեղծվել երկաթը, ինչպես է առաջացել պողպատը, ես կգսպեի նրա չար բնույթը և կդադարեցնեի ծնկից հոսող արյունը»:

«Ես գիտեմ, — պատասխանեց Վեյնեմեյնենը, — թե ինչպես է առաջացել պողպատն ու երկաթը: Երկնային հաստիչ Ուկկո Աստվածը երկնքի և ջրի սահմանը գծեց, հետո ջուրն ու ցամաքը զատեց իրարից: Բայց դեռ երկաթ չկար երկրի վրա: Եվ ահա՛ Ուկկո Աստվածը ձեռքերը շփեց իրար, հետո ձախը՝ ձախ

Ծնկան վրա շփեց. ծնվեցին երեք աղջիկներ. աղջիկներն ամպերի վրայով իջան երկրի վրա. նրանց ստինքները լիքն էին կաթով, և կաթը նրանց պտուկներից առատորեն թափվում էր հողի, ճահիճների և ջրերի վրա:

Առաջնեկ աղջկա կրծքից սև կաթ էր թափվում, միջնեկի կրծքից սպիտակ կաթ, իսկ ամենափոքրի կրծքից կարմիր կաթ էր թափվում:

Սև կաթից փափուկ մետաղ ստեղծվեց, իսկ այնտեղ, ուր ճերմակ կաթն էր թափվում, պողպատ ստեղծվեց, կարմիր կաթի կաթիլներից էլ ամուր երկաթ գոյացավ:

Այս էլ ասեմ. օդը՝ աշխարհի վրա գոյություն ունեցող ամեն ինչի մայրն է: Նա ունի երեք տղա: Անդրանիկ որդու անունն է ջուր: Կրտսեր որդու անունն է երկաթ: Միջնեկինը՝ ջեռ կրակ:

Եվ այս եղբայրները հաշտ չեն: Կրակ եղբայրը միշտ բորբոքում է. ուզում է լափել երկաթ եղբորը: Դրա համար էլ երկաթը փախչում է եղբորից, որ ազատվի նրա անհագուրդ երախից, փախչում է հեռու-հեռու, մտնում է լեռների խորքը, թաքնվում գետնի տակ, ճահիճների մեջ, անտառների արահետներում, ուր գայլերն ու արջերն են ապրում:

Եվ ահա՛ ծնվեց Իվարիները: Այդ հերոսը ծնվեց մութ գիշերին ածուխի հանքում: Նա մեկ ձեռքում մուրճ ուներ, մյուսում՝ ունեղի: Մի հարմար տեղ նա դարբնոց սարքեց, քուրան դրեց մեջտեղը, կողքին էլ փուքս: Հետո արջերի և գայլերի հետքերով գնաց, գտավ երկաթը և այսպես խոսեց.

«Ո՛հ, խեղճ երկաթ, դու շատ խորն ես թաքնվել: Ես քեզ դարբնոց կտանեմ, որտեղ, բոցերի մեջ խարկվելով, կուժեղանաս, տղամարդկանց ձեռքին սուր կլինես, կանանց համար էլ ապարանջան»:

Նույն գիշերն էլ Իվարիները երկաթը դարբնոց բերեց, դրեց քուրայի մեջ և փուքսը գործի դրեց:

Երկաթը ձայն տվեց.

«Օ՛, դարբին Իվարիներ, հանիր ինձ քուրայից. այստեղ կրակն ու բոցը ինձ կհոշոտեն-կոչնչացնեն»:

Այսպես պատասխանեց Իվարիները.

«Թե քեզ քուրայից հանեմ, դու շատ անողորմ կլինես, եղբորդ ծանր վերք կհասցնես, կտոր-կտոր կանես»:

Այն ժամանակ երկաթը դարբնին և քուրային, մուրճին ու սային երդում տվեց.

«Անտառում շատ փայտ կա, որ կտրեմ, կարող եմ քարն էլ փշրել, բայց եղբորս ձեռք չեմ տա, մորս որդուն չեմ վնասի: Եթե ես մարդկանց մոտ գնամ, նրանց

կօզնեմ, օգտակար գործիք կդառնամ. դա ավելի լավ է, քան եղբորը վերք հասցնելը»:

Իմարիները երկաթից կացին, խոփ, փոցիս, նիզակ և ամեն տեսակ գործիքներ էր կոփում. բայց երկաթը դեռ նրա ուզածի նման ամուր չէ:

Եվ ահա՛ դարբինը տեսավ, որ մի մեղու է թռչկոտում դարբնոցի մոտով. ասաց.

«Թռիր, մեղու, գնա այնտեղ, ուր շատ ծաղիկներ կան և յոթը ծաղիկներից մեղր հավաքիր ու թևերիդ վրա բեր ինձ, որ մեղրը խառնեմ երկաթին, ամուր պողպատ ստանամ և երկաթն էլ ավելի ամուր դարձնեմ»:

Մեղուն, այն ձիաբոռը, գնաց չար Հիյսի անտառը, բայց ծաղիկներից մեղր չհավաքեց, այլ գնաց օձերի բույնը և խորամանկ օձի սև թույնը բերեց:

Իսկ Իմարիները մտածում էր, որ այդ մեղուն անպայման կերթա և փերակներից ընտիր մեղրը կհավաքի կրերի: Եվ երբ մեղուն վերադարձավ, ճարտար դարբինն ասաց.

«Ուրախ եմ, որ ինձ համար բերել ես անուշ մեղր՝ հավաքված բուրումնավետ ծաղիկներից: Ես պողպատ և ամուր երկաթ կկոփեմ, որ մարդիկ դրանցով բարի գործեր անեն»:

Քուրայից հանելով պողպատն ու երկաթը, դարբինը դրանք թաթախեց ձիաբոռի բերած թանձր հեղուկի մեջ:

Դարբնոցից դուրս գալով պողպատը, (ինչպես նաև երկաթը), ավելի նենգ ու չարագործ դարձավ և ինչպես ստոր շուն դրժեց իր երդումը: Նա անխնա խփում էր եղբորը և արյան գետեր հոսեցնում»:

Վեյնեմեյները ավարտեց իր պատմությունը, իսկ նրա խորը վերքից արյունը հա հոսում էր:

Սպիտակամորուս ծերունին ասաց.

«Այժմ իմացա, թե ինչպես է ստեղծվել երկաթը, իմացա նաև թե նրա նենգ բնույթն ինչից է առաջացել: Բայց կարելի է սանձահարել նաև այդ չարագործ երկաթին»:

Եվ ծերունին այսպես խոսեց.

«Չար երկաթ, նենգ պողպատ, դու ոչ սարսափելի էիր, ոչ էլ չնչին մի բան: Հին ժամանակներում դու թաքնված էիր լեռների ընդերքում, ճահիճների խորքում էիր պահված. դու խառնված էիր հողի կոշտերին և ժանգոտ փոշի էիր միայն. թե եղջերուն, թե այծերը քեզ իրենց ոտքերի տակ տրորում էին, գայլն ու արջն էլ իրենց թաթերով փորփորում էին այն տեղերը, ուր դու թափթփված էիր:

Երբ քեզ դարբնոց տարան, դու ոչ սարսափելի էիր, ոչ էլ չնչին մի բան. երբ քուրայում, ջեռ կրակի մեջ սկսեցիր այրվել, դու դարբնին և քուրային, նրա մուրճին ու սալին, այն վարպետ Իլմարինենին երդում տվիր, թե եղբորդ վերք չես հասցնի, մորդ որդուն չես վնասի: Հիմա ուժեղ ու սարսափելի ես դարձել, ով դու պողպատ և ինչպես ստոր շուն դրժել ես երդումդ: Դու հիմա ահռելի ոճիրներ ես գործում, վերքեր ես հասցնում մարդկանց և ահա՛ արյունն էլ անդադար հոսում է»...

Ապա ծերունին խոսքն ուղղեց հոսող արյանը.

«Կենարար արյուն, բավական է այդպես վարար հոսես. տես, ամբողջ դեմքս ու կուրծքս կարմիր ես ներկել: Հանդարտվիր, ինչպես ջուրն է հանդարտ մնում ավազանում:

Իսկ եթե պետք է, որ հավերժորեն հոսես, ապա հոսիր մարդու երակների միջով, հոսիր ամենանրբին մազանոթների միջով, հասիր մարմնի մինչև ամենավերջին ծայրը. իզուր տեղը մի թափվիր գետնին, մի խառնվիր փոշուն: Քո բնակարանը պետք է սիրտը լինի, թոքերի մեջ՝ քո պահեստը: Շո՛ւտ, ետ դարձիր դեպի քո տունը և այդպես իզուր մի հոսիր ու լճակներ կազմիր:

Ես պիտի դադարեցնեմ արյունը. չե՞ որ ես էլ հերոս եմ ծնվել, ինձ կօգնի Արարիչը, որ ապրում է ամպերից վեր: Նա կարող է փակել արյան ճամփան»:

Ապա ծերունին հայացքն հառեց դեպի վեր:

«Ով դու Ուկկո, հաստիչդ երկնային, մի պահ վար իջիր երկնքից, օգնիր ինձ: Քո հզոր հրաշագործ մատը սեղմիր վերքի վրա, որ այլևս արյունն իզուր տեղը չհոսի»:

Եվ սպիտակամորուսի ամեն մի խոսքի հետ արյունն ավելի դանդաղ սկսեց հոսել վերքից և քիչ անց բոլորովին դադարեց:

Այն ժամանակ ծերունին կանչեց իր փոքրիկ տղային, հրամայեց, որ գնա ու քնքուշ ծաղիկներ ու բույսեր քաղի բերի, ծերպերից էլ անուշիկ մեղր հավաքի բերի:

Տղան գնաց բերեց այդ բոլորը և լցրեց մի կաթսայի մեջ, ապա վառեց վառարանը և կաթսան դրեց վրան: Ինը զարնանային ցերեկ և ինը լուսնկա գիշեր հրաշագործ դեղը եփվում ու եփվում էր:

Տասներորդ օրը տղան կաթսան վերցրեց կրակի վրայից և ինքն իրեն ասաց. — «Ի՞նչ բանի վրա փորձեմ դեղի ուժը»:

Նայեց տղան չորս կողմը և տեսավ, որ դաշտի միջում ընկած էր փոթորկից ճղակոտոր եղած մի կաղամախի: Տղան դեղը քսեց ծառի կոտրված բնին. քիչ անց ծառի բունը կրկին իր նախկին տեսքը ստացավ, ծածկվեց փարթամ ճյուղերով ու տերևներով:

Տղան ապա գնաց դեպի ժայռերը, դեղը քսեց ճաքած քարին և քարի ճաքած մասերն ամուր, շատ ամուր կպան իրար:

Այն ժամանակ միայն տղան գնաց ծերունի հոր մոտ, դեղը տվեց նրան և ասաց.

«Վերցրու, հայրիկ, այս դեղն այնպիսի ուժ ունի, որ քարերն էլ է ամուր կպնուն իրար, մեռած չորացած ծառն էլ կենդանացնում-փարթամացնում է»:

Ծերունին հրաշագործ դեղը քսեց մետաքսյա վիրակապի վրա, դրեց Վեյնեմեյնենի ծնկան վերքին և աղոթեց.

«Ով ամենակալ տեր, պահապան եղիր քո ստեղծածին, որպեսզի դժբախտությունը մեզ մոտ չգա, որպեսզի ազատ լինենք փորձանքից. օգնի՛ր, որ հեղուկը բուժիչ բալասան լինի այս փառապանծ հերոսի համար»:

Ակնթարթ էլ չանցավ, ինչ ծերուկը դեղեց հերոսի ծունկը և ահա վերքն այնպես լավ փակվեց, որ մաշկի վրա բնավ չանգովածի հետք էլ չմնաց: Հերոսի մարմինն էլի առաջվա նման առույգ ու կայտառ դարձավ:

Վեյնեմեյնենը աչքերը դեպի երկինք հառեց և այսպես խոսեց.

«Այո՛, ամենագորն է, որ երկնքից մարդկանց առաքում է բարիքներ: Հավերժ փառք բարձրյալին, որ օգնության հասավ և ինձ ազատեց սարսափելի տանջանքներից, որ ստացել էի չար պողպատի հարվածից»:

Եվ այսպես ավարտեց երգասացն իր խոսքը:

«Ո՛վ սերունդներ, որ աշխարհ կգաք ինձանից հետո, գրագով ոչ իլիկ սարքեցեք, ոչ էլ նավակ: Եվ մի պարծեցեք ձեր գիտեցածով: Ամեն սկսած գործ Աստծու ողորմածությամբ է ավարտվում: Առանց բարձրյալի հերոսը թույլ արարած է, և նրա ձեռքերն անգոր են»:

## **Ռունա Ժ**

Իվմարինենը կռում-կոփում է հրաշալի ինքնադաց Սամպոն

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնենը ձին լծեց սահնակին, ինքն էլ հարմար նստեց և մտրակեց ձիուն:

Սահնակն անցավ դաշտերով, ճահիճներով ու բլուրներով և վերջապես երրորդ օրը հասավ հայրենի աշխարհը: Այստեղ նա հիշեց անպիտան Իռուկախայնենին և այսպես խոսեց.

«Անմիտ պարծենկոտ. ասում էր, թե ես այլևս ողջ-առողջ չեմ վերադառնա իմ երկիրը. չեմ տեսնի իմ չքնաղ Կալեվալան, չեմ տեսնի իմ հայրենիքը լուսավորող արևն ու լուսինը: Թող գայլը խժոճի այդ անապիտան, չարալեզու լապլանդացուն»:

Եվ Վեյնեմեյնենը քշում է սահնակը հայրենի դաշտերով. նոր շունչ, նոր ոգի առած երգում է իմաստուն երգեր: Այնքան հրապուրիչ է նրա երգը, որ թվում է, թե լուսինը և յոթնաստեղյան Մեծ Արջը իջել են երկնքից և թառել եղևնու ճյուղերին ու նրա երգն են լսում:

Բայց Վեյնեմեյնենն ինչքան մոտենում էր տանն, այնքան ավելի էր տխրում. չէ՞ որ իր գլուխը փրկելու համար խոստացել էր հմուտ դարբնին իբրև պատանդ ուղարկել այն մռայլ աշխարհը՝ Պոխյոլա:

Նա սահնակից դուրս եկավ և դարբնոցից լսեց մուրճի հարվածների ձայնը: Դարբինը հենց տեսավ Վեյնեմեյնենին, մուրճը դրեց գնդանին ու հարցրեց.

«Ով դու ծերուկ երգասաց, որտե՞ղ էիր այսքան ժամանակ, ո՞ր աշխարհում, ո՞ր կողմերում»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ես այն մռայլ ու դաժան Պոխյոլայումն էի, Լապլանդիայի կախարդների աշխարհն էի ընկել»:

Դարբինը նորից հարցրեց.

«Իսկ դու, հավերժական գուշակող, ինչպե՞ս էիր ապրում այնտեղ և ինչպե՞ս վերադարձար հայրենիք»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Զեզ ամեն ինչ կպատմեմ, բայց հիմա լսիր. կա այնտեղ մի հուր-հրաշք աղջիկ. նա ոչ մի դյուցազնի հետ չի ուզում ամուսնանալ: Արևից էլ պայծառ է այդ աղջկա դեմքը. կրծքին փայլփլում են աստղերը. բոյն էլ չինար ու նազանի. ով դու ճարտար դարբին Իվմարինեն, գնա՛ Պոխյոլա, գնա՛ տես այդ չքնաղ աղջկան: Եթե կարողացար սարքել պսպղուն կափարիչով հրաշք-ինքնադաց Սամպոն, այն ժամանակ մայրն այդ աղջկան քեզ կընծայի»:

Այսպես պատասխանեց Իվմարինենը.

«Ով ծերուկ Վեյնեմեյնեն, երևի դու խոստացել ես ինձ ուղարկել այդ դաժան ու մռայլ աշխարհը, որ քո գլուխն ազատես չար պառավից: Մի՞թե դու ուզում ես, որ ես փորձանքի մեջ ընկնեմ: Ո՛չ, ո՛չ, քանի շնչում եմ, չեմ ուզում այդ դաժան աշխարհը գնալ, չեմ մտնի Պոխյոլան՝ այդ մռայլ երկիրը, ուր խժոճում են հերոսներին, ուր մարդկանց ծովն են նետում»:

Չգիտե ինչ անի իմաստուն Վեյնեմեյնենը: Չէ՞ որ նրա խոսքին հավատաց Լոուիսին և իրեն անվնաս ճամփու դրեց: Իսկ տրված խոստումը մարդուն ավելի

պինդ է կապում, քան պարանը: Եվ ծերուկը մտածեց. «Երևում է պիտի խորամանկություն անեն, քանի որ Իվարինենը ինձ չի ուզում հանել այս նեղ դրությունից: Եվ այսպես ասաց երգասացը.

«Ես ուրիշ հրաշք եմ տեսել: Այնտեղ ուր վերջանում են Կալեվալայի ծաղկուն դաշտերը, անել, բոյ է քաշել մի եղևնի. նրա տերևները ոսկուց են. այդ ոսկյա տերևների վրա փայլվում է յոթնաստեղյան Մեծ Արջը, իսկ ոսկյա կատարին էլ իջել է լուսինը»:

«Ո՛չ, չեմ հավատում, թե երկրի վրա այդպիսի հրաշք կա, մինչև իմ աչքերով չտեսնեմ», — ասում է Իվարինենը:

«Թե չես հավատում, գնանք միասին այնտեղ և համոզվի՛՛ր՝ ճշմարիտն եմ ասում, թե՛ հորինում եմ», — պատասխանեց երգասացը:

Եվ ճամփա ընկան. առաջից գնում էր Վեյնեմեյնենը և ետևից Իվարինենը:

Այնտեղ ուր վերջանում էին Կալեվալայի ծաղկուն դաշտերը, կանգ առավ Վեյնեմեյնենը և սկսեց երգել: Նրա երգն այնքան դյուրեթիչ էր, որ եղևնին ավելի վեր բարձրացավ և ոսկեղեն ճյուղերը փռեց չորս կողմ: Ահա՛ ճյուղերին սկսեց փայլվել յոթնաստեղյան արջը, ոսկյա կատարին էլ իջավ լուսինը:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց դարբնին.

«Մագլցիր ծառն ի վեր, եղբայր իմ, և վերցրու ոսկյա կատարից լուսինը, ոսկեղեն ճյուղերից էլ աստղերը: Թե աչքերիդ չես հավատում, ձեռքերիդ արդեն կհավատաս»:

Իվարինենը սկսեց մագլցել ծառն ի վեր, որպեսզի տիրանա լուսնին և աստղերին: Այստեղ ոսկեղեն տերևները շարժվեցին և շնչացին.

«Ով այր, դու շատ պարզամիտ ես, մագլցում ես ծառն ինչպես երեխա և ուզում ես վերցնել մի բան, որ չի բռնվի. քո տեսածը լուսնի և աստղերի ցուլքն է»:

Բայց Իվարինենը չի ուզում լսել եղևնու ասածը. խիստ հրապուրիչ էր տեսիլքը: Եվ երբ արդեն կատարին էր հասնում, Վեյնեմեյնենն ավելի ոգեշնչված երգեց.

«Ով դու, արագապաց քամի, քո թևերի վրա վերցրու հերոսին և թոցրու հասցրու Պոխյոլա, այն մշուշապատ աշխարհը»:

Խիստ փոթորիկ բարձրացավ. մրրիկն իր թևերի վրա առավ Իվարինենին և թռավ լուսնից բարձր, արեգակից ցածր. քիչ հետո Իվարինենին հասցրեց Պոխյոլա, ուղիղ Լոուխիի բակում, բաղնիքի մոտ իջեցրեց հերոսին:

Շները նրա գալը չիմացան և չհասցեցին: Դարբնի դեմը ելավ այն պառավ Լոուխին, որի ատամները թափված էին և տեսքը մռայլ էր. պառավը հարցրեց.

«Ի՞նչ մարդ ես դու, ո՞ր դյուցազուններին ես ընկերություն արել: Այդ ինչպե՞ս տեղ հասար, ցամաքո՞վ թե օդի միջով, ինչպե՞ս է, որ իմ շները քո գալը չիմացան և չհաչեցին»:

Իմարիները պատասխանեց.

«Ես նրա համար չեկա այստեղ, որ օտար աշխարհում ինձ շներն զգզեն»:

Պոխյուլայի տիրուհին տեսավ, որ հասարակ մարդ չէ եկողը, հարցրեց.

«Դու չե՞ս ճանաչում արդյոք, կամ չե՞ս լսել հմուտ դարբին Իմարիների մասին: Ես վաղուց եմ սպասում նրան մեր այս հեռավոր հյուսիսում, որ գա ու կոփիսարքի Սամպոն»:

Դյուցազնը պատասխանեց.

«Այդ հմուտ դարբինն ես ճանաչում եմ, Իմարիներին լավ գիտեմ: Ես ինքս հենց այդ Իմարիներն եմ»:

Պառավ, ատամնաթափ Լոուիսին տուն մտավ և այսպես խոսե.

«Դու իմ կրտսեր աղջիկ, լավ զուգվիր-զարդարվիր, պարանոցդ զցիր ամենագեղեցիկ մանյակը, կուրծքդ զարդարիր ամենանուրբ գործվածքներով, այնպես արա, որ հոնքերդ լավ երևան և աչքերիդ փայլը պայծառ լինի: Եկել է այն հմուտ դարբին Իմարիները, որ մեզ համար գեղեցիկ կափարիչով Սամպո՝ հրաշք ինքնաղացը սարքի»:

Պոխյուլայի գեղեցկուհին գնաց մոր պատվերի համաձայն հագավ ամենալավ զգեստները, զուգվեց-զարդարվեց:

Իսկ պառավն Իմարիներին տուն հրավիրեց, ամենալավ ուտելիքներով կերակրեց նրան և մի լավ էլ խմացրեց: Այա կանչեց աղջկան:

Աղջիկն եկավ և դարբինը տեսավ ու հիացավ. աղջկա աչքերը փայլում էին ոնց-որ աստղեր, թշիկները վարդի պես ալ կարմիր էին, մազերին սիրունիկ ժապավեններ կային, մեջքին ոսկե քամար, իսկ բազուկներին պսպղուն սպարանջաններ:

Պառավ Լոուիսին ասաց.

«Ով դու հմուտ դարբին, թե որ բաղի փետուրից, ոչխարի բրդից, կովի անապական կաթից և գարու հատիկներից ինձ համար հրաշք-ինքնաղաց Սամպոն սարքես, այն ժամանակ դու քո աշխատանքի համար կստանաս մեծ նվեր. այդ նվերը կլինի իմ գեղեցիկ աղջիկը. նա քո կինը կդառնա»:

Այսպես պատասխանեց Իմարիները.

«Ես անպայման կսարքեմ Սամպոն, այդ քո ասած բաղի փետուրից, ոչխարի բրդից, կովի անապական կաթից և գարու հատիկներից. այո՛, գեղեցիկ կափարիչով հրաշագործ Սամպոն կսարքեմ, որ ամեն բարիք ստեղծի մարդու համար: Չէ՞ որ ես սարքել եմ շատ բաներ, որ առաջներում չի եղել»:

Եվ գնաց ճարտար դարբինը հարմար տեղ փնտրելու իր դարբնոցի համար: Ամբողջ Պոխյույան ման եկավ, շատ օրեր անցկացրեց լեռներում ու դաշտերում և վերջապես գտավ մի հարմար քարանձավ: Այնտեղ նա սարքեց հնոց, մյուս օրը հարմարեցրեց փուքսը, ապա զնդանն ամրացրեց գետնին:

Եվ այն ճարտար դարբինը վերցրեց բաղի փետուրը, ոչխարի բուրդը, կովի անապական կաթը և գարու հատիկներն ու բոլորը զցեց հնոցի մեջ. փուքսի մոտ ստրուկներ դրեց, որ քուրայի բոցը միշտ թեժ պահեն:

Երեք օր ու երեք գիշեր անդադրում աշխատեց դարբինն իր թեժ դարբնոցում և ահա՛ մյուս առավոտ ասաց.

«Տեսնենք ի՞նչ է ստացվել քուրայում»:

Բոցերի միջից հանեց մի ոսկեփայլ աղեղ՝ ամրակուռ դաստակով:

Աղեղը թեև արտաքինով շատ գեղեցիկ էր, բայց վատ հատկություն ուներ, ամեն օր նա զոհ էր պահանջում, իսկ տոն օրերին կրկնակի չափով:

Իմարիները դժգոհ էր իր սարքած աղեղից. չէ՞ որ նա մարդկանց երջանկություն չէր բերում, այլ կոտորում էր, ուստի ջարդեց աղեղը, նետեց հնոցի մեջ և հրամայեց ստրուկներին թեժացնել կրակը:

Մյուս օրն ասաց.

«Հապա տեսնենք, ի՞նչ է կոփվել մեր քուրայում»:

Եվ բոցերի միջից հանեց մի սքանչելի նավակ: Կարմիր էր նրա առագաստը, կողերն էլ ոսկեգօծ:

Նավակը թեև արտաքինով գեղեցիկ էր, բայց վատ հատկություն ուներ. ինքն իրան կովի էր գնում, առանց հրամանի պատերազմ մղում:

Իմարիները բոլորովին չուրախացավ նավակի այդպիսի հատկությունների համար: Բարկացավ, ջարդ ու փշուր արեց նավակը և կրկին նետեց բոցերի մեջ: Հրամայեց ստրուկներին ավելի բորբոքել կրակը:

Եվ ահա երրորդ օրը նա ասաց. «Տեսնենք այս անգամ ի՞նչ է ստացվել մեր քուրայում»: Հնոցից դուրս եկավ մի կով. նրա կոտոշները ոսկուց էին և ճակատին արևն էր փայլատակում:

Կովը տեսքով լավն էր, բայց վատ հատկություն ուներ. մշտապես քնում էր անտառում, մարդու մոտ չէր թողնում, և կաթը հոսում-կորչում էր արոտներում:

Իմարիները կովը մաս-մաս կտրտեց ու նետեց հնոցը:

Այս անգամ ճարտար դարբինը հրամայեց, որ քամիներն օգնեն իրեն: Փչեցին արևելյան և արևմտյան, հյուսիսային և հարավային հողմերը և ավելի թեժացրին բոցերն հնոցում: Կայծերը թռան դարբնոցից դուրս, ծուխը բարձրացավ հասավ ամպերին: Երկու օր շարունակ հմուտ դարբինն աշխատեց դարբնոցում և երրորդ առավոտն ասաց.

«Տեսներք, թե ինչ է ստացվել»:

Եվ տեսավ, տեսավ և հրճվեց: Սամպոն էր ձև ու կերպարանք առնում, այն գեղեցիկ պսպղուն կափարիչով, ինքնադաց Սամպոն: Ճարտար դարբինը ձեռքն առավ մուրճը, ամուր կռեց ու կոփեց և ահա, վերջապես պատրաստեց Սամպոն:

Ինչ բարիք ցանկանաս՝ իսկույն կտա հրաշք-ինքնադաց Սամպոն:

Այո՞ւր է պետք՝ պատրաստիր պարկեր:

Ա՞ղ է պետք՝ տակառներ հասցրու:

Փո՞ղ է հարկավոր՝ հաշվիր ու վերցրու ուզածիդ չափ:

Պոխյուլայի ազահ պառավն անմիջապես վերցրեց հրաշագործ Սամպոն և տարավ դրեց պղնձակուռ անձավի մեջ. երեք ոտքերով ամուր պատվանդան սարքեց. ամեն մեկ ոտքը ինը սաժեն՝ խրված էր գետնի մեջ. մեկ ոտքը անձավի խորքն էր իջնում, մյուսը ծովափի ուղղությամբ էր, երրորդն էլ ամրակուռ ժայռի կողմն էր ձգված: Անձավի դռանն էլ ջաղուն ինը պողպատե կողպեք դրեց:

Իմարիները աշխատանքն ավարտելով, այսպիսի խոսքերով դիմեց մռայլ Պոխյուլայի տիրուհուն.

«Ես իմ խոսքը կատարեցի, պատրաստեցի հրաշք-ինքնադաց Սամպոն. կտա՞ս ինձ քո գեղեցկուհի աղջկան, որ տանեմ Կալեվալա, որ իմ տունը մտնի, իմ կինը դառնա»:

Պոխյուլայի գեղեցկուհին ինքը մոտեցավ ճարտար դարբին և այսպես խոսեց.

«Եթե ես գամ քո երկիրը, հապա եկող ամառը կկուները ո՞ւմ համար պիտի կվկվան, ո՞վ պիտի հորդորի թռչուններին, որ այնպես անուշ-անուշ գեղգեղան ու երգեն: Երբե՞ք, երբե՞ք ես չեմ հեռանա իմ տնից, իմ մոր մոտից, երբեք չեմ թողնի մեր դաշտերն ու բլուրները: Եթե ես հեռանամ իմ հայրենի աշխարհից, թռչուններն էլ ընդմիշտ կլռեն և մեր դաշտերի ու բլուրների վրա այլևս նրանց երգը չի լսվի»:

Շատ տխրեց Իմարիները:

Հրաշագործ Սամպոյի տերը դարձավ ջաղու Լոուխին:

Իսկ Սամպոն, այսպես էր սահմանված ճակատագրից, կարելի էր միայն մեկ անգամ կառուցել:

Դարբինը գրկվեց նաև գեղեցկուհուց. նա գլուխը կախեց և դառն մտածմունքի մեջ ընկավ, որ պառավն այդպես խաբեց իրեն. այժմ մտածում էր, թե ինչպես հեռանա այդ մռայլ ու դաժան աշխարհից և իր հայրենի աշխարհին հասնի:

Նենգ պառավն այսպես տխուր տեսնելով դարբնին՝ հեզմանքով ասաց.

«Ով ճարտար դարբին, ինչո՞ւ ես տխրել, գլխարկդ ինչո՞ւ է թեքվել. գուցե մտածում ես, թե ինչպե՞ս հասնես քո հայրենի աշխարհը»:

Դարբինը պատասխանեց.

«Հենց այդ մասին եմ մտածում, թե ինչպես վերադառնամ իմ հայրենիքը և այնտեղ անցկացնեմ կյանքիս մնացորդը»:

Պառավը նրան կերակրեց, խմեցրեց, ապա մի նավակ տվեց և ճամփու դրեց:

Դարբինն սկսեց թիավարել. նավակը սահեց ծովի կապույտ ջրերի վրայով՝ մեկ օր, երկու օր և երրորդ օրվա վրա Իվնարինենն հասավ իր հայրենի աշխարհը, մտավ այն տունը, ու ինքը ծնվել էր:

Վեյնեմեյնենը եկավ դարբնի մոտ ու հարցրեց.

«Ով դու իմ սիրելի եղբայր, կառուցեցի՞ր արդյոք Սամպոն»:

Ճարտար դարբինը պատասխանեց.

«Այո՛, կառուցեցի հրաշագործ ինքնադագ՝ պսպղուն կափարիչով Սամպոն. մի կողմով այլուր է աղում նա, մյուսով աղ, իսկ երրորդ կողմից փող է ստացվում: Եվ աշխատում է Սամպոն ամեն օր լուսաբացին. մի չափ աղում է, որ ժողովուրդը գոհանա, մի չափ էլ աղում է վաճառքի համար, երրորդ չափն էլ խնջույքների համար»:

## **Ռունա ԺԱ**

Լեմմինկայնենը ամուսնանում է գեղեցկուհի Կյուլլիկկիի հետ

Կալեվալայի ծովաշատ աշխարհի մի կղզում ապրում էր Կաուկոմեյին, նույն ինքը Լեմպի որդի Լեմմինկայնենը. գեղեցիկ ու թիկնեղ էր նա. շատ համարձակ ձկնորս էր. քաջ որսորդ և խիստ ուրախ երիտասարդ:

Բայց տղան թերութիւն էլ ուներ. շատ էր սիրում աղջիկների ետևից ընկնել և գիշերներով թափառում էր այն տեղերում, որտեղ աղջիկները երգում ու պարում էին:

Մի օր էլ Լեմմինկայները լսեց, որ Սաարիում մի գեղեցիկ աղջիկ կա: Շատ երկրներից փեսացուներ են եկել նրա ձեռքը խնդրել և աղջիկը մերժել է: Էստոնիայից գնացած փեսացուին ասել է.

«Ձեր արծաթը և ոսկին իզուր մի ծախսեք, ես երբեք Էստոնիա չեմ գնա, նրա ջրերում չեմ նավարկի, ոչ ձեր ձուկն ու հացը կուտեմ, ոչ էլ ձեր ջուրը կխմեմ»:

Բայց ուրախ Լեմմինկայները ասաց. «Չէ՛ որ չէ՛, ես պիտի անպայման Սաարի գնամ և այդ հպարտ աղջկա հետ ամուսնանամ»:

Մայրը որդուն հորդորում էր չգնալ.

«Իմ սիրելի որդյակ, մի՛ գնա, այդ աղջիկը նշանավոր տոհմի աղջիկ է, իսկ դու սովորական մի ձկնորս ես, քեզ աղջիկ չեն տա»:

Տղան պարծեցավ.

«Իսկ մի՞թե մեր տոհմը պակասն է նրանցից»:

Մայրն աղաչեց.

«Միբելի որդյակա, թե գնաս այնտեղ և քո վարմունքով Սաարիի աղջիկներից մեկն ու մեկին նեղացնես, շատ դժվար դրության մեջ կընկնես: Սաարիի բոլոր այրերն ու փեսացուները սրերով քեզ վրա կհարձակվեն, և դու մենակ չես կարողանա նրանց դիմադրել»:

Լեմմինկայները չլսեց մորը, իր ուժեղ ձին լծեց սահնակին և քշեց հասավ Սաարի:

Սաարիի կանայք ու աղջիկները, երբ տեսան թե ինչպիսի կոպիտ շարժ ու ձևերով, սահնակն էլ պատեպատ կպցնելով Լեմմինկայները գյուղ մտավ, սկսեցին ծիծաղել:

Լեմմինկայները շրթունքը կծեց և այսպես ասաց.

«Ոչ մի տեղ ես չեմ տեսել ու չեմ լսել, որ կանայք և աղջիկները ծիծաղեն ինձ վրա»:

Եվ անմիջապես ավելացրեց.

«Այս Սաարիում կա՞ այնպիսի տեղ, որտեղ հավաքվում են աղջիկները. ես լավ պարել ու երգել գիտեմ, աղջիկներին շատ կուրախացնեմ»:

Աղջիկները պատասխանեցին.

«Մեր Սաարիում շատ այդպիսի տեղեր կան, թե մարգագետիններում, թե անտառի բացատներում: Թե կարող ես հովիվ դարձիր, ցերեկները հոտներն արածացրու, երեկոներն էլ աղջիկների հետ քեֆ արա»:

Լեմմինկայները առանց երկար-բարակ մտածելու հովիվ դարձավ: Ցերեկները հոտն էր արածացնում, իսկ երեկոյից մինչև ուշ գիշեր երգում ու պարում էր աղջիկների հետ: Էլ ոչ ամուսնացածները, ոչ էլ օրիորդները նրա վրա չէին ծիծաղում: Եվ ուրախ տղան շատ-շատերի հետ երգեց-պարեց, քեֆ քաշեց:

Բայց աղջիկների մեջ կար մեկը, որ նշանավոր տոհմից էր և բոլոր փեսացուներին մերժել էր և հիմա էլ Լեմմինկայների հետ ոչ երգում էր, ոչ պարում: Այդ չքնաղ գեղեցկուհին Կյուլլիկկին էր:

Լեմմինկայները մի հարյուր անգամ փորձ արեց աղջկան մոտենալու, և մի օր էլ վերջապես ասաց, որ ուզում է նրա հետ ամուսնանալ:

Այն չքնաղ Կյուլլիկկին այսպես ասաց.

«Իզուր ես իմ շուրջ-բոլորը ման գալիս: Ես քեզ պես աղքատի հետ չեմ ամուսնանա: Իմ փեսացուն պետք է թիկնավետ և գեղեցիկ լինի, չէ՞ որ ես բոլոր աղջիկներից գեղեցիկ եմ»:

Օրեր անցան, մի երեկո դյուցազնը տեսավ, որ մի խումբ աղջիկներ անտառի եզրին պարում են: Նրանց մեջ էր նաև չքնաղ Կյուլլիկկին: Լեմմինկայները անմիջապես գնաց, թամբեց ամենաուժեղ ձին և քշեց պարողների կողմը: Ճարպիկ շարժումով բռնեց աղջկա մեջքից, թոցրեց ձիու մեջքին և փախցրեց: Քիչ հետո աղջկան դրեց սահնակի մեջ, պարանով կապեց և սահնակը քշելով, ձայն տվեց պարող աղջիկներին.

«Չլինի թե մատներ ինձ, որ ես փախցրի Սաարիի չքնաղ աղջկան: Լավ իմացեք, եթե չլսեք ինձ և մատներ ք, ես այնքան գորեղ եմ, որ ով էլ գա ինձ վրա, միևնույն է, ես բոլորին կջարդեմ և դուք կգրկվեք ձեր ամուսիններից, ձեր սիրած կտրիճներից»:

Իսկ Կյուլլիկկին տխուր ձայնով խնդրում էր.

«Թող ինձ վերադառնամ մեր տունը: Մայրս հիմա լաց է լինում ինձ համար: Եթե ինձ ազատ չթողնես, իմ հինգ եղբայրն ու հորեղբորս յոթը տղաները շուտով կհասնեն մեր ետևից և ինձ կխլեն քո ձեռքից»:

Բայց կտրիճը չթողեց, որ աղջիկը տուն դառնա:

Աղջիկը լաց եղավ, ասաց.

«Ա՛խ, ես իզուր ծնվեցի: Մի՞թե նրա համար մեծացա, որ այսպիսի անպիտան մարդու կինը դառնամ, մի մարդ, որ միշտ պատրաստ է կռիվ անել»:

Կտրիճ Կաուկոմելին պատասխանեց.

«Կյուլլիկկի, դու իմ սրտի ծաղիկ, դու մեղրից էլ, բոլոր պտուղներից էլ քաղցր ես. բոլորովին մի տանջիր քեզ: Ես քեզ երբեք չեմ նեղացնի: Քեզ կսիրեմ, կփայփայեմ, միշտ քո կողքին կլինեմ: Ինչո՞ւ ես լալիս, այդպիսի դառն հոգոցներ հանում: Դու կարծում ես, թե ես աղքատ եմ: Ո՛չ, ես ունեմ շատ կովեր, որոնք առատ կաթ են տալիս, իմ հայրենի դաշտերում շատ ընտիր պտուղներ են աճում, իմ տանը քեզ համար ամեն տեսակ ընտիր ուտելիք պատրաստ կլինի: Ես թեև նշանավոր տոհմի գավակ չեմ, բայց ազնիվ ընտանիքի որդի եմ: Իմ բազուկը շատ զորեղ է և իմ հայրն ու պապն էլ շատ մեծ համբավ են ունեցել: Ով իմ դեմ գա, ես իմ թրով նրա դեմ կելնեմ, իմ թրից բոց է ցայտում, և ոչ մեկը չի դիմանա իմ հարվածին»:

Աղջիկը վախեցավ և ասաց.

«Որ այդպես է, Լեմպի որդի, թե ուզում ես, որ ես քո կինը լինեմ, թե ուզում ես ինձ գրկես-փայփայես, երդվի՛ր, որ երբե՛ք այլևս կռիվ չես անելու: Թե իմանաս կռիվ անելով, պատերազմ մղելով նույնիսկ շատ ոսկու և արծաթի տեր կլինես, երդվիր, որ ինձ չես թողնի և կռիվ չես սկսի»:

Լեմմինկայները, նույն ինքը Կաուկոմեյլին, պատասխանեց.

«Ես հանդիսավոր երդում եմ տալիս, որ այլևս երբե՛ք կռիվ չեմ անի: Ինչքան էլ ոսկու և արծաթի կարիք ունենամ, միևնույն է չեմ ցանկանա դրանք կռվով ձեռք բերել: Դու էլ խոսք տուր, որ ինչքան էլ երգել ու պարել ցանկանաս, իմ տանից դուրս չես գնա, գյուղի փողոցներում ման չես գա»:

Այսպես երկուսով երդվեցին ամեն ինչ տեսնող Բարձրյալն Աստծու առաջ, որ Լեմմինկայները այլևս կռիվ չի գնա, Կյուլլիկկեն էլ խաղ ու պարի համար գյուղի փողոցներում չի ման գա:

Լեմմինկայները քեց սահնակը և շուտով մոտեցավ հայրենի տանը: Աղջիկը նայեց տունն ու ասաց.

«Այս խրճիթը մի քանի տեղից ճաքճաք է, երևում է մառանն էլ դատարկ է: Իհարկե սրա տերը մի աննշան մարդ է»:

Բայց ուրախ Լեմմինկայները պատասխանեց.

«Բոլորովին մի մտահոգվիր, ես քեզ համար լավ գերաններից և ընտիր տախտակներից նոր տուն կսարքեմ, սենյակները շքեղ կլինեն և տունն էլ ամեն բարիքով կլցնեմ»:

Եվ աղջկա ձեռքից բռնեց կտրիճ տղան ու երկուսով տուն մտան: Մայրն ասաց.

«Իմ ազիզ որդի, ինչո՞ւ այդքան շատ մնացիր օտար աշխարհում»:

Տղան պատասխանեց.

«Դե հիմա կանայք և օրհորդները թող ծիծաղեն ինձ վրա: Ես նրանցից ամենալավ ու գեղեցիկն ընտրեցի և իմ հորական տունը բերի. սիրելի մայր իմ, ինչ որ ցանկանում էի՝ ձեռք բերեցի. դե, ուրեմն, լավ ամուսնական անկողին պատրաստիր, փափուկ բարձեր դիր քո որդու և քո հարսի համար»:

Մայրն այսպես խոսեց.

«Փառք քեզ ամենակարող Աստված, որ դու ինձ այսպիսի հարս պարգևեցիր. նա իմ օջախը կվառի, գեղեցիկ հյուսվածքներ կանի, լվացքը կանի, տուն ու տեղը մաքուր կպահի... իսկ դու իմ հարսիկ, գոհ եղիր ճակատագրից, որ այսպիսի լավ ամուսին գտար: Սիրելի որդյակս, դու էլ լայն լուսամուտներով նոր տուն սարքիր, թող սենյակները շքեղ լինեն և տունն էլ ամեն բարիքով լցրու. չէ՞ որ դու այսպիսի սիրունիկ, մեծ-նշանավոր տոհմի աղջկա տիրացար»:

## **Ռունա ԺԲ**

Լեւմինկայները գժտվում է կնոջ հետ. թողնում է տունը և մեկնում է Պոխյոլա

Լեւմինկայները և Կյուլլիկկին շատ սիրով ապրեցին իրար հետ: Ոչ տղան էր կռվի գնում, ոչ էլ աղջիկն էր գյուղամեջ ման գալիս:

Եվ ահա մի օր Լեւմինկայները գնաց ձուկ որսալու, որսը դժվար էր. գիշերը տղան մնաց ծովափին: Կյուլլիկկին երեկոյան տանից դուրս գնաց, հասավ գյուղամեջ, ուր աղջիկները պարում էին:

Լեւմինկայներն ի քույրը՝ Այնիկկին եղբորն ասաց.

«Իմ սիրելի եղբայր, երբ դու տանից բացակա էիր, Կյուլլիկկին գյուղամեջ գնաց և տղաների ու աղջիկների հետ պարեց»:

Երիտասարդ դուստրը մռայլեց, շատ գայրացավ, մի ամբողջ շաբաթ խելքը գլուխը չէր գալիս. վերջը մորն ասաց.

«Իմ թանկագին մայր, իմ վերնագգեստը լվա սև օձի թույնի մեջ, լվա և չորացրու, որ ես հագնեմ, գնամ կռվեմ Պոխյոլայի այրերի դեմ: Ես այլևս չեմ կարող մնալ տանը. չէ՞ որ Կյուլլիկկին իր երդումը դրժեց և գնաց գյուղամեջ տղաների ու աղջիկների հետ պարեց»:

Կյուլլիկկին այսպիսի խոսքերով դիմեց ամուսնուն.

«Ով դու իմ սիրելի Կաուկո, աղաչում եմ, կռիվ մի գնա. գիշերը վատ երազ եմ տեսել. մեր տունը կրակ էր ընկել, բոցերը լուսամուտից և դռներից այնպես էին ժայթքում, որ ամեն բան այրեցին-մոխիր դարձրին»:

Ուրախ Լեմմինկայները պատասխանեց.

«Կանանց երագներին բոլորովին չեմ հավատում, ինչպես և չեմ հավատում նրանց երդումին»:

Այա դարձավ մորը:

«Իմ սիրելի մայր, բեր իմ ռազմական կապան: Ուզում եմ կռիվ գնալ, ուզում եմ խմել ռազմի գարեջուրը»:

Մայրը պատասխանեց.

«Իմ ազիզ որդի, կռիվ մի գնա. մեր տանն ինչքան ասես գարեջուր կա. խմիր ինչքան քեֆդ կուզի, խմիր առավոտից մինչև իրիկուն»:

Լեմմինկայները պատասխանեց.

«Չեմ ուզում տան գարեջուրը. ռազմի դաշտում սովորական ջուրն ինձ համար ավելի լավ է, քան տան ընտիր խմիչքը: Ասում եմ բեր իմ ռազմի կապան: Ես պիտի Պոխյոլա գնամ և այնտեղից ոսկի ու արծաթ բերեմ»:

Մայրն ասաց.

«Իմ սիրելի որդի, մենք տանը ոսկի էլ ունենք, արծաթ էլ: Այ թե ինչ տեղի ունեցավ երեկ. ստրուկը վարում էր արտը, որտեղ օձեր էին վխտում. և ահա՛ հանկարծ հողում թաքցրած մի արկղ գտավ. բացեցինք արկղը՝ մեջը լիքը ոսկի և արծաթ. գնա՛նք, տե՛ս, մառանումն եմ պահել»:

Լեմմինկայները պատասխանեց.

«Ես չեմ ուզում գետնի տակից պատահաբար գտնված գանձը. ինձ համար շատ ավելի արժեք ունի կռվում ձեռք բերած ոսկին ու արծաթը, քան թե իմ տան լիքը սնդուկները. բեր իմ ռազմի կապան, որ Պոխյոլա գնամ և այնտեղի այրերի դատաստանը տեսնեմ:

Ես ուրիշ միտք էլ ունեմ. գնամ աչքովս տեսնեմ այնտեղի աղջիկներին և ամենագեղեցիկին ինձ կին բերեմ»:

Մայրը հորդորեց.

«Իմ սիրելի որդի, քո կինը՝ Կյուլլիկկին ամենքից սիրունիկն է: Ամոթ է, որ տղամարդը իր անկողնում երկու կին ունենա»:

Տղան պատասխանեց.

«Կյուլլիկկին գյուղ է գնում, երիտասարդների հետ քեֆ է քաշում, ուրիշների տանն է գիշերում»:

Մայրը թախանձեց.

«Մի՛ գնա, իմ թանկագին զավակ. դու կախարդությունից բան չես հասկանում, իսկ այնտեղ ամեն քայլափոխում կախարդների կհանդիպես և փորձանքի մեջ կընկնես: Այնտեղ չար են մարդիկ. նրանք կախարդանքով քեզ բորբոքուն կրակի մեջ կզցեն կամ վրադ տաք-տաք փոշի կլցնեն: Քո ուժովը դու չես հաղթի նրանց, ոչ էլ իմաստուն խոսքերով նրանց կզարմացնես»:

Լեամինկայենը համառեց.

«Ես նրանց կախարդանքի դեմ կախարդանք ունեմ: Մեկ անգամ նրանք կախարդանք արին և ինձ ճահիճը գցեցին. ես մինչև ծնկներս խրվեցի, բայց ես չընկճվեցի. ումի՛ց էի պակաս որ. ես ինքս էլ նույն բոպեին կախարդություն արի, երգեցի երգեր, որ սովորել էի հորիցս և ահա այն Պոխյուցիք, որ ինձ վրա էին եկել սրով ու նիզակով, տապարով ու նետով, դրանց բոլորին գցեցի ծովի ամենաթունդ ջրապտույտի մեջ և նրանք իրենց գենքերով կորան-ոչնչացան անդունդներում»:

Մայրը թախանձեց.

«Սիրելի որդյակս, Պոխյուլա մի գնա. ջադու պառավը քեզ աղջիկ չի տա. քեզ վրա կծիծաղեն: Դու ոչնչով չես կարող պարծենալ. իմացի՛ր, որ դու նշանավոր տոհմի զավակ չես»:

«Ես տեղն ու տեղս պարծանք եմ. դե, շուտ, բեր կապան և ձեռնոցներս. ես շուտ պիտի Պոխյուլա հասնեմ, գարեջուր խմեմ և հարսանեկան մեղր ուտեմ»:

Մայրը դարձյալ աղաչում է.

«Թեկուզ հազար տեսակ երգ էլ երգես, հազար տեսակ կախարդանք էլ անես, նրանց ձեռքից չես պրծնի. նրանք չար, դաժան և խորամանկ են»:

Տղան անկոտորում էր. այսպես պատասխանեց մորը.

«Ոչ, պիտի գնամ. թող Պոխյուլայի բոլոր քաջերն իմ դեմ գան. քամին ի՞նչ կտանի ժայռից: Երբ մի տուն դատարկ է՝ մահը ի՞նչ կտանի այդ տանից — ահա այդքան էլ պոխյուցիք կվերցնեն ինձնից: Ես նրանց կախարդանքին կախարդանքով կպատասխանեմ. նրանց խոսքերի դեմ էլ ունեմ իմ խոսքերը: Դե՛, բե՛ր, սիրելի մայրիկ, բե՛ր իմ զգեստները»:

Եվ տղան հազավ երկաթապատ կապա, պողպատե քամար կապեց մեջքին, կողքից էլ կախեց թուրը՝ կաշվե պատյանի մեջ: Հետո խոզանակով մազերը հարդարեց, ապա այն տվեց մորն ու ասաց.

«Պահիր այս խոզանակը, եթե ինձ որևէ դժբախտություն պատահի, այս խոզանակից արյուն կցայտի»:

Լեւոնիկայնենը սահնակին լծեց ոսկե բաշով ձին, նստեց սահնակը, մտրակեց ձիուն և քշեց առաջ:

Գնաց մեկ օր, երկու օր, երրորդ օրը մոտեցավ Պոխյոլային: Դյուցազնը այսպես խոսեց ինքն իր հետ:

«Իմ բազուկը գորավոր է, թուրս էլ շատ կտրուկ է: Ինձ օգնության հասե՛ք լեռների և գետերի ոգիներ. օգնեցե՛ք անտառների հավերժահարսեր, օգնեցե՛ք ինձ՝ ինչպես հերոսին են օգնում իր բարեկամները. օգնեցե՛ք, որ թշնամու թուրն ինձ չվնասի, նրանց չար նետերն ինձ չդիպչեն: Եթե այս բոլորը քիչ է, ապա քեզ եմ դիմում, ո՛վ բարձրյալ Ուկկո, դու երկնքի տիրակալ. տուր իմ բազկին և թրին ավելի գորություն, որ ես կարողանամ շատ թշնամիների ու կախարդների հաղթել»:

Վերջապես նա մտավ Պոխյոլայի մռայլ աշխարհի մի գյուղ: Կանգնեց ներքևի փողոցի տներից մեկի առաջ և ձայն տվեց.

«Այս տան մեջ չկա՞ մեկը, որ օգնի հոգնած ճամփորդին սահնակից արձակել ձիուն»:

Պատասխանեց մի փոքրիկ տղա.

«Այստեղ այդպիսին չկա, գնա՛, հեռացիր մեր տանից»:

Լեւոնիկայնենը ձին քշեց. գնաց միջին փողոցը, մոտեցավ մի տան դռան և հարցրեց.

«Այս տանը չկա՞ մեկը, որ օգնի հոգնած ճամփորդին սահնակից արձակել ձիուն»:

Պատասխանեց վառարանի կողքը նստած մի ծեր կին.

«Ո՛նց չէ. հենց քեզ էինք սպասում: Ոչ թե մեկը, այլ հարյուրը կճարվի, որ քեզ նման անպիտանին այստեղից վռնդի եկածդ ճամփովը՝ նախքան արևը մայր կմտնի, նախքան գիշերը վրա կհասնի»:

«Այ թե ի՛նչ, — ասաց ուրախ Լեւոնիկայնենը, — թրիս հրաման կտայի, որ քեզ պատասխան տար, բայց չեմ ուզում ասածդ բանի տեղ դնել»:

Եվ էլի քշեց ձին և այս անգամ կանգնեց վերին փողոցի մի տան առաջ: Էլ մարդու ձայն չտվեց, ինքն իր ձեռքով ձին արձակեց սահնակից, կապեց մի ծածկի տակ և մտավ բակը, բայց այնպես զգույշ ու կամաց, որ շներն էլ չիմացան նրա գալը: Մոտեցավ լուսամուտին ու ներս նայեց: Տեսնի, ի՛նչ տեսնի. խրճիթը լիքն է մարդկանցով. պատի մոտ նստել են կախարդ-երգիչները, դռան մոտ գուշակողները, վառարանի վրա հմայողները, լուսամուտի մոտ հեքիմները: Դրանց մեջ է նաև պառավ Լոուիսին: Եվ բոլորը երգում են կախարդական երգեր:

Ուրախ Լեմմինկայները այնքան գաղտագողի մտավ խրճիթը, որ ոչ ոք չիմացավ, թե ոնց բացվեց դուռը: Ներս մտավ ու ասաց.

«Ամենալավ երգն էլ վերջ ունի. իմաստուն բառեր ասելու համար շատ խոսքեր պետք չեն»:

Շփոթվեցին կախարդներն ու հեքիմները: Իսկ ջաղու Լոուիսին վեր թռավ տեղից ու ասաց.

«Ես նրա համա՛ր իմ շանը մտով կերակրեցի, թարմ արյուն խմացրի, որպեսզի նա այսօր օտար մա՛րդ ներս թողնի: Դու ի՞նչ հերոս ես, որ իմ շունը քո գալը չիմացավ, քեզ վրա չհարձակվեց»:

Այսպես պատասխանեց ուրախ Լեմմինկայները.

«Այնքան էլ հեշտ բան չէ, որ շունն ինձ վրա հաչի: Ես այնքան թույլ չեմ, որ կատաղի շներն ինձ զգզեն: Ես շատ իմաստուն բաներ եմ սովորել իմ ծննդյան օրից: Ես ամեն տեսակ փորձանքի կոփմանամ: Երբ դեռ փոքր էի, մայրս ամառվա գիշերներին երեք անգամ էր լողացնում ինձ, իսկ աշնան գիշերներին՝ ինը անգամ: Պապիցս իմաստություն ժառանգեցի, հորիցս երգեր սովորեցի, որպեսզի ուր էլ գնամ՝ երգերով ինձ պաշտպանեմ, որպեսզի տանը գորեղ լինեմ, իսկ օտարության մեջ կարողանամ հմայություններ անել»:

Եվ ուրախ Լեմմինկայները սկսեց երգել, երգեց հզոր, կախարդական երգեր:

Բոցեր ցայտեցին երկաթե զգեստներից, կայծեր ցայտեցին աչքերից: Լսեցին նրա երգերը Պոխյոլացիք և ոչ ոք էլ չկարողացավ որևէ խոսք ասել. Լեմմինկայները նրանց՝ Պոխյոլայի այդ չար մարդկանց քշեց այս ու այն կողմ. որին վնդեց դեպի խորշակից ծեծված դաշտերը, որին դեպի այն լճերը, ուր ձկներ չկային, որին էլ քար դարձրեց ու նետեց սարսափելի ջրվեժների հոսանքի տակ:

Նա կախարդեց և՛ հարուստներին, և՛ մեծերին ու փոքրերին. միայն մի անպիտան փոնչոտ, գառամած հովվի նա ձեռք չտվեց:

Այդ չար ծերունին հարցրեց.

«Ով դու ուրախ Լեմմինկայնեն, բոլորին՝ մեծին թե փոքրին կախարդեցիր, այս ու այն կողմ ցրեցիր. հապա ինչո՞ւ ինձ խնայեցիր»:

Այսպես պատասխանեց Լեմմինկայները.

«Քեզ խնայեցի, որովհետև դու մարդկանց մեջ ամենագարշելին ես. երբ դու դեռ երիտասարդ էիր՝ ամենաչար հովիվն էիր: Դաշտ եկող երեխաներին, լինեին տղա, թե աղջիկ, դու նրանց մոտենում էիր պիղծ մտքով ու պիղծ ձեռքերով: Անասուններն իսկ քո ձեռքին տանջվում էին: Դու ինքդ արդեն քո չարությամբ պատժված ես. եղկելի ես ու գառամյալ. մարդ իսկի քո երեսին էլ չի ուզում նայել. դրանից էլ լավ պատի՛ժ»:

Շատ նեղացավ չար ծերունին: Դուրս ելավ տանից, գնաց դաշտը և թաքնվեց Տոունելի գետի եզրին, պղտոր ջրերի մոտ, որ երբ Լեմմինկայենը Պոխյուլայից տուն վերադառնա, նրանից վրեժը լուծի:

## Ռունա ԺԳ

Լեմմինկայենը խնդրում է Պոխյուլայի տիրուհու աղջկա ձեռքը

Եվ ահա՛ ուրախ Լեմմինկայենը դիմեց Պոխյուլայի տիրուհուն.

«Ես եկա, որ դու քո ամենագեղեցիկ աղջկան ինձ կնության տաս»:

Լոուխին այսպես պատասխանեց.

«Ես քեզ աղջիկ չեմ տա, ոչ գեղեցիկը, ոչ էլ եթե տգեղն ունենայի. դու արդեն վաղուց կին ունես»:

Լեմմինկայենը պատասխանեց.

«Կյուլլիկկին ես տանից վռնդեցի. նա գնում էր ուրիշների տունը՝ երգում ու պարում: Այստեղից ուզում եմ ավելի լավ հարսնացու տանել: Տուր ինձ քո սիրունիկ, գեղեցիկ գանգուրներով աղջկան»:

Լոուխին պատասխանեց.

«Երբեք իմ աղջիկը հասարակ մարդու չեմ տա: Եթե ուզում ես իմ սիրելի աղջկա հետ ամուսնանալ, ապա կարո՞ղ ես ինձ համար բռնել այն արագավազ մեծ եղջերուն, որն ապրում է Հիյսիի անտառում»:

Լեմմինկայենը առանց երկար մտածելու ասաց, որ այո՛, անպայման կբռնի մեծ եղջերուն. դրա համար ամեն ինչ ունի՝ սուր, նետ, լարված աղեղ էլ ունի, միայն դահուկ չունի:

Լեմմինկայենը գնաց դահուկ սարքող վարպետի՝ Լոուլիկկիի մոտ և խնդրեց.

«Ով դու լապանդացի վարպետ, սարքիր ինձ համար ամենալավ դահուկները, ես գնում եմ հեռվում փոված Հիյսիի անտառը որ բռնեմ մեծ եղջերուն»:

Վարպետը գլուխն օրորեց.

«Մի գնա, ուրախ Լեմմինկայենն, մի գնա Հիյսիի անտառը, իզուր տեղը մի ընկնի եղջերուի ետևից. նրան չես կարողանա բռնել, շատ-շատ փտած քոթուկ կընկնի ձեռքդ»:

Կտրին տղան ասաց.

«Դու միայն ինձ համար ամուր դահուկներ սարքիր, որի տակը շատ ողորկ լինի և ես կբռնեմ Մեծ եղջերուն»:

Եվ վարպետն սկսեց աշխատել. գիշերն աշխատեց՝ աջ կողմի դահուկը պատրաստեց, ցերեկն էլ ձախ կողմինը. փայտերը լավ հղկեց, օղակներն էլ տեղը-տեղին: Իհարկե իր աշխատանքի արժեքն էլ լավ գնահատեց. ամեն մեկ դահուկի համար ջրասամույրի մորթի ուզեց, ամեն մեկ օղակի համար էլ աղվեսի մորթի:

Լյուուիկկին դահուկները յուղեց և ասաց.

«Կա՞ աշխարհում այնպիսի հերոս, որ արժանի լինի այս հրաշալի դահուկներով որսի գնալ»:

«Ես այդ հերոսն եմ», — ասաց Լեմմինկայները և ոտքերին հարմարեցնելով դահուկները ելավ դաշտ ու դուրան. սահելով ճերմակ ձյունի վրայով, երգեց.

«Ամբողջ աշխարհում, այս երկնքի տակ, անտառի խորքում չի լինի ոչ մի չորքոտանի, որին չկարողանա հասնել ու բռնել փառապանծ Կալեվալայի որդին, երիտասարդ Լեմմինկայները»:

Չար Հիյսին լսեց հերոսի երգը և ծիծաղեց.

«Ինչքան կուզե, թող արագ սահի Կալեվալայի որդին, ցրտից կսառչի, բայց ձեռքը բան չի ընկնի»:

Եվ բաց թողեց արագավազ Մեծ եղջերուին:

Եղջերուն սրընթաց անցնում էր Պոխյոլայի դաշտերով ու անտառներով: Լեմմինկայները սուրաց նրա ետևից, դահուկներից կայծեր էին ցայտում, ձողերից գոլորշի էր բարձրանում:

Եվ հանկարծ Լեմմինկայները լսեց, որ Պոխյոլայի հեռավոր մի գյուղից լսվում են շների վնգստոց, երեխաների ճիչ, պառավների լաց ու կոծ:

Հերոսը թափն ուժեղացրեց. քշեց հասավ այդ գյուղը, հարցրեց.

«Ի՞նչ փորձանք է եկել ձեր գլխին, որ այդպես վնգստում են շները, ճչում են երեխաները, պառավներն էլ այդպես դառն ողբում են»:

Գյուղացիք պատասխանեցին.

«Նրա համար են շները վնգստում, երեխաները ճչում, մեծերը ողբում, որովհետև այստեղով անցավ Հիյսի արագավազ եղջերուն: Իսկ որտեղից անցնում է այդ Մեծ եղջերուն այնտեղ մի փորձանք է գալիս մարդկանց գլխին: Այդ եղջերուն շուռ տվեց մեր ջրերով լիքը տակառները, կրակի մեջ թափեց մեր կերակուրները. մնացինք ծարավ ու քաղցած»:

Ուրախա Լեւոնիկայները ասաց.

«Դարդ միք անի, շուտով ես այդ եղջերուին կբռնեմ և ձեզ բոլորիդ համար ուտելիք կլինի. միայն թե լավ մաքրեցեք պուտուկները, երեխաները թող տաշեղներ հավաքեն, պատավներն էլ թող օջախները թեժացնեն»:

Լեւոնիկայներն ավելի ուժով հենվեց դահուկների ու ձողերի վրա ու քշեց եղջերուի հետևից:

Դեռ մեկ քայլ չէր արել, որ գլուղացիների աչքից կորավ, երկրորդ քայլին արդեն ձայնը չէր լսվում, երրորդ քայլին արդեն հասավ Մեծ եղջերուին և թափով թռավ նրա մեջքին:

Հետո արդեն Լեւոնիկայները Մեծ եղջերուին կապկպեց կաղնու ճյուղերից հյուսած պարանով, պարանն էլ կապեց թխկենու ցցից:

Հիյսիի Մեծ եղջերուն փրփրեց-կատաղեց, կաղնու ճյուղերից հյուսած պարանը կտրեց, թխկենու ամուր ցիցը ջարդեց և մի ոստյունով թռավ՝ սուրաց առաջ:

Շատ զայրացավ Լեւոնիկայները, փորձեց հասնել որսի ետևից, բայց դեռ մեկ քայլ չէր արել, որ դահուկների կաշեփոկերը կտրվեցին, ձողերը ջարդվեցին: Տղան նայեց, տեսավ եղջերուն արդեն անցավ անտառի թավուտները, հասավ դաշտերը և այնպես արագ էր սլանում, որ ականթոթափ արդեն կորավ հերոսի աչքի առջևից:

Գլուխը կախեց հերոսը և այսպես խոսեց.

«Թող ոչ ոք իր կյանքում չփորձի Հիյսիի անտառում Մեծ եղջերուին բռնել, ինչպես ես անբախտս փորձեցի: Դահուկներս ջարդեցի, ձողերս կտրեցի, բայց նպատակիս չհասա»:

## **Ռ-ՈՒՆԱ ԺԴ**

Լեւոնիկայները որսում է Մեծ եղջերուին. հետո բռնում է Հիյսիի հրեղեն ձիուն. Տոունելլիի ջրերում բաց որսալիս փորձանքի է հանդիպում

Շատ մտածեց ուրախ Լեւոնիկայները և ասաց. «Ամոթ է, որ դատարկ ձեռքով ներկայանամ Լոուիսիին: Չէ՛, չե՛մ հուսահատվի. մեկ էլ կփորձեմ բախտս». և քայլելով անտառի թավուտներում, հերոսն այսպիսի խնդիրք արավ.

«Ո՛վ դու երկնավոր հայր Ուկկո, լսիր իմ խնդիրը: Տուր ինձ ավելի լավ դահուկներ. օգնիր, որ նրանք ավելի արագ սլանան և ինձ հասցնեն Պոխյոլայի դաշտերը, տանեն Հիյսիի անտառը»:

Եվ քայլում ու քայլում էր հերոսը և էլի խնդիրք անում.

«Ահա՛, ես մտնում եմ Հիյսի անտառի խորքերը, արդեն երևում են Մեծ եղջերուի հետքերը, ողջո՛ւյն ձեզ, բուրներ և լեռներ, չքնաղ եղևնիներ և սոսիների պուրակներ: Ով դու անտառի տիրակալ այեհեր Տապիոլի, օգնիր, որ անցնեմ ճահիճների միջով, որ բռնեմ իմ որսը:

Ով դու անտառի տիրակալի որդի Նյուրիկկի, որ ծիրանի գլխարկ ունես գլխիդ, արահետների վրա նշաններ դիր, ցույց տուր սարերի վրայով անցնող ճանապարհները, որ ես որսորդս՝ անսխալ առաջ գնամ, և այսպես տանջանքով փնտրած որսիս տիրանամ:

Ով դու անտառի բարի տիրուհի՝ Միմերկկի, դու որ կապտավուն զգեստներ ես հագնում, դու որ բարի գործեր ես անում, ոսկով ու արծաթով զարդարիր ծառերի տերևները, ճահիճների ու արահետների վրայով սավաններ փռիր, որ ես՝ որսորդս, հեշտությամբ անցնեմ ու հասնեմ փախչող Մեծ եղջերուին:

Ով դու անտառի դուստր Տուուլիկկի, ընտրիր մի դալար ճիպոտ, խփիր Մեծ եղջերուի կողերին, ականջներից ու եղջուրներից բռնիր ու քշիր դեպի արահետը: Թե ճամփադ փակեն ջարդված, գետին ընկած քո ծառերը՝ դրանք մի կողմ շարտիր, թե ցանկապատներ հանդիպեն՝ շուռ տուր, գետնին հավասարեցրու. թե գետերն արգելեն ճանապարհդ՝ կարմիր մետաքսի ամուր գլխաշորերից կամուրջներ սարքիր և որսը քշիր իմ կողմը: Դե՛, շո՛ւտ, Մեծ եղջերուն իմ կողմը քշեք, թե չէ ձանձրալի է երկար գիշերները թափառել անտառում և նպատակին չհասնել»:

Անտառի տիրակալները լսեցին Լեմմինկայեննի խնդիրը:

Ճերմակամորուս Տապիոլին, փափուկ մուշտակն ուսերին, որդին՝ Նյուրիկկին, ծիրանի գլխարկը գլխին, տիրուհի Միմերկկուն՝ կապտավուն զգեստով, և անտառի չքնաղ դուստր Տուուլիկկին — բոլորը ելան իրենց կացարաններից, որ օգնեն որսորդին:

Նրանք անտառի խորքից Մեծ եղջերուին ուղղակի քշեցին Լեմմինկայեննի կողմը: Թե կանգ է առնում որսը, նրան հարվածում են կեչու ճյուղերից հյուսած ճիպոտով, թե ուզում է թաքնվել ծառերի ետևում՝ նրա եղջուրներից բռնած քշում են դեպի արահետը: Գետնին ընկած ծառերը Տապիոլին վերցնում և տաշեղի նման մի կողմ է շարտում: Թե ցանկապատի են հանդիպում՝ Միմերկկին շուռ է տալիս: Արագահոս գետը թե փակում է ճամփան — Տուուլիկկին մեկ ափից մյուսն իսկույն կամուրջ է կապում: Այսպիսով Մեծ եղջերուի բոլոր ճամփաները փակեցին, թողին մեկը և այդ ճամփով քշեցին նրան: Լեմմինկայեննը կանգնած էր այդ միակ ճամփի վրա և երբ եղջերուն մոտեցավ, նա ամուր պարանի օղակը զցեց նրա վիզը, բռնեց ու բերեց Լոուլիի մոտ, ասաց.

«Տիրուհի, ես իմ խոսքը կատարեցի, ահա՛ քեզ Մեծ եղջերուն՝ այժմ քո գեղեցիկ աղջկանը կտա՞ս ինձ կնություն»:

Ջադու պառավն ասաց.

«Ո՛չ, դեռ արժանի չես, որ աղջիկս քեզ կնության տամ: Ա՛յ, եթե բռնես այն երկարաբաշ ձիուն, որն արածում է Հիյսիի դաշտերում, այն ժամանակ գարնան ծաղկի նման իմ սիրունիկ աղջիկը քեզ հետ կամուսնացնեմ»:

Վերցրեց Լեմմինկայները ոսկե սանձը և գնաց փնտրելու երկարաբաշ ձիուն: Փնտրեց մեկ օր, երկու օր և վերջապես երրորդ օրը մի բլուրի վրա տեսավ հրաշք ձիուն: Բաշի մազերից կրակ էր ցայտում և երբ սմբակներով դոփում է՝ ժայռերն են ճաքճքում: Անհնար է մոտենալ: Այն ժամանակ կտրիճն այսպիսի խնդիրք արեց.

«Ով դու ամենակարող Ուկկո Աստված, քեզ հնազանդվում են որոտը, կայծակն ու ամպերը, առաքիլ երկնքից երկաթե կարկուտ, որ նա ծեծի այս ձիու կողերը, հարվածի գլխին, որ նա հնազանդ դառնա»:

Ուկկոն լսեց դյուցազնի խնդիրը: Երկաթե կարկուտ թափեց ձիու բաշին, մեջքին ու կողերին և ձին հանդարտվեց:

Լեմմինկայները մոտեցավ ձիուն, ասաց.

«Բարի ձի, ոսկեբաշ գլուխդ վար թեքիր, ես քեզ վատություն չեմ անի, քեզ չեմ նեղացնի. քեզ կհագցնեմ ոսկե երասանակ ու կտանեմ Պոխյոլայի տիրուհու մոտ»:

Ձին հնազանդվեց: Կտրիճը թռավ նրա մեջքին. գիշեր-ցերեկ վազեց ձին և դյուցազնին հասցրեց Պոխյոլայի տիրուհու շենքը. կտրիճն ասաց.

«Ո՛վ տիրուհի, ահա՛ և երկարաբաշ ձին: Հիյսիի հեռավոր դաշտերում սանձեցի նրան: Վերցրու այն քեզ: Հիմա պետք է արդեն, որ քո աղջկանը ինձ կնության տաս»:

Այն խորամանկ ու չար Լոուխին նորից խոսեց և ասաց.

«Դեռ արժանի չես, որ իմ աղջիկը քեզ կնության տամ: Ա՛յ, եթե Տուոնելիի սև ջրերում լողացող բադին նետի մեկ հարվածով սպանես, այն ժամանակ նոր կխոսենք»:

Լեմմինկայները էլի դեմ չկանգնեց. ուզեց գտնել վայրի բադին ու որսալ: Նետադեղը ուսը գցեց և ճամփա ընկավ:

Եվ ահա՛ այն պիղծ ու չար ծերունի հովիվը, որ պահ էր մտել Տուոնելի գետի սև ջրերի ափին, տեսավ մոտեցող Լեմմինկայներին: Իսկույն գետի պղտոր ջրերից դուրս քաշեց մի սև օձ և ինչպես նետ շարտեց երիտասարդի վրա: Օձը տղայի ձախ անթատակից մտավ և թոքերը ծակելով՝ աջ թիակի կողմից դուրս եկավ:

Մուր ցավից ուրախ Լեմմինկայներնի դեմքը մթազնեց. նա հիշեց իր սիրելի մորը և աղերսեց.

«Իմ հարազատ մայր, դու որ ինձ աշխարհ բերիր, դու որ ինձ մեծացրիր և դաստիարակեցիր, դու կարող ես իմանալ, թե որտեղ է այժմ քո դժբախտ որդին: Շուտով օգնության հասիր, որպեսզի ինձ ազատես այս ծանր փորձանքից, որ փրկես ինձ մահից»:

Իսկ այն դաժան գառամյալ հովիվը իր սուր թրով Կալեվալայի որդուն ութը մասի բաժանեց և նետեց այն պղտոր ջրերի հորձանքի մեջ: Նետեց ու ասաց.

«Դե, հիմա առհավետ մնա այդ պղտոր ջրերում, թե կարող ես, Մանալի թագավորության այդ հավերժական խավար անդունդում բադեր որսա»:

Եվ այսպես, Տուռնելիի սև ջրերի անդունդը՝ մեռյալների աշխարհն ընկղմվեց այն ուրախ փեսացուն:

## **Ռունա ԺԵ**

Մայրն օգնության է հասնում աղետված որդուն՝ Լեամինկայենին

Իսկ հերոսի մայրը նստած իր տանը խորը մտածմունքի մեջ է:

«Ի՞նչ եղավ իմ Կաուկոն, իմ սիրելի Լեամինկայենը. չեմ լսում նրա ոտնաձայնը, որ գա ու իր հորական տան դուռը բացի: Արդյոք ո՞ր սարում, ո՞ր դաշտումն է նա. գուցե արյունահեղ կռվի մեջ է իմ տղան. գուցե մաքառում է ծովի ալիքների դեմ»:

Տխուր է նաև այն չքնաղ հարսը՝ Կյուլլիկին. քայլում է տան չորս բուրբը, նայում է ամուսնուն տանող ճամփային, բայց չկա ու չկա քաջ Կաուկոնելին: Հարսը նայում է խոզանակին, նայում է գիշերը, նայում է ցերեկը և մի առավոտ էլ, երբ դառն մտքերով զարթնեց ու նայեց խոզանակին, տեսնի, ի՞նչ տեսնի՝ կարմիր արյուն է ցայտում խոզանակից: Վազեց, կանչեց հերոսի մորն ու ասաց.

«Իմ ամուսինն անհետ կորել է հեռավոր ճամփերում, անձանոթ արահետներում, տե՛ս, ինչպես է կարմիր արյուն ցայտում խոզանակից»:

Լեամինկայենի մայրը նայեց, նայեց խոզանակին, դառն լաց-լացեց և ողբաձայն ասաց.

«Վայ ինձ, անբախտիս, ինչ անեմ, արդյոք ի՞նչ պատահեց իմ սիրելի որդուն. հա՛, շատ դժվար վիճակի մեջ է, որ այրուն է ցայտում խոզանակից»:

Էլ չսպասեց անհանգիստ մայրը, փեշերն հավաքեց ու ճամփա ընկավ: Նա անցավ սարերով ու ձորերով, վարար գետեր կտրեց, թավ անտառների կաճաններով քայլեց ու վերջապես հասավ այն մռայլ Պոխյոլան և դիմեց ջադու Լոուխիին:

«Ով դու, Պոխյուլայի տիրուհի, ասա՛, որտե՞ղ ես ուղարկել իմ ջահել որդուն՝ Լեմմինկայենին»:

«Չգիտեմ, թե ուր է քո որդին, — պատասխանեց տիրուհին — ես նրան սահնակ և ամենալավ ձին տվի. գուցե ծովի սառույցների մեջ սառեց մնաց կամ թե գայլը նրան խժռեց, կամ էլ արջին կուլ գնաց»:

Լեմմինկայենին մայրն ասաց.

«Դու սուտ ես ասում, ով տիրուհի, ո՛չ մի գայլ չի կարող իմ ցեղի մարդկանց խժռել, ո՛չ մի արջ չի կարող մոտենալ իմ որդուն: Իմ կտրիճ տղան մի մատով կսպանի գայլին, ձեռքի մի հարվածով կտապալի արջին: Եթե դու ինձ ճիշտը չասես, թե որտեղ ես ուղարկել իմ տղային, ես կջարդեմ քարածայռի դռները, որոնց ետևում թաքցրել ես հրաշք-ինքնադաց Սամպոն»:

Ջադուն ասաց.

«Ես չգիտեմ, թե ուր է քո տղան: Ես նրան կուշտ ու կոհնջ ուտեցրի և խմեցրի: Նրան նավակ տվի, որ ուր ուզենա գնա: Գուցե ընկավ ջրվեժի տակ, ջրապտույտի մեջ ու խեղդվեց քո տղան»:

Լեմմինկայենին մայրը խիստ զայրացավ.

«Ո՛չ, ո՛չ, դու ուղղակի սուտ ես ասում. իմ որդին ծովում խեղդվող չէ. դու ճիշտն ասա, թե որտե՞ղ է իմ որդին, թե չէ հենց այսօր դու գրողի բաժին կդառնաս»:

Պոխյուլայի ջադուն վերջապես ասաց.

«Լա՛վ, ճշմարիտը կասեմ քեզ: Ես նրան ուղարկեցի Մեծ եղջերուի ետևից՝ գնաց բերեց. ուղարկեցի երկարաբաշ ձիու ետևից՝ գնաց նրան էլ բերեց. հետո նրան ուղարկեցի, որ Տոունելիի պղտոր ջրերում լողացող բադին որսա՛ բերի. գնաց ու չվերադարձավ. չեկավ, որ իմ սիրելի աղջկա ձեռքը խնդրի: Թե ինչ է պատահել տղայիդ, չգիտեմ»:

Եվ պառավ մայրիկը նորից սար ու ձոր ընկավ, նորից կտրեց գետեր ու անտառներ, անդադրում քայլեց ու վազեց. ոչ գիշեր, ոչ ցերեկ չհանգստացավ. ճամփան փակող քարերը դեն շարտեց, խիտ ծառերը գետին տապալեց, ճահիճների վրա ճիլոպներ փռեց ու անցավ. այսպես գնաց յոթ օր ու յոթ գիշեր, ամեն տեղ փնտրեց, բայց չգտավ իր թանկագին որդուն:

Ութերորդ օրը նա ելավ մի ուղիղ ճամփա և այսպիսի հարցում արավ այդ ճամփին.

«Ով դու բարի ճամփա, չե՛ս տեսել արդյոք դու իմ որդուն, իմ այդ ոսկե խնձորիկին»:

Ճամփան այսպես պատասխանեց.

«Իմ հոգսերն այնքան շատ են... մեկ ձիերն են դուփում ինձ, մեկ մարդիկ են տրորում ինձ իրենց ոտքերով, մեկ անիվներն են ակոսում կողերս. էլ որտեղի՞ց ժամանակ, որ մտածեմ քո որդու մասին»:

Էլի մայրը յոթ օր փնտրեց որդուն ու ոչ մի տեղ չգտավ. տեսավ երկնքում փայլող լուսնին ու հարցմունք արավ.

«Ով դու լուսին, Աստծուց ստեղծված, չե՞ս տեսել արդյոք իմ որդուն, իմ ոսկե խնձորիկին»:

Լուսինը պատասխանեց.

«Ես այնքան հոգսեր ունեմ, որ ո՞նց կարող եմ մտածել քո որդու մասին: Ինձ ծանր բաժին է ընկել՝ մենակ թափառել երկնքում և լույս սփռել երկրի վրա»:

Կրկին խեղճ մայրը յոթ օր փնտրեց որդուն, բայց չգտավ: Այս անգամ հարցմունք արավ արեգակին.

«Ով դու արեգակ, Աստծուց ստեղծված, չե՞ս տեսել արդյոք իմ որդուն, իմ այդ ոսկե խնձորիկին»:

Արեգակը պատասխանեց.

«Քո դժբախտ որդին արդեն գոհ գնաց, խեղդվեց Տուռնելիի պղտոր ջրերում, Մանալի անդունդներում»:

Շատ դառն լաց եղավ պառավ մայրիկը: Բայց չընկճվեց, անմիջապես գնաց գտավ դարբին Իվարինեին ու աղերսեց.

«Ով դու վարպետ, խնդրում եմ ինձ համար կոփիր մի այնպիսի փոցխ, որ կոթը պողպատից լինի, ատամները երկաթից: Եվ թող ատամների երկարությունը հարյուր սաժեն լինի, իսկ կոթինը հինգ անգամ ավելի երկար»:

Այն ճարտար դարբինը կոփեց փոցխը մոր ուզածի նման: Մայրը վերցրեց այն ու շտապեց դեպի Տուռնելիի պղտոր ջրերը: Եվ այսպիսի խնդիրք արավ արեգակին.

«Ո՛վ բարի արեգակ, այս աշխարհի վրա դու բոլորին հավասարապես լույս ես տալիս: Այսօր լուսավորիր ավելի ուժեղ, ապա այնպես տաք լուսավորիր, որ գոլորշի բարձրանա, իսկ հետո այնպես ջեռ, որ շոգից Տուռնելիի ստորերկրյա ջրերում թաքնված Մանալիի թագավորության չար բնակիչները թուլանան և խորը քնի մեջ ընկնեն»:

Աստծու ստեղծած այն բարի արեգակը իջավ երկնքից. նստեց կեչու բարձր կատարին, ուժեղ լուսավորեց, ապա ավելի տաք, հետո ավելի ջեռ. գետից թանձր շոգի բարձրացավ և Մանալիի ստորերկրյա բնակիչները, մեծ թե փոքր, իրենց զենքն ու զրահը ձեռքներին, խորը քնի մեջ ընկան:

Եվ արեգակը նրանց քնացնելով, էլի բարձրացավ երկինք ու սկսեց իր պտույտը:

Իսկ Լեւնմինկայնենի մայրը իր երկար փոցխով սկսեց գետի խորերը փոցխել. ոչինչ չգտավ. վերջը ինքը ջուրը մտավ, գնաց ջրի հոսանքի հետ, ապա հոսանքին հակառակ և հանկարծ մի ծանր բան դիպավ փոցխին. դուրս քաշեց. տղայի երկաթե զգեստն էր, հետո գտավ գուլպաները, ապա գլխարկը:

Շատ տխրեց մայրը և էլի սկսեց փոցխով ջրի մեջ փնտրել որդուն:

Եվ ահա, վերջապես, գտավ իր որդու մարմնի մի քանի կտորները: Բայց դեռ գլուխն ու կողոսկրերը չկային: Եվ նա լալով ասաց.

«Արդյոք այս կտորներից կվերածնվի՞ իմ հերոս որդին»:

Ազոավը լսեց մոր ողբն ու ասաց.

«Ով մեռավ նա այլևս չի կենդանանա. չէ որ քո տղայի աչքերը սիգն է կերել. գայլաձկները մսերն են կերել. զցիր այդ կտորտանքը ջուրը, թող ծովի խորքերում ձուկ դառնա»:

Մայրը նորից գետը մտավ, նորից գործի դրեց փոցխը և վերջապես գտավ նաև որդու գլուխը, կողոսկրները և մյուս մասերը:

Գտավ և սկսեց մասերն իրար բերել. ոսկորը ոսկորին հագցրեց. ջղերը ջղերին կապեց, երակները տեղը դրեց, որ նրանցում կենարար արյուն հոսի: Բայց տղան անշարժ էր. մայրը սկսեց ողբալ և այսպիսի խնդիրք արավ.

«Ով դու Սոունետար աստվածուհի, դու որ այնպես լավ միահյուսում ես ջղերը, ուժ ու կորով ես տալիս մարդուն, օգնի՛ր, որ տղայիս մաշկը նորից պատի նրա մարմինը, օգնի՛ր, որ ջղերն իրար միանան, երակներում արյուն հոսի. օգնի՛ր, որ բզկտված մարմնի բոլոր մասերն իրար գան և իմ որդին վերակենդանանա»:

Մայրը նորից գործի անցավ, նորից որդու ոսկորներն ու ջղերն իրենց տեղերին հարմարեցրեց և ահա՛ վերջապես տղան ստացավ այն կերպարանքը ինչ-որ առաջ. բայց դեռ էլի շունչ չկար բերանումը: Հանկարծ տեսավ, որ մեղու է թռչում մոտիկից. մայրը դիմեց նրան.

«Ով անտառի ծաղիկների տիրուհի, դու ամենահոտավետ ծաղիկներից մեղր պատրաստիր, որ իմ տղայի ցավերը մեղմացնի, նրա վերքերը բուժի»:

Արագաթռիչ մեղուն հասավ կանաչ անտառը, ամենահոտավետ ծաղիկների հյութը վերցրեց և բզզալով ետ եկավ՝ թևերին ու կնճիթին բռնած քաղցր մեղր ու մեղրամոմ:

Մայրը մեղրն ու մեղրամոմը տղայի վերքերին քսեց, բայց թանկագին որդին էլի անշարժ պառկած է. ոչ մի բառ չի կարող արտասանել:

Մայրը նորից խնդրեց մեղուին.

«Ով դու սիրունիկ մեղու, թռի՛ր, գնա հեռու աշխարհները, անցիր ծովերով ու ցամաքներով, հասիր Պավոյնենի տունը, այնտեղ կա հրաշագործ մեղր. դրանից այնպիսի բուժիչ բալասան են սարքում, որ կտրված ջղին դիր թե չե՛ ջղերը միանում են. ամենածանր վերքերն իսկույն բուժվում են, բեր ինձ այդ դեղից, որ տղայիս բուժեմ, նրա մարմնին հոգի և շունչ տամ»:

Մեղուն նորից թռավ գնաց: Թռավ մեկ օր, երկու օր, երեք օր. ոչ մի եղեգնի վրա չհանգստացավ, ոչ մի տերևի վրա չնստեց. վերջապես հասավ այն աշխարհը, ուր ամենալավ մեղր կար և իր թևերի, մեջքի և կնճիթի վրա բարձեց, բերեց Լեմմինկայնենի մոր ուզած դեղերը, այն էլ ոչ թե մեկ, այլ ինը տեսակ դեղ:

Մայրը հեռու աշխարհից բերած այդ հազվագյուտ ինը տեսակ մեղրն ու դեղերը քսեց որդու վերքերին, բայց էլի ոչ մի օգուտ չունեցավ: Տղան դարձյալ անշարժ էր:

«Ով դու արագաթռիչ, սիրունիկ մեղու, արի երրորդ անգամ թռիր հասիր երկնքի բարձունքները. կհասնես լուսնին, կմոտենաս արեգակին, կանցնես Մեծ Արջ աստղերի մոտով և վերջապես կմոտենաս Աստծու գահին: Այնտեղ կգտնես ամենաբուժիչ մեղր ու բալասան. այդ դեղերով ամենակալ տերը բուժում է իր որդիներին. ահա՛ այդ դեղից կառնես թևերիդ ու կբերես, որ իմ որդուն բուժեմ»:

Մեղուն հարցրեց.

«Բայց ես մի թույլ արարած եմ, ինչպես հասնեմ այդքան բարձունքները»:

Լեմմինկայնենի մայրն ասաց.

«Բոլորովին մի վախենա. լավ գործի համար միշտ ճամփա կգտնվի»:

Եվ սիրունիկ մեղուն թռավ դեպի երկինքը:

Առաջին օրը հասավ լուսնին:

Երկրորդ օրն անցավ արևի մոտից:

Երրորդ օրը դիպավ յոթնաստեղյա Մեծ Արջին:

Վերջը հասավ Աստծու շտեմարանը: Այնտեղ ամեն տեսակ դեղ ու դարման կար: Մեղուն իր թևերին առավ ամենաբուժիչ մեղր ու մեղրամոմ և բզգալով վերադարձավ երկիր:

Լեմմինկայնենի մայրը շատ ուրախացավ. վերցրեց երկնային դեղերը, խնամքով քսեց որդու վերքերին ու ասաց.

«Սա այն դեղն է, որ ես փնտրում էի. սրանով է ամենակալ Աստվածը բուժում վերքերը: Չարթի՛ր քո խոր քնից իմ սիրելի որդի, զարթի՛ր, զարթի՛ր»:

Եվ տղայի բոլոր վերքերին մայրը նորից ու նորից քսեց դեղերը:

Ու մեկ էլ տեսավ, որ տղան աչքերը բացում է:

Այն կտրիճ Լեւմինկայները մորը տեսավ ու ասաց.

«Ո՛ւհ, ինչքան խորն եմ քնել»:

Մայրն ասաց.

«Եվ դեռ շատ կքնեիր: Երբեք չէիր գարթնի, եթե ես քեզ չգտնեի այս սև ջրերում: Բայց հիմա ասա, ո՞վ էր, որ քեզ գցեց պղտոր ջրերի մեջ, Մանալի մութ աշխարհն ուղարկեց»:

Տղան պատմեց գլխին եկածը, թե ինչպես չար հովիվն իրեն գետը նետեց: Տղայի պատմությունից հետո մայրն ասաց, որ իրենք պետք է անմիջապես տուն վերադառնան:

Լեւմինկայները ասաց.

«Ես ո՞նց կարող եմ տուն վերադառնալ. այնտեղ ինձ սպասում է Լուուխիի գեղեցիկ աղջիկը, ես պետք է վայրի բաղը բռնեմ-տանեմ, որ աղջկա հետ ամուսնանամ»:

Մայրն ասաց.

«Այդ աղջիկը քո գլխին շատ փորձանք բերեց և էլի կբերի: Թող բաղն ազատ լողա Տուռնելիի ջրերում, մենք վերադառնանք մեր հայրենի աշխարհը: Արի գնանք քո հորական տունը, քո հարազատ մոր գիրկը: Ավելի լավ է դու գոհություն հայտնես բարձրյալին, որ քեզ օգնության հասավ, հանեց Մանալի մռայլ աշխարհից, Տուռնելիի սև ջրերի անդունդից և նորից կյանք պարգևեց. առանց Աստծու օգնության ես ոչինչ չէի կարող անել, առանց նրա երկնահաս տնօրինության քեզ չէի կարող փրկել»:

Տղան հնազանդեց.

«Իմ սիրելի մայրիկ, դու երկու անգամ ինձ ծնեցիր: Թող քո խոսքը լինի, այո՛, պարտքս է քո վիշտը ամոքել. գնանք այս դառն երկրից, ուր հերոսներին սպանում են և ծովը նետում, վերադառնանք մեր հարազատ օջախը»:

Այսպես ահա՛, կտրիճ Լեւմինկայները, նորից հորական տունը վերադարձավ:

Իսկ մենք դառնանք տեսներք, թե ինչ են անում մեր մյուս դուռնակները:

## **Ռ-ունա ԺԶ**

Վեյնեմեյներն ուզում է իր համար նավակ սարքել, բայց դժվարությունների է հանդիպում

Շատ տխուր էին անցնում Վեյնեմեյնենի օրերը:

Դատարկ տանը չկար մեկը, որ օգներ նրան, չկար տանտիրուհի, որ ծերության օրերին նեցուկ լիներ ավերին:

Շատ ծանր ու թեթև արեց Վեյնեմեյնենը և որոշեց մեկ էլ փորձել բախտը, գնալ Պոխյոլա և Լոուխիի գեղեցկուհի աղջկան տիրանալ:

Նրան պետք էր ամուր տախտակներից սարքված դիմացկուն նավ, որ ծովի ալիքների հարվածներին ու բոլոր փորձություններին դիմանար:

Կրկին նրան օգնության հասավ դաշտերի ու մարգագետինների ճարպիկ գավակը՝ Սամպսա Պելլերվոյնենը: Վեյնեմեյնենը նրան պատվիրեց.

«Գնա՛ անտառը, գտիր ամենադիմացկուն ծառը, կտրիր բեր, որ նավ սարքեմ»:

Սամպսան վերցրեց պղնձե կոթով ոսկյա կացինը և ճամփա ընկավ: Հասավ անտառ, մոտեցավ Սոսի ծառին, երեք սաժեն էր նրա բարձրությունը. կացինը բարձրացրեց, որ կտրի, բայց Սոսին ասաց.

Սոսին ասաց.

«Դու ի՞նչ ես ուզում ինձանից»:

«Ես փնտրում եմ ծառ, որ կտրեմ ու նրանից տախտակներ քաշեմ, նավ սարքեմ»:

Սոսին դողդողաց ու ասաց.

«Չէ՛, ինձնից նավ դուրս չի գա, ուժ չի մնացել մեջս, որդը կրծել է սիրտս, արմատներս էլ թուլացել են»:

Պելլերվոյնենը գնաց առաջ, մոտեցավ նոճի ծառին, վեց սաժեն էր նրա բարձրությունը. հարցրեց.

«Ասա՛ ինձ նոճի, դու Վեյնեմեյնենի համար դիմացկուն նավ կդառնա՞ս: Ջրերի վրայով սահուն կընթանա՞ս, կհնազանդվե՞ս թիերին ու դեկին»:

Նոճին բարձր ձայնով պատասխանեց.

«Ինձանից նավ չի ստացվի. շատ եմ ծերացել: Իմ սաղարթներին հիմա ազոավներն են բույն դրել և ձագեր են հանում»:

Երբ այս լսեց Պելլերվոյնեն, մենակ շրջեց թավ անտառը և հանդարտորեն քայլելով գնաց հասավ մինչև հարավ: Կանգնեց ինը սաժեն բարձրություն ունեցող կաղնու դիմաց: Պելլերվոյնեն հարցում արավ:

Շատերի մայր, գուցե պետք գաս, որ ռազմի համար քո փայտերից ամրակուռ նավ կառուցենք»:

Կաղնին հանդարտ ու խոհուն այսպես պատասխանեց նրան.

«Իմ սիրելի, ամրակուռ նավ կառուցելու համար շատ փայտ ունեմ. անթերի եմ ու բարձրահասակ. միջուկս էլ շատ ամուր է: Հենց այս ամառ շոգ պահերին վառ արևն իմ մեջ մտավ, լուսինը շողաց իմ կատարին, ճյուղերիս նստեց ու երգեց կկուն, հետո եկան հազար հավքեր ու հազար տեսակ թռչուն և անուշ-անուշ գեղգեղացին»:

Պելլերվոյները կացինն ուսից ցած բերեց, կտրեց կաղնին, ապա հաստ բնից շատ տախտակներ սարքեց և երբ ամեն ինչ պատրաստ էր, կանչեց Վեյնեմեյներին:

Իմաստուն ծերունին երգերով և կախարդանքներով սկսեց կառուցել նավը:

Մեկ երգ երգեց՝ արդեն պատրաստ էր ամուր հատակը:

Նորից երգեց և արդեն նավի կողերը բարձրացան:

Երրորդ երգը երգեց և պղնձյա թիակալներն իրենց տեղում ամրացան:

Ամեն ինչ պատրաստ էր, բայց պետք էր նաև երեք խոսք:

Մեկը՝ որպեսզի ամրացվեր դեկը:

Մյուսը՝ որպեսզի քառակող ողնոցը սարքվեր:

Երրորդ խոսքը՝ որպեսզի նավեզրերը հղկվեին:

Շատ մտածեց իմաստուն Վեյնեմեյները. «Գուցե ծիծառնակներ՞րը գիտեն այդ խոսքերը, գուցե կարապներ՞րը, կամ թերևս բաղե՞րը»:

Նա որսաց կարապների մի ամբողջ երամ, սպանեց շատ բաղեր, հարյուր և հազար ծիծառնակներ բռնեց, բայց նույնիսկ կես խոսք էլ չիմացավ-չգտավ»:

«Գուցե եղնիկի գլխո՞ւմ կա այդ խոսքը, գուցե սկյուռի լեզվի ծայրի՞ն է հմայիչ խոսքը»:

Եղնիկների մի ամբողջ հոտ որսաց, բազմաթիվ սկյուռներ խփեց-շատ նոր խոսքեր լսեց, բայց չգտավ այն խոսքերը, որ օգներ իրեն:

Երկրի վրա ապրողները չգիտեին այդ խոսքերը:

Վեյնեմեյները որոշեց գնալ Մանալի ստորերկրյա աշխարհը, Տուռնելիի մեռյալների կացարանը-գուցե այնտեղ գտնի երեք նվիրական խոսքերը:

Եվ ճամփա ընկավ իմաստուն ծերունին: Յոթ օր անցավ մացառների միջով, էլի յոթ օր քայլեց փշատերև գիհի ծառերի միջով և դարձյալ յոթ օր քայլեց թավուտ անտառի ոլորապտույտ արահետներով, մինչև հասավ Մանալի ավերը:

Վեյնեմեյնենը տեսավ, որ գետի պոտոր ջրի մեջ երևում է մի աղջիկ և սպիտակեղեն է ցայում ջրում:

Վեյնեմեյնենը խնդրեց աղջկան.

«Մանալի դուստր, Տուռնելիի զավակ, տուր ինձ մի նավակ, որպեսզի կարողանամ այս գետով անցնել հասնել քո բնակած կղզին»:

Իսկ Մանալի դուստրն ասաց.

«Դեռ ասա, ինչո՞ւ դու ողջ և առողջ եկել ես այստեղ. ոչ հիվանդություն ես քաշել, ոչ էլ ահեղ մահն է քեզ փախցրել այստեղ հասցրել»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ինձ այստեղ է բերել Տուռնին, ինձ իր մոտ է կանչել Մանալի տերը:

Աղջիկն այսպես խոսեց.

«Տեսնում եմ, որ դու ճիշտ չես ասում, եթե Տուռնին քեզ կանչեր, դու գլխիդ գլխարկ և ձեռքիդ ձեռնոցներ կունենայիր, ինչպես բոլոր նրանք, ում ուղարկում են մեռյալների աշխարհը»: Հապա խոստովանիր ինչո՞ւ ես եկել այստեղ»:

Ծերուկը պատասխանեց.

«Եթե ճիշտն ուզում ես իմանալ, ապա ասեմ՝ ինձ այստեղ բերեց երկաթը, դեպի այս կողմը հրեց պողպատն իր սուր ծայրով»:

Աղջիկն ասաց.

«Նորից երևում է, որ դու սուտ ես ասում. եթե քեզ այստեղ բերեր երկաթը, եթե քեզ այս կողմն հրեր պողպատն իր սուր ծայրով, քո զգեստներն արյունոտված կլինեին, քո վերքերից կարմիր արյուն պիտի հոսեր: Ճիշտն ասա, Վեյնեմեյնեն, ինչո՞ւ ես եկել այստեղ»:

Այսպես պատասխանեց ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը.

«Ես քեզ կասեմ ճշմարտությունը, ինձ Մանալի ավերը հասցրին ալիքները»:

Տուռնելիի աղջիկն ասաց.

«Այդ էլ ճիշտ չէ, եթե քեզ ալիքները բերեին, ապա քո շորերը թաց կլինեին: Ավելի լավ է չխաբես և ճիշտն ասես՝ ինչո՞ւ ես եկել այստեղ»:

Ծերունին պատասխանեց.

«Լավ, չեմ խաբի, ինձ այստեղ բերեց կրակը, նրա հետ հասա Մանալի»:

Մանալիի այդ փոքր աղջիկն ասաց.

«Չէ, նորից սուտ ես խոսում, եթե քեզ կրակն այստեղ բերած լիներ, քո մազն ու մորուքն այրված կլինեին: Ո՛վ դու ծերուկ, իմաստուն Վեյնեմեյնեն, եթե ուզում ես, որ ես քեզ նավակ տամ, մի թաքցնիր, ճիշտն ասա. ինչո՞ւ ես եկել այստեղ, երբ ոչ հիվանդությունն ես քաշել, ոչ էլ ահեղ մահն է քեզ փախցրել, այստեղ հասցրել»:

Այն ժամանակ ծերուկ Վեյնեմեյնեն ասաց.

«Տեսնում եմ, որ անհնար է քեզ խաբել: Լսի՛ր, հիմա քեզ կասեմ ճշմարտությունը: Ես ուզեցա ինձ համար նավ սարքել: Երգերով և կախարդանքներով ես կառուցեցի այն, բայց հիմա ուզում եմ իմանալ այն երեք խոսքը, որպեսզի կարողանամ նավը ջուրն իջեցնել: Եվ ահա՛, ես որոշեցի իջնել մեռյալների կացարանը, փնտրել և գտնել այդ նվիրական խոսքերը»:

Մանալի դուստրը զայրացավ.

«Ո՛վ դու տխմար, անբան մարդ: Ո՞վ է, որ հոժար կամքով իջնում է մեռյալների կացարանը: Քանի ուշ չէ, անմիջապես վերադարձիր քո տունը: Ով այստեղ է գալիս, նրան այլևս վերադարձ չկա»:

Ծերուկ, իմաստուն Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Միայն թույլ կանայք և երեխաները կարող են վախենալ քո խոսքերից: Դու տուր ինձ նավակը, ով Մանալի աղջիկ, որ գամ հասնեմ ձեր ափը»:

Աղջիկը տեսավ, որ չի կարող համոզել Վեյնեմեյնենին, ուստի իր նավակով հասցրեց կղզին: Տուռնելիի տիրուհին եկավ երգչի դիմաց, բերեց մի մեծ թաս գարեջուր՝ երկու ձեռքով բռնած և այնպես զգույշ, որ ոչ մի կաթիլ չթափվի գետնին:

«Խմի՛ր, ով երգասաց»:

Վեյնեմեյնենը վերցրեց թասը և նախքան կխմեր, նայեց թասի հատակը: Իսկ ի՞նչ ասես, որ չկար թասի տակ. էլ կռկռացող գորտեր, թունավոր օձեր, եղկելի որդեր: Վեյնեմեյնենը թափեց կեղտոտ գարեջուրը և ասաց տիրուհուն.

«Ես նրա համար չիջա մեռյալների կացարանը, որ ձեր գարեջուրը խմեմ: Ով խմի կհարբի՝ նա կկործանվի»:

Տուռնելիի տիրուհին զարմացած հարցրեց.

«Ինչո՞ւ ես եկել այստեղ, Վեյնեմեյնեն. ինչո՞ւ չես սպասել մինչև քեզ կկանչեր Մանալը»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ես եկել եմ, որ գտնեմ այն երեք խոսքը, որոնք պետք են ինձ իմ նավի կառուցումն ավարտելու համար»:

Տիրուհին ասաց.

«Մանալը քեզ ոչ մի խոսք էլ չի ասի. դրանք քեզ պետք էլ չեն. դու այստեղից այլևս չես վերադառնա, չես մտնի քո տունը, չես տեսնի քո հայրենի հողը: Ով եկել է մեռյալների աշխարհը, նա այլևս ողջ չի վերադառնա»:

Տիրուհին այս խոսքերն ասաց թե չէ, Վեյնեմեյնենն ընկավ խոր քնի մեջ: Տիրուհին կանչեց Մանալի որդիներից մեկին, որ նա հսկի եկվորին:

Մանալի որդին հագարից ավելի պղնձե ցանցեր բերեց դրեց սև ջրերի մեջ, իր զորեղ ձեռքերով էլ ցանցերն ամրացրեց իրար: Տեսնե՛նք, այդ ցանցերի միջից ինչպե՛ս դուրս կպրծնի Վեյնեմեյնենը:

Վերջապես Վեյնեմեյնենը զարթնեց և այսպես խոսեց.

«Ո՛չ, իմ կյանքի վերջը չի եկել, Մանալի հզոր իշխողին չի հաջողվի ինձ զրկել իմ հայրենի աշխարհը վերադառնալու հաճույքից»:

Եվ իմաստուն երգիչն իսկույն ուրիշ կերպարանք առավ: Որտեղ պետք էր իբրև օձ սողաց, մի ուրիշ տեղ էլ որդի նման կտրեց ճամփան, շատ տեղերում էլ փոքրիկ ձուկ դարձավ և դուրս եկավ Մանալի որդու ցանցերից:

Մանալի որդին առավոտ շուտ նայեց ցանցի մեջ: Այնտեղ կային տեսակ-տեսակ մեծ ու փոքր ձկներ, միայն իմաստուն Վեյնեմեյնենը չկար:

Իսկ այդ ժամանակ ծերուկ երգիչը վերջապես հասավ գետի ափը, լուսառատ աշխարհը և խոսեց.

«Ո՛վ դու բարեգութ Աստված, երբեք մի թույլ տա, որ մարդն իր կամքով գնա Մանալի աշխարհը»:

Ախա ջահելներին այսպես խրատեց.

«Երկրի զավակներ, ոչ ոքի վատություն մի՛ անեք, որպեսզի մեռյալների աշխարհում դրա հատուցումը չստանաք: Այնտեղ մեղավորները տառապում են թե՛ քարերի ու բոցկլտուն ժայռերի վրա, տանջվում են թունավոր օձի խայթոցից»:

## Ռունա ԺԷ

Վեյնեմեյնենը իջնում է երկրի ընդերքը և լսում է իրեն անհրաժեշտ իմաստուն խոսքերը

Շատ ուրախացավ Վեյնեմեյնենը, որ ազատվեց Տուոնեյի մեռյալների աշխարհից, բայց սիրտը հանգիստ չէր: Որտե՞ղ փնտրի, որտե՞ղ գտնի իրեն պետքական խոսքերը:

Եվ ահա՛, ճամփին հանդիպեց մի հովվի ու հարցրեց.

«Գուցե դու իմանա՞ս, որտեղ գտնեմ այն նվիրական երեք խոսքերը, որ ավարտեմ իմ նավակի կառուցումը»:

Հովիվը պատասխանեց.

«Այդ խոսքերը գիտի ծերուկ երգասացը, այն կախարդ հսկան՝ Վիպունենը. նրա որովայնում դու կգտնես հարյուր երգ և հազար խոսք: Վիպունենի մոտ տանող ճանապարհը ոչ հեշտ է, ոչ էլ դժվար: Այդ ճամփին ցցված են ասեղներ և սրեր, ապա նաև սուր տապարներ»:

Հավատարիմ Վեյնեմեյնենը գնաց դարբնոցը և այսպես խոսեց.

«Ո՛վ հմուտ դարբին Իլմարինեն, ինձ պողպատից ոտնամաններ և երկաթե շապիկ սարքիր, հետո մի ամրակուռ լծակ շինիր: Ես պիտի գնամ Վիպունենի մոտ, մտնեմ նրա որովայնը, որ գտնեմ այն կախարդական խոսքերը»:

Իլմարինենն ասաց.

«Վիպունենը վաղուց մեռել է, դու նրանից կես խոսք էլ չես լսի»:

«Բայց Վեյնեմեյնենը հագնվում է իր ուզածի նման և ճամփա է ընկնում:

Առաջին օրը վազելով անցավ սրածայր երկաթյա ասեղների վրայով:

Երկրորդ օրը բավական դժվարություն քաշելով անցավ պողպատյա սրերի վրայով:

Երրորդ օրն էլ օրորվելով անցավ սրած տապարների վրայով:

Վերջապես գտավ հսկա ծերունուն՝ Վիպունենին:

Երևում էր, որ ծերուկը վաղուց էր քուն մտել: Վիպունենն իր ամբողջ մարմնով խրվել էր հողի մեջ: Խրվել էր, ներանել՝ արմատներ գցել. մարմնի վրա ու շուրջ բոլորը ծառեր էին աճել. ուսերին խոյացել էր բարդին, քունքերին կեչի ծառը. մորուքի մեջ ճյուղեր էր արձակել ուռենին, ընչացքների մեջ լաստերն էին

շարժում տերևները: Ճակատին վերասլաց եղևնիներ էին բուսել, իսկ ատամների արանքում նոճին էր բոյ քաշել:

Վեյնեմեյները քաշեց երկաթե թուրը և սկսեց ճանապարհը մաքրել դեպի հսկայի որովայնը: Մեկ հարվածով բարդին կտրեց, մյուս հարվածով ճակատի վրայից տապալեց եղևնին, հետո արմատից հանեց մորուքի մեջ ճյուղեր արձակած ուռենին:

Ապա, ինչպես մի մեծ դուռ բացի՝ հսկայի ծնոտները միմյանցից հեռացրեց, նրանց արանքում երկաթե սեպ խրեց և մտավ կարծր այտուսկրների կամարի տակ:

Այստեղ հսկա Վիպուները զարթնեց, չորս կողմը նայեց, ուզեց բերանը փակել՝ չկարողացավ. երկաթե սեպը պինդ խրված էր ատամների արանքը: Ծերուկ հսկան ավելի լայն բացեց բերանը և երկաթե սեպի հետ կուլ տվեց նաև ծերուկ իմաստուն Վեյնեմեյներին: Կուլ տվեց և ինքն իրեն խոսեց.

«Շատ է պատահել, որ այժն ու մաքին միասին կուլ տամ, կովն իր կոտոշներով և վայրի խոզն էլ իր ժանիքներով իրար ետևից կուլ տամ, բայց դեռ չէր պատահել, որ այսպիսի կոշտ ուտելիք համտես անեմ»:

Հսկան հորանջեց մեկ-երկու անգամ և նորից քնեց:

Իմաստուն Վեյնեմեյները մտածեց՝ ինչպե՞ս անեմ, որ հսկա Վիպուներին զարթնեցնեմ իր խոր քնից:

Եվ որոշեց հսկայի որովայնում աշխատել իբրև դարբին: Երկաթե շապկից դարբնոց սարքեց, թևքերից փուքս շինեց, շավարից խողովակներ հարմարեցրեց, գնդանն էլ արդեն իր ծունկը դարձրեց, մուրճն էլ նրա պինդ բռունցքն էր:

Գիշեր-ցերեկ աշխատում էր Վեյնեմեյները և այնպես աղմուկով ու դղրդոցով, որ հսկան զարթնեց. ներսում այրվող կրակից տառապում էր կախարդ ծերուկը. այսպես խոսեց.

«Ի՞նչ մարդ ես դու, ո՞ր դյուցազունների հետ ես ընկերություն արել: Ես հարյուր հերոս եմ կուլ տվել, հազարին էլ խժռել, բայց քո նմանին չեմ կերել: Ո՞վ ուղարկեց քեզ, որ ինձ այսպես տանջում ես: Դուրս արի իմ որովայնից, ով դու անպիտան շուն, թե չէ քո գլխին մեծ փորձանք կբերեմ. իմ ամբողջ գործը ոտքի կկանգնի. փշատերև գիժը, հարյուր գլխանի նոճիները, սրածայր եղևնիները, դրանց հետ միասին հարյուրավոր հերոսներ զինված թրերով և նիզակներով քո դեմ կհանեմ, որ քեզ, ո՞վ իրեշ, դուրս շարտեն»:

Իմաստուն Վեյնեմեյները իսկի բանի տեղ էլ չի դնում կախարդ հսկայի ասածները-մուրճը խփում է գնդանին և փչում է փուքսը, ավելի է բորբոքում կրակը, բոցը հասնում է հսկայի լեզվին, թեժ ածուխը կոկորդն է այրում:

Վիպուներն էլ չէր կարող դիմանալ, ահեղ ձայնով գոռաց.

«Դու չար գավակ, ով դու անտեր շուն, դուրս արի քանի ուշ չէ: Ասում եմ դուրս արի, նախքան արևը կծագի, նախքան աքլորը կկանչի: Թե չէ քեզ կնետնեմ գագանի որջը, կքշեմ անել ճահիճը, կխեղդեմ փրփրուն ջրվեժում. անգղի կտուցով քեզ կհռչոտեմ, արծվի սուր ճանկերով քեզ մաս-մաս կանեմ. դո՛ւրս փախիր, քանի ուշ չէ գլուխդ ազատիր, քանի դեռ ողջ ես»:

Որովայնի խորքից այսպես պատասխանեց Վեյնեմեյները.

«Այստեղից չե՛մ հեռանա. շատ լավ տեղ եմ ընկել. հացի փոխարեն քո ճարպով տապակած լյարդն եմ ուտում, կրակի վրա խորովում եմ թոքերդ: Շուտով դարբնոցս կփոխադրեմ քո սրտի մեջ և այնքան կհարվածեմ մուրճով, մինչև որ ասես նվիրական խոսքերը: Ավանդական իմաստությունները, երգերը, որ պահում ես մտքումդ, չպե՛տք է թաղվեն հողում»:

Կախարդ երգիչ Վիպունենը տեսավ, որ ճար չկա՝ պետք է կատարի Կալեվալայի դյուցազունի խնդիրը: Նա բացեց իր երգերի գանձարանը և սկսեց երգել դարերի խորքից եկող իմաստուն երգերը:

Առաջին երգն այն էր, թե ինչպես նախնական քառսից ստեղծվեց աշխարհը, — դա մի երգ է, որ հիմա ոչ փոքրերը գիտեն, ոչ մեծերը, քանի որ վատ ժամանակներ ենք հասել, հողը քիչ բերք է տալիս և հացն էլ սակավ է:

Հետո ծերունին հսկան երգեց երկրորդ երգը: Երգի իմաստ այն էր, թե ինչպես Աստծո կամքով աշխարհի վրա կյանք առաջացավ և գոյացավ մթնոլորտը, ինչպես ջուրն սկիզբ առավ երկրի վրա, ապա ջրի արանքներում առաջացան ցամաքները, բերրի հողը և հողի վրա արդեն ինչպես սկսեցին աճել տեսակ-տեսակ բույսեր:

Շատ երգեր երգեց կախարդ-ծերուկ Վիպունենն այն մասին, թե ինչպես երկնքում հուրհրաց պայծառ արևը, ինչպես երկինքը լցվեց փայլփյուն աստղերով և թե ինչպես խավար գիշերի սկսեց լույս տալ լուսնկան:

Խոսքերն ինչպես թռչուններ թռչում էին նրա բերանից, ինչպես արագավազ ձիեր դուրս էին սլանում նրա կրծքից:

Երբեք Վեյնեմեյները չէր լսել այդպիսի սքանչելի երգեր: Ամբողջ բնությունն էլ, արևն ու լուսինն էլ ականջ էին դնում երգչին: Ծերուկ Վիպունենի երգերից Կալեվալայի դյուցազունը շատ իմաստություններ և խորամիտ առակներ սովորեց, ամեն տեսակ գործի վարպետություն ուսանեց:

Եվ ահա՛, Վեյնեմեյները որովայնի խորքից ձայն տվեց.

«Ո՛վ դու Վիպունեն, լայն բաց արա բերանդ, որպեսզի ես քո որովայնից դուրս գամ և իմ հայրենիքը վերադառնամ»:

Վիպունեն ասաց.

«Շատերին էի կուլ տվել, բայց քեզ նմանին չէի հանդիպել. երևում է շատ խորամանկն ես, որ կարողացար որովայնս մտնել և իմաստություններին տիրանալ: Դե, լավ է, որ հիմա գնում ես»:

Այս ասաց ծերունին և լայնաբերան հորանջեց: Վեյնեմեյնը ինչպես սկյուռ՝ արագ լույս աշխարհ ելավ:

Նա շտապեց տուն. մտավ եղբոր դարբնոցը: Իմարիները հարցրեց.

«Ասա՛, գտա՛ր փնտրածդ երեք խոսքը, որ կարողանաս նավիդ կառուցումն ավարտել»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Վիպուներնի գաղտնարանից հարյուր տեսակ խոսք ու կախարդանք սովորեցի, ամեն տեսակ իմաստություն քաղեցի՝ լույս աշխարհ հանեցի»:

Ծերուկ Վեյնեմեյնենը գնաց իր կիսասարք թողած նավի մոտ. երգեց նոր, իմաստուն երգեր: Նավի կողերն ավելի պնդացրեց. դեկն ամրացավ. քառակող ողնոցը սարքվեց: Վերջապես կազմ ու պատրաստ էր ամրակուռ նավը:

## **Ռունա ԺԸ**

Վեյնեմեյնենը և Իմարիները մեկնում են Պոխյոլա հարսնախոսության

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը շատ ծանր ու թեթև արավ, վերջը վճռեց գնալ Պոխյոլա՝ բերել գեղեցկուհի հարսնացուին:

Նորից տնտղեց ամրակուռ նավակը, կարմիր ներկեց չորս բոլորը, ոսկեգոծեց առաջամասը, լուսադեմին նավակն հրեց ծովի մեջ, բարձրացրեց կապույտ առագաստը և այսպես խոսեց.

«Ով ամենակարող, դու օգնիր ինձ՝ թույլ մարդուս, որ հաջող նավարկեմ ծովի վրա: Առաքիր բարենպաստ հողմեր, որ ես առանց թիերի նավս առաջ տանեմ կապույտ ծովի ընդարձակ տարածություններով»:

Այդ ժամանակ Իմարիներնի քույրը, Աննիկկին՝ մթնշաղի և գիշերի ջքնաղ աղջիկը տեսավ, որ նավ է շարժվում ծովի վրա, ու աղջիկն այսպես խոսեց.

«Եթե դու եղբորս նավն ես, ապա մոտեցիր հարազատ ափին, դեպի հայրենի նավահանգիստ շուռ տուր քո ընթացքը: Իսկ եթե դու օտար աշխարհից ես եկել, ապա շարունակիր քո ճանապարհը, հեռացիր մեր հայրենի երկրից»:

Աղջիկը մոտեցավ ծովափին և տեսավ, որ Վեյնեմեյնենն է նստած նավակում: Աննիկկին հարցրեց.

«Ո՛ր ես գնում Վեյնեմեյնեն, դու մեր երկրի պարծանքը, այդ ո՛ր ես շտապում»:

Նավի միջից այսպես պատասխանեց ծերունին.

«Գնում եմ այնտեղ, ուր լուսին հիմա ձկնկիթ է դնում, գնում եմ որս անեն»:

Այն չքնաղ Աննիկկին ասաց.

«Գոնե այդպես բացեիրաց սուտ չասեիր, հիմա լուսին ձկնկիթ չի դնում: Թե որ ձուկ ես ուզում որսալ, ապա ո՛ր է քո ձկնորսական սարքը: Ես տեսել եմ, թե ինչպես իմ հայրը որսի էր գնում: Նավում նա ուներ ուռկան, նստարանին երկար կարթածողեր: Իսկ դու ոչինչ չունես: Ճիշտն ասա, Վեյնեմեյնեն, ո՛ր ես ուզում գնալ»:

Վեյնեմեյնը պատասխանեց.

«Ուզում եմ նավարկել դեպի սաքսոնական նեղուցը և վայրի սագեր որսալ»:

Աննիկկին ասաց.

«Ես անմիջապես իմանում եմ, թե ով է ճշմարիտը խոսում, իսկ ստախոսին տեղն ու տեղը բռնում եմ. դու սագ որսալու ոչ մի գործիք չունես, երբ իմ հայրը գնում էր սագ որսալու, նա ուսին գցում էր նետ ու աղեղ, շունն էլ արդեն վազում էր նրա առջևից: Դու Վեյնեմեյնեն, ինձ ճշմարիտն ասա, ո՛ր ես գնում»:

Ծերուկը պատասխանեց.

«Ես գնում եմ այնտեղ, ուր սարսափելի կռիվ է, ուր հերոսներն իրար դեմ եմ ելել և արյունն արդեն կռվողների ծնկներին է հասել»:

Աղջիկն ասաց.

«Ո՛չ, ճշմարիտ չես ասում, ես գիտեմ, թե ոնց են կռիվ գնում. երբ հայրս կռիվ էր գնում, հարյուր տղամարդ թիավարում էին, հարյուրն էլ նրանց կողքին կանգնած էին լինում: Նրանք բոլորը զինված էին լինում աղեղներով և պողպատյա թրերով. ավելի լավ է, ճիշտն ասա, թե ո՛ր ես գնում»:

Ծերուկ երգիչը ստիպված խոստովանեց.

«Լավ, ես քեզ հիմա ճշմարիտը կասեմ: Ես գնում եմ Պոխյոյա, որ այն չքնաղ աղջնակը բերեմ, ամուսնանամ հետը, թեև գիտեմ, որ այնտեղ մարդակերներ են ապրում և հերոսներին ծովում խեղդում են»:

Աղջիկն այլևս չխոսեց, անմիջապես հետ դարձավ, վազեց հասավ դարբնոցը: Եղբայրը՝ Իվարինենը ոտից գլուխ մրի մեջ թաթախված աշխատում ու կոփում էր գործիքներ: Աղջիկն ասաց.

«Եղբայր իմ Իվարիներն, ով դու ճարտար դարբին, ինձ համար սարքիր նոր մաքոքներ, գեղեցիկ մատանիներ, երեք հատ մանյակ, հինգ վեց հատ քամար և ես քեզ ճշմարիտ բաներ կասեմ»:

«Թե լավ լուրեր ես բերել, թե՛ մաքոք, թե՛ մատանիներ, թե՛ քամար և ինչ ուզես կսարքեմ քեզ համար», — ասաց Իվարիները:

Չքնաղ Աննիկկին ասաց.

«Լսիր եղբայր իմ, դու առավոտից մինչ երեկո մուրճովդ աշխատում ես, ամառ-ձմեռ պայտեր ու սահնակներ ես սարքում, թիեր ու աղեղներ ես կռում-կոփում, այդ բոլորը նրա համար, որ գնաս ամուսնանա Դոխյուլայի դստեր հետ: Ուրեմն շտապի՛ր, այնտեղ է գնում Վեյնեմեյները, որ բերի այն չքնաղ պոխյուլցի աղջկան և հետն ամուսնանա. իսկ այդ աղջիկը քո ընտրելին է, նրան տիրանալու համար դու Սամպոն կառուցեցիր, դե՛, շտապիր, ով ձեզանից ավելի խորամանկ է և ճարպիկ՝ նա էլ կտիրանա աղջկան»:

Իվարիները տխրեց. մուրճը ձեռքից ընկավ, աքցանն էլ չկարողացավ բռնել. այսպես ասաց քրոջը.

«Իմ սիրելի քույր Աննիկկի, ես քեզ համար կսարքեմ նոր մաքոքներ և մատանիներ, մանյակ ու քամար, ինչ որ ուզես, միայն թե բաղնիքը լավ տաքացրու, որ ես իմ վրայի կեղտն ու փոշին մի լավ մաքրեմ»:

Աննիկկին բաղնիքը մի լավ տաքացրեց, աղբյուրի մաքուր ջուրը եռացրեց, լցրեց ջեռ քարերի վրա և գոլորշին լցրեց բաղնիքը: Իվարիները լողացավ և երբ տուն մտավ, դժվար էր ճանաչել նրան. պարանոցը ոնց որ ճերմակ ձու, մազերը շեկլիկ, աչքերը ոնց որ պայծառ արև, այտերն էլ արդեն կարմրավուն էին:

Դարբինն հագավ ամենալավ զգեստները. ասեղնագործ վերնաշապիկ, նոր մահուդի կապա, վրայից էլ փափուկ մորթուց կարված՝ բազմաթիվ զարդարանքներով մուշտակ:

Աննիկկին եղբորը տվեց այն քամարը, որ մայրն հյուսել էր աղջիկ ժամանակը. հագցրեց ձեռնոցներ, որ մայրն հյուսել էր, երբ դեռ նորահարս էր: Եղբոր գլխին էլ դրեց այն գլխարկը, որ հայրը հարսանիքի օրն էր ծածկել:

Դռանն արդեն պատրաստ էր սահնակը: Ստրուկը լծել էր ամենաուժեղ ձին: Սահնակի աղեղին էլ նստած էին վեց երգեցիկ թռչուններ, զնգզնգում էին յոթը զանգակներ: Սահնակին փռված էր արջի մորթի և փոկի մուշտակ:

Իվարիները մի ձեռքում ձիու սանձն առավ, մյուսում մտրակը, ճամփա ընկավ և այսպիսի խոսքերով դիմեց բարձրյալին.

«Ով դու, ամենագոր Ուկկո Աստված, հրամայիր որ երկնքից փափուկ ձյուն տեղա իմ ճամփին, որ իմ սահնակը հեշտությամբ սահի ու շուտ տեղ հասնի»:

Բարձրյալն Ուկկոն կատարեց նրա խնդիրը. ճամփին փափուկ ձյուն տեղաց, Իվարիներնի սահնակը ծովափով արագ գնաց մեկ օր, երկու օր և վերջապես երրորդ օրը հասավ Վեյնեմեյնենին, որ ծովափից քիչ հեռու նավարկում էր. նա դիմեց երգչին.

«Ո՛վ ծերուկ Վեյնեմեյնեն, տեսնում եմ, որ Պոխյոլայի այդ աղջիկը կովախնձոր է դարձել մեր մեջ, արի պայման դնենք՝ նրան չառնենք գոռով: Ում որ աղջիկն հոժար կամքով կհավանի, թող նա էլ դառնա այդ չքնաղ աղջկա ամուսինը»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Միրով համաձայն եմ այդ պայմանիդ. ես աղջկան գոռով չեմ վերցնի. իր հոժար կամքով ումը կընտրի աղջիկը, թող նրա հետ էլ ամուսնանա: Եթե աղջիկն ինձ չհասնի, ես չեմ թշնամանա և ոխ չեմ պահի քո դեմ»:

Եվ ամեն մեկը շարունակեց իր ճամփան: Ծողփելով ջուրը լողում էր նավակը, գետինը թնդացնելով սահնակն էր թոցնում հրեղեն ձին:

Եվ ահա՛ լսվեց շների ուժեղ հաչոց: Պոխյոլայի մռայլ տերը չգիտեր, թե իր մոտ մարդիկ են գալիս: Տան պահապան շունն ինչ-որ հոտ է առել: Հայրն ասաց աղջկան.

«Դատրիկս, գնա՛, տե՛ս, ո՞ւմ վրա է հաչում շունը»:

Աղջիկն ասաց.

«Առանց դրան էլ շատ գործ ունեմ. ես պիտի գոմը մաքրեմ, կովերին խնամեմ, երկանք աղամ. էլ ո՞նց հասնեմ-տեսնեմ, թե շունն ինչո՞ւ է հաչում»:

Իսկ շունն հա հաչում է:

Պոխյոլայի տերն այս անգամ կնոջն ասաց.

«Այ պառավ, գնա տես, թե ինչո՞ւ է մեր շունը հաչում»:

Պառավն ասաց.

«Դրա ժամանակը չէ. ես հագիվ ճաշը պատրաստեմ, դեռ խմորն էլ չեմ հունցել, որ հաց թխեմ»:

Պոխյոլայի տերը բարկացավ.

«Կանայք միշտ պատճառ են փնտրում, որ գլուխ պահեն. կամ վառարանին կպած տաքանում են, կամ էլ թավալվում են անկողնում. ապա, տղաս, դու գնա տես, թե ինչո՞ւ է շունն հաչում. մեր գամփոը երբեք իզուր տեղը չի հաչա»:

Երիտասարդը պատասխանեց.

«Ես ավելի կարևոր գործով եմ զբաղված. կացինը պիտի սրեմ, ոստղոս փայտերը պիտի ջարդեմ, վառելիք պատրաստեմ և վառարանը վառեմ»:

Պոխյոլայի տիրոջ գայրույթին էլ չափ չկար: Ինքը գնաց տեսնի, թե ինչո՞ւ է շունն հաչում: Գամփոը ցռուկը մեկ դեպի ծովի կողմն է դարձնում, մեկ բլուրներին է նայում: Ինքը տերն էլ նայեց ծովի կողմը և տեսավ, որ ճեղքելով ծովի ալիքները, դեպի իրենց ափն է գալիս կարմիր մի նավ՝ ծածանելով կապույտ առագաստը: Հետո նայեց բլուրների կողմը, տեսավ որ դեպի իր տունն է գալիս մի զարդարուն սահնակ:

Պոխյոլայի տերը տուն մտավ և ասաց.

«Մեզ մոտ օտար մարդիկ են գալիս. մեկը նավով, մյուսը սահնակով. ո՞նց իմանանք, լա՛վ գործի համար են գալիս, թե՛ կռիվ անելու»:

Պոխյոլայի տիրուհին՝ Լոուխին ասաց.

«Հիմա կիմանանք, — և աղջկանը կարգադրեց, — սնձենին դիր կրակը, թե այդ ընտիր փայտը այրվելիս արյուն դուրս տվեց, ուրեմն մեզ վրա կռիվ են գալիս, իսկ եթե այրվելիս ջուր ծլծլաց, կնշանակե, թե լավ գործի համար են գալիս»:

Աղջիկը փայտը դրեց կրակարանը ու քիչ հետո եկավ մորն ասաց.

«Ո՛չ արյուն տվեց փայտը, ոչ էլ այրվելիս ջուր ծլծլաց, այլ մեղր սկսեց ծորալ փայտից»:

Մայրն ասաց.

«Եթե փայտից սկսեց մեղր ծորալ, ուրեմն փեսացուներ են եկել: Աղջի՛կս, լա՛վ իմացիր, նրանցից չես կարող ազատվել. ձին օտար աչքից կարելի է թաքցնել, բայց գեղեցիկ աղջկան ինչպես էլ թաքցնես միևնույն է, փեսացուները նրան կգտնեն. թեկուզ աղջկան քարե ամրոցի մեջ պահես, թեկուզ ծովի հատակում թաքցնես՝ նորից կգտնեն»:

Պառավը դուրս եկավ, մեկ էլ նայեց և ճանաչեց եկողներին. աղջկանն ասաց.

«Այն որ գալիս է նավակով, դա ծերուկ Վեյնեմեյնենն է: Իր նավակի մեջ նա ունի շատ թանկագին գանձեր: Նա շատ իմաստուն և հզոր երգասաց է: Իսկ նա ով գալիս է սահնակով, դա դարբին Իլմարինենն է. նա գալիս է դատարկ ձեռքով, նրա ունեցածը ծուխ ու մուր է. նրա սահնակում միայն խոստում կա: Հենց որ նրանք տուն կմտնեն, կնստեն, որ հանգստանան, դո՛ւ, աղջիկս, մի աման մեղր բեր, և մեղրը կտաս նրան, որին ընտրել ես քեզ փեսացու: Վեյնեմեյնենին տուր մեղրով լի ամանը, նա իր նավակում շատ ոսկի և արծաթ ունի»:

Գեղեցիկ աղջիկն այսպես խոսեց.

«Մայր իմ, դու ծնել, կերակրել ու մեծացրել ես ինձ, իմացի՛ր, ես հարուստ փեսացու չեմ ուզում: Ես ծերուկ Վեյնեմեյնենին մարդու չեմ գնա: Իմ ամուսինը

պետք է գեղեցիկ լինի թե դեմքով, թե կազմվածքով: Չի կարելի աղջկան ծախել: Ես երիտասարդ Իլմարինենին եմ ինձ փեսացու ընտրում, թող նա գանձեր չունենա, բայց չէ՞ որ նա է կռել-կոփել հրաշք-ինքնադաց Սամպոն»:

Մայրն ասաց.

«Դու հիմար ես, ինչպես գառնուկ, Իլմարինենը դարբին է, ոտն ու գլուխը շարունակ մրոտ. նրան առնես, որ հա՛ նրա կեղտոտ շապիկնե՛րը լվանաս»:

Այսպես պատասխանեց աղջիկը.

«Ծերուկ Վեյնեմեյնենին չեմ ուզում պահապան դառնամ. ես նրա հետ չեմ կարող ապրել, ձանձրալի կդառնա կյանքը ծերուկի հետ»:

Եվ ահա քիչ անց տուն մտավ Վեյնեմեյնենը ու դիմեց աղջկան.

«Կուզե՞ս, ով չքնաղ աղջիկ, կյանքդ կապես ինձ հետ, դառնաս իմ կինը, դառնաս իմ սիրած թռչնակը»:

Պոխյուլայի գեղեցկուհին իսկույն հարցրեց.

«Իսկ դու ինձ համար նավակ սարքեցի՞ր իմ իլիկների կտորտանքից»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ես քեզ համար ավելի լավ նավակ սարքեցի, քան ինքդ ուզեցիր. այս նավակը ոչ անձրևից, ոչ էլ քամուց չի վախենում. փրփուրի նման անցնում է ալեկոծ ծովի վրայով, ծաղկի նման ճոճվում է ծովի հարթությունների վրա: Իմ նավը ծովի վրա իրեն ավելի ամուր ու հաստատ է պահում, քան տունն է կանգնած հողի վրա»:

Պոխյուլայի գեղեցկուհին այսպես պատասխանեց:

«Չեմ ուզում այն մարդուն, որ մշտապես ծովի ալիքների վրա է ապրում. նրա խելքը քամին կտանի, ուղեղը կծեծեն հողմերը. ո՛չ, կյանքս չեմ կապի քեզ հետ, չեմ ուզում, ծերուկ քո թռչնակը դառնալ, չեմ ուզում քո անկողինը սարքել և փափուկ բարձ դնել գլխիդ տակ»:

## **Ռ-ունա ԺԹ**

Պոխյուլայի գեղեցկուհին ընտրում է իր փեսացուն, բայց նախքան ամուսնանալը պառավ Լոուիսին փեսացուին տալիս է մի քանի դժվար հանձնարարություններ. հարսնացուի խորհրդով, փեսացու Իլմարինենը գլուխ է բերում բոլոր հանձնարարությունները

Իվմարինենն, այն ճարտար դարբինը, խրճիթ մտավ: Աղջիկն անմիջապես ամանով լի անուշիկ մեղր հրամցրեց նրան:

Դարբինն ասաց.

«Ամբողջ կյանքումս ես մի կաթիլ մեղր բերանս չեմ առնի, եթե կնության չտաք այս չքնաղ աղջկան»:

Պառավ Լոուիսին ասաց.

«Որպեսզի աղջկանս քեզ կնության տամ, պետք է արժանի լինես տիրանալու իմ չքնաղ դստերը, որ երկնքի ու երկրի զարդն է, գեղեցիկ է զարնան ծաղկի պես: Այ, եթե կարողանաս վարել, ցանքսի համար փխրացնել այն դաշտը, որտեղ վխտում են օձերը, միայն այն ժամանակ աղջիկս կհագնի հարսանեկան զգեստները, կհագնի իր ոտնամանները և քո կինը կդառնա»:

Ճարտար դարբինն այսպես խոսեց.

«Շատ վատ է քո հիշողությունը, տիրուհի. ուրիշ խոսքեր էին քո լեզվի վրա, երբ ես գեղեցիկ կափարիչով հրաշք-ինքնադաց Սամպոն էի կառուցում»:

Դարբինն անմիջապես գնաց աղջկա սենյակն ու ասաց.

«Հիշո՞ւմ ես չքնաղ աղջիկ, երբ ես Սամպոն կառուցեցի, դու ամենաբարձրյալի առաջ սուրբ երդում տվիր, որ իմ կինը կդառնաս, իմ սիրելի թռչնակը կլինես: Մայրդ քեզ ինձ կնության չի տա, եթե ես օձերով լցված դաշտը չվարեմ»:

Հարսնացուն այսպիսի խորհուրդ տվեց փեսացուին.

«Ով դու ճարտար դարբին Իվմարինեն, արժաթից խոփ սարքեր և ոսկեգօծիր. դրանով դու դաշտը շատ արագ կվարես, օձերին էլ կտոր-կտոր կանես»:

Դարբինը հնոցում ոսկի և արծաթ լցրեց ու մի լավ խոփ սարքեց, հետո երկաթե ոտնամաններ շինեց, պղնձե փաթաթաններ թրծեց սրունքների համար, ապա պողպատե վերնաշապիկ և քարե ձեռնոցներ սարքեց. գութանին էլ լծեց կայծակնացայտ ձի և գնաց դաշտը:

Օձերն հենց դարբնին տեսան, Փշոցով գլուխները բարձրացրին, ձգեցին իրենց երկար վիզը և լայն բացելով բերանները՝ թունավոր լեզուները հանեցին և չորս կողմից վրա տվին դարբնին:

Բայց դարբինը չվախեցավ. ասաց.

«Օձեր, ձեզ էլ Աստված է ստեղծել, բայց հեռացեք իմ ճամփից, հեռացեք այս դաշտից և գնացեք անտառի խորքերը, մտեք ճահիճների եղեգների մեջ: Եթե այստեղից չեք հեռանա, ապա բարձրյալն Ուկկոյի կամքով ես ձեր գլուխը կջախջախեմ և դաշտը կմաքրեմ»:

Եվ մտրակեց ձիուն. խոփը ջարդոտելով օձերի գլուխն ու մեջքը, դաշտը վարեց. քիչ հետո դաշտը մաքրված էր: Իվարիները դարձավ տուն և դիմեց տիրուհուն.

«Դե, ես արեցի այն, ինչ դու պատվիրեցիր. հիմա քո սիրասուն ծաղկին, քո աղջկան ինձ կնության կտա՞ս»:

Պոխյուլայի տիրուհին պատասխանեց.

«Ո՛չ, դու արժանի չես իմ աղջկան. երբ բռնես Տուռնելիի արջին, երբ Մանալի անտառից բռնես բերես գայլին, այն ժամանակ իմ սիրասուն աղջիկը քեզ կնության կտամ»:

Դարբինը գնաց աղջկա մոտ, ասաց թե ինչ է պահանջում մայրը.

Աղջիկը փեսացուին խորհուրդ տվեց.

«Ես քեզ կսովորեցնեմ, թե ինչպես բռնես գայլին, ինչպես բերես արջին. պողպատյա սանձ սարքի և երկաթե երկար պարան. դրանցով թե գայլին կբռնես, թե արջին»:

Դարբինը պողպատե սանձն ու երկաթե պարանը սարքեց և գնաց Տուռնելիի անտառն ու այսպիսի խնդրանք արավ.

«Ով դու Դումանի դուստր Տերհենետյար, դու անտառը պատիր մեզ-մառախուղով, որ գազաններն իմ ոտնաձայնը չսեն և չկարողանան փախչել»:

Անտառի դուստրը նրա խնդիրը կատարեց: Իվարիներն երկաթե պարանով կապեց արջի երախը, պողպատե սանձով սանձեց գայլին, վերադարձավ տուն ու դիմեց տիրուհուն:

«Դե, աղջկանդ տուր ինձ կնության: Արջն էլ, գայլն էլ բռնել-բերել եմ»:

Իսկ չար Լուսիին նորից ասաց.

«Չէ՛, դեռ էլի անելիք ունես. իմ քնքուշիկ աղջկան քեզ կնության կտամ, եթե առանց ցանցի և ուռկանի Տուռնելիի խոր ջրերի միջից բռնես-բերես չաղ-խոշոր գայլաձուկը: Իմացի՛ր, շատերն են փորձել այնտեղ որսալ այդ ձկան, բայց գնացողը ետ չի եկել»:

Իվարիները շատ մտահոգվեց, շատ տխրեց, մտավ աղջկա սենյակն ու ասաց.

«Մայրդ ինձ նոր, շատ դժվար բան է պարտադրել: Տուռնելիի մոայլ ջրերում պետք է գայլաձուկ որսամ: Բայց ոչ ցանց ունեմ, ոչ էլ հարմար ձկնորսական սարք»:

Իսկ Պոխյուլայի գեղեցկուհին դարձյալ հանգստացրեց փեսացուին և խորհուրդ տվեց.

«Ոհ, ճարտար դարբին, երբեք մի ընկնվիր: Քո հնոցում մի հրեղեն արծիվ սարքիր և նա քեզ համար Տուռնելիի ջրերում կորսա ամենամեծ և չաղ գայլաձուկը»:

Դարբինը գործի անցավ. կոփեց հրեղեն արծիվ. թաթերը երկաթից, ճանկերը պողպատից, թևերն էլ պղնձից էին: Չէր կարելի ասել, թե դա ամենամեծ արծիվն էր, բայց և փոքր էլ չէր. կտուցը հարյուր սաժեն էր, լեզուն վեց նիզակաչափ, ամեն մի ճանկը՝ ոնց-որ սուր գերանդի:

Իմարիները նստեց արծվի մեջքին և այսպիսի պատվեր տվեց.

«Ով դու սիրելի արծիվ, թռիր այն կողմը, որ կողմը կիրամայեմ ես: Տուռնելիի ջրերից դու պիտի որսաս մեծ-չաղ գայլաձկան»:

Ասաց-չասաց՝ արծիվը թափահարեց թևերը և օդ բարձրացավ. մեկ թևով դիպչում էր ծովի ալիքներին, մյուսով հասնում է ամպերին. ճանկերով ծովի հատակից ավազ էր հանում, կտուցով խփում էր ծովափի ժայռերին:

Եվ քիչ անց Իմարիներին իջեցրեց Տուռնելիի սև ջրերի ափին:

Դարբինը քայլում է գետափով, փրփրոտ ալիքների մեջ որոնում է մեծ-չաղ գայլաձկան, իսկ հրեղեն թռչունը թևածում է նրա գլխավերևում՝ պահպանում է իր տիրոջն ամեն տեսակ վտանգից:

Եվ ահա գայլաձուկը երևաց գետի ալիքների վրա. լեզուն կացնի նման սուր է, ատամները՝ ոնց որ փոցիս. մեջքին կարող է յոթը նավակ տեղավորվել:

Բացեց իր երախը գայլաձուկը և ուզում է կուլ տալ ճարտար դարբնին:

Բայց արծիվը հոգնած չէր. վերևից թափով ընկավ նրա մեջքին, սուր ճանկերով չանգռեց գայլաձկան մեջքը և ուզում էր քարշ տալ, ափ հանել:

Գայլաձուկն էլ քնած չէր, թափ տվեց իրեն և սուր ատամներով բռնեց արծվի ճանկը:

Գայլաձուկը արծվին քաշում է դեպի հատակը:

Իսկ արծիվն է գայլաձկան քաշում է դեպի ափը:

Շատ քաշքշեցին իրար: Արծիվն սկսեց թուլանալ. ամբողջ ուժով թափահարեց հզոր թևերը, այնպես որ քամի բարձրացավ և ճանկն ազատեց գայլաձկան երախից:

Հզոր արծիվը թևածեց գետի վրայով և կրկին նետվեց գայլաձկան վրա: Այս անգամ մեկ մագիլը խրեց ձկան ուսի մեջ, մյուսով կառչեց ժայռին:

Արծիվը գայլաձկան ուզում է դուրս բերել գետից:

Գայլաձուկն ուզում է արծվին քաշել գետի հատակը:

Այս անգամ էլ արծիվը չկարողացավ հաղթել որսին: Թեև ահռելի ձկան մեջքը պատռուված էր և մսերը քարշ էին ընկել կողերին, բայց գետի գայլն ազատվեց արծվի սուր ճանկերից:

Հրեղեն արծիվը մեկ էլ պտույտ եկավ օդում և երկրորդ անգամ հարձակվեց գայլաձկան վրա: Թևերից բոցեր են ցայտում, աչքերից կայծեր: Այս անգամ թռչունն իր բոլոր ճանկերը խրեց գայլաձկան մարմնի մեջ: Հսկա ձկան թեփուկներից Մանալի ջրերը պսպղացին, իսկ արծվի փետուրներից շրջապատը մթագնեց:

Գայլաձուկը թաքտում էր արծվի պողպատե մագիլներում և չէր կարողանում ազատվել: Իսկ արծիվը որսին պինդ սեղմած իր հզոր մագիլներում, օդ բարձրացավ: Տեսավ քիչ հեռու մի առատանյուղ կաղնի: Արծիվն իր որսով իջավ կաղնու վրա, ուզեց ձկան համը տեսնել: Եվ ահա՛ նա իր մագիլներով ծովային գայլի գլուխը բաժանեց մարմնից, մարմինն էլ մաս-մաս արավ ու կերավ. մնաց գլուխը:

Իմարիներն այս որ տեսավ, ասաց.

«Այ դու թևավոր, լավ օգնական չես, ինչ որսացիր՝ այն էլ կերար. ես ինչ տանեմ Պոխյոլայի տիրուհուն»:

Արծիվն ասաց.

«Թողել եմ գլուխը. սրանից Պոխյոլայի տիրուհու համար սեղան կսարքես»:

Իմարիներն ձկան գլուխը բերեց տվեց Պոխյոլայի տիրուհուն և ասաց.

«Քո հրամանով ես հերկեցի օձերով լի դաշտը. հետո հրամայեցիր, որ գնամ Մանալի անտառը և բռնեմ արջին ու գայլին. այդ հրամանդ էլ կատարեցի: Վերջապես հրամայեցիր որպեսզի Տուռնելիի ջրերում որսամ մեծ ու չաղ գայլաձկան. ահա այդ հրամանդ էլ կատարել եմ. հիմա ասա, վստահո՞ւմ ես ինձ. աղջկանդ ինձ կնության կտա՞ս»:

Պոխյոլայի տիրուհին ասաց.

«Բայց վերջին հրամանս լավ չես կատարել. գայլաձկան միսը կերել, միայն գլուխն ես բերել»:

Ճարտար դարբինը պատասխանեց.

«Ես ամենադժվար տեղից գայլաձուկ եմ որսացել. իհարկե, այդպիսի ծանր գործի մեջ մի բան էլ կարող է թերի մնալ: Դե, ուրեմն, ինձ կնության տուր քո աղջկան, որին տենչացել եմ երկար ժամանակ»:

Այստեղ Պոխյուլայի տիրուհին վերջապես ասաց Իվարինենին ցանկալի խոսքերը.

«Այո, հիմա իմ աղջիկը քեզ կնության կտամ. տարիներ շարունակ դու տենչացել ես նրան: Քեզ եմ տալիս իմ քնքուշիկ, իմ հարազատ դստրիկը, թող նա քե՛զ, ո՛վ Իվարինեն, դառնա կյանքի ընկեր, դառնա քո սիրելի թոշնակը»:

Վեյնենեյնենը որ տեսավ, թե ինչ կատարվեց. շատ տխրեց ու այսպես խոսեց.

«Ավա՛ղ, ինձ ծերուկիս... Ես պետք է ջահել ժամանակս ամուսնանայի: Ով ջահել օրերին տուն ու տեղ է դրել, ընտանիք է կազմել ու երեխաներ ունեցել, նա իր բախտից չի գանգատվի»:

Եվ ծերուկը տխուր-տրտում մտածում էր, որ հասակն առած մարդը չպիտի մրցի երիտասարդի հետ, երբ մտադրվում է ամուսնանալ:

## **Ռունա Ի**

Հարսանեկան խնջույքի համար մեծ ցուլն են մորթու, գարեջուր պատրաստում

Հիմա երգենք այն մասին, թե ինչպիսի խնջույք սարքեց մռայլ Պոխյուլայի տիրուհին:

Թող բոլորը տեսնեն, թե նշանավոր տոհմի աղջկան ինչպիսի փառքով ու շուքով են ճամփու դնում:

Շատ հյուրեր պիտի կանչեն հարսանիքին, ուրեմն պետք է այնպիսի մսացու, որը բոլորը լիանան:

Եվ պառավն ընտրեց մի ցուլ. ոչ շատ մեծ էր այդ ցուլը, ոչ էլ փոքր. կոտոշները հարյուր սաժեն էին, ռեխը՝ հարյուր հիսուն: Ծիծեռնակը նրա մեկ կոտոշից մյուսը թռչում էր հազիվ մի օրում. ծիտիկն էլ նրա վզի շուրջը յոթ օրում կարող էր փաթ տալ, իսկ սկյուռը գլխից մինչև պոչը հազիվ անցներ մեկ ամսում:

Հարյուր ամենաուժեղ այրեր բռնել էին ցուլի կոտոշներից և հազար քաջ տղամարդ էլ քշում բերում էին հսկա ցուլին: Բայց ոչ ոք, ո՛չ ահել, ո՛չ ջահել սիրտ չեն անում, չեն համաձայնում մորթել ահեղ ցուլին:

Եվ իր համար արածում է ցուլը: Դունչը խոտերին է դիպչում, իսկ մեջքն ամպերն է քերում:

Իսկ ով ուզում է մոտենալ, ցուլն իր սև աչքերը խոժոռում է այդ մարդու վրա, և մարդը, թե երկու ոտք ունի, երկու ոտք էլ փոխ առած փախչում, պահվում է թփուտներում, կամ մազլցում ծառն ի վեր:

Հապա ո՞վ պիտի մորթի հարսանիքի մսացուն: Որտե՞ղ գտնել այդ քաջ մարդուն: Եվ փնտրում են այդ սրտոտ մարդուն Կարելիայի անտառներում, փնտրում են Պոխյոլայի դաշտերում, փնտրում են քաջակորով շվեդների երկրում, փնտրում են ռուսների հյուրընկալ հողում, բայց ոչ մի տեղ հարմար մարդ չեն գտնում:

Եվ ահա՛ հանկարծ ծովից դուրս եկավ մի տարեց դյուցազն: Հսկաների մեջ նա ոչ ամենից մեծն էր, ոչ էլ ամենափոքրը: Կարող էր տեղավորվել փայտե թասի հատակում, կամ էլ թե մաղի տակ: Նրա բռունցքները երկաթից էին, գլխին քարե գլխարկ ուներ, ոտքերն ու սրունքներն էլ պինդ էին ժայռի պես: Ձեռքին ուներ պղնձե դաստակով ոսկե դանակ:

Դյուցազնը անվախ մոտեցավ ցուլին. մի հարվածով դանակը խրեց նրա կոկորդը և հսկա կենդանին ինչպես հնձված ցողուն՝ թավալվեց գետնին:

Ամեհի ցուլի միսը հագիվ տեղավորվեց հարյուր դազանում, հարյուր սաժեն երշիկ պատրաստեցին, վեց տակառ ճարպ հալեցին, յոթ տակառ էլ արյուն քամեցին:

Պոխյոլայի տիրուհին ասաց.

«Ի՛նչ հարսանիք, որ առատ զարեջուր չունենանք»:

Եվ սկսեց պատրաստել խմիչքը: Քարեջուր պատրաստելու համար նախ ջուր էր հարկավոր: Տիրուհին հրամայեց բերել մի կաթսա: Ոչ շատ մեծ էր այդ կաթսան, ոչ էլ փոքր: Իր ծառաներին հրամայեց ջրով լցնել կաթսան:

Աղբյուրները ցամաքեցին, ջրհորները դատարկվեցին, մինչև կաթսան պռնկեպռունկ լցվեց:

Ջուրը շատ էր, բայց միայն ջրով զարեջուր չես պատրաստի: Պոխյոլայի տիրուհին կաթսայի մեջ գարու հատիկներ լցրեց, հետո արդեն թթխմոր ավելացրեց, որպեսզի լավ, համով զարեջուր պատրաստի:

Պետք էր նաև ուժեղ կրակ զարեջուրն եփելու համար:

Այնքան վառելափայտ կտրեցին, որ Պոխյոլայի անտառները ցանցառացան: Ապա մի այնպիսի խարույկ թեժացրին, որ ծուխը մինչև երկինք բարձրացավ:

Հետո կաթսան կրակի վրա դրին և բերանը կափարիչով փակեցին, որ եփվի և անուշ զարեջուր ստացվի:

Երեք օր ու երեք գիշեր անցավ, բայց անուշ խմիչքը դեռ պատրաստ չէր, զարեջուրը դեռ չէր փրփրում:

«Էլի ի՞նչ զցենք կաթսայի մեջ, — մտածեց պառավ Լոուխին:

Այստեղ պատավիճակն օգնության հասավ Կալեվալայի չքնաղ դուստրը՝ Օսմոթարը: Գետնին ընկած էր մի տաշեղ. աղջիկը վերցրեց, դրեց ափի մեջ՝ շփեց և հանկարծ սենյակում սկսեց վազվզել մի փափկամորթ սկյուռ:

Աղջիկն ասաց.

«Անտառի ուրախ բնակիչ, շուտ վազ տուր, մտիր կանաչ պուրակը, բեր եղևնու կոն և սոճու տերևներ»:

Սկյուռը վազեց հասավ անտառ, հավաքեց եղևնու կոներ, մի կապոց էլ սոճու տերևներ և բերեց հանձնեց աղջկան:

Օսմոթարը կոները և սոճու թարմ, բուրումնավետ տերևները գցեց կաթսայի մեջ, բայց կաթսայում խմիչքը չփրփրեց, անուշ գարեջուր չստացվեց:

Շատ տեսակի ծաղիկներ գցեցին ամանի մեջ բայց էլի ապարդյուն:

Հանկարծ աղջիկը տեսավ գետնին ընկած մի մարխիկ, վերցրեց դրեց ափի մեջ, շփեց և ահա՛ սենյակում սկսեց վազվզել մի դեղին կզաքիս:

Օսմոթարն ասաց.

«Ոսկեդեմիկ կզաքիս, ճարպիկ գազանիկ, շուտ վազիր հասիր անտառի խորքը, մտիր արջի որջը և հենց նրա երախից ինձ փրփուր բեր»:

Կզաքիսը վազեց ընդարձակ դաշտերով. անցավ գետերը, բարձրացավ ժայռերը, ապա մտավ անտառի խորքը, այնտեղ ուր արջերն են ապրում: Արջի մոռթից փրփուր էր կաթում, կզաքիսն իր թաթիկներով բերեց փրփուրը և հանձնեց աղջկան:

Օսմոթարը արջի բերնից առնված փրփուրը լցրեց կաթսայի մեջ, բայց էլի ուզած գարեջուրը չստացվեց:

Օսմոթարը մտածեց. «Էլ ի՞նչ ավելացնեմ, էլ ի՞նչ գցեմ կաթսայի մեջ, որ ստացվի փրփուր, անուշ գարեջուր»:

Եվ ահա՛ Կալեվալայի չքնաղ դուստրը, այն, որի ձեռքերն այնքան քնքուշ են, այն աղջիկը, որ թեթև ոտնամաններ է հագել և քայլում է շատ արագ, այս անգամ գետնին ծառի կեղև տեսավ, վերցրեց ու ասաց.

«Տեսնենք սրանից ի՞նչ կստացվի»:

Օսմոթարը կեղևը տրորեց ձեռքի ափերի մեջ, ապա տրորեց երկու զիստերի վրա և ահա՛ օդում սկսեց թռչկոտել մի թավամազ մեղու:

Աղջիկն ասաց մեղվին.

«Ո՛վ դու արագաթռիչ մեղու, թռի՛ր այնտեղ, որտեղ կիրամայեմ ես, թռի՛ր հասիր կապույտ ծովի մեջտեղում գտնվող կղզին. այնտեղ, բուրավետ ծաղիկների մեջ ննջում է մի աղջիկ: Դու ամենաարնտիր մեղրատու ծաղիկներից հավաքիր քաղցրիկ հյութը և բեր դիր իմ ափի մեջ»:

Արագաթռիչ մեղուն կարճ ճամփով կտրում-անցնում է դաշտերը, թռչում է կապույտ ծովի վրայով, հասնում է կղզին: Տեսնում է մի սիրունիկ աղջիկ ննջում է մեղրատու ծաղիկների մեջ: Մեղուն իր թևիկների, իր կնճիթի վրա ծաղիկներից վերցնում է անուշիկ հյութը և բերում դնում է Օսմաթորի ափի մեջ:

Կալեվի դուստրը մեղրատու ծաղիկների հյութը գցում է կաթսայի մեջ: Վերջապես հեղուկը սկսում է խմորվել, փրփրել և քիչ հետո արդեն կաթսայի պտունկներից սկսում է թափվել անուշիկ գարեջուրը:

Գարեջուրն իսկույն լցնում են կաղնյա տակառների մեջ, բերանը պինդ փակում են և դնում մութ նկուղում, որ հարսանիքի հանդեսին հրամցեն հյուրերին:

Պոխյուլայի տիրուհին հրամայեց, որ սկսեն հարսանիքի համար կերակուրներ պատրաստել. հարյուր դագանի մսերն սկսեցին կամ խաշել, կամ մեծ թավաների մեջ տապակել: Մի քանի դագան էլ ձավարի շիլա դրին օջախների վրա: Հացն էլ բաղա՛րճ-բաղա՛րճ՝ կիտեցին բլուրների նման:

Եվ ահա՛ քիչ անց, մութ նկուղում դրված գարեջրի տակառներից լսվեց Փշշոց. մոտեցան. գարեջուրը տակառում փրփրում, Փշշում ու ձայն է տալիս.

«Չե՛մ ուզում մնալ մութ նկուղում. այստեղ ես հարզ ու պատիվ չունեմ: Իմ տեղն ուրախ սեղանի վրա պիտի լինի. այնտեղ ես թասերի մեջ կշողշողամ, հյուրերը կգովեն-կփառաբանեն ինձ և իմ պատվին երգեր կերգեն»:

Սկսեցին փնտրել երգչի, որ գովերգի ու փառաբանի գարեջուրը: Եվ ահա՛ նկուղը բերին լոսդին, ապա գայլաձկին. բայց ի՛նչ երգիչ դուրս կգա դրանցից: Ո՛չ լոսդու, ոչ էլ գայլաձկան փորից ձայն չի լսվում:

Հետո գնացին բերին մի փոքրիկ տղայի: Բայց կաթնակեր երեխայի ի՛նչ բանն է գարեջուր փառաբանելը:

Իսկ գարեջուրը բարկացել և ավելի ուժեղ է Փշշացնում, քիչ է մնում տակառը տրաքեցնի և թափվի հատակին:

Վախեցավ պառավ Լոուիսին. կանչեց իր աղջկանը, ապա ծառաներին, ստրուկներին և հրամայեց.

«Գնացե՛ք կանչեցե՛ք, որ հյուրերը գան և սկսեն քե՛ֆ անել: Կանչեցե՛ք բոլոր պոխյուլոյիներին, կանչեցե՛ք աղքատներին և թշվառներին, բոլոր կույրերին և տառապյալներին, կանչեցե՛ք բոլոր կաղերին և հաշմանդամներին: Կույրերին բերե՛ք նավակներով, կաղերին ձիերով, հաշմանդամներին սահնակներով:

Հարսանիքի կանչեցեք Կալեվալայի որդիներին և ամենից առաջ ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենին. թող նա երգի, որ ժողովուրդը լսի նրա իմաստուն երգերը, լսի և ուրախանա: Միայն ո՛վ դու իմ դստրիկ, չգնաս այն կղզին, որտեղ ապրում է Կաուկոնեյլին և այդ խեղճավուն Լեմմինկայնենին չկանչես հարսանիքի»:

Աղջիկն հարցրեց.

«Ինչո՞ւ չկանչեմ Լեմմինկայնենին»:

Լոուիսին պատասխանեց.

«Նա տաքարյուն, անգուսպ տղա է: Սիրում է վիճել և կռիվներ սարքել. նա ծաղր ու ծանակի կենթարկի մեր սիրունիկ աղջիկներին. այդ չար տղան մեր խնջույքը կխանգարի»:

Եվ աղջիկը, ծառաներն ու ստրուկները գնացին չորս կողմը և բոլորին, ում հանդիպեցին, կանչեցին հարսանիքի. կանչեցին Պոխյոլայից ու Կալեվալայից, կանչեցին գյուղացիներին և վարձով աշխատողներին, կանչեցին կապա հազած կազակներին և արհեստավորներին: Միայն չկանչեցին կղզեբնակ այն քաջ որսորդին, այն հմուտ ձկնորս Լեմմինկայնենին:

## Ռ-ունա ԻԱ

Փեսային և հարսին մեծ պատիվներ են անում: Վեյնեմեյնենը երգում և շնորհակալություն է հայտնում հյուրասիրության համար

Պատավ Լոուիսին ոտ ու ձեռք ընկած հսկում է, որ միսը լավ խաշեն, խորովածը հյութալի լինի, ձկները տեղը տեղին տապակվեն, կարկանդակներն էլ փափուկ ու համեղ լինեն:

Հանկարծ պատավն անսովոր աղմուկ է լսում. նայում է ծովի կողմը, անտառի կողմը:

«Այս ովքե՞ր են գալիս սահնակներով ու նավակներով. չլինի՞ թե թշնամու գորքն է խուժում իմ երկիրը»:

Մեկ էլ նայեց. չէ՛, ոչ մի թշնամի էլ չկա: Դրանք հարսանքավորներն են, որ փեսացունին մեջներն առած աղմուկով գալիս են: Եվ պատավն ասաց.

«Իհարկե դա իմ փեսան է. նա հազար մարդի մեջ էլ աչքի կընկնի, ոնց որ կաղնին է աչքի ընկնում անտառի ծառերի մեջ, ոնց որ լուսինն է աչքի ընկնում աստղազարդ երկնքում: Նրա ձին սև է, քանց ագռավը, արագաթռիչ է, քանց արծիվը, հախուռն է, քանց քաղցած գայլը»:

Հյուրերն աղմուկով լցվեցին Պոխյոլայի տիրոջ բակը: Լոուիսին ասաց.

«Է՛յ դու, ստրուկներից ամենաուժեղը, շուտով իմ փեսայի ձեռքից վերցրու ձիու սանձը: Ձին տար կապիր ախոռի ամենալավ տեղը, տակը փափուկ դարման լցրու և աղբյուրի ջրից տուր, որ խմի. պղնձե տաշտակի մեջ ցորեն ու ընտիր գարի դիր ձիու առաջ: Հետո մեջքն ու բաշը լավ թիմարիր, մեջքն էլ արծաթագոծ կտորով ծածկիր»:

Երբ մյուսների ձիերն էլ տեղավորեցին, հյուրերն իրար ետևից սկսեցին տուն մտնել: Միայն փեսան՝ ճարտար դարբին Իվարինենը չի շտապում տուն մտնել: Պառավ Լոուիսին դիմեց երիտասարդներին.

«Է՛յ, ջահել հերոսներ, շո՛ւտ իմ փեսային տուն բերեք. դռան վերևի գերանը բարձրացրեք, որ գլխարկը չդիպչի, շեմը ցածրացրեք, որ կրունկը չակռկի, դուռը կրնկահան արեք, որ փեսաս կարողանա ազատ տուն մտնել»:

Վերջապես փեսան տուն մտավ, նայեց չորս կողմը. տան պատերն ու առաստաղը Կալեվալայի ամենալավ փայտերից էին պատրաստված, աթոռները մետաղներից էին սարքված, սեղանները ոսկեգոծ էին, իսկ հատակին մետաքսե կարպետներ էին փռած: Վառարանը պղնձից էր ձուլված, օջախն էլ արդեն ամենադիմացկուն քարերից էր սարքված:

Փեսան այսպես խոսեց.

«Ով դու բարձրյալդ Ուկկո, թող քո աչքը հովանի լինի այս տան վրա, որ բոլորը ողջ, առողջ և ուրախ ապրեն»:

Տիրուհին ասաց.

«Դու էլ որ մեր հարկի տակ ես մտել, միշտ ողջ և առողջ, կայտառ և ուրախ լինես»:

Ապա տիրուհին կանչեց աղախնուն և ասաց.

«Կեչու կեղևը վառիր և բեր, որ լույսի տակ տեսնեմ՝ փեսացուիս աչքերը սև՞ են, ծավի՞, թե՞ չէ վուշի նման դեղնավուն են»:

Աղջիկը կեչու կեղևի ծայրը վառեց և բերեց, բայց կեչին պեծալտում էր, ավելի շատ մուխ էր արձակում, քան բոց, դրա համար էլ ոչինչ չէր կարելի որոշել. այն ժամանակ պառավն ասաց.

«Այս ինչ բան է, փեսայիս դեմքը ծխից սևացավ, գնա բեր մոմ, սպիտակ մոմ, որ պայծառ լույս արձակի, և ես լավ գննեմ փեսայիս դեմքը»:

Աղջիկը բերեց սպիտակ մոմ, վառեց և Լոուիսին պայծառ լույսի տակ գննելով փեսայի դեմքն, ասաց.

«Հիմա արդեն տեսա, թե ինչպիսի աչքեր ունի իմ փեսան. նրանք պայծառ են, ինչպես ծովի փրփուրը, խորն են ինչպես ծովի հատակը, պարզ են ինչպես գարնան ծաղիկը: Դե՛, իմ փեսային նստեցրեք վերին գլուխը, որ բոլորը տեսնեն նրա դեմքը, որ բոլորը խնդան նրա արևով»:

Պոխյուլայի տիրուհին հարսանքավորներին շատ առատ հյուրասիրեց: Սեղանին անպակաս էր ցուլի և խոզի մսից տապակոցն ու երշիկը, ընտիր տեսակի ձկնեղենն ու ամեն տեսակ խմորեղենը: Ամենալավ պատառները փեսայի առաջը դրեց և գարեջուրն էլ երկուկանթանի թասով ամենից առաջ փեսային մատուցեց:

Շատ կերան-խմեցին հյուրերը: Բոլորն ուրախ, զվարթ ասում-խոսում էի, բայց մի բան պակասում էր. չէր լսվում երգի ձայնը, ոչ որ չէր երգում:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը բարձրացրեց ոսկեգույն գարեջրով լի թասը և այսպես խոսեց.

«Գարեջուր, դու շատ ընտիր խմիչք ես, բայց չի կարելի քեզ խմել առանց երգի: Այնպես արա, որ մարդկանց տրամադրությունն ավելի բարձրանա, և երգիչներն ուրախ երգեր երգեն: Հապա ո՞վ է այն ոսկերեքանը, որ առաջինը կսկսի երգել: Թող սկսի, որ ավելի ուրախ անցնի ժամանակը, ավելի փառավորվեն մեր հարսն ու փեսան»:

Գետնին մի երեխա էր նստած. այսպես խոսեց նա.

«Ես թեև փոքր եմ և մարմնով թույլ, բայց ուզում եմ երգել. չե՛ որ մարմնով ուժեղ տղամարդիկ չեն ուզում երգել: Թեև լղարիկ եմ և սրունքներս դեռ չեն պնդացել, բայց ես կերգեմ, որ երեկոն ավելի ուրախ անցնի և այս օրը միշտ հիշվի»:

Վառարանին մի ծերունի էր նստած. այսպես խոսեց նա.

«Այս խնջույքին երեխան թող չերգի և անմիտ խոսքեր թող չթոթովի. երեխայի երգերում շատ շինծու բաներ կան, աղջիկների երգերում միտք չկա: Նրանք, ովքեր բազմել են աթոռներին, թող երգեն իմաստուն երգեր»:

Բայց ոչ որ չի ուզում երգել: Պոխյուլայի տիրուհի պառավ Լոուխին գարնացավ, ասաց.

«Գուցե ես վատ գարեջուր եմ պատրաստել, գուցե ես անուշ խմիչքի փոխարեն դառն խմիչք եմ լցրել թասերի մեջ: Մի՞թե չկա մեկը, որ սկսի երգել. աթոռները հո չեն երգի իրենց վրա նստած տղամարդկանց փոխարեն, լուսամուտի փեղկերը հո չեն երգի. մի՞թե մեր հերոսների շրթունքներին սառել է երգը: Հապա ո՞վ է, որ առաջինը կսկսի երգել մեր այս փառահեղ հանդեսում»:

Բայց էլի ոչ մեկը ձայն չի հանում. ոչ որ չի ուզում երգել:

Այն ժամանակ ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Դե, քանի որ ձեր մեջ չգտնվեց մեկը, որ ինձ հետ երգի, մենակս կերգեմ. ես ի ծնե երգիչ եմ, և կերգեմ այն, ինչ գիտեմ, ինչ սովորել եմ»:

Եվ ահա ծերուկ Վեյնեմեյնենը սկսեց երգել ուրախ երգեր. հնչեց նրա հզոր-  
իմաստուն խոսքը:

Շատ երգեր գիտեր Վեյնեմեյնենը, ավելի շատ, քան քարեր կան լեռներում,  
ավելի շատ, քան ծաղիկներ կան դաշտում:

Հարսանիքավորները հիացան նրա սրտալի-իմաստուն երգերով: Երգում է  
Վեյնեմեյնենը և անբերրի հողը պարարտանում է ու սկսում է անել ոսկեհաս  
ցորենը, ծովափի ավազը դառնում է ընտիր հացահատիկ, ծովի ալիքներն էլ  
քաղցր մեղր են դառնում:

Ամեն ինչ կարող է անել ծերուկ Վեյնեմեյնենը իր իմաստուն երգերով. ժեռ քարից  
կարող է փափուկ բադարճ ստանալ, իսկ փափուկ ձյունից կոշտ աղ ստեղծել:

Խնջույքին հրավիրված բոլոր մարդիկ, թե՛ ահել ու ջահել, թե՛ տղա թե՛ աղջիկ  
շատ ուրախացան Կալեվալայի դյուցազնի երգերով:

Եվ ծերունին այսպիսի խոսքերով ավարտեց իր երգը.

«Ով դու բարձրյալդ Ուկկո, օգնիր որ մարդիկ այստեղ միշտ ուրախ, երջանիկ և  
լիառատ ապրեն, ինչպես այս խնջույքի օրը: Քանի ապրում են այս տան տերն ու  
տիրուհին, թող ամենայն օր ուրախ երգեր հնչեն այս հարկի տակ: Ուկկո, առատ  
վարձատրիր այս մարդկանց աշխատանքը. թող նրանց տունն ու ամբարները  
միշտ լիքը լինեն ամենայն բարիքներով. թող նրանց ուռկանները միշտ առատ  
որսով լցվեն: Ե՛վ եկող ամառը, և՛ հաջորդ տարին, թող ոչ ոք չգղջա, որ նստել է  
այս հարկի տակ և գվարճացել է, որ մասնակից է եղել այս խնջույքին»:

## **Ռ-ունա ԻԲ**

Աղջկան հիշեցնում են իր հայրական տանն անցկացրած օրերը և թե՛ ինչ է  
սպասում նրան ամուսնու հարկի տակ

Հյուրերը կուշտ ու կռինչ կերան-խմեցին և շատ գվարճացան այն մռայլ  
Պոխյոլայում:

Հարսանեկան հանդեսն իր վախճանին հասավ: Ժամանակն էր, որ աղջիկը  
թողնի հորական օջախը և գնա նոր տունը՝ մտնի ամուսնու հարկի տակ:

Փեսան արդեն պատրաստել էր սահնակը, բայց Լոուիսին ասաց նրան.

«Իմ ազիզ փեսա, մի շաբաթ սպասել ես, մի քիչ էլ սպասիր, դեռ պատրաստ չե՛ս իմ աղջիկը տանից դուրս գալու. մազերի կեսը հյուսել է, մյուս կեսը դեռ հյուսված չէ. աջ ոտքի կոշիկը հագել է, ձախ ոտքինը դեռ չի հագել. մեկ ձեռնոցն արդեն հագել է, մյուսը դեռ ոչ»:

Վերջապես աղջիկը հագնվեց-գուգվեց: Տիրուհին այսպիսի խոսքերով դիմեց աղջկան.

«Դուրս արի իմ քննադ, իմ ազիզ դուստր. դե՛, աղջիկը ծախու ապրանք է. փող ունեցողն էլ հո պատրաստ է գնել քեզ պես սիրունիկ թռչնակին: Դու շատ էիր սիրում ոսկին ու արծաթը. քեզ տված ընծան ընդունեցիր և մատիդ մատանի հագցրիր: Դե, ժամանակն է, որ սահնակ նստես և ճամփա ընկնես:

Դու շատ ծանր ու թեթև չարիր և իսկույն համաձայնվեցիր ամուսնանալ: Ծատ արցունք կթափես, որ հորական տունը թողնում ես, հեռանում ես քո սիրելի մայրիկից և օտար հարկի տակ ես մտնում:

Դու հանգիստ-անդարդ ապրում էիր հորդ տանը: Փթթում էիր, ոնց որ ծաղիկը դաշտում, դեռ անկողնից չելած կարագն ու կաթը պատրաստ էր քեզ համար: Հացն էլ արդեն մաքուր ու սպիտակ. թե կարագն ու կաթը չուտեիր, խոզի միսը հո կար ու կար:

Ոչ մի հոգս չուներիր, հրճվում էիր նոճիներով և կեչիներով: Թիթեռի նման ուրախ թռվռում էիր մեր դաշտերում և պուրակներում: Իսկ հիմա հեռանում ես քո հարազատ տնից, գնում ես օտար հարկի տակ. մի անձանոթ ընտանիք ես մտնում: Այնտեղ ամեն ինչ ուրիշ տեսակ է լինելու. նրանց դուռն ու լուսամուտը թե նրանց ուզած ձևով չփակես ու բացես՝ վրադ կփնթփնթան. նրանց ուզածի պես չես կարող վառարանը վառել. ինչ էլ անես, քաղցր խոսք չես լսի, էլ առաջվա պես չես կարողանա ուրախանալ. կուշտ փորով հաց էլ չես ուտի: Դու, սիրունիկ աղջիկս, հենց գիտեիր, թե կերթաս մի գիշեր կմնաս և կվերադառնաս. այդպես չէ, դատրիկս, դու ոչ թե մեկ գիշերով, մեկ ամսով կամ մեկ տարով ես գնում, այլ ամբողջ կյանքդ անց ես կացնելու ամուսնուդ տանը՝ հորիցդ հեռու և մորդ կորուստը քաշելով»:

Աղջիկը ծանր հոգոց հանեց և ասաց.

«Քանի դեռատի աղջիկ էի, միտք էի անում, թե դեռ փոքր եմ, հորս-մորս խնամքի տակ եմ՝ ինձ բանի տեղ չեն դնում, բայց հենց որ մարդու գնամ, հենց որ մի ոտքս սահնակում լինի, մյուս ոտքս դնեմ ամուսնուս շեմին՝ ինձ կմեծարեն, պատիվս ավելի շատ կլինի: Ահա՛, թե ինչ բաներ էին անցնում մտքովս, բայց այժմ, երբ իդձս կատարվեց, երբ արդեն շուտով ոտքս դնելու եմ ամուսնուս սահնակին, խելքիս չի հասնում, թե ինչպես եղավ, որ ամեն ինչի մասին սկսում եմ ուրիշ տեսակ մտածել: Սիրտս ուրախ չէ, որ թողնում եմ իմ շեմը, այն հարազատ շեմը, որտեղ անցել է իմ մատաղ կյանքը: Գնում եմ դառն մտածումներով, ոնց որ մարդ մոտենա գետին ու սկսի քայլել գարնան բարակ և սայթաքուն սառույցի վրայով: Մտքերս շատ են պղտորվել և մռայլ են, ինչպես աշնանային ամպամած երկինքը»:

Աղջկա խոսքերը լսեց նաև տան ծառան, այն պառավ կինը և ասաց.

«Դու հորական տանից գնում ես և տառապանքն անբաժան կլինի քեզանից. այնտեղ արդեն քո ոտքերի համար պատրաստ են շղթաներ: Ծուռով կտեսնես, թե ինչ կոպիտ կխոսի քեզ հետ կեսրայրդ, սկեսուրդ էլ հա կփնթփնթա. տեգորդ խոսքերը հո մի դազան մեղրով չի ուտվի, իսկ տալդ երեսը շուռ կտա քեզանից: Ամուսինդ էլ նորապսակ օրերի նման քո ամեն խոսքին մտիկ չի տա. նրանից փաղաքշական խոսք չես լսի. ինչքան էլ նա տեսքով լավն է, միևնույն է, նա քեզ իր հարազատների կշտամբանքից չի պաշտպանի: Քո հոր տանը դու անհոգ ծաղիկ էիր. մայրդ քեզ կոչում էր՝ արև, հայրդ՝ լուսին. գուլյալ աղբյուր էր քեզ անվանում եղբայրդ, քույրդ՝ աղավնյակ: Հորդ տանը դու թագուհի էիր՝ առանց թագի: Իսկ ամուսնու տանը կինը՝ ոնց որ գերի: Գիշեր-ցերեկ կաշխատի և չեն թողնի, որ գոնե կուշտ քնի-հանգստանա: Լաց աղջիկս, լաց, թող սիրտդ թերևանա, որ դիմանաս գալիք փորձություններին»:

Աղջիկը խոր հոգոց հանեց և դառը-դառը լացեց. արցունքի հեղեղ թափվեց աչքերից.

«Իմ հարազատ հայրիկ ու մայրիկ, դու պեզարդ պառավ, այս ո՞ր եք ուղարկում ինձ, թշվառիս, ինչո՞ւ այսքան հոգս ու ցավ եք դնում իմ ուսերին»:

Այդ ժամանակ խոսեց այն երեխան, որ նստած էր հատակին.

«Մի լար, ով դու չքնաղ աղջիկ, հոգսերդ տուր ձիուն, նրա թիկունքն ուժեղ է և ամեն տեսակ բեռ կտանի: Նայիր աջ կողմդ, տե՛ս, սարի պես ամուսինդ է կանգնած մեջքիդ: Քամուն տուր վատ մտքերդ. դու գնում ես երջանիկ կյանքով ապրելու: Քո ամուսինն ամենատուժեղ և հմուտն է բոլոր տղամարդկանց մեջ: Նրա նետը միշտ նպատակին է խփում, նրա հմուտ ձեռքերն ամեն ինչի ընդունակ են: Նա բազմաթիվ նախիրներ ունի, որ արածում են Կալեվալայի անտառներում և արոտներում: Նրա դաշտերի բերքն առատ է. ինչքան ուզես ցորեն և գարի ունի: Փողն էլ հո շեղջ-շեղջ. պֆենինգներին էլ հո հաշիվ չկա»:

## **Ռունա ԻԳ**

Նորահարսին խրատում են, թե նա ինչպես պիտի պահի իրեն ամուսնու տանը: Մի պառավ կին իր կյանքի ողբերգությունն է պատմում

Հարսանիքի հյուր, Կալեվալայի չքնաղ դուստր Օսմոթարը մտածեց.

«Նորահարսին պետք է բարի խորհուրդներ տալ, որ նա կարողանա ուրախ կյանքով ապրել ամուսնու տանը և սկեսուրից ոչ թե կշտամբանք, այլ գովասանք լսի»:

Այսպիսի խոսքերով նա դիմեց հարսին.

«Դու նոր փթթած ծաղիկ, լսիր իմ խոսքերը և ականջիդ օղ արա: Դու թողնում ես քո հայրական շքեղ տունը և մտնում ես ուրիշի հարկի տակ: Այնտեղ ամեն ինչ քո ուզածի նման չի լինի, դրա համար էլ ինչ ուզում ես վերցրու քո հայրական տնից, միայն մի քանի բան թող այստեղ մնա:

Այստեղ թո՛ղ քո երազանքները, հանձնիր այն այստեղի աղջիկներին. երգերդ թող մնան ձեր տանը, չարանճիություններիդ մի կողմ շարտիր, ծուլությունից բոլորովին ձեռք քաշիր: Հին սովորություններիդ մոռացիր և նոր բաներ սովորիր: Խոնարհ ու հնազանդ եղիր, որ քեզ գուրգուրի կեսրայրդ, որ քեզ փայփայի սկեսուրդ, խաթրդ պահի տեգրդ, և սրտով սիրի տալդ:

Քանի ապրում ես, քանի երկնքում շողում է լուսինը, ապրիր մաքուր վարք ու բարքով: Ամուսինը միշտ սիրում ու գնահատում է, երբ կինը տեղը տեղին կառավարում է տունը. շատ է ուրախանում, երբ ամեն օր կնոջ վարվեցողության մեջ նոր արժանիքներ է տեսնում:

Թեկուզ ծերուկ կեսրայրդ գայլի պես վայրենի լինի, սկեսուրդ մրթմրթան արջ, թեկուզ տեգրդ օձի նման Փշշա, տալդ էլ հա վրադ ճղճղա, նրանց պատվիր ու հարգիր, ինչպես հարգում էիր սիրելի հորդ և հարազատ մորդ:

Աշխատիր որ խելքդ կտրուկ, միտքդ պայծառ լինի: Թող աչքդ ամենատես լինի. նույնիսկ երեկոները թե լույս չի վառվում տանը, թող աչքդ մթան մեջ էլ տեսնի, որ ամեն գործի հասնես: Ականջդ թող սուր լինի. լուսադեմին հենց որ արթոր մեկ անգամ կանչեց, էլ չսպասես, որ երկրորդ անգամ կանչի. տեղիցդ վեր կաց ու գործի անցիր, թող ծերուկն ու պառավը իրենց համար հանգիստ քնեն:

Թե որ արթորը չկանչի, թող լուսինն ու Մեծ արջը քեզ համար նշան լինեն, որ լուսադեմին ելնես փափուկ անկողնից, ամուսնուդ տաք գիրկը թողնես և տան գործն սկսես: Թե անթեղված կրակը չգտնես՝ նոր միայն զարթնեցրու ամուսնուդ, որ նա կայծքարով վառի տաշեղի ծայրը. դու տաշեղի լուսով շտապիր գոմն և անասուններին կերակրիր:

Առաջ կովերին տուր կերը, հետո ոչխարներին. ընտիր խոտ ու գարի դիր ձիերի առաջ. խոզերի ուտելիքն էլ տաշտերի մեջ լցրու:

Չլինի թե քունդ տանի և գոմում քնես. հենց որ անասուններին կերակրեցիր, վագիր դեպի սենյակը, չէ՞ որ արդեն երեխան զարթնեց ու լաց է լինում, նրան հագցրու և կերակրիր:

Հետո դույլը վերցրու, ավելն էլ թևիդ տակը և տունն ու բակը մաքրիր: Թե տալիդ երեխան լաց է լինում, նրան նստացրու թախտին, աչքերը սրբիր, գլուխը շոյիր և կարագը քսիր հացին ու տուր երեխայի ձեռքը:

Հետո արդեն տան պատերն ու օճորքը փոշուց ու մրից մաքրիր: Այս էլ իմացի՛ր, գլխիդ լաչակը, շորերդ ու կոշիկներդ միշտ մաքուր լինեն: Եթե շենք ու շնորհքով չերևաս, այդ չի դուր գա ամուսնուդ և քո սիրելին էլ կսկսի քեզ վրա փնթփնթալ:

Մկան նման թող սուր լինի քո խողովոթյունը. ոտքերդ էլ արագավազ՝ նապաստակի նման: Մեկ էլ տեսար դաշտից վերադարձավ տեգրդ, անտառից տալդ, ամուսինդ էլ հունձ է արել և բեզարած տուն է եկել — անմիջապես մեծ թասով ջուր լցրու նրանց ձեռքերին և քաղցր խոսքերով նրանց սիրտն առ:

Թե որ սկեսուրդ տուն գա այլուրի պարկը մեջքին, անմիջապես ընդառաջ վագիր, գլուխդ խոնարհիր և պարկն ուսիդ առած՝ տար դիր հացատունը:

Թե որ չիմանաս ինչ գործ սկսես, սկեսրոջդ հարցրու.

«Ախ, իմ հարագատ սկեսուր, ասա, հիմա ի՞նչ գործ անեմ»:

Սկեսուրդ քեզ կպատասխանի.

«Ահա՛, թե ինչ պիտի անես հիմա: Այլուրը լից տաշտը և խմոր հունցիր, հետո վառարանը ջեռացրու, փափուկ կարկանդակներ եփիր, հետո արդեն բոլոր ամանները լվա և կարգին-սարքին դասավորիր»:

Դու անմիջապես սկսիր սկեսրոջդ պատվերը կատարել: Աշխատանքդ ինչքան էլ ծանր լինի՝ չտնքաս, հոգոց չհանես, որ սկեսուրդ չմտածի, թե գայրանում ես, որ հանգիստ չունես և տան բոլոր հոգսը քեզ վրա է ընկած:

Թե որ ջուրը պակաս է, անմիջապես դույլերը վերցրու և աղբյուրը ջրի գնա: Շատ մի մնա այնտեղ, որ սկեսուրդ կամ սկեսրայրդ չմտածեն թե աղբյուրի ջրի մեջ ես նայել, հիացել քո սիրունիկ երեսհարքով և ջուրն ուշ ես տուն հասցրել:

Թե որ գնաս ցախ բերելու, ցախի կտորտանքը դես-դեն մի շարտիր. ցախն էլ որ տուն բերիր, մի շարտիր գետնին, որ աղմուկ չլինի, թե չէ սկեսուրդ և սկեսրայրդ կմտածեն՝ գայրացել ես, որ հանգիստ չունես և ծանր գործերը միշտ քեզ վրա են դնում:

Թե որ սկեսուրդ ուզենա լողանալ, բաղնիքը լավ տաքացրու, այնպես որ ծուխ ու մուր չլինի. ինքդ էլ շատ չմնաս բաղնիքում, որ սկեսուրդ չասի, թե նստել բաղնիքի նստարանին հանգստացել ես: Հենց որ ջուրը եռա, գնա սկեսրոջդ մոտ և ասա.

«Ախ, դու իմ սիրելի սկեսուր, բաղնիսը տաքացրել եմ, ջուրն էլ եռացրել, դափնու ճղերից ավելն էլ պատրաստ է: Արի լողացի ինչքան կուզես. ես էլ գլխիդ կկանգնեմ, որ ջուր լցնեմ ուզածիդ չափ»:

Հետո արդեն տնեցիների համար զգեստներ կկարես, որին կապա, որին շապիկ, որին գլխարկ:

Եթե հյուրեր գան, սիրալիր ընդունիր նրանց, համով ճաշեր ու թխվածքներ պատրաստիր: Հյուրերին ճամփու դնելիս նրանց մինչև բակը ուղեկցիր և շուտ տուն վերադարձիր, որ ամուսինդ չսրտնեղի:

Թե որ ուզենաս գյուղամեջ գնալ, անպայման խնդրիր սկեսրոջդ թույլտվությունը: Եվ ում էլ հանդիպես գյուղում, խելքդ ու շնորհքդ ցույց տուր, ավելորդ բաներ չխոսես, սկեսրոջդ չփնովես: Գյուղի հարսներն ու կանայք կարող են հարցնել, թե՝ «սկեսուրդ քեզ կարագ տվե՞լ է որ ուտես, ինչպես հարագատ մայրդ էր ուզածդ ժամանակը տալիս»: Չի՞նի թե վերցնես ու ասես. «Չէ՛, ես կարագի երես չեմ տեսել»: ասա, «Միշտ էլ ինձ գրպով կարագ է տալիս, թեև մի անգամ ամռանն ես կարագ կերել, այն էլ անցյալ տարվանից մնացածը»:

Այս վերջին խրատս էլ լսիր, չքնադ աղջիկ: Ահա՛, դու արդեն հեռանում ես հորական տանից և գնում ես ուրիշի հարկի տակ: Հարագատ մորդ չմոռանաս և նրան չգայրացնես: Չէ՞ որ նա իր կյանքը քեզ համար է մաշել, իր կաթով քեզ կերակրել-մեծացրել է, քեզ համար գիշերները չի քնել, իր բերնից կտրել, քե՛զ լավ պատառները տվել:

Ով իր հարագատ մորը մոռանա կամ նրան գայրացնի, նա այլն աշխարհում էլ հանգիստ չի ունենա: Ստորջրյա Տուռնելիի աշխարհում Մանալի աղջիկը նրան կասի.

«Ինչպե՞ս եղավ, որ դու հարագատ մորդ մոռացար և նրան գայրացրիր: Չէ՞ որ նա քեզ համար շատ է տանջվել... այ՛ դրա համար էլ դու այստեղ կտանջվես»:

Գետնին, կարպետի վրա նստած պառավ կինն այսպիսի խոսքերով դիմեց նորահարսին.

«Աքլորն էլ երգում է իր սիրած հավի համար, զարնանը ագռավն էլ է սիրո երգեր երգում. չէ՞ որ նրանք իրենց թառի կամ ծառի վրա, իրենց ուզածի նման են ապրում: Իսկ ես ոչ տուն ունեմ, ոչ գանձ, ամբողջ ժամանակ ապրում եմ՝ չիմանալով ինչ բան է ամուսնական սերը»:

Հիմա դու, սիրելի աղջիկ, գնում ես հորական տանից, այս բանը լավ իմացիր, ամուսնուդ բոլոր քմահաճույքներին մի ենթարկվիր, ինչպես ես ենթարկվեցի և ամբողջ կյանքումս անբախտացա: Ես էլ քեզ նման ծաղկափթիթ, բոյով-բուսով աղջիկ էի: Բոլորն ասում էին, ինձ նման գանձ չկա մեր աշխարհում. հայրս ինձ թռչնակ էր կոչում, մայրս աղավնյակ, եղբորս համար ազիզ քույր էի, քրոջս համար՝ աշխարհի ամենաթանկ բանը: Ուրախ ու գվարթ շրջում էի մեր դաշտերում ու բլուրներում և երգում էի անհոգ թռչնակի պես:

Հենց որ հարս գնացի, ամուսնուս համար հլու-հնազանդ կին դարձա, սկեսրոջս ձեռքին էլ ոնց որ ստրկուհի:

Բայց քանի դեռ հարս չէի գնացել, ինձ ասում էին, թե ամուսնուս տունը վեց սենյակից է, այն էլ ընտիր փայտից շինված, ամբարները լիքն են ամենայն բարիքով, արտերն էլ հո ամեն տարի ցորենի, գարու, վարսակի առատ բերք են տալիս: Քսակն էլ լիքն է փողով և մյուս տարի մեկ քսակի փոխարեն երկուսը կունենա:

Եվ ես, հիմարս, հավատացի ու մարդու գնացի: Վեց սենյակի փոխարեն տեսա վեցը գերան, որոնք հենել էին դրսի պատերին և հազիվ էին պահում խարխլված տունը: — Ամբարներից մեկը դատարկ էր, մյուսում եղածն էլ՝ փտած ապրանք: Այդ ամենի հետ՝ հարյուր տեսակ կշտամբանք լսեցի, դեռ հարյուրն էլ պիտի լսեի:

Ի՛նչ անեի, դրան էլ համաձայն էի, միայն թե նամուսով ապրեի, բայց ամեն կողմից չար ու ծուռ հայացքներ էին ուղղված ինձ վրա. սկեսուրս, որ խոսում էր, կարծես թե օձն էր Փշշում, ամուսնուս բերնից էլ մի փաղաքշող խոսք չլսեցի:

Դրա հետ էլ հաշտվեցի, ուզում էի մի կերպ գլուխս պահել. լուսադեմից մինչև իրիկուն, հեզ ու խոնարհ աշխատում էի, բայց էլի հարզ ու պատիվ չունեի:

Տանջանքով ցորենն էի աղում, փափուկ հաց թխում, որ սկեսուրս հեշտությամբ ծամի: Կերակուրը նրան ոսկեզօծ ամանով էի մատուցում, իսկ ես քարթու հաց էի ուտում, էն էլ մի անկյուն քաշված. ջարդված թասն էր իմ կերակրի ամանը, կոտրած գդալով էլ մի կերպ լիպոր սպասը բերանս էի տանում:

Ձուկ էի որսում և հենց գետափին մի փոքրիկ ձուկ էի ուտում, որովհետև լավ, ընտիր ձկները տուն էի բերում, եփում-հրամցնում տնեցիներին. չեղավ մի օր, որ սկեսուրս իմ որսած լավ ձկնից ինձ բաժին հանի:

Ամառը քաղ էի անում, ձմեռը գոմաղբն էի տանից դուրս տանում: Աշխատում էի ոնց որ ստրուկը՝ միշտ ծանր բեռը մեջքիս: Ոչ ոք չէր մտահոգվում, թե ես թույլ կին եմ, կարող եմ հոգնել. չէ՞ որ հերոսներն էլ են հոգնում, ձիերի ուժն անգամ պակասում է:

Այսպես թշվառս արյուն-քրտինք մտած ամեն գործ անում էի: Երբ ուզում էի քիչ հանգստանալ, մեկ էլ հրաման. թե վառարանը վառիր: Նորից թեժ կրակի դիմաց տառապում էի:

Թե մեկ-մեկ էլ ուրախանում էի, սկսում էին բամբասել, իմ անբիծ անունը, մաքուր վարքս վատարանում էին. այն էլ այնպիսի խոսքերով, որ մարդու ականջ էր ծակում:

Չնայած այդ ամենին, էլի չէի հուսահատվում. արդեն այդպես էլ մի կերպ կապրեի. կօզնեի պառավ սկեսրոջս: Բայց եղավ մի բան, որ էլ սիրտս ու հոգիս չդիմացան. մեծ դարդի մեջ ընկա — ամուսինս գայլի նման դաժան ու արջի նման կոպիտ դարձավ. էլ երեսիս չէր նայում. իր համար ուտում-խմում էր. քեֆն ուզած գործն էր անում կամ ման գալիս առանց ինձ բանի տեղ դնելու:

Ես սկսեցի լաց լինել. տան մի անկյունում կուչ եկած իմ բախտն էի անիծում և այսպիսի խոսքերով երգ երգեցի:

«Իմ հարազատ մայր, քո աչքի լույսի պես խնամեցիր-մեծացրիր քո աղջկան. մեծացրիր, բայց հետո չկարողացար պահել-պահպանել: Զո ազիզ աղջիկն հիմա այն վիճակի մեջ է, ինչպես թե դալար ճյուղը տնկես անմշակ հողի մեջ. ո՛չ ջուր կա, ո՛չ արև. երեկվա դալար ճյուղն այսօր չոր ծնոտ է դարձել:

Չէ՞ որ ես արժանի էի ավելի լավ բախտի, ավելի շեն տան էի արժանի: Չէ՞ որ պետք էր իմ հարգն իմացող ամուսին ունենայի, որ ինձ կյանքի ընկեր լիներ. ի՞նչ է իմ վիճակը. ագռավի ճանկ եմ ընկել, և նա շորերս բզիկ-բզիկ է արել ինձ վրա, արջի որջ եմ ընկել և ահ ու դողով քաշ եմ տալիս սև օրս:

Թե այս տեսակ վայրենի ամուսնու ձեռքը պիտի ընկնեի, ավելի լավ էր անտառը գնայի, եղևնու բունը վերցնեի՝ կոճորը կայցնեի վրան իբրև դեմք, մորուքը փշերից սարքեի, գլուխը կավից, աչքերի տեղն ածուխ խցկեի, կոներից ականջներ սարքեի, ծառերի հաստ ճղերից էլ ոտքեր սարքեի»:

Դու մի ասի, ամուսինս պատի ետևում կանգնած լսել է երգս: Մեկ էլ սենյակը մտավ. մազերը ցցվել են, ոչ թե քամուց, այլ կատաղությունից, ատամները կրճտացրեց, աչքերը խորորեց, ձեռքին էլ արդեն մի մեծ մահակ: Աչքս չէի թարթել, որ մահակն իջավ գլխիս:

Աչքերս մթագնեցին: Բայց վախենում եմ բարձր ձայնով ողբալ իմ ցավը:

Գիշերը վրա հասավ. ամուսինս վերցրեց մտրակը, դրեց բարձի մոտ, ինքն էլ պառկեց քնելու: Ո՛ւմ համար էր մտրակը. իհարկե ի՞նձ, թշվառիս համար: Բայց ի՞նչ կարող էի անել. էլի հյու հնազանդ գնացի պառկեցի նրա կողքը, որ քիչ քնեմ հանգստանամ: Անկողին մտա-չմտա՝ ամուսինս սկսեց բռունցքներով խփել մեջքիս ու գլխիս, հետո էլ մտրակը վերցրեց ու տո՛ւր թե կտաս. ողջ մարմինս ցավից կսկծաց:

Մի կերպ դուրս փախա ամուսնուս սառը անկողնից. բայց նա ետևիցս հասավ, բռնեց մազերիցս, այնպես պինդ քաշեց, որ մի մեծ փունջ պոկեց և քամուն տվեց:

Մնացի պատի տակ. ցուրտն էլ ավելացավ ծեծված մարմնիս. դողում եմ: Ասում եմ քիչ էլ դիմանամ, գուցե մարդուս կատաղությունն անցնի: Բան չունե՛ս. էլ ինձ վրա դուռ բաց անող չկա: Էլ ճար չկար. թողեցի ամուսնուս տունն ու տեղը և ճամփա ընկա, անցա դաշտերով ու ճահիճներով և վերջապես հասա հայրական երկիրս: Մոտ էր արդեն եղբորս տունը: Հանկարծ եղևնին, սոճին և նրանց կատարին թառած ագռավները ձայն տվին.

«Իզո՛ւր ես եկել, քեզ հարազատ մարդ չկա այստեղ»:

Ես ուշ չդարձրի այդ ձայներին և մտա եղբորս տան բակը: Ցանկապատներն ինձ ասին.

«Դու որ վերադարձել ես հորական տունդ, չգիտե՛ս, որ հայրդ վաղուց է մահացել, մայրդ էլ մի քանի տարի առաջ այն աշխարհը գնաց. եղբայրդ արդեն քեզ խորթացել է, նրա կնիկն էլ հո աչքով աչք չունի, որ տեսնի քեզ»:

Դրան էլ ես ուշ չդարձրի. ուղղակի ձեռքս տարա և եղբորս սենյակը տանող սառն բռնակը շուռ տալով, ներս մտա: Մտա և դռան մեջ կանգնեցի: Եղբորս կինն այնքան գոռոզ էր, որ չմոտեցավ ձեռ չտվեց, իսկի մի բարև էլ չտվեց: Ես էլ

պակաս հպարտ չէի, ես էլ ոչ ձեռ տվի, ոչ էլ բարևեցի: Ձեռքս տարա վառարանին՝ սառն էր:

Տեսա եղբայրս ձգված է թախտին, մեջքին ու գլխին մի սաժեն կեղտ ու մուր է: Եվ եղբայրս, ինչպես օտար անցորդին են հարց տալիս, այդպես էլ ինձ հարցրեց.

«Դու ծովի այն կողմի՞ց ես եկել. ո՞ր ես գնում»:

Ես պատասխանեցի.

«Ի՛նչ է, հարազատ քրոջդ չե՞ս ճանաչում. չե՞ որ մեզ մի մայր է ծնել, մի թռչունի ձագերն ենք և մի բնում ենք մեծացել»:

Եղբայրս իր սիրելի կնոջ ականջին փսփսաց.

«Իմ քրոջ համար ուտելիք բեր»:

Կինը թարս նայեց և գնաց մի աման ջրալի կերակուր բերեց. բայց ի՛նչ կերակուր. երեսի յուղը կատուն էր լպստել, շունն էլ մնացածը լակել, տակը բան չէր թողել:

Եղբայրս իր սիրելի կնոջ ականջին նորից փսփսաց.

«Մեր հյուրի համար գարեջուր բեր»:

Կինը թարս նայեց և գնաց մի աման ջուր բերեց, բայց ի՛նչ ջուր. պղտոր ու անպետք, հարսն այդ ջրով երեսն ու ձեռքերն էր լվացել:

Ես սրտի մռմուռով թողի եղբորս տունն և հեռացա. սկսեցի թափառել գյուղեգյուղ, ինձ անձանոթ մարդկանց դռները թակել: Ախր երեխաներս էլ հետս էին, իմ թշվառ բալիկներն էլ ինձ նման տանջվում էին:

Բայց շատ-շատերը անարգում էին ինձ ու տան շեմից վռնդում: Մեկ-մեկ էլ, շատ հազվադեպ, պատահում էին ազնիվ մարդիկ, որոնք մի բարի խոսք էին ասում, տուն էին թողնում, վառարանի մոտ տաքացնում, մի կտոր հաց, մի աման ապուր տալիս և մի տաք զգեստ, որ ձմեռվա ցրտին չսառչենք:

Քանի թովոուն աղջիկ էի, երբեք մտքովս չէր անցնում, և եթե հազար մարդ էլ ասեր, նրանցից ոչ մեկին չէի հավատա, թե ես ամուսնանալով այդպիսի դժբախտ վիճակի մեջ կընկնեմ, այդպիսի ծանր դարդի տեր կդառնամ և կյանքս տառապանք կդառնա ինձ համար»:

## **Ռ-ունա ԻԳ**

Նորափեսային խրատում են, որ լավ վարվի նորահարսի հետ: Իվմարիները կնոջը նստեցնում է սահնակ և երրորդ օրը տուն են հասնում

Շատ խրատներ տվեց Օսմոթարն աղջկան, ապա դարձավ փեսացուին և այսպես խոսեց.

«Եղբայր իմ, դու քո մոր որդիներից ամենալավն ես, լսի՛ր իմ խորհուրդը, ականջ դիր, թե ինչ կասեմ այս անուշ թռչնակի, այս աղջկա մասին, որ շուտով քո հարկի տակ է մտնելու:

Փառք տուր Աստծուն, որ այսպես լավ դաստիարակված աղջիկ է քեզ պարզել: Մաքուր, գեղեցիկ, գործիմաց աղջիկ է քո կյանքի ընկերը: Նա կարող է հնձել, աղուն աղալ, հյուսվածքներ գործել, իսկ լվացքն այնպես կանի, որ քաթանները սպիտակ ձյունի պես սպիտակ կերևան:

Երբ որ քո կինն սկսի հյուսվածքներ անել և հարևան հարսները տեսնեն, հիանան նրա հյուսվածքներով, կհարցնեն. «Այս աղջիկն ի՞նչ տոհմի զավակ է, որ այսպես նուրբ բաներ է հյուսում». դու պիտի պատասխանես՝ «Իմ հարսնացուն լուսնի և արևի դուստրն է, Մեծ Արջ աստղն է նրան շնորհներ պարգևել»:

Դե, շուտով դու կնոջդ հետ ճամփա ես ընկնում, այնպես քշիր սահնակը, որ փոսերի կամ արգելքների չհանդիպես, որ աղջիկն հանկարծ սահնակից վայր չընկնի և նրա քնքուշ մարմնի ոչ մի տեղը չցավի:

Երբ արդեն քո հարկի տակը կլինեք, չթողնես, որ քո թանկագին ընկերը տխրի և մութ անկյուններում կուչ գա. չէ՞ որ նա իր հոր տանը երբեք մութ անկյունների չի նստել. նրա տեղը լուսամուտի դիմացն էր. ցերեկը մայրն էր հրճվում իր աղջկանով, երեկոները հայրն էր մխիթարվում նրա երգերով:

Քո հարսնացուին դաշտը տար այն ժամանակ, երբ ցորենի և գարու առատ բերք ես հավաքել. թող աղջիկն ընտիր ցորենի այլուրից հաց թխի և գարուց էլ անուշ զարեջուր պատրաստի:

Միրելի փեսա, այս ոսկեղենիկ թռչնակին փայփայիր, որ ջիհի թե տխրի և լաց լինի: Հենց որ տեսնես շատ է տխրում, սահնակիդ լծիր ամենալավ ձին և աղջկանը բեր հորանց տուն, որ հոր, մոր և հարազատների կարոտն առնի:

Չլինի թե այս սիրունիկ թռչնակին նեղացնես և բանացնես այնպես, ինչպես ստրուկին կամ վարձած մարդուն են բանեցնում: Չլինի թե ամբարի կամ պահեստի դուռը փակեք նրա առաջ: Հոր տանը նրա առաջ ամեն ինչ բաց էր և ամեն տեսակ ուտելիք՝ ձու, կաթ, թե մսեղեն պակաս չէր աղջկա համար:

Միրելի փեսա, թե դու աղջկա հետ սիրալիք վարվես, քո պատիվդ էլ շատ կլինի: Երբ ուզենաս գոբանջիդ կամ աներոջդ տեսության գնալ՝ քեզ շատ սիրով կընդունեն, համեղ պատառներով կկերակրեն, անուշ խմիչք կխմացնեն, ձիուդ ախոռը կտանեն և առատ խոտ ու գարի կլցնեն մսուրը:

Չլինի, թե ով փեսա, մտքովդ անցնի աղջկան մտրակով խփել, որ նա կծկվի մի անկյունում և դառն լաց լինի, ինչպես ստրուկին են ծեծում և լացացնում. չէ՞ որ

հայրական տանը ոչ մեկի մտքով չի անցել աղջկա խաթրին կաշել, ուր մնաց, թե մտրակով խփել. հոր տանն աղջիկը երբեք չի կծկվել մութ անկյունում ու լաց չի եղել:

Սարի պես կանգնած եղիր կնոջդ մեջքին, որ սկսեսուրը սիրտ չանի նրան խփել, որ սկեսրայրը չգոռգոռա վրան: Թե հյուր եկած մարդիկ կամ հարևանները բամբասեն կնոջդ և քեզ ստիպեն, թե ծեծիր կնոջդ, երբեք այդպիսի բան չանես, և բնավ ձեռք չբարձրացնես այս քնքուշ թռչնակի վրա, չէ՞ որ երեք տարի դու այս աղջկա կարոտով էիր վառվում, որ հետն ամուսնանաս:

Քո սիրունիկ կնոջը, որ ոսկե խնձորի նման չքնաղ է, դու բարի խորհուրդներ տուր և խրատիր, թե՛ այն ժամանակ, երբ մի բարձի վրա եք պառկած, և թե՛ այն պահին, երբ ուզում ես գործի գնալ: Եվ ամբողջ տարվա ընթացքում մերթ խոսքով հասկացրու նրան իր անելիքը, մերթ աչքով-ունքով, մեկ-մեկ էլ ոտքդ նշանակալից տպտպացրու գետնին, և այսպես՝ երեք տարի շարունակ:

Թե որ չորրորդ տարում տեսնես, որ նա քեզ չի լսում և քո խրատներին ուշադրություն չի դարձնում, դու միայն բարակ ճիպոտով վախեցրու նրան, բայց ո՛չ մտրակով և ո՛չ էլ մահակով երբեք չխփես կնոջդ: Այս էլ իմացիր՝ ճիպոտդ էլ այնպես տուն բեր անտառից, որ ոչ մի հարևան չտեսնի և չկարծի, թե դու ուզում ես կնոջդ ծեծել:

Իսկ թե նորից քեզ չլսի, այն ժամանակ կեչու դալար ճյուղը կտրիր և դրանով խրատ տուր: Բայց երբեք կնոջդ չխփես ոչ դաշտում և ոչ էլ անտառում, որ չլինի թե մարդ իմանա և կնոջդ լացի ձայնն օտար մարդ լսի:

Թե ստիպված լինես ծեծել կնոջդ, միայն ուսերին խփիր, մի քիչ էլ մեջքը կակղացրու. երբեք չխփես կնոջդ գլխին, ականջներին կամ դեմքին, թե չէ կարող է ճակատին ուռուցք առաջանալ, աչքերի տակը կապտել և այն ժամանակ կեսրայրն ու սկեսուրը, հարևանները կնկատեն այդ, կսկսեն հարց ու փորձ անել կնոջդ և կանայք ծիծաղելով կասեն.

«Այս աղջիկը կովո՞ւմն է վիրավորվել, թե՞ գայլը կամ արջն են սրան հոշոտել: Ո՛չ, ինչպես երևում է, ամուսինն է կատաղած գայլ, կամ մրթմրթան արջ»:

Վառարանին պառկած էր մի աղքատ ծերունի, այսպիսի խոսքերով նա դիմեց փեսային.

«Լսի՛ր, ով դու ճարտար դարբին Իմարինեն, շատ ծանր ու թեթև մի արա, թե ինչ կասի, կխոսի կինդ, ինչպես ես, ողորմելիս էի անում, երբ դեռ նոր էի ամուսնացել: Ընտիր հաց ու միս էի առնում բերում տունը, մյուս օրը ձուկ, կարագ և ամեն տեսակ ուտելիք, հետն էլ գարեջուր, բայց ոչ մի բանը չէր գոհացնում կնոջս: Մեկ էլ տեսար մազմորուքս կքաշքշեր, կգոռար, թե ես հաստակող, տխմարի մեկն եմ և ոչ մի կարգին բան չեմ բերում տունը:

Այսպես մի քանի տարի տառապեցի, վերջն այլ ելք գտա. վերցրի բարդենու դալար ճիպոտն ու տուն եկա. երբ կինս ճիպոտը ձեռքիս տեսավ՝ վզովս ընկավ և ասաց. «Իմ թանկագին ամուսին»:

Հարսնացուն նորից ծանր հոգոց հանեց, լաց եղավ և այսպես խոսեց.

«Շուտով գալիս է իմ բաժանվելու ժամը: Ախր առաջ երբեք չէի մտածել, թե կարող եմ հեռանալ հորանցս տանից: Ահա խմում են վերջին բաժակները, դրսում էլ սահնակներն են պատրաստում:

Շատ գոհ եմ իմ հորից, որ ինձ համար ոչինչ չի խնայել: Շատ և շատ գոհ եմ մայրիկից, որ ինձ կաթով է սնուցել, օրորոցս է օրորել և անքուն գիշերներ լուսացնելով, ինձ մեծացրել է:

Անչափ գոհ եմ եղբորիցս, քրոջիցս, որոնք ինձ սիրել, փայփայել են:

Գնում եմ և կարոտով հրաժեշտ եմ տալիս իմ հարազատներին, մեր տանը, մեր բակին, մեր արտերին և մարգագետիններին, մեր թավուտ անտառներին ու մեր ջրնաղ պուրակներին:

Թե որ պատահի ետ գամ մեր տունը, գուցե հորս ու մորս այլևս չտեսնեմ և նրանք իմ ձայնը չլսեն:

Մեկ էլ ու մեկ էլ մնաք բարով հայրիկ ու մայրիկ, իմ սիրելի եղբայր և հարազատ քույր. մնաք բարով դաշտ ու անտառ, քաղցրահամ պտուղներ, մնաք բարով լճեր և կղզիներ, բլուրներ և հովիտներ»:

Վերջապես Իվարինենը աղջկան սահնակ նստեցրեց, մտրակով խփեց ձիուն և նույնպես մնաք բարով ասաց դաշտերին, անտառներին և իրեն ճամփու դնող խնամիներին:

Երբ Իվարինենը գյուղից դուրս էր գալիս, երեխաները նրա ետևից սկսեցին երգել.

«Ամպերից մի սև թռչուն իջավ, թռավ հասավ մեր աշխարհը, մեր թռչնակին, մեր քնքուշ ծաղկին հափշտակեց ու տարավ: Այնքան էլ թանկ չնստեց անգին բեռը, մի քանի արծաթով հրապուրեց ու տարավ: Էլ ո՞վ մեզ ծովափ կտանի, ո՞վ մեզ համար երգեր կերգի»:

Ձին գնաց մեկ օր, երկու օր և ահա՛ երրորդ օրվա իրիկնամուտին ճարտար դարբինը տեսավ իր տունը, տեսավ իր հարազատ օջախի թունդ ծուխը, որ քուլա-քուլա բարձրանում էր ամպերին:

**Ռունա ԻԵ**

Իմարիներն մայրը դիմավորում է որդուն և հարսին. Վեյնեմեյները իմաստուն երգերով ուրախացնում է հարսանիքավորներին

Ինչպես ջահելները կարոտով սպասում են գարնան արևին, ինչպես երեխաները սպասում են, որ պտուղներն հասունանան անտառում, ինչպես ծովն սպասում է նավի. այդպես էլ Իմարիներն բարի մայր Լոկկան այքը ջուր կտրած, սպասում էր իր որդուն և հարսին:

Առավոտ շուտ լուսամուտից նայում էր բակը, գուցե արդեն տեղ է հասել սահնակը. ցերեկներին գնում կանգնում էր ճամփին և նայում անտառի կողմը, գուցե երևա սահնակ քաշող ձիու գլուխը. երեկոներն էլ տան ցանկապատի մոտ կանգած, ականջը սրած սպասում էր, գուցե թե լսի սահնակի սղոցը:

Կարոտած մոր հետ սպասում էր ամբողջ գյուղը. մեծն էլ ու փոքրն էլ ուզում էին բախտավորված տեսնել ճարտար դարբին Իմարիներին:

Եվ ահա՛ մի պայծառ առավոտ Լոկկան լսեց, որ անտառի ծառերն անուշ խշշում են, հետո լսեց ձիու սմբակների դոփյուն, ապա զանգակների զնգզնգոց: Եվ քիչ հետո շքեղ սահնակը կանգնեց պապերի սարքած տան առաջ:

Սահնակի մեջ Լոկկայի հարազատ որդի Իմարիներն է, կողքին էլ սիրունիկ հարսը, իսկ նրանց ետևից գալիս են հարս ու փեսային ուղեկցող հյուրերը:

Լոկկան, Կալեվալայի դուստրը, որ դեռ թարմ էր մնացել գարնան ծաղկի պես, այսպիսի խոսքերով դիմեց որդուն՝ Իմարիներին:

«Ամբողջ ժամանակ, գիշեր-ցերեկ մտածումնքի մեջ էի, թե ե՞րբ կվերադառնա իմ անուշիկ որդին. ի՛նչ լավ եղավ, որ ողջ-առողջ, բախտավորված տուն ես հասել: Հիմա ձին սահնակից կարձակենք, կկապենք մսուրը, առաջը կլցնենք այն անուշ խոտից ու գարուց, որ միշտ ախորժակով կերել է: Դու էլ, իմ սիրելի որդի, բոլորին, մեր գեղի մեծին ու փոքրին բարև տուր, բարև առ և պատմիր գլխովդ եկածը: Հո շատ փորձանքի չե՛ս հանդիպել ճամփին: Ինչպե՛ս քեզ ընդունեց զոքանջդ. հանգիստ տունը մտար և նստեցիր աթոռին, թե՛ ստիպված եղար կոփվ անել, աներոջդ տան դուռը ջարդել, աղջկան գոռով փախցնել:

Չէ՛, տեսնում եմ, որ առանց հարց ու փորձի էլ, առանց պատասխանի էլ ամեն ինչ լավ, բարեհաջող է վերջացել և տղաս տիրացել է այս անուշիկ աղջկան: Հապա այն ո՞վ է, որ սուտ լուրեր է տարածել, թե փեսան դատարկ ձեռքով է վերադարձել, իգուր նա զուգվեց-զարդարվեց, սահնակին լծեց կայտառ ձին և գնաց օտար աշխարհ: Չէ՛, այդ չար լեզուների ասածը թող քամին տանի: Տեսնում եմ, որ տղաս բերել է այն անուշիկ բաղիկը, այն դալար ճյուղը, որի կարոտով ապրում էր մի քանի տարի:

Դե, որ այդպես է, բոլորդ, ովքեր հավաքվել եք այստեղ, ուրախացեք, թող ուրախանան արևն ու լուսինը, թող ուրախանան բոլոր դյուցազունները՝ մեծն ու փոքրը, որ իրենց սիրելի դարբինը վերադարձել է»:

Այդ պահին մի փոքրիկ չարալեզու տղա ասում էր ընկերներին.

«Այ, դու չարաբախտ փեսա, ամբողջ կյանքումդ հույս ունեիր, թե այնպիսի կին ձեռք կբերես, որ հազար-հազար անգին գանձ արժենա, բայց մի այնպիսի կին է քեզ բաժին ընկել, ոնց որ ճահճում նստած ագռավը, ոնց որ անբան կաչաղակը, մի անպետք սև թռչուն:

Այդ աղջիկն ամբողջ ամառը պարապ-սարապ թրև էր գալիս, ոչ մի թաք գուլպա գործեց, ոչ էլ ձեռնոց: Օժիտ էլ չունի հետը, սնդուկի մեջ մկներն են պար բռնել»:

Կալեվալայի պարծանքը, բարի Լոկկան, լսեց այդ տարօրինակ խոսքերն ու այսպես ասաց.

«Ա՛յ, չարալեզու տղա, ինչո՞ւ ես սուտ բաներ ասում. գուցե մի ուրիշ տեղ կա այդպիսի անպետք հարս, բայց իմ հարսի նման հարս չկա աշխարհում. ոչ Գերմանիայում, ոչ Էստոնիայում այդպիսի աղջիկ չի ճարվի. հարսիս աչքերը՝ ոնց որ երկնքի աստղերը, բերանը քնքուշիկ, ոնց որ բացված վարդ, թևերը ձյունի պես ճերմակ, պարանոցն էլ կարծես կարապից է փոխ առել:

Իմ հարսը շատ լավ օժիտ ունի. նրա սնդուկի մեջ մուշտակ էլ կա, ամեն տեսակի և գույնի շրջագգեստ և էլի շա՛տ ընտիր բաներ:

Իմ հարսը շատ լավ հյուսվածքներ է արել և շնորհքը թափվում է մատներից»:

Հետո Լոկկան դարձավ հարսին և ասաց.

«Դու իմ ջքնաղ հարս, գիտեմ, որ քո շենքով-շնորհքով հորդ տան պարծանքն էիր. այստեղ, քո ամուսնու տանն էլ այնպես արա, որ մենք էլ պարծենանք քեզնով: Ապրիր քեզ համար ուրախ-զվարթ. չէ՞ որ դու եկել ես մի աշխարհ, որտեղ հողն ամենայն բարիք տալիս է մարդուն: Ճամփին դու արդեն տեսած կլինես, թե արտում քանի բարդ ցորեն ու գարի ունենք, ինչքան խոտ ու դարման, այդ բոլորը քո ամուսնու շնորհքն է. նա թե լավ դարբին է, թե լավ վար ու ցանք անող:

Քեզ նման սիրուն թռչնակի համար այստեղ ամեն հարմարություն կա. տան աթոռները շատ լավն են, իսկ բաղնիքում ողորկ տախտակ է դրված սալերին, որ ուզած ժամանակ լողանաս: Տանտերը քեզ հայրություն կանի, տիրուհին ոնց որ հարազատ մայր, նրանց տղաներին քո եղբայրները համարիր, իսկ աղջիկներն արդեն քեզ քուրության կանեն:

Թե որ ցանկանաս ուտել այն ձկնից, որ հորդ տանն ես կերել, կամ այն որսացուից, որ եղբայրդ է որսացել, դու տագերդ կամ կեսրոջդ մի հարցրու, այլ ուղղակի խնդրիր քո ամուսնուց: Ոչ մի վայրի կենդանի կամ թռչուն չի կարող ազատվել քո ամուսնու նետից. խոր ծովում լողացող ոչ մի ձուկ չի կարող արծնել քո ամուսնու ցանցից. նա քո սրտի ուզածը կբերի քեզ, երբ ցանկանաս»:

Սկսեցին հարսանիքավորներին հյուրասիրել: Ընտիր մսեղենը, հացն ու զարեջուրն անպակաս էր սեղանից: Մի կողմից էլ մեղրն ու կարկանդակներն էին բերում հյուրերի համար:

Կերան-խմեցին. նորից բոլորն ուզեցին լսել անուշ երգեր: Բայց ո՞վ պիտի երգի: Իհարկե ծերուկ, հավատարիմ, հավերժական երգասաց Վեյնեմեյնենը: Եվ նա սկսեց երգել. և այսպես էր նրա երգը.

«Ամենից առաջ փառաբանենք այս տունը կառուցողին. նա հմուտ վարպետ էր, որ կարողացավ ճահիճների մեջ հարմար տեղ ընտրել, և ամենաամուր ծառերից՝ կաղնիներից և եղևնիներից, սոճիներից և կեչիներից այնպիսի ամուր տուն կառուցել, որ սերնդեսերունդ դիմանում է: Հարյուր և հարյուր վարպետ էր աշխատում այս տան վրա, ո՞րը պատերն էր տեղը դնում, ո՞րը կտուրն էր սարքում, մյուսներն էլ տան միջի հարմարություններն էին տեղը-տեղին սարքավորում:

Հիմա էլ փառաբանենք տանտիրուհուն, որ այսպիսի ուրախ սեղան է բացել մեզ համար, իր ձեռքերով թխել է փափիկ բաղարջներ, և ամեն տեսակ ընտիր կերակուրներով՝ խոզի մսով, սերով ու կարագով, ընտիր ձկներով և անուշ զարեջրով հյուրասիրում է մեզ:

Բարի տիրուհի Լոկկան, ահա՛ մի շաբաթ է, որ հանգիստ չունի: Լուսադեմին, դեռ արթորը չկանչած, վեր էր կենում, որ խրախճանքի համար այս ճոխ պատրաստությունը տեսնի և բոլորին գոհացնի:

Հերթը հասավ, որ փառաբանենք մեր նորափեսա ճարտար դարբին Իվմարինենին. նա հազել է ամենաթանկագին զգեստները և ահա՛, տեսե՛ք՝ ո՞ր դյուցազունը կհասնի նրան: Մազերը կարծես ոսկյա հյուսկեր լինեն, դեմքն էլ պայծառ՝ արևի նման:

Հապա մեր չքնաղ հա՛րսը: Տեսե՛ք, ինչ չնաշխարհիկ մանյակ է զարդարում նրա պարանոցը, բազուկներին թանկագին ապարանջաններ են, իսկ մատներին ոսկյա մատանիներ, ականջի օղերն էլ անգին մարգարիտներով զարդարված:

Երբ աղջկանը տեսա, կարծեցի թե արևն ու լուսինն են երկնքից վար իջել և շողք են արձակում մեզ վրա:

Դե, հիմա էլ փառաբանենք մեր սիրելի հյուրերին: Բոլորն էլ անվանի դյուցազուններ են, ծերունիները կաղնու պես ամուր են մնացել, սիրունիկ և կայտառ են երիտասարդները: Հենց որ տեսա մեր հյուրերին, բոլորն էլ ինձ ծանոթ-հարագատ մարդիկ երևացին: Բոլորն էլ հազել են ճերմակ զգեստներ, կարծես թե բարի առավոտու լույսն է կաթել նրանց վրա: Ձեզ համար, թանկագին հյուրեր, ամեն ինչ անպակաս է այս շեն տանը»:

Հյուրերն ամենայն բարիք մաղթեցին նորապսակներին և ո՞րը սահնակով, ո՞րը ձիով ճամփա ընկան իրենց տները:

Ծերուկ երգասաց Վեյնեմեյնենն էլ բռնեց իր տան ճամփան: Անցավ թավուտ անտառներով և փարթամ պուրակներով. ամեն տեղ լսվում էր նրա հմայիչ երգը:

Բայց հանկարծ ծերունին դադարեց երգելուց, սահնակը դիպավ ճամփի միջին դուրս ցցված մի քարի և ջարդվեց. կողերը պոկվեցին, հիմնաձողը կտոր-կտոր եղավ: Վեյնեմեյնենի մոտ գործիք չկար, որ սահնակը նորոգեր: Նա այսպիսի խոսքեր ասաց այդտեղ հավաքված մարդկանց.

«Երիտասարդների կամ ծերերի մեջ չկա՞ մեկը, որ իջնի Տուռնելի գետի խորերը, Մանալի թագավորություն հասնի և այնտեղից բերի մի գայլիկոն, որ ես կարողանամ սահնակը նորոգել և տուն հասնել»:

Երիտասարդները և ծերերը միևնույն բանն ասացին.

«Մեր մեջ չկա մի այնպիսի քաջ հերոս, որ սիրտ անի իջնել Տուռնելի ջրերի խորերը, Մանալի թագավորությունն հասնել և գայլիկոն բերել, որ դու կարողանաս նավակը սարքել»:

Ինքը, ծերուկ հավերժական երգասացը, գնաց իջավ Տուռնելի ջրի խորերը, հասավ Մանալի թագավորությունը և բերեց գայլիկոնը:

Սկսեց երգել. կաղնիներից, կեչիներից և մյուս ամուր ծառերից սահնակի կողերը սարքեց, ապա հիմնաձողը և բոլոր մյուս մասերը կարգի բերեց, հետո լծեց ձին:

Ձին փռնչաց, առանց մտրակելու առաջ սլացավ և շուտով երգասացին հասցրեց տան շեմը: Վեյնեմեյնենը ուրախացած մտավ իր նվիրական հարկի տակ:

## **Ռունա ԻՉ**

Լեամինկայնենը շատ դժվարություններ հաղթահարելով հասնում է Պոխյոլա

Պոխյոլայից ոչ հեռու, Կաուկո հրվանդանի դիմացի կղզում էր ապրում դյուցազն Լեամինկայնենը, ինքը՝ Կաուկոմեյին: Նա վար ու ցանք էր անում, խնամում էր արտերը: Հերոսի խողովությունը շատ սուր էր:

Ծովափից լսեց ինչ-որ ձայներ, ձիերի խրխնջոց, հետո արդեն Պոխյոլայից հասնող խրախճանքի զվարթ ձայները: «Կա չկա, այնտեղ հարսանիք են անում», — մտածեց հերոսը:

Մտածեց ու շատ տխրեց. սև գանգուրներն իջան ճակատին, արյունը խփեց երեսը. էլ չկարողացավ վար ու ցանք անել. իսկույն թռավ ձիու մեջքին, տուն հասավ և իր պառավ մորը դիմեց այսպիսի խոսքերով:

«Իմ սիրելի մայրիկ, շուտ ինձ ուտելիք բեր, բե՛ր, անկշտում ուտեմ, ուտեմ ու հագեմամ: Տաքացրու բաղնիքը, որ մի լավ լողանամ, մաքրվեմ և երևամ, ոնց վայել է գեղեցիկ հերոսին»:

Մայրը պատրաստեց որդու ուզածը: Տղան կերավ կշտացավ, հետո բաղնիք գնաց, լավ մաքրվեց: Շիկահեր մազերը փայլ ստացան, իսկ պարանոցն արծաթի պես սպիտակին էր տալիս: Հետո եկավ և մորն ասաց.

«Մայր իմ սիրելի, գնա՛, իմ լավ հագուստները բեր, որ հագնվեմ, ինչպես վայել է քո հերոս որդուն»:

Մայրն հարցրեց.

«Ո՛ւր ես գնում, որդյակ իմ, որսի՞, թե՞ ուզում ես ծովը գնալ ձուկ բռնելու»:

Լեմմինկայները պատասխանեց.

«Իմ հարազատ մայր, ոչ որսի եմ գնում, ոչ էլ ուզում եմ ձուկ բռնել: Գնում եմ Պոխյուլա, անտեղ ինձնից գաղտնի հարսանիք են անում: Միայն շուտ, իմ ամենալավ վերնաշապիկը բեր, նոր կարած կապան բեր, որ հագնեմ, գնամ պառավ Լոուխիի խրախճանքին, ցույց տամ, թե ես ինչ շենք ու շնորհքի տեր եմ, այնպես, որ հարսանիքում բոլորի աչքն ինձ վրա լինի»:

Մայրը չէր ուզում որդուն թողնել, որ Պոխյուլա գնա, Լեմմինկայների կինը՝ սիրունիկ Կյուլիկին էլ շատ թախանձեց, որ ամուսինը չգնա այդ վտանգավոր երկիրը, բայց դյուցազնը չսեց: Մայրը նորից թախանձեց.

«Իմ ազիզ որդի, մի գնա Պոխյուլայի խրախճանքին: Չէ՞ որ քեզ չեն հրավիրել»:

Ուրախ Լեմմինկայները պատասխանեց.

«Թուլամորթն է գնում հրավերով: Կտրիճը գնում է առանց հրավերի: Ես պողպատե թուր ունեմ ձեռքիս, թուր, որ կայծեր է ցայտում»:

Իսկ մայրն ուզում էր որդուն ետ պահել, ուստի կրկին հորդորեց.

«Իմ թանկագին որդի Կաուկո, դու մի գնա Պոխյուլայի խնջույքին: Սարսափելի է այդ երկիրը. ամեն քայլափոխում վտանգի կհանդիպես. այնտեղ գնացող հերոսը ճամփին երեք անգամ կկանգնի մահվան դեմ-հանդիման և չի կարողանա խուսափել դաժան օրհասից»:

Տղան պատասխանեց.

«Ամեն տեղ էլ մահը կարող է վրա հասնել, վախկոտ մարդն է, որ տանից դուրս չի գալիս, նա սարսափում է մահից, իսկ հերոսն հաղթահարում է ամեն վտանգ, արհամարհում է մահը: Ինչ ուզում է լինի, ես պիտի գնամ, միայն դու, սիրելի մայրիկ, ասա՛, թե այդ ինչ դժվարություններ են, ինչ վտանգներ կա ճամփին, որ առաջուց իմանամ և անփորձ դուրս գամ թե՛ առաջին, թե՛ երկրորդ և թե՛ երրորդ մահ-սպառնացող վտանգներից»:

Մայրը պատասխանեց.

«Ես քեզ կասեմ ճշմարիտը. առաջին օրն հենց դու կկանգնես մահվան դեմ հանդիման. դեռ մութը վրա չհասած դու կհանդիպես բոցավառ գետի: Բոցեղեն ալիքների վրա լողում է մի հրեղեն կղզի, կղզու եզրին էլ մի բոցկլտուն հրվանդան կա: Հրվանդանի վրա էլ նստած է մի հրեղեն արծիվ: Գիշերներն այդ արծիվը իր կտուցն է սրում, ցերեկն էլ մագիլները, որպեսզի իր մագիլներում խեղդի և կտուցով հոշոտի նրան, ով սիրտ կանի անցնել բոցեղեն գետի մոտով»:

Կտրիճ Լեւոնիկայները, նույն ինքը՝ Կառուկոմեյիին պատասխանեց.

«Ո՛չ, հերոսներն այդպիսի բանից չեն վախենա. արծվի ճանկերում կարող են տխմար կանայք մեռնել: Ես, կախարդանքով, լաստենուց ձի կսարքեմ. ձին իմ կողքից կերթա, հետո առաջ կանցնի, մինչև արծիվը կուզենա ձիու հետ դատաստան տեսնել, ես բադի կերպարանք կառնեմ, կսուզեմ գետի մեջ և ինչքան կուզի, թող արծվի կտուցն ու մագիլները սուր լինեն. ես անփորձ դուրս կգամ գետի մյուս ափը և կերթամ իմ ճամփով: Դե, հիմա, սիրելի մայրիկ, ասա՛ դրանից հետո ի՞նչ փորձանքի պիտի հանդիպեմ»:

Մայրն ասաց.

«Երկրորդ օրը կհանդիպես մի լայն ու երկար խանդակի՝ մի ծայրով արևելք, մյուսով արևմուտք ձգված: Խանդակը լիքն է բոցկլտուն քարերով: Այդտեղ իրենց մահն են գտել սրերով և նիզակներով զինված հազարավոր կտրիճներ. էլ ո՞նց կարող ես գլուխդ ազատել այդպիսի վտանգից»:

Տղան պատասխանեց.

«Այդպիսի բաներից հերոսը չի մեռնի. դրանից էլ գլուխս կազատեմ: Ես սառցից կամ ձյունից մարդ կսարքեմ: Սառցե մարդը կնետեմ բոցկլտուն քարերի վրա, իսկ այդ ժամանակ, մինչև սառցե մարդը կհալվի, ջեռ կրակները կսառչեն. ես կթռչեմ խանդակի վրայով, կանցնեմ մյուս կողմը, իսկի մի մագս էլ չի այրվի: Դե հիմա, սիրելի մայրիկ, ասա, ո՞րն է երրորդ փորձանքը»:

Մայրն ասաց.

«Ահա՛ թե որն է երրորդ վտանգը: Մեկ օր էլ կերթաս քո ճամփով և ահա՛ կհասնես Պոխյուլայի դարբիններին: Այնտեղ խավարում պահ է մտած գայլը: Այնտեղ է թաքնված նաև արջը. հենց նեղ ճամփի միջում նրանք քեզ կխժռեն. հազարի չափ հերոս են կուլ գնացել նրանց անկուշտ ռեխին. մի՞թե նրանք կխնայեն քեզ, ով իմ անպաշտպան որդի»:

Այսպես պատասխանեց Լեւոնիկայները, այն կտրիճ Կառուկոմեյիին.

«Գայլն ու արջը կարող են հոշոտել գառնուկներին. բայց ոչ մի հերոսի, նույնիսկ ամենասովորականին, նրանք չեն կարող վնասել: Իսկ ես մեջքիս ունեմ տղամարդու քամար, ճարմանդավոր զգեստներ, գիտեմ թե ինչպես պետք է կռվեմ գայլի ու արջի դեմ: Կախարդանքով, թե՛ գայլի և թե՛ արջի բերանին սանձ

կղնեմ, մի հարվածով նրանց կտոր-բրդուջ կանեմ և բոլոր վտանգները հաղթահարած ազատ առաջ կերթամ իմ ճամփով»:

Մայրն ասաց.

«Ինչ որ ասի, դեռ բոլորը չէ. երեք տեսակ սարսափելի փորձանքի էլ կհանդիպես, մինչև տեղ հասնես. իսկ չորրորդ փորձանքն սպասում է քեզ հենց Պոխյոլայում: Քիչ էլ գնաս կտեսնես մի բարձր երկաթե ցանկապատ: Այդ ցանկապատի ցցերը ոչ թե ձողերով են կապկպված իրար, այլ կապկպված են սարսափելի օձերով, հենց դարպասի դռանն էլ գալարվում է մի մեծ թունավոր-վիշապ օձ. նա ունի հարյուր աչք և հազար խայթիչ. հենց որ մոտենաս, նա իր ահռելի բերանը բաց կանի և քեզ ողջ-ողջ կուլ կտա»:

Տղան պատասխանեց.

«Երեխաները կարող են օձի երախին կուլ գնալ և ոչ թե ինձ նման հերոսը: Չէ՞ որ ես ժամանակին օձերով լիք արտն եմ վարել, և ինձ ոչ մի վնաս չի հասել. դեռ փոքր ժամանակս էլ հարյուրավոր օձեր եմ սպանել, բկիցը բռնել ու խեղդել: Հիմի էլ կկախարդեմ, կսպանեմ և առաջ կերթամ ու համարձակ կմտնեմ Լոուխենի տունը»:

Մայրն էլի հորդորեց.

«Իմ սիրելի որդի, մի գնա դաժան Պոխյոլան, մի մտնիր Սարիոլիի այդ չար պառավի տունը, այնտեղ բոլոր մարդիկ զինված են, խմել են և գլուխները տաքացել է. նրանք քեզ կկախարդեն և կսպանեն: Չէ՞ որ քեզնից ավելի ուժեղներին և քեզնից ավելի շատ կախարդանքներ անողին են մեռցրել»:

Կտրին Կաուկոմեյլին պատասխանեց.

«Ախր ես շատ եմ ապրել այդ Սարիոլիում. լապլանդացիների հետ շատ եմ գլուխ դրել. նրանցից ես վախ չունեմ. ինքս նրանց կկախարդեմ, մարմինը մաս-մաս կանեմ»:

Մայրն ասաց.

Ո՛վ իմ դժբախտ զավակ, դու միշտ անցածն ես հիշում. իհարկե, դու շատ օրեր ես անցկացրել Սարիոլիի խրճիթներում, շատ փորձանքների ես հանդիպել, մինչև իսկ Տուոնելիի սև ջրերի հորձանքի մեջ խեղդվել, Մանալի ստորջրյա աշխարհն ես իջել, բայց եթե քո խեղճ մայրը քեզ օգնության չհասներ, դու այնտեղ էլ կմնայիր և այլևս լույս աշխարհը չէիր տեսնի:

Լսիր ինձ, հենց որ Պոխյոլա, պառավ Լոուխենի բակը մտնես, նրանց բակում տանտերը բազմաթիվ սրածայր սյուներ է տնկել և ամեն մի սյան վրա մարդու գլուխ է ցցված. միայն մի սյուն է ազատ մնացել, այն էլ քեզ համար է»:

Կտրին Լեմմինկայները պատասխանեց.

«Թող անբան տխմարներն այդպիսի բաներից վախենան. ո՛չ թե մեկ, այլ վեց-յոթ անգամ եմ ես եղել ամենադաժան կռիվների մեջ և երբեք չեմ իմացել, թե ինչ բան է վախը: Սիրելի մայրիկ, բե՛ր իմ զինվորական զգեստները, բե՛ր իմ հայրիկի թուրը. շատ ժամանակ է նա մութ անկյունում ընկած անբան մնացել. ժամանակն է, որ ես հորական թուրս գործի դնեմ»:

Կտրիճը հագավ զինվորական զգեստները, կապեց պողպատե քամար. քամարի մի կողմից կապեց հորական թուրը, մյուս կողմից տապարը. մեջքին էլ ուներ հոր նիզակը: Եվ այսպես խոսեց.

«Հապա, այն ո՛ր պոխյոլցին է, որ կարող է իմ թրին դեմ կանգնել, ես Սարիոլիի այն տղամարդին հերոս կանվանեմ, ով ինձ հետ կկարողանա չափվել իր ուժով»:

Եվ ստրուկին հրամայեց, որ սահնակը պատրաստի, լծի ամենալավ ձին:

Երբ արդեն կտրիճ Լեմմինկայները սահնակ էր նստել, մայրը կրկին խրատեց.

«Դու իմ մինուճար որդի, դե բարի ճամփա, գնա ուր որ կուզես: Գիտեմ, գնում ես, որ հասնես խրախճանքին, միայն թե հիշիր խրատս, եթե քեզ մի թաս գարեջրով հյուրասիրեն, դու միայն գարեջրի կեսը խմիր, մյուս կեսը թող հյուրասիրողը խմի, որովհետև թասի հատակին ամեն տեսակ աղտեղություններ կլինեն»:

Տղան արդեն սահնակը դարպասից դուրս էր քշել. մայրն էլի խոսեց.

«Երբ մտնես այն սենյակը, ուր մարդիկ քեֆի են նստել, դու նստարանի կես մասի վրա նստիր, թող մյուս կեսին նստի քեզ հրավիրողը: Այսպիսով դու պատրաստ կլինես ամեն փորձանքի դեմ գնալու և չես խաբվի»:

Լեմմինկայները մտրակեց ձիուն: Սահնակն առաջ էր սուրում: Քիչ անց կտրիճը տեսավ թոչունների մի մեծ երամ. երամն անցավ ձիու գլխավերևով: Թոչունների մի քանի փետուրներ ընկան ճամփի վրա: Լեմմինկայները վերցրեց փետուրները և դրեց գրպանը. ո՛վ է իմանում, երբ կարիքի մեջ ընկնես, ամենահասարակ բանն էլ պետք կգա:

Քիչ էլ առաջ գնաց, մեկ էլ ձին փռնչաց և ականջը ձայնի, վախեցած մնաց տեղում:

Կտրիճ Լեմմինկայները, նույն ինքը Կաուկոմեյին, կանգնեց սահնակի միջում և առաջը նայեց. դիմացը բացվեց այն տեսարանը, ինչ գուշակել էր մայրը: Ահա՛ բոցավառ գետի մեջտեղում կա մի բոցկլտուն բլուր. բլուրին կանգնած է հրեղեն արծիվ. նա կտուցով կրակն է խառնում և բերնից կայծեր են թոչում այս ու այն կողմի վրա: Արծիվը տեսավ հեռվից եկող Լեմմինկայներին և հարցմունք արավ.

«Այդ ո՛ւր ես գնում, Կաուկո»:

Տղան պատասխանեց.

«Պոխյոլա, հարսանիքի հանդեսին եմ գնում: Ճամփից մի քիչ դենը գնա, ով արծիվ, և թո՛ղ, որ կտրիճ Լեմմինկայները գնա իր ճամփով»:

Արծիվը պատասխանեց.

«Իհարկե, ճամփա կտամ. ահա՛ բերանս բաց եմ արել. կտրիճ Լեմմինկայները թող գա՛, մտնի՛ կոկորդս, այնտեղից էլ հերոսը թո՛ղ անցնի իմ ստամոքսը. այնտեղ մի լավ քեֆ կանի և ուզածի չափ կհանգստանա»:

Տղան շատ մտահոգվեց, բայց իսկույն ելքը գտավ, ձեռքը տարավ գրպանը, հանեց թռչունների փետուրները, սեղմեց իրար, մի գունդ սարքեց և սկսեց տրորել իր գորեղ ափերի մեջ: Եվ ահա՛ քիչ անց օդը լցվեց կաքավների և խլահավերի երամով: Կտրիճը դրանց արծվի հրեղեն կոկորդը նետեց. մինչ արծիվն առատ որսն էր խժռում, տղան համարձակ գնաց իր ճամփով և այդպիսով առաջին փորձանքից ազատվեց:

Մյուս օրը Լեմմինկայները շարունակեց ճամփան և ահա՛ ձին կրկին փռնչաց և վախեցած կանգնեց. տղան նայեց և ի՛նչ տեսնի. դիմացն այն տեսարանն էր, ինչ գուշակել էր մայրը: Մի լայն, խորը և երկար խանդակ՝ մի ծայրով արևելք, մյուսով արևմուտք ձգված: Մեջը լիքն է բոցկլտուն քարերով:

Տղան շատ չնտածեց. այսպիսի խնդիրք արավ.

«Ո՛վ դու բարձրյաղ, ամենատղորմած երկնավոր հայր, ամպեր ուղարկիր արևելքից և արևմուտքից, հյուսիսից և հարավից. թող ամպերն իրար բախվեն և առատ ձյուն տեղա այս խրամատի բոցկլտուն քարերի վրա»:

Երկնային հաստիչ Ուկկոն լսեց կտրիճի խնդիրքը. ամպեր կուտակեց չորս կողմից, և առատ ձյուն սկսեց տեղալ. ձյան շերտը հասավ մեկ սաժենի, հալվեց և խանդակը լցվեց ջրով, գոյացավ լիճ և ալիքներն սկսեցին ծփալ ափերին:

Լեմմինկայները կախարդանքով մի կամուրջ սարքեց, իր սահնակով անցավ կամուրջի վրայով և այսպիսով երկրորդ անգամ փրկվեց մահից:

Կրկին շարունակեց ճամփան և երբ մոտենում էր Պոխյոլային, ձին փռնչաց ու վախեցած կանգնեց.

Լեմմինկայները սահնակից դուրս թռավ և ի՛նչ տեսնի. գայլն է կանգնած ճամփի միջին, քիչ այն կողմ արջն է դարան մտել:

Կտրիճ Լեմմինկայները ձեռքը գրպանը տարավ և ոչխարի բուրդ հանեց այնտեղից. բուրդը գունդ արավ, տրորեց գորեղ ափերի մեջ: Եվ ահա՛ քիչ հետո նրա ձեռքերի միջից դուրս թափվեցին բազմաթիվ ոչխարներ և այծեր, մի ամբողջ հոտ: Գայլն ու արջը ոչխարների և այծերի ետևից ընկան, իսկ ուրախ Լեմմինկայները սահնակ նստեց և շարունակեց ճամփան:

Քիչ էլ առաջ գնաց և հասավ Պոխյուլայի տիրոջ բակին: Այն պատած էր երկաթե ցանկապատով. բարձրությունը հազար սաժեն էր. ցցերի տեղ նիզակներ էին խրված և նիզակ-ցցերն իրար էին կապկված օձերով:

Լեմմինկայնեն ինքը իրեն խոսեց.

«Այստեղ ամեն ինչ այնպես է, ինչ մայրս գուշակեց. ցանկապատը նույնիսկ ավելի բարձր է. թռչունը հազիվ թռչի նրա վրայով: Օձերով լիքն է ցանկապատի շուրջ-բոլորը»:

Բայց տղան չուսահատվեց, քաշեց տապարը, ապա թուրը. տապարով ջարդեց դարպասի ցցերը, թրով կտրատեց-ջախջախեց օձերին և առաջ անցավ:

Բայց այստեղ արդեն շատ մեծ էր վտանգը. ճամփին փռված էր վիշապ-օձը. նա շատ ավելի մեծ էր, հաստ ու երկար, քան ամենահաստ գերանը. հարյուր աչք ուներ օձը և հազար հատ էլ թունավոր լեզու. ատամները ոնց որ երկաթե փոցի:

Լեմմենկայնենը չվախեցավ, այսպիսի խոսքերով դիմեց օձին.

«Այ դու օձ, քո տեղը խոնավ հողի և ժայռերի մեջ է. ինչպե՞ս ես համարձակվել գալ պատկել իմ ճամփին և քո զգվելի երախը բացել: Շո՛ւտ, փակիր երախդ, գլուխդ խոնարհիր, ներս քաշիր թունավոր-խայթիչ լեզուդ, գունդ ու կծիկ եղիր և դե՛նը կորիր: Գնա մտիր հեռավոր ծմակները, ճիմերի մեջ է քո տեղը, ինձ ճամփա տուր. եթե այստեղից չես հեռանա, եթե գլուխդ մեկ էլ ցցես, ապա բարձրյալն Ուկկոն քեզ կխոցի իր նետերով և երկաթե կարկուտ կտեղա քո գլխին»:

Բայց գարշելի օձը բանի տեղ չդրեց հերոսի ասածները, էլի Ֆշագնում էր թունավոր խայթիչով և սպառնում էր իր երախի մեջ առնել դյուցազնի գլուխը:

Լեմմինկայնեն ասաց դարերի խորքից եկած այն խոսքերը, որ լսել էր մայրիկից.

«Եթե դու իմ խոսքերը բանի տեղ չդնես և շուտով այստեղից չհեռանաս, ապա զե՛շ հիվանդությամբ կսկսես տառապել, երեք կտոր կդառնաս ու կսատկես: Ես գիտեմ, թե դու ինչ չար ծնունդ ես. քո մայրը մարդակեր էր և նրա բոլոր վատ հատկությունները քեզ են անցել. մայրդ լողում էր ծովի խորքերում, ասի ելավ և իր լորձունքը թափեց ավազի վրա: Այդ ժամանակ ծովափ եկան երկնից դուստրերը. նրանք ասացին.

«Այս լորձունքից ի՞նչ կստացվի, եթե ամենակարողը սրան շունչ տա, ապա նաև աչքեր»:

Ամենակարողը լսեց նրանց խոսքերն ու պատասխանեց.

«Գարշանքից միայն գարշանք կստացվի, եթե այս թունալից լորձունքին ես շնչավոր դարձնեմ և աչքեր տամ, ապա դա մի նողկալի հրեշ կդառնա»:

Լորձունքը մնաց ափին: Եվ ահա՛, այն չար Հիյսին, որ ամեն տեսակ վատ գործի պատրաստ էր, լսելով Ամենակարողի խոսքերը, շունչ տվեց այդ անպիտան լորձունքին, աչքեր շնորհեց և ստեղծեց այն գարշանքը՝ նենգ ու թունավոր սև իժը: Քո սիրտը, քո ուղեղը, ո՛վ դաժան բարքի դաժան ծնունդ, դու ժառանգել ես քո անպիտան մորից, քո աչքերը, քո պոչը, լեզուդ սարքված են երկրի վրա գտնող ամենաքստմնելի նյութերից, անպետք-թունավոր բույսերից, ծովի և ցամաքի կենդանիների ամենավատ հատկություններից: Ահա՛ թե ով ես դու, մարդկության թշնամի Հիյսիի նողկալի ծնունդ:

Դու խորամանկ ես ու դավադիր, դու սպանում ես նույնիսկ քեզ լավություն անողին, դու իրավունք չունես փակելու իմ ճամփան. շուտով դեմը կորիք հերոսի ճամփից, թող որ ես անվնաս անցնեմ, գնամ-հասնեմ Պոխյոլայի հարսանեկան խրախճանքին, թե չէ թրովս ու տապարովս գլուխդ կջախջախեմ»:

Եվ ահա՛ այն հարյուրաչքանի հրեշը գալարվեց և փոխեց ճամփան: Հերոսի ճամփան բացվեց և նա նստեց սահնակն ու ավելի արագ քշեց, որ գնա հասնի խրախճանքին:

## **Ռունա ԻԵ**

Լեմմինկայնենը մենամարտում է Պոխյոլայի տիրոջ հետ

Ահա՛ այսպես, ամեն փորձություններից անցավ իմ քաջ որսորդ Լեմմինկայնենը և ողջ-առողջ հասավ Պոխյոլայի տիրոջ տունը: Հիմա արդեն պիտի շարունակեմ իմ երգը և պատմեմ, թե այն կտրիճ Կաուկոմեյին ինչպես անցկացրեց իր օրը Մարիոլում, ինչպես ընդունեցին տանտերերը մեր դյուցազն Կաուկոյին, մեր անկոչ հյուրին:

Ուրախ Լեմմինկայնենը ուղղակի մտավ Պոխյոլայի տիրոջ տունը: Երբ հերոսը ներս էր մտնում, խրճիթի հատակն ու առաստաղը ցնցվեցին: Կտրիճ տղան կանգնեց սենյակի մեջտեղն ու ասաց.

«Ահա ես ե՛ս. «Բարև և ո՛ղջ լինես» կասեմ նրան, ով ինձ կասի նույն խոսքերը. ո՛վ դու Պոխյոլայի տեր, արդյոք քո ախոռում տեղ կլինի՞ իմ ձիու համար. գարի կլցնե՞ն նրա առաջ, իսկ ինձ զարեջրով կհյուրասիրե՞ք»:

Պոխյոլայի տերը, որ նստած էր սեղանի մոտ, այսպես պատասխանեց.

«Իմ սրտում քո ձիու համար տեղ կլինեք, ես քո ուզածը չեի մերժի, եթե դու տուն մտնեիր ինչպես կարգն է: Դու պետք է դեռ շեմին չհասած գլուխդ խոնարհելիք և սպասեիր, մինչև քեզ ներս կկանչեինք»:

Չայրացավ Լեմմինկայնենը և այսպես խոսեց.

«Ես չեմ հիշում, թե իմ հայրն այստեղ գալիս գլուխը խոնարհեր և դռանն սպասեր, մինչև նրան ներս կանչեին. նա անմիջապես ամենապատվավոր տեղն էր նստում. նրա մարդկանց իսկույն հատուկ խրճիթ էին հասկացնում, նրա ձիուն ախոռն էին կապում և առատ գարի տալիս: Պատին տեղ կար, որ նա իր զենքը հաներ-կախեր. մի մեխ էլ կար, որից նա ձեռնոցներն էր կախում, ապա ուտում-խմում, հանգստանում էր: Այդ ինչպե՞ս է, որ հիմա ինձ համար տեղ չկա. ի՞նչ է, ես ինչո՞վ եմ պակաս իմ հորից»:

Այս խոսքերով կտրիճ տղան նստեց նոճենու փայտից սարքած աթոռի եզրին. աթոռը ճռնչաց և նաքճքեց:

Լեւմինկայները կրկին խոսեց.

«Երևում է ձեր սրտովը չէ, որ եկել եմ... թե չէ, ինչո՞ւ ինձ զարեջուր չեք հրամցնում, ինչպե՞ս է, որ ինձ նման հյուրին ուտելիք չեք բերում»:

Միջամտեց տանտիրուհին և ասաց.

«Ով դու ջահել Լեւմինկայներ, երևում է, որ մտքումդ ուրիշ բան կա, ուզում ես փորձանք բերել մեր գլխին: Իսկ զարեջուրը դեռ պատրաստ չէ, մսացուն էլ չենք մորթել. դու կամ պետք է երեկ գայիր, կամ էլ թե չէ գոնե վաղը տեղ հասնեիր»:

Լեւմինկայներն այս խոսքի վրա այնպես բարկացավ, որ մազերը ցցվեցին. նա ասաց.

«Ուրեմն եղած-չեղածը կերե՞լ եք, խնջույքն առանց ինձ եք արել, ամբողջ զարեջուրը խմե՞լ եք, մեղրից ոչ մի կաթիլ չե՞ք թողել... աման-չաման հավաքել եք. ո՛նց, ո՛նց ես դու, Պոխյոլայի ատամնաթափ տիրուհի, խնջույքի կանչել ամեն տեսակ մարդու, նույնիսկ ամենահետևյալին, իսկ ինչպե՞ս է, որ մենակ ինձ չես հրավիրել. գիտեմ, որ ճոխ հարսանիք եք արել, շատ զարեջուր և ուտելիք եք պատրաստել: Չէ՛, չէ՛, Լեւմինկայները շատ կնեղանա, եթե նրան զարեջուր չհյուրասիրեք, եթե մի լավ աման կերակուր՝ մեջը քսան ֆունտ խոզի միս չբերեք, որ նա իր երկար ու դժվարին ճամփից հետո ուտի-խմի»:

Տիրուհին կարգադրեց իր աղախնուն.

«Է՛յ, դու փոքրիկ աղջիկ, բե՛ր մի աման կերակուր, մեր հյուրին զարեջուր հրամցրու»:

Աղջիկը, որ խնջույքի ամաններն էր լվանում ու մնացուկները հավաքում, մի աման կերակուր բերեց, բայց ի՛նչ կերակուր, — ձկների կրծմրծած գլուխ ու ոսկորներ, շաղգամի թոռոմած փրեր, չոր հացի կտորտանք: Մի կուժ էլ զարեջուր բերեց, բայց ի՛նչ զարեջուր, — ջրախառն մի անպետք հեղուկ: Եվ դրանցով ուզում էին, որ կշտանա ու ծարավն հագեցնի դյուցազնը: Աղջիկն ասաց.

«Եթե դու իսկական դյուցազն ես, պետք է այդ կժի զարեջուրը մինչև տակը միանգամից խմես-դատարկես»:

Այստեղ Լեմմինկայները նայեց ու ի՛նչ տեսնի. կժի հատակում վխտում են իժեր-  
օձեր, որդեր են կպած կժի կողերին, մողեսներ են երևում գարեջրի մեջ:

Լեմմինկայները գազագած ասաց.

«Այսպիսի ամանով, այսպիսի կեղտոտ գարեջուր հրամցնողները արժանի են,  
քանի դեռ արևը մայր չի մտել, քանի դեռ լուսինը դուրս չի եկել — Տունելիի սև  
ջրերի խորքում իրենց պատիժն առնեն»:

Լռեց, ապա քիչ հետո ասաց.

«Այս գարեջրի մեջ հավաքել-լցրել են ամեն տեսակ աղտեղություն... բայց և  
այնպես այս գարեջուրը ես կիսմեմ, միայն թե մատներովս կրռնեմ, դուրս կքաշեմ  
ամբողջ աղտեղությունը»:

Նա գրպանից հանեց կարթեր ու զցեց կժի մեջ. իժերն ու օձերն ընկան  
կարթերին: Նա քաշեց, դուրս շարտեց գեռուններին և գլուխները կտրեց: Հետո  
կարթին ընկան հարյուրավոր գորտեր, որդեր ու մողեսներ. դրանք էլ դուրս  
նետեց, հետո նոր միայն կժի ամբողջ գարեջուրը գլուխը քաշեց: Երբ խմեց  
պրծավ, այսպես խոսեց.

«Երևում է, որ ես անցանկանալի հյուր եմ. դրա համար էլ ինձ մեծ ամանով,  
խսկական-մաքուր գարեջուր չտվիք, ոչխար ու ցուլ չմորթեցիք իմ գալու առթիվ»:

Այստեղ կնոջ փոխարեն խոսեց Պոխյուլայի տերը.

«Դու ինչո՞ւ եկար այստեղ, քեզ ո՞վ հրավիրեց Պոխյուլա, հապա՛,  
պատասխանի՛ր»:

Կտրին Լեմմինկայները պատասխանեց.

«Երբ մարդու հրավիրում են, իհարկե լավ է, բայց երբ մարդն ինքն իր ոտքով է  
հյուր գալիս, նա ավելի թանկ է: Լսի՛ր, ով տերդ Պոխյուլայի, ա՛ռ, փող տամ քեզ և  
դու ինձ կանխիկ վճարով գարեջուր վաճառիք»:

Չայրացավ, կարմրատակեց Պոխյուլայի տերը, իսկույն սկսեց կախարդություն  
անել և Լեմմինկայների ոտքերի մոտ հանկարծ մի լճակ գոյացավ. տերն ասաց.

«Ահա՛ քեզ ջրով մի լճակ, ինչքան ուզում ես լակիր»:

Առանց երկար մտածելու այսպես պատասխանեց Լեմմինկայները.

«Ես պառավի մոտ պահ տված հորթ չեմ, ո՛չ էլ պոչավոր ցուլ, որ լճակի ջուրը  
լակեմ»:

Եվ ինքը, Լեմմինկայները, նույնպես կախարդություն արավ ու ահա գետնի վրա  
կանգնեց ոսկե եղջյուրով մի ցուլ: Ցուլն անմիջապես խմեց լճակի ամբողջ ջուրը:

Պոխյուլայի տերը գայլ ստեղծեց, որ նա հոշոտի ցուլին:

Ուրախ Լեմմինկայները մի նապաստակ ստեղծեց, որ նա թովոա գայլի երախի դիմաց:

Պախյուլայի տերը մի գագազած շուն ստեղծեց, որ նա խժռի շղիկ նապաստակին:

Բայց ուրախ Լեմմինկայները մի սկյուռ ստեղծեց. սկյուռն սկսեց թռչկոտել ծպեղի վրա ու շունն սկսեց հաչել:

Պոխյուլայի տերը ստեղծեց մի կգաքիս. նա թռավ ծպեղի վրա ու բռնեց սկյուռին:

Բայց ուրախ Լեմմինկայները ստեղծեց մի գորշագույն աղվես, որ նա բռնի կգաքիսին և ուտի:

Պոխյուլայի տերն անմիջապես մի հավ ստեղծեց, որ աղվեսի երախի առաջ թռչկոտի:

Ուրախ Լեմմինկայները տեղն ու տեղը, կախարդանքով, սուր ճանկերով մի քազե ստեղծեց, որ հավին սպանի:

Պոխյուլայի տերը գայրացած դիմեց Լեմմինկայներին.

«Կորի՛ր, գնա իմ տանից, ես քեզ համար խնջույք սարքող չեմ: Հեռո՛ւ քաշվիր տղամարդկանց շրջապատից, անայիտան մարդ, շո՛ւտ, վերադարձիր քո եկած ճամփով»:

Լեմմինկայները, այն կտրի՛ն Կաուկոմեյլին, պատասխանեց.

«Ոչ որ, նույնիսկ ինձնից նվազ ուժի տեր տղամարդը, չի թույլ տա, որ իրեն տնից դուրս վռնդեն»:

Այստեղ Պոխյուլայի տերը քաշեց իր թուրն ու ասաց.

«Ով դու, կտրի՛ն Կաուկոմեյլի, արի մեր թրերով չափվենք, տեսնենք ո՞վ է մեզանից գորեղ, ո՞ւմ թուրն է ավելի կտրուկ»:

Այսպես պատասխանեց Լեմմինկայները.

«Իմ թուրը շատ կռիվներ է տեսել ու սայրերը քիչ քառթ-քառթ են եղել, բայց եթե դու այսպես ես ընդունում հյուրին, թող քո ասածը լինի. չափվենք մեր թրերով. իմ հայրը ժամանակին այս թրով շատերին է հաղթել: Ես հորս զավակն եմ ու իմ տոհմին ամոթով չեմ անի»:

Եվ երկուսն էլ հանեցին թրերն ու չափեցին. Պոխյուլայի տիրոջ թուրը եղունգի ծայրի չափ երկար էր: Կտրի՛ն Լեմմինկայները ասաց.

«Քո թուրը իմնից երկար է. առաջին զարկը քոնն է»:

Պոխյուլայի տերը հենց այդտեղ, խրճիթում, քաշեց թուրն ու զարկեց կտրիճ տղային, բայց ոչ մի վնաս չտվեց նրան, քանի որ թրի երկար ծայրը դիպավ գերաններին ու թափը կոտրվեց:

Լեմմինկայնենն ասաց.

«Գնանք դրսում կռվենք, որ մեր զարկերը դիպուկ լինեն, թե չէ գերաններն ի՛նչ մեղավոր են, որ թուրդ նրանց հարվածում է»:

Ելան բակը, գտան մի կովի կաշի, փռեցին գետնին, որ նրա վրա կռվեն:

Կողարնակ կտրիճ Լեմմինկայնենն ասաց.

«Լսի՛ր, որ Պոխյուլայի տեր, քո թուրն ավելի երկար ու ավելի զորեղ է, ուրեմն օգտվիր այդ բանից. քանի դեռ գլուխդ ուսերի վրա է, համարձակ եղիր, խփի՛ր»:

Եվ Պոխյուլայի տերը զարկեց մեկ անգամ, երկրորդ, ասպա երրորդ անգամ, բայց նրա թուրը կաշում էր կտրիճ տղայի թրին, կամ ճարմանդավոր հագուստին. ինչքան էլ պոխյուլացին փորձեց, չկարողացավ տղայի մարմինը քերծել:

Կտրիչ Լեմմինկայնենը, նույն ինքը Կաուկոմեյին, ասաց.

«Այժմ հերթն իմն է, հիմա ես կփորձեմ»:

Պոխյուլայի տերն էլ ոչինչ չի ուզում լսել, ինչքան ուժ կա՝ մեջը խփում, հա խփում է, բայց էլի կտրիճին չի կարողանում վնասել:

Վերջապես Լեմմինկայնենը քաշեց կայծակնացայտ թուրը և թրի փայլը լուսավորեց չորս կողմը:

Պոխյուլայի տերը մի պահ շշմած նայում էր փայլփլուն թրին:

Լեմմինկայնենը գոչեց.

«Իմ թուրը շողք է արձակում, ինչպես արևն է շողք արձակում լուսադեմին. բայց դաժան մա՛րդ, իմացիր, վերջին անգամն է, որ քո ասքերը տեսնում են արևի լույսը»:

Ասաց և մեկ դիպուկ հարվածով Պոխյուլայի տիրոջ գլուխն այնպես անջատեց մարմնից, ինչպես շաղգամն են արմատից պոկում, ինչպես հասկն են ցողունի վրայից կտրում:

Տղան չորս կողմը նայեց, տեսավ, որ բակը լիքն է հարյուրավոր ցցերով և ամեն ցցի վրա մի գլուխ է անցկացված: Չայրացավ Լեմմինկայնենը. մեկ էլ նայեց ու տեսավ, որ միայն մի ազատ ցից կա: «Այս ցիցն ինձ համար էիր պահել, հա՛ դե, կե՛ր» — ասաց տղան, վերցրեց Պոխյուլայի տիրոջ գլուխը և խրեց այդ ցցի վրա:

Այն կտրին տղան նորից խրճիթ մտավ ու ասաց.

«Ո՛վ աղջիկ, ջուր բեր, որ ձեռքերս լվանամ-մաքրեմ այդ անպիտան մարդու արյունից»:

Երբ այս բանն իմացավ Պոխյոլայի ջաղու տիրուհին, գազազեց. կատաղեց, հարյուրավոր զինված մարդիկ ոտքի հանեց, որ Լեմմինկայեննի գլուխը կտրեն: Տղան հարմար պահին նահանջեց, որ թողնի հեռանա այդ աշխարհից, քանի որ դժվար էր ջահել կտրիճին մենակ այդքան մարդու դեմ կռվել:

## **Ռունա ԻԸ**

Լեմմինկայեննը պատսպարվում է հեռավոր կանաչ կղզում

Լեմմինկայեննը, ոնց որ ծուխը, դուրս եկավ Պոխյոլայի տիրոջ բակից: Բայց ինչքան փնտրեց, ձին չգտավ, որ հեռանա այս աշխարհից:

Ո՛վ Է արդյոք, որ պիտի նրան խորհուրդ տա. ինչ անի, որ գլուխը չկորցնի, որ փրկվի այս փորձանքից. չորս կողմից լսում էր սարսափելի աղմուկ. ամեն լուսամուտից խոլորած աչքերով նրան էին նայում կատաղած մարդիկ, արդեն լսվում էր զենքերի շառաչը:

Պետք էր մի ուրիշ կերպարանք առնել, որպեսզի կարողանար ազատվել այդ գազազած մարդկանց ճանկերից: Եվ ուրախ Լեմմինկայեննը այսպիսի աղոթքով դիմեց Ուկկո աստծուն:

«Ով դու Ուկկո, իմաստուն հաստիչդ երկնային, ամպերն ու կայծակները քո հրամանով են շարժվում: Ինձ թևեր տուր, որ երկնքի վրայով թռչեմ և իմ հայրենիքն հասնեմ, գնամ իմ պառավ մայրիկին տեսնեմ»:

Ուկկո աստվածը լսեց նրա խնդիրը: Կտրին տղան արծվի կերպարանք առավ և ամպերի միջով սկսեց թռչել դեպի տուն: Թռավ, թռավ, մեկ էլ տեսավ իր ետևից ուզում է հասնել գորշ ճուռակը: Եվ այդ ճուռակի աչքերը փայլատակում էին ճիշտ Պոխյոլայի տիրոջ աչքերի նման, այն տիրոջը, որի գլուխն ինքը կտրեց քիչ առաջ:

Ճուռակն ասաց.

«Է՛յ, ուրախ Կաուկո, հո չե՛ս մոռացել, որ քիչ առաջ մենք իրար հետ թունդ կռվի մեջ էինք»:

Լեմմինկայեննը պատասխանեց.

«Ով դու ճուռակ, հապա ե՛տ դարձիր, թռիր հասիր այնտեղ, որտեղից եկել ես, և երբ հասնես այդ մռայլ Պոխյուլան, բոլորին պատմիր, որ արծվին երբե՛ք չի կարելի հաղթել օդի բարձունքներում»:

Արծվակերպ Լեմմինկայները շարունակեց թռիչքը և հասավ իրենց տունը:

Մայրը նրան ընդառաջ եկավ և տեսնելով, որ տղան շատ տխուր էր, ասաց.

«Դու իմ կրտսեր տղան ես, բայց բոլորից ուժեղն ես. ինչո՞ւ այդպես տխուր ես վերադարձել Պոխյուլայից: Չլինի՞ թե Պոխյուլայի խնջույքում քեզ բանի տեղ չեն դրել և գարեջուր էլ չեն տվել. դե, որ այդպես է, վերցրու անհա՛ այս թասը. դա հայրդ կռվի դաշտից էր բերել և դրանով էր գարեջուր խմում, լցրու և խմիր, ինչքան քեֆդ կուզի»:

Տղան պատասխանեց.

«Եթե ինձ անտես անեին և գարեջուր չտային, ես տանտիրոջ հետ հաշվի կնստեի և հարյուր կտրիճի պատասխանը կտայի»:

Մայրն ասաց.

«Ինչո՞ւ համար ես այդպես տխրել. չլինի՞ թե ձին վատն էր ու նեղ տեղում չկարողացավ քեզ օգնել. որ այդպես է հորիցդ մնացած փողերով մի նոր, ավելի լավ ձի գնիր»:

Տղան պատասխանեց.

«Իմ սիրելի մայրիկ, եթե ձիս վատ լիներ և ինձ չօգներ, խայտառակեր, ես մյուս ձիավորների բոլոր ձիերն էլ կփչացնեի, որ ոչ մեկը չպարծենար, թե իմ ձիուց լավն է իր ձին»:

Մայրը կրկին հարցրեց.

«Ինչո՞ւ այդքան տխուր ես և ինչո՞ւ այդպես հանկարծ վերադարձար Պոխյուլայից: Չլինի՞ թե այնտեղի կանայք և աղջիկները քեզ ծաղր ու ծանակել են. եթե այդպես է, ապա անամոթներին պետք է մի լավ դաս տալ»:

Լեմմինկայները պատասխանեց.

«Իմ անգին մայր, եթե կանայք ու աղջիկներն ինձ ծաղր ու ծանակեին, ես ինքս կարող էի բոլորին՝ հարյուրը, թե հազարը լինեին, ավելի թունդ ծաղրել ու ծանակել նրանց»:

Մայրն էլի անհանգիստ էր, հարցրեց.

«Հապա ի՞նչ է պատահել, գուցե Պոխյուլա գնալիս ճամփին փորձանք է եկել գլուխդ, գուցե չափից ավելի ես կերել-խմել. կամ էլ թե չէ գեշ երազներ՞ ես տեսել»:

Ուրախ Լեմմինկայներն այսպես պատասխանեց.

«Թող միամիտ կանայք վախենան գեշ երագներից, գիշերով, թե ցերեկով, ինչ տեսակ երագ էլ տեսնեն, դրանից չեն վախենա: Իմ անգին մայրիկ, դու պարկի մեջ այլուր և աղ դիր, քո որդին քեզ պետք է հրաժեշտ տա և թողնի հարազատ տունն ու գնա պատասպարվի մի հեռու վայրում. հարյուրավոր մարդիկ թրերն ու նիզակներն են սրել, որ ինձ սպանեն:

Մայր տագնապած հարցրեց.

«Ինչո՞ւ ես այդպես շուտ ուզում եմ հեռանալ քո հայրական տանից. և ինչո՞ւ եմ ուզում քեզ սպանել»:

Կտրիճ Կաուկոմեյլին, նույն ինքը Լեմմինկայները, պատասխանեց.

«Ես վեճի բռնվեցի Պոխյոլայի տիրոջ հետ և ազնիվ կերպով մենամարտեցի: Դե, գիտես քո որդու ուժը. մենամարտում սպանեցի այդ դաժան պոխյոլցուն. այ՛, դրա համար էլ նրա ատամնաթափ կինը հավաքել է հարյուր և հարյուր նիզակավոր, հարյուր և հարյուր թրերով-բրերով զինված մարդիկ: Նրանք բոլորը գալիս են ինձ վրա. ես արդեն շատ փորձություններ տեսել և հոգնել եմ. մեն-մենակ չեմ կարող դիմադրել այդքան զինված բազմությանը»:

Ահա՛, թե ինչ ասաց նա որդուն.

«Չէ՞ որ ես քեզ ասացի, նախագուշացրի, որ չգնաս այդ կախարդների երկիրը. այստե՛ղ, քո պառավ մոր մոտ, քո հարազատ հարկի տակ դու հանգիստ կապրեիր և կովից ու փորձանքից հեռու կլինեիր: Բայց որտե՞ղ պիտի գնաս, իմ ազիզ որդի, որ ազատվես չարագործների ձեռքից, որ նրանք քեզ չգտնեն և չսպանեն»:

Տղան պատասխանեց.

«Ես դեռ չգիտեմ, որտեղ պատասպարվեմ, որ ազատվեմ այդ գազազած մարդկանց սարսափելի վրեժից: Թանկագին մայր, ի՞նչ բարի խորհուրդ կտաս, ո՞ւր գնամ, որտե՞ղ պատասպարվեմ»:

Մայրն ասաց.

«Ախր որտե՞ղ ուղարկեմ, որտե՞ղ թաքցնեմ քեզ, սիրելի որդի, թե կեչու ծառ դառնաս, միևնույն է փայտահատը կգա, ծառը կկտրի և կջարդի ու կտանի, կվառի»:

Թե անտառի խորքում լաստենի կամ փշատերև դառնաս, այնտեղ էլ մարդիկ կգան, ամեն տեսակ ծառ ու թուփ արմատից կկտրեն, գետինը կվարեն, որ ցանք անեն:

Թե անտառի պտուղ՝ մորի կամ հապալաս դառնաս, ինչքան էլ թփերի արանքում թաքնվես միևնույն է, աղջիկներն ու չարանճի տղաները կգան, կգտնեն քեզ և ինչպես քաղցրահամ պտուղ՝ կուտեն:

Թե գայլաձուկ կամ սիգ դառնաս և լող տաս ծովի կապույտ ջրերում, այնտեղ էլ փորձանքի կհանդիպես, կտրիճ ձկնորսն ուռկանը կնետի, քեզ կբռնի և կրակի վրա կխորովի և կուտի:

Թե գորշ գայլ կամ թավամազ արջ դառնաս և թաքնվես անտառի թավուտներում, այնտեղ էլ փորձանք կգա գլխիդ: Կտրիճ որսորդը քեզ կհետապնդի և սուր նիզակով կսպանի»:

Ուրախ Լեմմինկայները այսպես պատասխանեց մորը.

«Միրելի մայրիկ, թե որտեղ է վտանգավոր և որտեղ իմ թշնամիները վրա կհասնեն և ինձ կսպանեն, այդ ես լավ գիտեմ: Մայր իմ անգին, դո՛ւ ես ինձ կյանք պարզևել, կաթովդ սնել ու մեծացրել, ասա՛, ո՞ւր գնամ, որտե՞ղ թաքնվեմ, քանի շուտ է ասա՛, թե չէ վաղը ուշ կլինի, թշնամիները վրա կհասնեն և սպա գլուխս ուտերիս վրա չի լինի»:

Մայրն այսպիսի խորհուրդ տվեց.

«Գիտեմ մի այդպիսի աշխարհ, որտեղ թաքնվում և պատսպարվում են այն մարդիկ, որոնց հետապնդում են. դա մի փոքրիկ, չար մարդկանց աչքից հեռու կղզի է. այնտեղ մարդիկ հաշտ են ապրում. ոչ վեճ ունեն, ոչ էլ իրար խարդավանում են. երբեք սուր չի շաչել այնտեղ: Բայց հիմա անկեղծորեն, մաքուր սրտով երդվիր, որ վեց տարի հետո էլ, տաս տարի հետո էլ, դու այլևս սուր չես առնի ձեռքդ. կռիվ չես գնա, ինչքան էլ ուզենաս ոսկու և արծաթի տիրանալ»:

Լեմմինկայները պատասխանեց.

«Երդվում եմ անկեղծ ու մաքուր սրտով, ոչ եկող ամռանը, ոչ էլ վեց կամ տաս տարի անց սուր չեմ առնի ձեռքս, եթե ինձ չհարկադրեն. անցած կռիվներից դեռ վերքեր կան մեջքիս ու կրծքիս վրա, ուզում եմ գնալ, խաղաղ ապրել»:

Մայրն այսպես խոսեց.

«Դե, հիմա, սիրելի զավակս, գնա նստիր հորդ նավակը և նավարկիր դեպի բաց ծովը: Ինը ծով կանցնես և երբ կհասնես տասերորդին, ծովի մեջտեղում մի կանաչ կղզի կտեսնես: Ժամանակին այդտեղ պատսպարվել է քո հայրը: Երբ ուրիշները կովի մեջ էին, հայրդ այնտեղ հանգիստ ապրում էր. դու էլ այնտեղ կապրես մեկ տարի, երկու տարի և երրորդ տարին կվերադառնաս հորական օջախը, մորդ գիրկը»:

## Ռունա ԻԹ

Կանաչ կղզում ուրախ կյանքով է ապրում Լեւոնիկայները. երբ վերադառնում է հայրենիք, տեսնում է, որ Պոխյուլացիք իր հորկան օջախն այրել-ամայացրել են. անտառում է գտնում է թշնամիներից ճողոպրած մորը

Ահա ուրախ Լեւոնիկայները պարկի մեջ դրեց խոզի միս, այլուր և աղ. մի աման յուղ վերցրեց, մի աման մեղր, այնպես որ երկու-երեք տարի ոչ մի բանի նեղություն չքաշի:

Ապա գրկեց մորն ու ասաց.

«Իմ սիրելի մայրիկ, երեք տարով հեռանում եմ քեզանից. գիտեմ, եթե այստեղից բացակայեմ, մեր վարելահողում օձեր կվիտան, անտառում եղջերուներն ազատ կվազվզեն, գետում սագերը կլողան և նրանց որսացող չի լինի: Եթե Պոխյուլայից չար մարդիկ գան ինձ որոնելու, ասա՛, որ գնացել եմ հեռու, անհայտ աշխարհ և ոչ մի լուր չունես ինձնից»:

Նա բարձրացրեց առագաստը և նավակն առաջ սուրաց ծովի կապույտ ջրերի վրայով: Ինքը նստեց դեկի մոտ, որ նավակին ուղղություն տա, և այսպիսի խոսքեր ասաց.

«Իմ նավակ, սուրա ալիքների վրայով, ո՛վ դու բարենպաստ քամի, առաջ մղիր իմ նավակը, թող այն թռչի ինչպես թռչունը և շուտով հասնի այն հեռավոր, անանուն կղզին»:

Քամիներն առաջ մղեցին նավակը և նավը սուրաց ծովի վրայով մեկ ամիս, երկու ամիս և երրորդ ամսին արդեն հասավ կղզին: Հրվանդանի մոտ կանգնած էին երեք աղջիկներ և հայացքները ծովին էին հառել: Մեկն սպասում էր եղբորը, մյուսը հորը. երրորդ աղջիկն ամենից անհամբերն էր. նա սպասում էր իր փեսացուին:

Աղջիկները տեսան նավակով մոտեցող Լեւոնիկայներին, մտածմունքի մեջ ընկան և ասացին.

«Այս ի՞նչ նավակ է օրորվում մեր ծովի վրա: Ա՛յ նավակ, եթե քո տերը մեր կղզու բնակիչն է, ապա շուտ դարձիր դեպի ափը, մտիր նավահանգիստը: Մենք ուզում ենք իմանալ, թե ինչ նորություններ կան ծովի այն կողմում. մենք ուզում ենք խաղաղ ապրել, հո չե՞ն ուզում կռիվ սկսել»:

Բարենպաստ քամին բարձրացավ. Լեւոնիկայները նավակը հասցրեց ծովափին և հարցմունք արավ աղջիկներին.

«Կղզու վրա հարմար տեղ կա՞, որ նավակս ափ հանեմ»:

Կղզու աղջիկները պատասխանեցին.

«Մեր կղզու ափին շատ հարմար տեղ կա, որ նավակդ ծովից դուրս քաշես. մի նավակ ափ հանելն ի՛նչ բան է. եթե հարյուր նավակ էլ լիներ, նույնիսկ հազարը, մեր ցամաքի վրա տեղ կճարվեր»:

Լեմմինկայնեն այդ խոսքերի վրա թռավ ափը, նավակը քաշեց ցամաքի վրա և դիմեց աղջիկներին.

«Ձեր կղզու վրա մի այնպիսի հարմար տեղ կճարվի՞, որտեղ կարողանա թաքնվել միայնակ տղամարդը, որը չի կարող անհավասար կռվի մեջ մտնել զենք շաչեցնող հարյուրավոր ռազմիկների հետ»:

Կղզու աղջիկները պատասխանեցին.

«Մեր կղզու վրա շատ հարմար տեղեր կան, ուր կարող է պատսպարվել ոչ թե մեկ, այլ մեր գյուղերում և ամրոցներում կարող են պատսպարվել հարյուր, այո՛, նույնիսկ հազար հերոս»:

Ուրախ Լեմմինկայնենը նորից հարցնունք արավ.

«Ձեր կղզու վրա կա՞ մի անտառապատ վայր, ուր ես գնամ՝ կեչիները և մյուս տեսակի ծառերը կտրեմ, բացատի հողը մշակեմ, վար ու ցանք անեմ»:

Այս հարցին աղջիկները պատասխանեցին, թե իրենց կղզու անտառներում վաղուց են բացատներ ստեղծել և վար ու ցանք արել. այնպես որ տեղի բնակիչները վիճակ զգելով կղզու բոլոր արտերն ու մարգագետինները բաժանել են իրար մեջ և ամեն կտոր հողն ունի իր տերը:

Կտրիճ Լեմմինկայնենը նոր հարց տվեց.

«Իսկ ասեք, խնդրեմ, ձեր կղզու վրա, ձեր դաշտերում կա՞ մի այնպիսի տեղ, ուր ես կարողանամ երգել... թե իմանաք, ինչպե՛ս եմ ուզում երգել»:

Կղզու աղջիկները պատասխանեցին.

«Մեր կղզում շատ տեղեր կան, թե դաշտերում, թե պուրակներում, ուր կարող ես և՛ երգել, և՛ պարել, ինչքան քեֆդ ուզի»:

Ուրախ Լեմմինկայնենը սկսեց երգել: Այնքան թովիչ էին նրա երգերը, որ ծառերի տերևները ավելի փարթամացան, թփուտներում պտուղներն ավելի առատ ու քաղցրահամ դարձան: Կկուներն անգամ ավելի դուրեկան գեղգեղացին՝ կարծես թե նրանց կտուցներից ոսկեգույն մեղր էր ծորում:

Լեմմինկայնեն ավելի ոգևորվեց. սկսեց կախարդական երգեր երգել. նրա երգի հմայքից քարերն փայլվեցին՝ մարգարիտներ դարձան, իսկ պուրակներում՝ վարդերի բուրմունքն աշխարհքն բռնեց:

Նորից երգեց և այս անգամ բակում ոսկյա կափարիչով մի ջրհոր ստեղծեց. կափարիչի վրա էլ դրեց մի ոսկյա թաս, որ տղաները գան ջուր խմեն զովանան, աղջիկներն էլ այդ պաղ ջրով երեսները լվանան, թարմանան:

Կղզու աղջիկները հիացել էին Լեմմինկայնենի երգերով և նրա կախարդանքներով:

Կտրին Լեմմինկայնենը, նույն ինքը Կաուկոնեյին, ասաց աղջիկներին.

«Ես ավելի լավ կերգեի, եթե հավաքվեի՞նք մի տան մեջ. կնստեի սեղանի մոտ և ինչքան շնորհք ցույց եմ տվել մինչ այս օրս, ավելի կարող էի ցույց տալ, թե չէ երգս գնում կորչում է դաշտերում և անտառի թավուտներում»:

Կղզու աղջիկները պատասխանեցին.

«Քեզ համար ընդարձակ բակով լավ տուն կճարենք, որպեսզի ավելի լավ երգեր երգես»:

Հենց որ տուն մտան, Լեմմինկայնենը կախարդական խոսքեր ասաց և սեղանը լցվեց ամեն տեսակ կերակուրներով. էլ խոզի միս, էլ մեղր, էլ կարագ՝ ինչքան ուզես: Սեղանին երևացին նաև թասեր՝ լիքը գարեջրով:

Լեմմինկայնեն այստեղ արդեն հասկացրեց, որ ինքը սովոր է միսը կտրատել ոսկե դանակով, որի դաստակն էլ պետք է արծաթից լինի:

Կերավ խմեց և էլի այնքան երգեր երգեց, որ գանգրահեր աղջիկները խելքամաղ եղան. որ կողմը շուռ է տալիս գլուխը, մի սիրունիկը պատրաստ է համբուրվել նրա հետ, մեկը մյուսի առաջն է կտրում, որ նրա հետ մտերմանա:

Շատ գլուղեր կային կղզում և ամեն մի գլուղում տասը տուն ու բակ: Ամեն տանն էլ կային սիրունիկ աղջիկներ, ինչպես նաև ջահել այրիներ: Հազար աղջիկների և հարյուրից ավելի այրիների նա հրապուրեց:

Լեմմինկայնեն այսպես անհոգ և ուրախ էր անցկացնում իր օրերը կղզում. աղջիկները նրա արևով էին երդվում, այրիները նրանով էին մխիթարվում:

Գլուղերից մեկում ապրում էր մի լռոցած աղջիկ: Լեմմինկայնենը միայն նրա վրա ուշադրություն չդարձրեց, միայն նրան չմխիթարեց:

Հասավ ժամանակը, որպեսզի Լեմմինկայնենը տուն վերադառնա: Եվ ահա նրա մոտ եկավ լռոցած աղջիկն ու ասաց. «Կաուկո, սիրունիկ երիտասարդ, եթե ինձ մոռանաս, ապա կցանկանամ, որ քո նավակը ծովում ժայռի դիպչի ու խորտակվի»:

Բայց Կաուկոն մութ գիշերին տանից դուրս չգնաց, որ այդ աղջկան մխիթարի:

Վերջում միտքը փոխեց և որոշեց մի գիշեր, նախքան արթորը կկանչի, վեր կենալ, գնալ լռոցած աղջկա տունը՝ նրան մխիթարել:

Մուր զիշերին, Լեւմինկայներն մեն-մենակ, տնետուն անցավ և ի՛նչ տեսնի, բոլոր տներում հավաքվել են տղամարդիկ, սրերն են սրում, կացիններն են հեսանում, որ իր դատաստանը տեսնեն:

Այստեղ Լեւմինկայներն շատ մտահոգվեց և ինքն իրեն խոսեց.

«Արև, դու կծագես, քո փայլը կարձակես, երկիրը կլուսավորես և նորից մայր կմտնես, իսկ ես ի՛նչ անեմ, ինչպե՛ս պաշտպանվեմ այդքան մարդկանցից: Հազար կտրիճ է զինվել, որ իմ օրը խավարեցնի»:

Էլ ժամանակ չկար լռած աղջկա տունը գնալու, նրան մխիթարելու: Շտապ շուռ եկավ, գյուղի փողոցներով փախավ գնաց ծովափ, այնտեղ, ուր նավակն էր թողել. բայց ի՛նչ տեսնի. գյուղի տղամարդիկ նավակն այրել, մոխիր էին դարձրել:

Բայց վտանգը շատ մեծ է. պետք է թոպե առաջ ազատվել. մտադրվեց նոր նավակ սարքել, բայց որտեղի՞ց տախտակ ճարի: Լավ էր, մի կողմում տեսավ մի քանի մանր-մունր տախտակներ, մի քանի հատ էլ կոտրած թեշիկներ:

Տղան ինչ շնորհք ուներ՝ գործադրեց. մեկ հարվածով նավակի հատակը սարքեց, մյուսով նավակի կողերն ու դեկը տեղը բերեց, երրորդ հարվածով նոր նավակն արդեն լրիվ պատրաստ էր:

Լեւմինկայներն նավակը հրեց դեպի ծովը և այսպես խոսեց.

«Նավակ իմ, ինչպես պղպջակը, լողա՛ ավիքների վրայով. իսկ դու վերասլաց արծիվ, երեք հատ փետուր տուր, որ նավակիս համար ծածկ լինի»:

Երբ նստեց նավակը և ուզում էր թիավարել, մի քանի աղջիկներ վրա հասան և չէին ուզում թողնել, որ նա հեռանա իրենց կղզուց. նրանք ասացին.

«Ինչո՞ւ ես գնում, կտրիճ Լեւմինկայներն, մի՞թե այստեղի աղջիկները քեզ դուր չեկան»:

Լեւմինկայներն պատասխանեց.

«Ո՛չ, այստեղի աղջիկները շատ լավն էին և շատ էլ բարյացակամ էին դեպի ինձ, բայց անպայման պիտի վերադառնամ: Շատ եմ կարոտել իմ հայրենիքին, ուզում եմ գնալ իմ տուն ու տեղին, ուզում եմ մորին պոկել մեր անտառներից, հացն անեցնել մեր արտերում. ուզում եմ, որ մեր բակում հավեր բազմանան և այո՛, կարոտել եմ իմ հայրենի աղջիկներին»:

Լեւմինկայներն շատ սիրալիր հրաժեշտ տվեց աղջիկներին: Լաց եղան աղջիկները, որ կտրիճ տղան հեռանում է իրենցից. Լեւմինկայներն էլ տխրեց, բայց այլևս անհնար էր մնալ, մի կողմից կղզու այրերն էին սպառնում, մյուս կողմից հայրենիքի և մոր կարոտն էր քաշում:

Եվ նավակն առաջ սուրաց. երեք օր, երեք գիշեր անդադրում թիավարում էր Լեմմինկայները. հանկարծ ուժեղ փոթորիկ բարձրացավ, նավակն ալիքների զորեղ հարվածից ջարդ ու փշուր եղավ. Լեմմինկայները ծովն ընկավ և սկսեց լողալ փոթորկոտ ծովում: Ցերեկը լողաց, գիշերը լողաց և լուսադեմին մի կղզի տեսավ: Հոգնած-դադրած ափ ելավ, մտավ հենց մոտիկ տունը: Աղջիկները խմոր էին հունցում, իսկ մայրը հաց էր թխում:

Լեմմինկայներն ասաց.

«Ո՛վ դու բարի տանտիկին, գիշեր-ցերեկ լող տվի բաց ծովում. լավ էր փոթորիկն ինձ վնաս չտվեց, ալիքներն էլ պահպանեցին իրենց մեջքին. բայց թե իմանաս ինչպե՛ս եմ սովածացել, որ էլ ասելու չէ... դե, բարի տանտիկին, ինձ համար մի կտոր տապակած խոզի միս բեր, յուղ բեր: Մեծ թասով էլ գարեջուր բեր, որպեսզի հերոսն ուտի և ուժերը տեղը գան»:

Բարի տանտիկինը գնաց մառանը և բերեց ինչ որ ուզեց հերոսը: Լեմմինկայները ախորժակով կերավ խոզի միսը, կարագը և մի կուշտ էլ գարեջուր խմեց:

Բարի տանտիկինը հերոսին նոր նավակ տվեց: Կտրիճ Լեմմինկայները իսկույն նստեց նավակը և զորեղ թևերով սկսեց թիավարել, որպեսզի օր առաջ հասնի հայրենի աշխարհը:

Եվ ահա՛ կտրիճ տղան վերջապես հասավ իր հայրենի կղզին: Բոլորը, բոլորը ծանոթ են. և՛ նավահանգիստը, և՛ բլուրները, և՛ անտառի ծառերը: Բայց ինչքան նայեց՝ իր հորական տունը չտեսավ. իրենց տան տեղն այժմ մոլախոտեր էին բուսել, բակում հազիվ էին ծիլ արձակել մի քանի եղևնիներ, իսկ ջրհորի շուրջն ու բոլորը ծակող փշեր էին ցցվել:

Կտրիճ Լեմմինկայները, նույն ինքը Կաուկոմեյլին այսպիսի կարոտալի խոսքեր ասաց.

«Ինչքան եմ խաղացել այս պուրակում, ինչքան եմ թռչկոտել այս քարերի վրա: Հապա այս մարգագետնի կանաչ խոտերի մեջ ինչքան եմ թավալ տվել: Ա՛խ, ո՞վ է քանդել իմ հայրական օջախը, ո՞վ է այրել-մոխիր դարձրել մեր տունն ու տեղը և փոշին քամուն տվել»:

Եվ գիշեր ու ցերեկ ողբում, լաց էր լինում կտրիճ տղան. ողբում էր ոչ թե քանդված տան համար, այլ հարազատների համար, որոնք մի ժամանակ ապրում ու շենացնում էին այդ տունը:

Տեսավ, որ մի արծիվ է թռչում գլխավերևում, տղան վեր նայեց ու հարցրեց.

«Ով դու թռչուններից զորեղը, չե՞ս կարող արդյոք ասել, թե ի՞նչ պատահեց իմ մորը, որտե՞ղ է նա, իմ հարազատ մայրը, որ ինձ աշխարհ է բերել, սնել ու մեծացրել»:

Բայց անբան թռչունը ոչինչ չի կարող ասել, միայն ա՛յն, որ կտրիճի հարազատներին ոչնչացրել են սրերով ու տապարներով:

Լեւմինկայները ողբաձայն ասաց.

«Ա՛խ, իմ անուշիկ մայր, դու որ ինձ կրել ես քո կրծքի տակ, աշխարհ բերել և սնուցել ես, ո՛ր ես: Մայրս չի լսում իմ ձայնը. ուրեմն մեռել է, հա՛: Ա՛խ, նրա մարմինը հող է դարձել. նրա գերեզմանի վրա արդեն եղևնիներ են աճում, շուրջ-բոլորը ուռիներ են բարձրացել, ոտքերի կողմն էլ փշատերևներ: Եվ այս բոլորը նրա համար, որ ես գնացի այն դաժան աշխարհը՝ Պոխյուլան և սուրս գործի դրի: Դրա հատուցումն այն էր, որ նրանք իմ տոհմը սրի քաշեցին, իմ խեղճ-պառավ մորն սպանեցին»:

Եվ այսպես տխուր-տրտում նա ման էր գալիս քարուքանդ եղած հորական տան շուրջը: Եվ հանկարծ ի՛նչ նկատի, խոտերի միջով մի արահետ ընկավ աչքին:

Լեւմինկայները այդ արահետով գնաց. ճամփան տանում էր անտառը՝ մինչև նրա թավուտները: Մի քիչ էլ գնաց, հասավ երկու բլուրի և դրանց արանքում մի խրճիթ՝ չորս բոլորը եղևնիներ:

Տղան սրտատրոփ ներս մտավ և ի՛նչ տեսնի. իր մայրը բոլորովին ճերմակած մազերով նստած է այդտեղ: Լեւմինկայները շատ ուրախացավ և այսպես խոսեց.

«Իմ անուշ հարազատ մայրիկ, դու որ անքուն գիշերներ ես լուսացրել իմ օրորցի մոտ, հենց գիտեի, թե թշնամիները քեզ սպանել են... ա՛խ, ինչքան եմ լացել, ինչքան եմ ողբացել»:

Մայրն այսպես խոսեց.

«Ինչպես տեսնում ես փրկվել եմ: Հենց որ Պոխյուլացիների զենքերի շառաչը լսեցի, եկա թաքնվեցի անտառի թավուտներում: Նրանք քե՛զ, իմ խեղճ որդի, քե՛զ էին փնտրում: Քեզ որ չգտան, գազազեցին և մեր տունն ավերեցին, քար ու քանդ արին»:

Լեւմինկայները մորը հանգստացրեց.

«Իմ սիրելի մայրիկ, մոռացիր եղածը, ես որ եկել եմ, թող վիշտն այլևս քեզ չտանջի: Շուտով ես քեզ համար ավելի լավ տուն կսարքեմ, դու հանգիստ կապրես, իսկ ես կերթամ Պոխյուլա, այդ նենգ մարդկանց դատաստանը կտեսնեմ»:

Մայրը տագնապեց և այսպես խոսեց.

«Իմ ազիզ որդի, էլ ո՛ր ես գնում. ախր քանի տարի է, դու բացակայել ես տանից, օտար աշխարհներում ես թափառել, այն հեռավոր, անանուն կղզում ուրիշի տան դուռն ես բախել»:

«Ծիշտ է, օտարության մեջ էի, բայց շատ հաճելի օրեր եմ անցկացրել այդ հեռավոր անանուն կղզում: Այնտեղ ծառերը միշտ դալար են, դաշտերը միշտ կանաչ, վարդերը կարծես ոսկուց լինեն: Նրանց ծառերից մեղր է ծորում, ամեն

ինչ առատ է, ինչքան կուգես յուղ ու կաթ, ուզածիդ չափ ձու և մսեղեն կա. իսկ ընտիր գարեջուրն արդեն հոսում է, ինչպես աղբյուրի ակից գուլյալ ջուրը:

Թեև լավ էի ապրում այդ կղզում, բայց չէի կարող մնալ: Մկսեցին ինձ հետապնդել, իբրև թե այդ կղզու աղջիկներին ես հանգիստ չէի տալիս և գիշերները նրանց այցի էի գնում: Ես էլ արդեն շատ էի կարոտել քեզ, սիրելի մայրիկ և հայրական օջախիս. դրա համար էլ ուզում էի օր առաջ տուն հասնել»:

## **Ռունա Լ**

Լեամինկայները իր վաղեմի հավատարիմ բարեկամ Տիերի հետ նորից կռիվ է գնում պոխյուցիների դեմ

Մի առավոտ լույսը դեռ նոր էր բացվել՝ Լեամինկայները գնաց նավահանգիստ: Աչքին ընկավ ափին մնացած նավակը. մոտեցավ թե չէ, նավակը ձայն տվեց,

«Ինչքա՞ն պիտի այսպես ընկած մնամ ծովափին, մնամ ու չորանամ: Ահա՛ վեց տարի է անցել, շուտով կլրանա տաս տարին, ինչ Կոուկոմեյլին կռիվ չի գնացել. ինչ է, էլ կարիք չունի՞ արձաթի կամ ոսկու»:

Այստեղ կտրին Լեամինկայները բրդե ձեռնոցը նետեց նավակի մեջ և ասաց.

«Դու նոճուց սարքած նավակ, որ այդքան ամրակուռ կողեր ունես, այդպես թեք ընկած չես մնա, շուտով, դեռ մեկ օր էլ չանցած թիավարները քեզ ծովը կիջեցնեն և կտանեն այնտեղ, ուր թեժ կռիվ է լինելու»:

Եվ Լեամինկայները իսկույն տուն գնաց և մորն ասաց.

«Իմ սիրելի մայրիկ, սիրտս հանգիստ չէ, որ չարը մնում է անպատիժ. միտք եմ արել գնալ Պոխյուլա, ոչնչացնել այդ անպիտանների տոհմը, որ էլ մարդկանց չդժբախտացնեն. դե, անուշ մայրիկ, մի տխրիր, որ գավակդ էլի կռվի դաշտ է գնում»:

Մայրը չէր ուզում որդուն թողնել. տագնապած պառավն այսպես խոսեց.

«Միրելի որդիս, գլուխդ էլի փորձանքի մեջ մի՛ դնիր, մի՛ գնա Պոխյուլա, այդ դաժան մարդիկ քեզ կսպանեն»:

Բայց այս անգամ էլ Կաուկոն չսեց մորը: Երդվել էր ինչ գնով էլ լինի պոխյուցիներից վրեժը լուծել: Այսպես խոսեց նա.

«Որտե՞ղ գտնեմ մի լավ քաջ տղամարդ, որ կարողանա թուրը կտրուկ բանեցնել, որ այս դաժան կռվի մեջ ինձ անդավաճան զինակից լինի: Իմ լավ ընկերը,

անձնվեր բարեկամս է եղել Տիերը. ա՛յ, հենց նրան էլ կասեմ, որ ինձ ընկերանա. նա լավ կովող է և գորեղ զինակից»:

Ասաց, և անմիջապես գնաց գյուղամեջ, մտավ ընկերոջ տունն ու դիմեց վաղեմի բարեկամին.

«Տիեր, դու իմ սիրելի, թանկագին ընկեր, հիշո՞ւմ ես, չէ, թե ինչպես ես և դու մի անգամ թունդ կովի մեջ էինք. մի գյուղ մտանք, որտեղ հարյուրից ավելի քաջ տղամարդիկ կային, բոլորի դեմ մենք երկուսով կովեցինք և նրանցից ոչ մեկը չփրկվեց»:

Տիերի հայրն ու մայրը, որ տան գործերով էին զբաղված, ձայն տվին.

«Ո՛չ, մեր Տիերը հիմա ոչ մի տեղ չի կարող գնալ. նա նոր է ամուսնացել և իր սիրունիկ կնոջ հետ դեռ մի գիշեր էլ չի լուսացրել»:

Բայց Տիերը, որ պառկած էր վառարանի կողքը, բնավ չսեց հորն ու մորը. պառկած տեղը մի կոշիկը հագավ, վեր կացավ մյուս ոտքինը հագավ, դռան մոտ քամարը կապեց, բակից վերցրեց նիզակը, դարպասի մոտ թռավ ձիան մեջքին: Դաշտն հասավ թե չէ, փորձի համար ինքն ու Լեմմինկայեննը նիզակները նետեցին. երկուսի թևն էլ գորեղ էր. նիզակները շատ հեռու թռան և խրվեցին կոշտ հողի մեջ:

Հին զինակիցները վերստին եղբայրացած ծովափ հասան. նավակը ջուրն իջեցրին, երկուսով թիավարեցին և շուտով հասան Պոխյոլա:

Պոխյոլայի տիրուհին կախարդանքով այնպես արավ, որ թունդ սառնամանիք լինի: Եվ չար պառավն այսպիսի պատվեր տվեց.

«Ով դու սառնամանիք, ինչ որ ասեմ այնպես էլ արա: Ծովի երեսին սառույց կապիր, Լեմմինկայեննի նավակն էլ թող սառույցների մեջ կաշկանդվի: Այդ կտրի՞ն Լեմմինկայեննին և իր ընկերոջն էլ այնպես սառեցրու, որ տեղից չկարողանան շարժվել: Հետո ես ինքս կտեսնեմ. ազատե՞լ նրանց, թե այնպես անեմ, որ այդ կտրի՞ն հերոսը սառույցների մեջ իր մահը գտնի»

Սառնամանիքն իր դաժան թևերը տարածեց չորս կողմը. առաջի օրը ծովախորշում և ծովի ափերին պինդ սառույց կապեց. ջուրը ծովի խորքում դեռ չէր սառեցրել, բայց մյուս օրը ափերից հետզհետե դեպի խորքը գնաց՝ ամբողջ ծովի մակերեսը սառեցրեց. սառույցների վրա էլ մի սաժեն ձյուն նստեց, այնպես, որ Լեմմինկայեննի նավակն էլ, ինչպես մի սառույցի կտոր, մնաց կապված-կաշկանդված:

Սառնամանիքն արդեն մոտենում էր Լեմմինկայեննին և նրա ընկերոջը: Ահա՛ ոտքերն ու ձեռքերը սկսում են սառչել: Այստեղ Լեմմինկայեննը բարկացավ և ասաց.

«Ո՛վ դու սառնամանիք, հյուսիսային քամու չար ծնունդ, չհամարձակվես ոտքերիս և ձեռքերիս մատները, ականջներս ու քիթս սառեցնել, գլխիս

բոլորովին չմոտենաս: Արդեն շատ բան սառեցրել ես, բայց մարդու մարմնին չիմի թե ձեռք տաս: Արածդ շատ դաժան բան է, չորս կողմումս ամեն ինչ սառեցրել ես: Քեզ ասում եմ, հեռո՛ւ կորիք ինձանից. տե՛ս, ածուխ կլցնեմ և կբորբոքեմ, այնպես որ ինձանից կսկսես հեռու փախչել: Իմացի՛ր, շուտով ամառն ինձ օգնության կհասնի. այն ժամանակ դու քո ամբողջ տոհմովդ կընկնես ջեռ կրակի մեջ և այնտեղ կտանջվես: Հետո արդեն ինքս կտեսնեմ, ազատե՛լ քեզ ջեռ կրակի միջից, թե թողնեմ որ տառապես»:

Այստեղ հյուսիսային քամու որդին՝ սառնամանիքը տեսավ, որ իրեն էլ վտանգ է սպառնում, ուստի ասաց.

«Արի դաշինք կնքենք. այսուհետև մեր կյանքում երբե՛ք իրար չվնասենք: Ես խոսքիս տերն եմ, թե տեսնես ուզում եմ քեզ սառեցնել, կարող ես ինձ Իմարիներնի հնոցը ուղարկել, կամ ամռան ճանկը նետել, որ ես միշտ այնտեղ մնամ և ոչ որի չվնասեմ»:

Այս խոսքերի վրա Լեմմինկայները նավակից դուրս ելավ, կանգնեց սառույցին և սկսեց համարձակ քայլել դեպի ափը. նրա ետևից ուրախ-ուրախ սկսեց քայլել Տիերը:

Այսպես Լեմմինկայները ընկերոջ հետ քայլեց մեկ օր, երկու օր, երրորդ օրվա վրա երևաց մի գյուղ, որի անունն էր Քաղց:

Մի տուն մտավ Լեմմինկայները և ասաց.

«Այստեղ արդյոք միս կամ ձուկ կճարվի՞, որպեսզի հոգնած, ուժասպառ հերոսները ուտեն, կշտանան և շարունակեն իրենց ճամփան»:

Բայց այդ տանը և այդ գյուղում ո՛չ միս, ո՛չ էլ ձուկ կար:

Լեմմինկայները բարկացած ասած

«Թող կրակի ճարակ դառնա այսպիսի գյուղը, թող հեղեղը քշի տանի ձեզ բոլորիդ»:

Երկու հերոսները շարունակեցին իրենց ճամփան. Լեմմինկայները ճամփին հավաքում էր բմբուլներ և ինչ փափուկ բան, որ ճարում էր, դրանցից ձեռնոցներ և գուլպաներ էր սարքում իր և իր ընկերոջ համար:

Բայց արդեն մոլորվել էին անտառում և ճամփա չէին գտնում, որ տուն վերադառնան:

Կտրին Լեմմինկայները, նույն ինքը Կաուկոմեյին, ասաց ընկերոջը:

«Իմ սիրելի ընկեր Տիեր. մեր գործը թարսվեց, շաբաթներով, ամիսներով ստիպված ենք այսպես մոլորված թափառել»:

Տիերն այսպես պատասխանեց.

«Վատ տեղ ենք ընկել, մենք եկել էինք, որ դաժան պոխյուլացիներից վրեժ լուծենք, բայց ինքներս ընկել ենք փորձանքի մեջ և էլ ողջ-առողջ չենք կարողանա մեր տուն ու տեղին հասնել: Գնում ենք և չգիտենք, թե ուր. տեսածներս միայն սև ագռավներն են. սպասում են, որ մենք ուժասպառ ընկնենք մեռնենք և մեր մարմինները հոշոտեն, միսն ուտեն, ոսկորները քարերի մեջ շարտեն: Խեղճ մայրս չի իմանա, թե իր ազիզ որդու գլխին ինչ փորձանք է եկել, ո՞ր քարի տակ է արյունը թափվել, ո՞ր հողումն է փթել. նա պիտի գիշեր-ցերեկ ողբա և անմխիթար տառապի-տանջվի»:

Հուսահատված ընկերոջն այսպես պատասխանեց Լեւոնիկայները.

«Մի տխրիր, ով դու իմ ազնիվ ընկեր Տիեր, ոչ մի կախարդ չի կարող մեզ մեռցնել. մենք ո՛չ մի դժվարությունից չպիտի վախենանք... Ես էլ իմ մորն եմ հիշում. ա՛խ, իմ ազիզ մայր, ինչքա՛ն եմ քեզ կարոտել, ինչքա՛ն էիր դու տառապում, որ ինձ պահես-մեծացնես: Ես քո ձեռքի տակ անհոգ մեծանում էի, ինչպես վարդն է փթթում թփի վրա: Բայց հիմա այլ է իմ և ընկերոջս վիճակը: Դառն քամին է ոռնում մեր գլխավերևում. դեռ արևի պռունկը չտեսած, ամպերն են ծածկում նրան. անձրևն է հեղեղի պես թափվում:

Բայց այդ բոլորը սարսափելի չէ. միայն թե մտահոգված եմ, արդյոք ուրա՛խ են ապրում աղջիկները, կանայք և հարսները. հո նրանց նեղացնող չկա. երգո՞ւմ-պարո՞ւմ են: Հո լաց չեն լինում այդ չքնաղ արարածները: Ծանր վիշտը չի՞ մաշում նրանց: Դե, եղբայր իմ Տիեր, առաջ գնանք, վաղ թե ուշ ճամփան կգտնենք. ով ուզենա մեզ վատություն անել, մեր գլխին փորձանք բերել, թող փորձանքն իրենց տոհմի, իրենց զավակների գլխին գա: Երբ հայրս նեղության մեջ էր ընկնում, այսպիսի աղոթք էր անում.

«Ո՛վ դու բարձրյալդ Ուկկո, քո հաստիչ ձեռքով հովանավորիր ինձ, փրկիր ինձ այրերի դավադրությունից, կանանց խարդավանքներից, մորուքավորների և անմորուքների չարախոսությունից և զրպարտությունից. ինձ պահպանիր և ճամփա ցույց տուր, որ մոր ազիզ որդին գտնի իր ճամփան, իր նպատակին հասնի»:

Եվ կտրին Լեւոնիկայները, անմիջապես հոգսից ու տխրությունից ստեղծեց արագավազ ձիեր. սանձը մռայլ օրերից վերցրեց, իսկ թամբն իրենց կրած տառապանքներից սարքեց: Ինքը նստեց ձիու մեջքին և ձին դանդաղ քայլերով առաջ գնաց: Նրա կողքից քայլում էր Տիերի ձին. նրանք դժվարությամբ էին բարձրանում բլուրները, ավազների միջից հազիվ էին ճամփա բացում, բայց անտրտունջ առաջ էին գնում. չէ որ գնում էին իրենց հարագատ մայրիկների մոտ:

Այստեղ ես թողնում եմ Կաուկոմեյլիին. նրան և ընկերոջը՝ Տիերին ուղիղ ճամփու վրա դրի. թող բարով գնան հասնեն իրենց շեմը: Այժմ երգիս հունը կփոխեմ և առաջ կընթանաք նոր հունով:

## Ռուսա ԼԱ

Ունտամոն կռիվ է սկսում իմ եղբոր Կալերվոյի դեմ. գերի է վերցնում եղբոր հղի կնոջը. ծնվում է Կուլերվոն

Մայրն ուներ երեք որդի: Նրանց պահում էր այնպիսի խնամքով ու քնքշանքով, ինչպես թռչունն է թևերի տակ պահում իր ձագուկներին: Բայց չար բախտն, ինչպես գիշատիչ անգղը, մորից իվեց երկու զավակներին: Մեկ որդին ընկավ Ռուսաստան և այնտեղ առևտրական դարձավ. Մյուս որդին ընկավ Կարելիա. նրա անունը Կալերվո էր. երրորդ որդին՝ Ունտամոն մնաց տանը: Հենց սա էլ փորձանք դարձավ հոր և մոր գլխին:

Կալերվոն իր ցանցը զցեց գետնախորշը, որ ձուկ որսա: Ունտամոն էլ իր ցանցը զցեց հենց այն գետնախորշում, ուր Կալերվոյի ցանցն էր: Բայց Կալերվոն չգիտեր, որ ազահ եղբայրն էլ է իր ցանցը զցել: Երբ եկավ ժամանակը, Կալերվոն ձկներն հանեց ցանցից և լցնելով կողովն ուզում էր տուն գնալ: Վրա հասավ Ունտամոն, գազազեց և բռունցքներով սկսեց խփել եղբորը: Կալերվոն շատ նեղացավ եղբոր այդ անիրավ վարմունքից և ինքն էլ իր հերթին հարվածին հարվածով պատասխանեց:

Քիչ անց Կալերվոն վարսակ ցանեց այն արտում, որը կից էր եղբոր տանը: Ունտամոն իր ոչխարը քշեց արտը և նոր ծլած արտը ոչխարն ամբողջովին ոչնչացրեց: Կալերվոյի շունն էլ հարձակվեց ոչխարի վրա ու կերավ:

Ունտամոն սպառնաց, որ եղբոր ամբողջ ընտանիքը, մեծից մինչև փոքրը, կոչնչացնի և տունն էլ կհրդեհի:

Նենգ Ունտամոն իր մարդկանց զինեց սրերով, նիզակներով և կացիներով ու գնաց կռվելու հարազատ եղբոր դեմ:

Կալերվոյի սիրունիկ տանտիրուհին լուսամուտից դուրս նայեց և ասաց.

«Սև ամպերն են արդյոք կուտակվել երկնքում, թե՞ թանձր ծուխ է բարձրացել. որ ամեն ինչ այսպես խավար է երևում»:

Ոչ, դա ամպ չէր, ոչ էլ ծուխ. դա Ունտամոն էր, որ իր գորքով եկել էր պատերազմելու եղբոր դեմ:

Եվ ահա՛ Ունտամոյի գորքերը սպանեցին Կալերվոյի ընտանիքի անդամներին, տունն էլ եղած-չեղածով այրեցին:

Միայն սիրունիկ տիրուհին, որ արդեն մայրության էր պատրաստվում՝ փրկվեց: Նրան բռնությամբ տարան Ունտամոյի տունը, որ այնտեղ աղախին լինի, տունն ու բակն ավի-մաքրի:

Օրեր անց, կինն ունեցավ մի արու զավակ: Մայրը նրան կոչեց Կուլլերվո, իսկ Ունտամոնն նրան ռազմիկ էր անվանում: Մայրը տղային դրեց օրորոցն ու սկսեց օրորել:

Անցավ մեկ օր, երկու օր, երրորդ օրվա վրա տղան վրայից դեն շարտեց բարուրն ու փոքրիկ վերմակը, ջարդեց օրորոցը և սկսեց չոչ անել հաստակի վրա:

Ունտամոնն մտածեց. «Երևում է, որ դրանից ուժեղ տղամարդ դուրս կգա, կփոխարինի հարյուր ստրուկի, մենակ ինքը հազար վարձու աշխատողի գործ կանի»:

Անցավ մեկ ամիս, երկու ամիս, երեք ամիս և տղան ոտքի կանգնեց: Կուլլերվոն ինքն իրեն սկսեց խոսել.

«Շուտով ես կմեծանամ, ավելի կուժեղանամ և հորս վրեժը կլուծեմ, մորս տանջողներին արժանի հատուցումը կտամ»:

Ունտամոնն այս խոսքերը լսեց, վախեցավ և ասաց.

«Այս տղայից պիտի ազատվել. դա որ մեծանա, մի նոր Կալերվո կդառնա և ինձ շատ վնաս կհասցնի»:

Շատ մտածեց չար Ունտամոնն և հրամայեց տղային դնել մի տակառի մեջ, տակառի բերանը փակել և ծովը նետել:

Այդպես էլ արին: Անցավ երեք ցերեկ ու գիշեր: Ունտամոնն գնաց տեսնի՝ խեղդվե՞լ է արդյոք տղան: Բայց ծովափ հասած-չհասած ի՞նչ տեսնի, տղան դուրս է եկել տակառից և պղնձե կարթը ծովն է գցել ու ձուկ է որսում: Չայրացավ ու այսպես խոսեց.

«Ի՞նչ անեմ, որտե՞ղ ուղարկեմ սրան, որ էլ արևի լույսը չտեսնի, կորչի գնա այս աշխարհից»:

Եվ իր ստրուկներին հրամայեց կեչու ճյուղերից, նոճիների չորացած բներից խարույկ սարքել և Կուլլերվոյին այրել բոցավառ խարույկի վրա:

Ստրուկները հարյուր և հազար սահնակի վրա բարձած բերին և՛ կեչու, և՛ նոճենու բներ ու կոճղեր, ամեն տեսակի չոր ծառեր և բոլորն իրար վրա կուտակելով, չորս կողմից վառեցին:

Եվ երբ խարույկը բորբոքվեց, Ունտամոնն վերցրեց երեխային և զցեց կրակի ամենաթեժ տեղը:

Երկու օր, երկու գիշեր բոցկլտում էր խարույկը: Երրորդ օրը եկավ Ունտամոնն և ի՞նչ տեսնի. Կուլլերվոն ողջ ու առողջ նստել է մոխրի մեջ և մոխիրը մեկ ափից մյուս ափն է լցնում, մեկ-մեկ էլ երկաթե կրակխառնիչով կրակն է թեժացնում: Տղայի մեկ մազն անգամ չէր վնասվել:

Չայրացավ Ունտամոն և այսպես խոսեց.

«Հիմա ի՞նչ անեմ, որ այս տղան մեռնի և ես դրանից ազատվեմ»:

Եվ հրամայեց Կուլլերվոյին կախել կաղնու հաստ ճյուղից:

Անցավ երկու օր, երրորդ օրվա վրա նա իր ստրուկին ուղարկեց տեսնի՝ արդյոք չի՞ մեռել տղան:

Ստրուկը վերադարձավ և այսպիսի պատասխան բերեց.

«Ո՛հ, Կուլլեվոն ոչ միայն չի մեռել, այլ ողջ և առողջ նստել է ծառի հաստ ճյուղին և մի մեծ երկաթե գամով կաղնու ծառը զարդարել է նախշերով. նախշերի արանքներում էլ այրեր է փորագրել՝ սուրը ձեռքներին և դյուցագուններ՝ նիզակներով զինված»:

Չէ՛, Ունտամոն տեսավ, որ ոչ մի կերպ չի կարող Կուլլերվոյին զրկել կյանքից: Ինչքան էլ դաժան բաներ արավ, միևնույն է, տղան գլուխն ազատում էր փորձանքից, ուստի որոշեց, իր ստրկուհու այդ կտրին որդուն, իբրև ստրուկ աշխատեցնել: Եվ այսպիսի խոսքերով դիմեց Կուլլերվոյին.

«Թե հյու-հնազանդ ծառայես, կդառնաս իմ ստրուկը և կաշխատես իմ տան համար: Քո աշխատանքի դիմաց ինձնից վարձ կստանաս: Նայած թե ինչպես կաշխատես, ըստ այնմ էլ կլինի վարձը՝ կամ կաշվե գոտի, կամ էլ մի շառաչուն ապտակ»:

Կուլլերվոյին գործի դրին. պետք է երեխային օրորեր և նրա բարուրի շորերը լվանար: Մեկ-երկու օր պահեց և ի՛նչ. երեխայի մատը տեղից դուրս ընկավ, մեկ աչքն էլ քոռացավ: Երրորդ օրվա վրան երեխան արդեն ծանր հիվանդ էր. Կուլլերվոն նրա բարուրի շորերը ծովը նետեց, օրորոցն էլ այրեց:

Ունտամոն տեսավ, որ տղան տան գործի համար կացին սարքի. երբ կացինը սարքված էր, ամբողջ գիշերը նստեց, կացինը մի լավ սրեց և առավոտ շուտ անտառ գնաց: Սկսեց ծառերը կտրտել: Մեկ հարվածով գետին էր տապալում հսկա ծառը, իսկ փոքրերը շուտ էր տալիս մի թույլ հարվածով:

Հինգ ծառ տապալեց, հետո ութը ծառ և երբ այդ գործից ձանձրացավ, կացինը սուր սայրով խրեց ծառի մեջ և այսպես խոսեց.

«Այնտեղ, ուր կհասնի իմ ձայնը, թող այնտեղ տապալվեն հսկա կեչիները, և այսուհետև ոչ մի անգամ, ոչ մի տարի թող այստեղ, այս հողի վրա այլևս ոչ մի ճյուղ, ոչ մի ծիլ չանի և ծառ չդառնա»:

Ունտամոն եկավ տեսավ դաշտը և կրկին զայրացավ.

«Չէ՛, այս գործին էլ պետք չեղավ Կուլլերվոն. բոլոր պիտանի ծառերը կտրտել է և անտառը փչացրել է»:

Հիմա էլ պատվիրեց ցանկապատ սարքել: Կուլլերվոն գործի անցավ: Ցցերի փոխարեն նա գետին խրեց եղևնու ծառի հսկա բները, նրանց արանքում կապկպեց հարյուր սաժենանոց նոճիներ, ապա փարթամ ճյուղերով, տեսակ-տեսակ ծառերով մի շատ բարձր ցանկապատ սարքեց: Եվ այսպես խոսեց.

«Ով չի կարող թռչունի նման թռչել, նա չի կարող այս ցանկապատից ներս մտնել, որ կառուցել է Կալեվրոյի որդին՝ Կուլլերվոն»:

Ունտամոն տնից ելավ, տեսավ ցանկապատն ու ասաց.

«Այս գործում էլ անպետք եղավ այս տղան: Ցանկապատը մինչ երկինքն է հասնում, մի դուռ էլ չի թողել, որ մարդ ներս ու դուրս անի, սարքածը մի բանի պետք չէ»:

Այս անգամ արդեն հանձնարարեց, որ տղան գարի աղա:

Կուլլերվոն գործի անցավ և ասաց.

«Թող գարու հատիկները փոշի դառնան, և քամին թող ցրիվ տա այդ փոշին»:

Ունտամոն եկավ տեսավ և կատաղեց-փրփրեց. գարին փոշի է դարձել, և քամին ցաք ու ցրիվ է անում այն: Այսպես խոսեց.

«Ոչ մի բանի պետք չես, դու, անպիտան ստրուկ. Արդյոք Ռուսաստան տանեմ վաճառեմ. չէ՛, կտանեմ Կարելիա, կվաճառեմ դարբին Իլմարինենին. գնա նրա մոտ մուրճ բանեցրու»:

Եվ Ունտամոն Կալեվրոյի որդուն վաճառեց դարբին Իլմարինենին:

Դարբինը լավ գին վճարեց Կուլլերվոյի համար: Տվեց երկու հին դազան, վեց ժանգոտված գերանդի, մի քանի ջարդված մանգաղ ու լինգեր: Դե, այդքանն էլ հազիվ արժենար այդ անպիտան ստրուկը:

## **Ռունա ԼԲ**

Իլմարինենի կինը Կուլլերվոյին հանձնարարում է իրենց նախիրն արածեցնել

Կալեվրոյի որդի Կուլլերվոն անցնում է գյուղի միջով և ոչ միայն գյուղացիք, այլև ծառերն ու ծաղիկները հրապուրվում են նրա դյուցազնական տեսքով:

Գանգուրները ոսկեգույն են, ոտքերին կապույտ գուլպաներ ունի, կոշիկներն էլ նախշերով են զարդարված:

Հենց որ դարբնի տունը մտավ Կուլլերվոն, դիմեց նախ տիրոջը, ապա տանտիրուհուն.

«Ասացեք ինձ, թե ես ի՞նչ պիտի անեմ, որ անմիջապես գործի անցնեմ»:

Իվմարիներնի կինը ապրում էր ճոխ կյանքով. ընդարձակ տան մեջ նրա համար ամեն ինչ պատրաստ էր. ջրադացն աղուն էր աղում, ամաններն էլ ծովի ալիքներն էին լվանում:

Դաշտում, արտում և պուրակներում աճում էր ամեն տեսակ բարիք՝ ցորեն, գարի և քաղցրահամ պտուղներ: Գետի վրա լողում են բադերը, գետի խորքում էլ ձկների առատ վտառներն են վխտում:

Ինչ տեսակ կերակուր ասես նրա համար պատրաստ է. կաթն ու կարագն էլ ինչքան սիրտը ուզի:

Կեսրայրը ոնց որ հարագատ հայր, սկեսուրը հոգատար մայր, տեգրն ու տալն էլ ոնց որ սրտակից եղբայր ու քույր:

Անհոգ ու անդարդ ապրում էր Լոուխիի դուստրը, բայց շատ չար սիրտ ուներ աղջիկը: Ուրիշի վիշտը նրան ուրախացնում էր, ուրիշի դժբախտությունը նրա համար խաղ ու պար էր:

Ստրուկները նրա մոտ ավելի վատ էին ապրում, քան թափառական շները:

Ինքն ուտում էր ընտիր ցորենի հաց և կարկանդակներ, իսկ ստրուկներին և ծառաներին տալիս էս տարեկանի ու թեփի շաղախից մի անեկ-կիսատեփ գնդիկ:

Եվ ահա՛, այդ չար տիրուհին Կուլլերվոյին նախորդ նշանակեց, որ արածացնի իր բազմաթիվ կովերը, եզներն ու աջառները:

Մի օր էլ որոշեց ծաղր ու ծանակի ենթարկել Կալլերվոյին և ցորենի այլուրի հետ թեփի խառնելով մի մեծ հաց թխեց՝ մեջտեղը խրելով մի քար: Հացը տվեց նախորդին ու ասաց.

«Հացը կուտես այն ժամանակ, երբ նախիրն արոտավայր կհասցնես»:

Կուլլերվոն նախիրն առաջ գցած գնում է անտառը, ուր փարթամ արոտավայրեր կան:

Իսկ Իվմարիներնի կինը մի քիչ գնում է նախրի ետևից և այսպես է խոսում.

«Ահա՛ անտառն եմ ուղարկում իմ կաթնատու կովերի նախիրը, ուղարկում եմ, որ արոտավայրերի թարմ, անուշահամ և սննդատու խոտերն ուտեն և պարարտանան»:

Ով դու բարձրյալդ Ուկկո, պահպանիր և ամեն փորձանքից զերծ պահիր իմ նախիրը, թող քո ողորմածությամբ անտառի բոլոր թավուտներում ավելի փարթամ աճեն տեսակ-տեսակ խոտերը, թող բոլոր ճահիճների տեղ մեղրահամ բույսեր փթթեն, թող աղբյուրների ջուրը միշտ գուլպա լինի, որպեսզի իմ կովերը կուշտ ուտեն-խմեն և նրանց պտուկներից կաթը մշտապես հոսի հորդարուխ

գետի նման, որ իմ տան բոլոր ամանները տարվա բոլոր եղանակներին պռունկեպռունկ կաթով լցվեն»:

Ապա տիրուհին խնդրանք արավ անտառի ոգիներին.

«Ով դու անտառի տիրուհի Միլիկիկի, քո սպիտակ սավանով պաշտպանիր իմ նախիրը, երբ ավերիչ փոթորիկ լինի, երբ անձրև և կարկուտ թափվի երկնքից:

Ով դու անտառի որդի Նյուրուրիկիկի, եղևնու և նոճիների ցողուններով կամուրջ սարքիր անանգանելի տեղերի և ճահիճների վրայով, որպեսզի նրանք անվնաս դուրս գան անտառից և չմոլորվեն թավուտներում:

Իսկ դու, անտառի պարծանք մրթմրթան արջ Օտսո, արի քեզ հետ հավերժորեն խաղաղ ապրենք և պայման կապենք, որ դու ամբողջ ամառվա ընթացքում չվնասես իմ կաթնատու երկամբակավորներին, երբ նրանք արածում են անտառներում:

Երբ լսես զանգուլակների զնգզնգոցը և նախորդի շվիկի նախագգուշացնող կանչը, դու պառկիր ճահճի մեջ և գլուխդ ու ականջներդ թաղիր մամուռների արանքը, կամ էլ թե չէ փախիր հեռու ծմակը, որպեսզի ոչ զանգակների զնգզնգոցը լսես, ոչ էլ նախորդների ձայնն ականջիդ հասնի:

Լսիր, իմ սիրելի Օտսո, դու անտառի մեղրաթաթ բնակիչ, չեմ արգելում որ պոչդ մեկ-մեկ թափ տաս իմ նախրի մոտերքում, բայց մենակ թե սուր ատամներդ գործի չդնես և իմ կովերը չխժռես:

Հենց որ լսես իմ նախորդների կանչը, դու այդտեղից հեռու գնա: Եթե նախիրը դաշտումն է, դու փախիր գնա ճահճը, եթե նախիրը ճահճումն է, դու պետք է փախչես գնաս անտառի թավուտները: Թե սարի գագաթին է արածում նախիրը, դու պիտի մնաս ստորոտում, երբ արդեն սարից ցած է իջնում, այն ժամանակ դու կարող ես բարձրանալ գագաթը:

Եթե քաղցած ես և ուտել ես ուզում, ապա անտառում բուսած սունկերը կեր, թփուտներում հասունացած պտուղները կեր, հետո գնա և փեթակների մեղրն անուշ արա:

Ուրեմն այս պայմանը պայման է. մենք խաղաղության դաշն ենք կնքում. ես ու դու տերն ենք մեր հողերի, անտառների ու դաշտերի և բնության բարիքը, որ այնքան առատ է ամառվա ջերմ եղանակին, ինձ էլ, քեզ էլ լիովին կրավականացնի:

Իսկ թե շատ ես ուզում կռվենք, ապա կկռվենք ձմռանը փափուկ ձյունի վրա:

Այս էլ իմացիր, թե պայմանը խախտես և ուզենաս վնասել իմ անասուններին, ապա քեզ վրա կհարձակվեն իմ մարդիկ: Իմ տան տերն էլ շատ կտրիճ մարդ է: Նրանք քո ճամփան կփակեն և չեն թույլ տա, որ դու, հակառակ Աստծո կամքին վնասես իմ կաթնատու անասուններին»:

Տիրուհին այս անգամ դիմեց անտառի տիրակալին.

«Ով դու ճերմակամորուս բարի Կույսպանա, քո գամփռներին կապած պահիր, ցռուկներին սանձ դիր, որպեսզի նրանք չկարողանան վնասել իմ նախիրը պահող մարդկանց, թե չէ նախիրն անտեր մնալով գազաններին կեր կդառնա»:

Վերջում տիրուհին կրկին նայեց վեր ու ասաց.

«Ով դու բարձրյալդ Ուկկո, լսիր իմ սրտից բխող խոսքերը. եթե այս բոլորը չօգնի և իմ նախիրն վտանգ սպառնա, ապա իմ բոլոր անասուններին ծառեր դարձրու, կամ էլ թե չէ քարերի տեսք տուր, մինչև չար գազանները կորչեն-հեռանան»:

Իմարիներնի կինը, այդ բանիբուն տիրուհին, ահա այսօր էլ այսպիսի խոսքերով իր նախիրը ճամփու դրեց և Կուլլերվոյին էլ պատվիրեց, որ լավ հսկի անասուններին:

## **Ռունա ԼԳ**

Չար տիրուհին զայրացնում է Կալլերվոյին, Կալլերվոն նրան պատժում է

Կալլերվոյի որդին՝ Կուլլերվոն, հացը դրեց մախաղի մեջ և նախիրը քշեց դեպի արոտավայրը: Ճամփին նա ինքն իրեն խոտեց.

«Ա՛խ, ես աշխարհի ամենաթշվառ տղան եմ: Այս որտե՞ղ եմ ընկել. մի՞թե նրա համար եմ ստեղծվել, որ կովերի ետևից ընկնեմ, ճահիճներով ու թավուտներով անցնեմ և տեսնեմ, թե ոնց են աջառները թափ տալիս իրենց պոչերը»:

Նստեց խոտի վրա. արևը տաքացնում էր. տղան սկսեց երգել և այսպես էր նրա երգը.

«Ով դու կենսատու արև, որ Աստծու կամքով պտտվում ես երկնքում, ջերմացրու, լույս տուր ինձ՝ խեղճ նախրապանիս... դարբնի նախիրն եմ արածացնում, բայց ոչ դարբնին, ոչ էլ նրա կնոջը լույս մի առաքիր: Այդ չար կինն իր համար հաց է թխում մաքուր ցորենի ալյուրից, հացին կարագ է քսում և այնպես ուտում, իսկ խեղճ նախրապանիս միայն քարթու հաց է բաժին հանում: Տիրուհին իր համար պատրաստում է ամենաընտիր կերակուրներ, իսկ թշվառ Կուլլերվոյիս առաջը դնում է մի անպետք ապուր, որը լակել է շունը»:

Այդ պահին մի թռչուն ծվվաց.

«Ժամանակն է, որպեսզի որբ տղան ճաշի»:

Կուլլերվոն տեսավ, որ արևն արդեն թեքվել է, կովերին քշեց բացատը, որ հանգստանան, ինքն էլ նստեց մի կոճղի վրա և հացն հանեց մախաղից: Այսօր

կարծես թե հացը լավն էր. այդ ո՞նց բան էր, որ չար տիրուհին չէր խնայել՝ ցորենի ալյուր էր խառնել բոքոնին:

Տղան գրպանից հանեց դանակը և ուզեց հացը կտրել, որ ճաշի: Մեկ էլ ի՛նչ. դանակը դիպավ հացի միջուկն՝ դրված քարին՝ սայրը ջարդվեց, տղայի ձեռքում մնաց կոթը:

Կուլլերվոն այս որ տեսավ, շատ տխրեց, լաց եղավ ու ասաց.

«Այս դանակն ինձ համար թանկ էր. չէ՞ որ իմ սիրելի հորիցս ինձ մնացած միակ հիշատակն էր. հիմա դրանից էլ զրկվեցի: Այդ զգվելի, դաժան ու ազահ տիրուհին դիտմամբ է քարը դրել հացի մեջ, որ այսպիսի փորձանք գա գլխիս: Ի՞նչ անեմ, ինչպե՞ս, ի՞նչ ձևով վրեժ լուծեմ այդ գարշելի կնոջից, որ այսպես ծաղր ու ծանակի է ենթարկում ինձ»:

Ծառի վրայից ագռավը կռկռոցով ասաց.

«Մի՛ տխրիր, Կուլլերվոյի որդի, իզուր արցունք մի թափիր. ես քեզ կսովորեցնեմ, թե ինչպես վրեժ լուծես քո չար տիրուհուց: Կեչու ծառից մի հաստ ճյուղ պոկիր և բոլոր կովերը քչիր դեպի ճահիճը. թող կովերի մի մասն արջերը խժռեն, մյուս մասն էլ գայլերը հոշոտեն: Երբ անտառի գազանները կշտանան, արջերը կովերի տեսք կստանան, գայլերն էլ հորթերի: Այն ժամանակ քո այս նոր նախիրը քչիր դեպի քո տիրուհու գոմերը: Դրանով դու քո վրեժը կլուծես Լոուխիի չար աղջկանից, որ քեզ անամոթաբար ծաղր ու ծանակի ենթարկեց»:

Կուլլերվոն ասաց.

«Այդպես էլ կանեմ. ես հորիցս մնացած հիշատակը կորցնելու համար եմ լաց լինում, հիմա դու տես չա՛ր տիրուհի, թե ինչքան լաց կլինես քո կովերի համար»:

Եվ ծառից պոկելով հաստ ճյուղը, նախիրը քչեց դեպի ճահիճը: Արջերն ու գայլերն իսկույն խժռեցին կովերին ու հորթերին: Կուլլերվոն երեկոյան դեմ կովերի և հորթերի կերպարանք առած արջերին ու գայլերին քչեց դեպի տիրոջ տունը:

Ճամփին Կուլլերվոն անտառի գազաններին այսպիսի պատվեր տվեց.

«Բակը մտեք, իբրև թե հլու-հնազանդ կովեր եք, մսուրի մոտ կանգնեք ոնց որ միամիտ հորթեր: Հենց որ տիրուհին կգա ձեզ կթելու, իսկույն հոշոտեք նրան. սուր ասամներով պոկեցեք ազդրերը, ձեր ճանկերով քրքրեցեք մարմինը»:

Աջառի կոտոշից, կովի ոսկորից Կուլլերվոն եղջերափող սարքեց և երբ արդեն մոտիկ բլուրից նախիրը դեպի տուն էր թեքվում, երեք անգամ փողը փչեց, որ Իվարիներն կհնը՝ տանտիրուհին նախրին ընդառաջ գա:

Իսկ տանտիրուհին սրտատրոփ սպասում էր, թե երբ նախիրը տուն կգա, որ կովերին կթի և կարագ պատրաստի: Հենց որ լսեց եղջերափողի ձայնը, դուրս եկավ ու ասաց.

«Փա՛ռք քեզ աստված ամենակալ, եղջերափողը հնչեց, նախիրը տուն է գալիս, բայց որտեղից նախորդը ճարեց այդ եղջերափողը, որ այդպես զիլ է հնչում, այնքան զիլ, որ քիչ է մնում ականջներս խլանան»:

Կուլլերվոն պատասխանեց.

«Ճահճի միջից գտա այս եղջերափողը. ես ուժեղ փչեցի, որ դու շուտ դուրս գաս, օջախը վառես և կովերը կթես»:

Իսկ տիրուհին չի ուզում իրեն նեղություն տալ, ուստի դիմեց սկեսուրին.

«Մայրիկ, դու գնա կովերը կթիր, ես հո չեմ կարող տան բոլոր գործերն անել. ես պիտի խմոր հունցեմ»:

Կուլլերվոն գիտեր, եթե խեղճ պառավը գնար կթելու, գազանների կեր կդառնար, ուստի ասաց.

«Ով դու տիրուհի, չե՞ որ դու ջահել ես և լավ գիտես, թե ինչպես պիտի կթես կովերը, որ ավելի շատ կաթ տան. է, ինչո՞ւ ես այդ հաճելի գործն ուրիշի վրա թողնում»:

Տիրուհին գնաց օջախը վառեց, հետո մտավ գոմը և տեսնելով, թե ինչքան լիքն են կովերի ստինքներն՝ ուրախացավ և, կաթնամանը վերցնելով, չոքեց կովի ետևի ոտքերի մոտ ու սկսեց կթել.

Մեկ անգամ քաշեց պտուկից, հետո մեկ անգամ էլ և երբ ուզեց երրորդ անգամ քաշել, գայլը կծեց նրա թևը, իսկ արջն այնպես ամուր խաճեց ազդրը, որ ոսկորը ջարդեց:

Իմարիներնի հպարտ կինը սկսեց լալ և այսպես խոսեց.

«Ով դու գարշելի ստրուկ, ինչպե՞ս համարձակվեցիր արջերն ու գայլերը իմ գոմը բերել»:

Կուլլեվոն պատասխանեց.

«Իհարկե, ես վատ գործ եմ արել, բայց դու էիր պատճառը, ո՛վ դաժան կին, եթե դու ինձ ծաղր ու ծանակի չենթարկեիր և քար չդնեիր հացի մեջ, եթե իմ հոր միակ հիշատակից՝ դանակից չզրկվեի, ես արջերն ու գայլերը չէի քշի բերի քո բակը»:

Տիրուհին աղաչանք արավ.

«Ով դու իմ սիրելի նախորդ, կախարդանք արա և ազատիր ինձ գայլերի ժանիքներից ու արջերի ճանկերից: Ազատի՛ր. այսուհետև քեզ ամենաընտիր ուտելիքը կտամ, առավոտներն ինչքան ուզենաս թարմ կաթ կխմես, քեզ կտամ ամենաթանկագին պատմուճանը, ամենաընտիր մահուդից շավար կհագցնեմ

քեզ. դե, շո՛ւտ արա, ազատիր ինձ, թե չէ ես խայտառակ մահով կմեռնեմ և հող ու մոխիր կդառնամ»:

Կուլլերվոն պատասխանեց.

«Ինձ է՛լ ոչինչ պետք չէ. արժանի է, որ դու անարգ մահով մեռնես, խոնավ հողի տակ քեզ համար հարմար տեղը պատրաստ է»:

Տիրուհին նորից խոսեց.

«Ով դու ամենակալ տեր Ուկկո, քո հզոր նետ ու աղեղով պատուհասիր Կալերվոյի որդուն, հողին հավասարեցրու այս անպիտան ստրուկին»:

Կուլլեվոն ևս խոսեց.

«Ով ամենակալ տեր Ուկկո, քո նետ ու աղեղով ո՛չ թե ինձ պատուհասիր, այլ այս չար կնոջը, որ երկիրն ազատվի այսպիսի դաժան տիրուհուց. նետահարիր, որ հենց տեղն ու տեղը մնա»:

Եվ գազաններից հոշոտված չար կինը ընկավ գետնին ու շունչը փչեց:

Այսպես մեռավ այն գեղեցիկ կինը, որին վեց տարի շարունակ փնտրել ու տենչացել էր ճարտար դարբին Իվարիները:

## **Ռունա ԼԳ**

Կալլերվոն թափառում է անտառներում. մի պառավ կին նրան բարի լուր է հաղորդում

Կուլլեվոն ուզեց ժամ առաջ թողնել հեռանալ այդտեղից, քանի Իվարիները չի իմացել, որ կինը մեռել է, թե չէ շա՛տ կզայրանա դարբինը և իրեն կվնասի:

Շտապ վազեց հասավ անտառն ու սկսեց երգել. ծառ ու թուփն էլ կարծես նրան ձայնակցում էին: Լավ էր, որ վրեժը լուծեց չար տիրուհուց, բայց սիրտն ուրախ չէր:

Դարբինն աշխատանքը թողեց և ուզեց իմանալ, թե ինչ ձայներ են գալիս անտառից. քիչ հետո էլ բակը մտավ և ամեն ինչ հասկացավ. տեսավ, որ իր գեղեցկուհի կինն անշունչ ընկած է բակի խոտերի մեջ: Դարբինն ամբողջ գիշերը լաց եղավ. լման մի շաբաթ արցունքը չէր ցամաքում նրա աչքերից. սիրտն էլ սև կապեց, ավելի սև, քան իր դարբնոցի ածուխը:

Իսկ Կուլլերվոն ճամփա ընկել ու գնում է, ոչ տուն ունի, ոչ տեղ. որտեղ մթնում էր, այնտեղ էլ քնում է: Դառն են անտեր-անտիրական տղայի մտքերը.

«Ի՛նչ վատ բան է որք լինել այս լայն աշխարհում: Մեկը գնում է իր հայրենի աշխարհը, իր հարազատների մոտ, մեկ ուրիշն շտապում է հանգստանալ իր սեփական հարկի տակ, իսկ իմ հայրենիքը մութ անտառն է, դաշտն էլ իմ տունը: Իմ օջախը ցուրտ քամին է, անձրևն էլ իմ բաղնիքը:

Ով դու բարձրյալդ Ուկկո, այնպես արա՛, որ երբեք այս երկրի վրա երեխաներն անհայր ու անմայր չմնան, ինչպես ես եմ հիմա: Արևը ջերմացնում է բոլորին՝ թռչուններին և տունկերին, միայն ի՛նձ չի ջերմացնում, մենակ ի՛նձ չի ուրախացնում արևը:

Հոր երես չեմ տեսել, մորս էլ կորցրել եմ քանի դեռ բարուրների մեջ էի, իմ հորական ամբողջ տոհմը ոչնչացրեց այդ չար Ունտամոն: Իմ բաժինը եղել է ձնե գուլպան և սառցե կոշիկը. ինձ նետել են սառցե բարակ շերտով ծածկված գետի վրա, որ սառույցը ջարդվի և ես ընկնեմ անդունդն ու խեղդվեմ: Թե մի հրաշքով սառցակալած գետից փրկվեմ՝ ճահիճն է իմ առաջ. չար բախտը հրում է ինձ դեպի այդ հոտած ջրերը, որ ընկղմվեմ դրանց մեջ և կործանվեմ:

Բայց ես երբե՛ք չեմ ուզում կործանվել, երբե՛ք չեմ ուզում բաժանվել կյանքից. չե՛ որ ես էլ ուրիշների նման երկու ձեռք ունեմ և ամեն մեկ ձեռքիս վրա հինգ ճկուն մատներ»:

Եվ իրենց տոհմին դժբախտացնող Ունտամոնի դեմ զայրացած, այսպես խոսեց.

«Ով դու չար Ունտամոն, քո արածները չե՛ս մարսի, շուտով ես կգամ քեզ մոտ և իմ հարազատների վրեժը կլուծեմ, քո տունը բրիչակ կանեմ, կրակի ճարակ կդարձնեմ:

Այդ պահին անտառի միջով անցնում էր մի պառավ կին՝ կապույտ լաչակը գլխին. նա ճանաչեց Կալերվոյի որդուն, մոտեցավ և հարցրեց.

«Կուլլերվո, ո՞ւր ես գնում, ո՞ւր ես շտապում»:

Տղան պատասխանեց.

«Շատ դառն է վիճակը, ծնողներից զրկվել, այսպես անտեր եմ մնացել. ուզում եմ գնալ, գտնել Ունտամոնին և նրա տունն ու տեղը հող ու մոխիր դարձնեմ, ոնց որ նա իմ հարազատներին սպանեց, իմ հորական տունն ավերակ դարձրեց»:

Պառավն ասաց.

«Ո՛չ, ձեր տոհմը չի ոչնչացել. հայրդ մի կերպ փրկվել և ապրում է. մայրդ էլ եկել գտել է հորդ»:

«Դու անուշիկ նանիկ, շուտ ասա, որտե՞ղ են ապրում իմ հայրիկը, իմ տառապած մայրիկը»:

Պառավն ասաց.

«Քո հայրն ու մայրը ապրում են լապլանդական հողում, այնտեղ ուր լճակներում շատ տեսակի առատ ձկներ կան»:

Կուլլերվոն շտապ հարցրեց.

«Ով դու թանկագին նանիկ, շուտ աաս, ինչպե՞ս հասնեմ այդ աշխարհը, ի՞նչ ճամփով գնամ, որ գտնեմ հարազատներիս»:

Պառավը պատասխանեց.

«Այնքան էլ մոտ չէ այդ երկիրը. սկզբից կերթաս այս անտառով. ուղիղ և ուղիղ գնա մեկ օր, երկու օր, երրորդ օրվա վրա, երբ դուրս գաս անտառից, կտեսնես մի բարձր սար: Մարի ձախ կողմով քիչ կթեքվես, կերևա մի գետ. գետի ափով այնքան կքայլես, մինչև կհանդիպես մի բլուրի. այդ բլուրի մոտերքում կա մի ձկնորսական խրճիթ. հենց այդ խրճիթում էլ ապրում են քո հարազատները. այնտեղ էլ նրանց հետ ապրում են քո երկու շատ սիրունիկ քույրերը»:

Կուլլերվոն ճամփա ընկավ. երկու օր գնաց, մինչև անտառից դուրս եկավ: Երրորդ օրվա վրա տեսավ սարը, թեքվեց դեպի հյուսիս և սկսեց քայլել գետափով, վերջապես բլուրն էլ ետևում թողեց և տեսավ ձկնորսական խրճիթը: Ներս մտավ, բայց տնեցիք նրան չճանաչեցին. հարցրին.

«Ի՞նչ տոհմից ես դու, որտեղի՞ց ես եկել»:

Կուլլերվոն տխուր ձայնով պատասխանեց.

«Ա՛խ, դուք ձեր հարազատ որդուն չե՞ք ճանաչում: Ես դեռ մի թզաչափ էլ չեմ եղել, որ Ունտանոյի մարդիկ ինձ գերի են տարել»:

Մայրը տեղից վեր թռավ, հոգոց հանեց, փաթաթվեց որդուն և ասաց.

«Ա՛խ դու իմ խեղճ, սիրելի որդի, ոսկուց էլ թանկ զավակս. այս ի՞նչ բախտ է, որ ողջ ու առողջ ես մնացել և եկել գտել ես ծնողներիդ... իսկ ես ինչքան եմ արցունք թափել քեզ համար, հենց իմացել եմ, թե դու էլ փորձանքի ես հանդիպել և ե՛ս թշվառս, էլ քեզ ողջ-առողջ չեմ տեսնի»:

Քո երկու եղբայրն ու երկու քույրը փրկվել էին: Բայց մեծ եղբայրդ ու մեծ քույրդ գնացին և այլևս չվերադարձան: Եղբայրդ կռվում գոհվեց, իսկ քույրդ կորավ: Մյուս եղբայրդ մեզ հետ է ապրում, մյուս քույրիկդ տանից դուրս է գնացել, շուտով կվերադառնա»:

Կուլլերվոն հարցրեց.

«Իսկ որտե՞ղ է կորել իմ քույրը»:

Մայրը պատասխանեց.

«Քույրդ անտառ գնաց պտուղ հավաքելու. այնտեղ էլ կորավ իմ սիրունիկ թռչնակը: Շատ սպասեցինք, բայց աղջիկս տուն չվերադարձավ. թե ինչ փորձանք եկավ գլխին՝ այնպես էլ չհնացանք:

Իսկ ո՞վ է ավելի շատ տանջվում իր աղջկա համար, քան հարազատ մայրը: Ասացի գնամ անտառը, փնտրեմ, գուցե թե մի բան իմանամ: Արջի նման ծայրեծայր անցա անտառը, մտա թավուտները, անցա կածաններով, բարձրացա թմբերը. մեկ օր, երկու օր, երեք օր անվերջ փնտրեցի ու փնտրեցի՝ ոչինչ չգտա. վերջը ձայն տվի.

«Որտե՞ղ ես դու, իմ սիրելի աղջիկ, ախր աչքներս ջուր արած քեզ ենք սպասում»:

Աղջկանս ձայնը այնպես էլ չլսեցի, նրա փոխարեն լեռներն ու ծառերը պատասխանեցին.

«Այդպես սրտապատառ մի կանչիր, միևնույն է, աղջիկդ չի լսի. նա այլևս երբե՛ք հորական տունը չի մտնի, երբե՛ք մոր գիրկը չի վերադառնա»:

## **Ռունա ԼԵ**

Կուլլերվոն մի ժամանակ ապրում է ծնողների մոտ. մի օր անտառում հանդիպում է թափառական աղջկա. պարզվում է, որ աղջիկն իր անհետ կորած քույրն է

Կալերվոյի որդին՝ Կուլլերվոն, կապույտ գուլպաներով այդ տղան ուրախ էր, որ հորական տանն էր ապրում, բայց խելքը գլուխը չհավաքեց. ախր հենց օրորոցից վատ էր դաստիարակված. նրա խնամակալները տխմար մարդիկ էին եղել:

Հայրը մի քանի գործ հանձնարարեց, բայց տղան ոչ մեկն էլ չկարողացավ, ինչպես պետքն է, գլուխ բերել: Մի օր նստեց նավակն ու թիավարեց, բայց այնպես ուժեղ ու անշնորհք շարժեց թիերը, որ թիակալները տեղահան եղան. նավակն էլ դիպավ լճի մեջ ցցված քարերին և ջարդուփշուր եղավ:

Կալերվոն որ այդ տեսավ, ասաց.

«Դու բոլորովին չես կարող թիավարել, արի գնա ձուկ որսա, գուցե դրանից գլուխ հանես»:

Կուլլերվոն սկսեց ձուկ որսալ, բայց ցանցն այնպես կոպիտ քաշքշեց, որ այն պատռոտեց, կարթերը ջարդեց և ոչ մի հատ ձուկ չկարողացավ որսալ:

Հայրն այս անգամ պատվիրեց.

«Տեսնում եմ, որ քեզնից ձկնորս էլ դուր չի գա: Ավելի թեթև գործ կհանձնարարեմ քեզ: Լծի՛ր սահնակը, վրան բարձիր ցորենի պարկերը և տար հանձնիր տուրքերը գանձողի պահեստը»:

Կուլլերվոն ցորենը տարավ հանձնեց տուրքերը գանձողին և ինքը նորից նստեց սահնակն ու ճամփա ընկավ դեպի հայրական տունը:

Նրա սահնակն աղմուկով անցավ Վեյնեմեյնենի ձյունապատ դաշտերով: Եվ ահա՛ քիչ հետո տեսավ, որ դաշտի միջում դահուկներով սահում է մի աղջիկ: Տղան ասաց.

«Միրունիկ աղջիկ, արի նստիր իմ սահնակը, տե՛ս ինչ փափուկ մորթի եմ փռել. նստի՛ր, հանգստացիր»:

Աղջիկը դահուկներով սղդալով սահնակի կողքից, ասաց.

«Ինչի՛ս է պետք քո սահնակը. ես այդ կեղտոտ մորթու վրա նստողը չեմ»:

Կուլլերվոն քշեց սահնակը և երբ հասավ լապլանդական դաշտերին, տեսավ զուգված-զարդարված մի աղջիկ: Տղան ձգեց ձիու սանձերը. սահնակը մնաց տեղում կանգնած: Կուլլերվոն մեղմ ձայնով ասաց.

«Միրունիկ աղջիկ, արի նստիր իմ սահնակը, նստիր փափուկ մորթու վրա և հանգստացիր: Քեզ կհյուրասիրեմ խնձորով և կաղնու միջուկով»:

Զուգված-զարդարված աղջիկն այսպես պատասխանեց.

«Ես թքել եմ քո սահնակի վրա, ինչի՛ս է պետք դա. քշիր, կորիր, դու էլ, քո զգվելի սառն սահնակն էլ»:

Կուլլերվոն բարկացած ցած թռավ, մի ակնթարթում բռնեց աղջկա մեջքից և բերելով սահնակը՝ նստեցրեց իր կողքին:

Աղջիկը բարկացած ճչաց:

«Շո՛ւտ, բաց թող ինձ, թո՛ղ, ես չեմ ուզում մնալ և կոպիտ խոսքեր լսել, չեմ ուզում, որ վատ մտքերով ձեռքերդ ինձ դիպցնես: Թող իջնեմ, գնամ, թե չէ սահնակդ կջարդեմ, տաշեղի նման ցրիվ կտամ»:

Կուլլերվոն այս խոսքերի վրա պսպղուն կափարիչով սնդուկը բացեց: Աղջիկը նայեց և ի՛նչ տեսնի. արծաթ՝ ինչքան ուզես: Գույնզգույն զգեստներ և լաչակներ, ոսկե երիզներով գուլպաներ, արծաթյա քամարներ:

Չափեց աղջկան դուր եկավ թե՛ արծաթը, և թե՛ ոսկեզօծ հագուստները:

Կուլլերվոն սիրտ առավ. մեկ ձեռքով ձիու սանձն է բռնել, որ սահնակն ուղիղ ճամփով գնա, մյուս ձեռքով աղջկա մեջքն է գրկել և համբուրում է սիրունիկին:

Եվ ահա՛, երբ մուրճն ընկավ, սահնակը կանգ առավ: Կուլլերվրոն աղջկան քաշեց սահնակի ծածկի տակ՝ փափուկ մուշտակի վրա... ոսկով և արծաթով հրապուրված աղջիկը թուլացավ, անձնատուր եղավ...

Երբ լույսը բացվեց, աղջիկը սկսեց հարց ու փորձ անել.

«Տեսնում եմ, ով երիտասարդ, որ շատ խիզախն ու համարձակն ես. երևի նշանավոր տոհմից ես, քո հայրն էլ երևի շատ հայտնի մարդ էր»:

Կուլլերվրոն պատասխանեց.

«Ես շատ նշանավոր տոհմից չեմ. իմ տոհմը ոչ նշանավոր է, ոչ էլ աննշան. այնպե՛ս, միջին խավերից եմ: Ես դժբախտ Կալեվրոյի որդին եմ, խելքս շատ բանի չի հասնում, ոչ մի բանի պիտանի չեմ: Իսկ դու, սիրունիկ աղջիկ, ի՞նչ տոհմից ես. երևի նշանավոր տոհմից. քո հայրն էլ երևի շատ հայտնի մարդ է»:

Այսպես պատասխանեց աղջիկը.

«Ես նշանավոր տոհմից չեմ. իմ տոհմը ոչ նշանավոր է, ոչ էլ աննշան. այնպե՛ս, միջին խավերից եմ: Ես աղքատ Կալեվրոյի դուստրն եմ. խելքս շատ բանի չի հասնում, ոչ մի բանի պիտանի չեմ:

Դեռահաս աղջիկ էի, մորս փեշից բռնած ապրում էի. և ահա մի օր անտառ գնացի, սկսեցի թփուտներից մորի հավաքել, կաղին պոկել ծառերից: Մեկ օր, երկու օր ապրեցի պտուղներով, երրորդ օրն ուզեցի տուն վերադառնալ, բայց ճամփան կորցրել էի: Գնացի անտառի արահետներով, մտա թավուտները և գիշեր-ցերեկ լաց էի լինում: Երրորդ օրն հասա մի բարձր սարի, նստեցի կոճղին: Լաց եմ լինում ու ձայն տալիս: Մեկ էլ տեսնեմ իմ կանչին պատասխանում է անտառը:

«Ով դու անխելք աղջիկ, բավական է լաց լինես ու կանչես, միևնույն է, քո ձայնը ոչ ոք չի լսում, քո ձայնը մինչև ձեր տունը չի հասնի»:

Նորից թափառեցի. երեք օրը դարձավ չոր, հինգ, վեց օր, բայց մարդ արարածի չհանդիպեցի. էլ ապրելս չէի ուզում. երանի մեռնեի, ազատվեի տանջանքներից, բայց ինչ էլ անում էի, մահն ինձ մոտ չէր գալիս:

Եթե ես մեռնեի և հողին խառնվելով փտեի, կարող էր մեկ, երկու, կամ երեք տարի անց այդ հողի վրա փարթամ բույսեր աճեին, թփուտներում բույսեր հասունանային և ես այս օրվան չէի հասնի, այսպիսի խայտառակ փորձանք չէր գա գլխիս»:

Այս խոսքերն ասաց-չասաց, աղջիկն իրեն անմիջապես դուրս նետեց սահնակից, վազեց հասավ մոտիկ վարարուն գետին և իրեն նետեց փրփրուն ալիքների մեջ: Միրունիկ, թշվառ աղջիկը սուզվեց գետի հատակը և ընկավ մոռացության աշխարհը:

Կուլլերվոն աղջկա ետևից վազեց, բայց էլ ի՛նչ կարող էր անել, սկսեց դառն ողբալ.

«Ո՛հ, ես ի՛նչ դժբախտ եմ. այս ինչ դաժան է իմ ճակատագիրը: Ես իմ հարազատ քրոջը պատվից գրկեցի, դժբախտ հորս ցավին նոր ցավ ավելացրի: Ով իմ սիրելի հայր և ով դու իմ գորովագույթ մայր, երանի՛ ինձ աշխարհ չբերեիրք. լավ էր, որ փոքր հասակում մեռնեի և այս չար աշխարհում չսպրեի: Ի՞նչ է մահը և հիվանդությունները կուրացե՞լ էին, որ ինձ չտեսան և իմ ծննդյան մյուս գիշերն իսկ իմ հոգին չառան»:

Նա թողեց սահնակը, նստեց ձին և շտապեց հոր տունը: Բակում տեսավ մորն ու ասաց.

«Իմ սիրելի մայր, երանի թե իմ ծնվելու օրն իսկ, դու ինձ ծխով ու գոլորշիով լցված բաղնիքը դնեիր, որ խեղդվեի, կամ էլ թե չէ փաթաթեիր քուրձերի մեջ և վառարանը զցեիր, որ վառվեի, պրծնեի այս աշխարհից»:

Ճերմակահեր մայրն հարցրեց.

«Ի՞նչ է պատահել քեզ, որդիս, կարծես թե Մանալի մույթ աշխարհից ես եկել. այս ինչե՞ր ես ասում»:

Կուլլերվոն պատասխանեց.

«Շատ դառն, շատ ծանր բան է պատահել. ես իմ հարազատ քրոջն եմ պատվից գրկել: Հենց որ հարկը վճարեցի և ճամփա ընկա, ինձ հանդիպեց մի աղջիկ: Ես սկսեցի սիրաբանել և հետո ի՞նչ իմանամ. դա իմ մորից ծնված քույրս է: Քույրս չդիմացավ այդ անպատվությանը և իրեն գետը զցեց, խեղդվեց: Ես, անճարս, չեմ իմանում, թե ի՞նչ անեմ, որ վերջ տամ այս անպիտան կյանքիս: Ինչպե՞ս է վիճակված ինձ մեռնել. գայլի ճիրաններո՞ւմ, թե՞ արջի թաթերի մեջ. կես ձկան կուլ կգնամ, թե՞ գայլաձկան ատամներն ինձ կխժռեն»:

Մայրն ասաց.

Իմ ազիզ որդի, մեռնելու մասին մի մտածիր. շատ ծանր է եղածը, բայց մեր չար բախտն ի՛նչ փորձանք ասես, որ չի բերել մեր գլխին: Աշխարհը լայն է, մի տեղ պատասպարվիր և ողբա քո արարմունքի համար: Ժամանակն ամենաբուժիչն է. կանցնի վեց տարի, ինը տարի և քո վիշտը կմեղմանա»:

Կալերվոյի որդին՝ Կուլլերվոն այսպես պատասխանեց մորը.

«Ո՛չ, չեմ թաքնվի. թաքնվելով վիշտս չի մեղմանա: Ես կերթամ մահվան դեմ-հանդիման: Ես կերթամ այնտեղ, որտեղ դեռ անպատիժ ապրում ու զվարճանում է Ունտամոն: Այդ հրեշը կարծում է, թե էլ ոչ ոք իր հախիցը չի կարող գալ. ես կերթամ հորս ու մորս դժբախտության վրեժը կլուծեմ, կլուծեմ և իմ վրեժը, որ նրա պատճառով այսքան տառապում ու տանջվում եմ այս անիրավ աշխարհում»:

## Ռունա ԼԶ

Կուլլերվոն թողում է ծնողներին և գնում է Ունտամոյի դեմ կռվելու. դժբախտ հերոսի տխուր վախճանը

Կալերվոյի որդի՝ կապույտ գուլպաներով Կուլլերվոն, պատրաստվեց կռվի գնալ Ունտամոյի դեմ: Պսպղուն թուրը հեսանեց, նիզակի ծայրն էլ մաքրեց ու սրեց:

Մայրն ասաց.

«Իմ սիրելի որդի, մի գնա, կռվի մեջ մի մտնիր: Լավ իմացիր, ով անտեղի սուր բարձրացնի, նա սրով էլ կմեռնի: Թե ձիով կռվի գնաս, ձիդ կսպանվի և դու ստիպված շուն կհեծնես, որ տուն վերադառնաս»:

Տղան պատասխանեց.

«Ես չեմ ուզում ինչպես ճիճու ճահիճների ու ավագների մեջ մեռնել: Իմ կռիվն արդար է: Ունտամոյի նման չար գազանը դեռ չի պատժված: Ես կերթամ ու կկռվեմ նրա և նրա քաջերի դեմ: Լավ է մեռնել պայքարի ժամին, զենքերի փառավոր շառաչի մեջ փառավոր մահ գտնել: Հերոսին վայել է այդ ձևով մեռնել, այն ժամանակ նա չի ափսոսա, որ աշխարհ է եկել»:

Մայրն ասաց.

«Եթե դու այդ դաժան կռվում զոհվես, հապա ո՞վ պիտի օգնի քո ծերունի հորը, ո՞վ պիտի պահի պառաված մորդ»:

Տղան պատասխանեց.

«Կյանքի օրենքն է, հայրս բարդոցի վրա պիտի մեռնի, մայրս գոմում աշխատելիս հոգին կտա»:

Մայրը կրկին խոսեց.

«Հապա որ դու զոհվես, ո՞վ պիտի օգնի անօգնական մնացած եղբորդ, ո՞վ պիտի քրոջդ պահի, պահպանի ամեն տեսակ փորձանքից»:

Տղան պատասխանեց.

«Կյանքի օրենքն է, եղբայրս այնքան ժամանակ կաշխատի անտառում ու դաշտում մինչև հասնի վերջին օրը, իսկ քույրս էլ տունն ու տեղը կմաքրի և լվացք կանի. մի օր էլ նա կերթա այն աշխարհը»:

Կուլլերվոն արդեն ուզում էր տանից դուրս գալ. մոտեցավ հորը և ասաց.

«Մնաս բարով իմ սիրելի հայր. արդյոք լաց կլինե՞ս, երբ լսես, որ քո որդին մեռել է, քո տոհմից պակասել է մի կտրիճ»:

Հայրը պատասխանեց.

«Երբ լսեմ, որ մեռել ես, լաց չեմ լինի. ուրիշ որդի կունենամ. նա քեզնից բանիմաց ու լավը կլինի»:

Տղան այսպես պատասխանեց հորը.

«Ես էլ լաց չեմ լինի, երբ լսեմ, որ դու մեռել ես: Ես ինձ համար հայր կսարքեմ: Նրա գլուխը կլինի քարից, բերանը կավից, աչքերը հապալասից, մորուքը ծղնտից, ոտքերը բարդու ճյուղերից, միսն էլ փտած ծառերից»:

Կուլլերվոն դիմեց եղբորը.

«Մնաս բարով, սիրելի եղբայր, արդյոք լաց կլինե՞ս, երբ լսես, որ եղբայրդ մեռել է»:

Եղբայրը պատասխանեց.

«Երբ լսեմ, որ մեռել ես, լաց չեմ լինի. ուրիշ եղբայր կճարեմ ինձ համար. նա քեզնից գեղեցիկը և լավը կլինի»:

Կուլլերվոն պատասխանեց.

«Ես էլ լաց չեմ լինի, երբ լսեմ, որ դու մեռել ես: Ինձ համար եղբայր կսարքեմ: Նրա գլուխը կլինի քարից, բերանը կավից, աչքերը հապալասից, մազերը ծղնտից, ոտքերը բարդու ճյուղերից, միսն էլ փտած ծառերից»:

Տղան հետո դիմեց քրոջը.

«Մնաս բարով, իմ անուշիկ քույրիկ. արդյոք լաց կլինե՞ս, երբ լսես, որ եղբայրդ մեռել է»:

Քույրն այսպիսի պատասխան տվեց.

«Երբ լսեմ, որ մեռել ես, լաց չեմ լինի, ուրիշ եղբայր կճարեմ ինձ համար. նա քեզնից բանիմաց և լավը կլինի»:

Կուլլերվոն պատասխանեց.

«Ես էլ լաց չեմ լինի, երբ լսեմ, որ դու մեռել ես: Ես ինձ համար քույր կսարքեմ: Նրա գլուխը քարից կլինի, բերանը կավից, աչքերը հապալասից, մազերը չոր խոտից, ճահճի ծաղիկներից ականջները կլինեն, թխկենու փայտիկներից էլ մարմինը»:

Տղան դարձավ դեպի մայրը.

«Միրելի, հարագատ մայր իմ, դու ինձ կրել ես քո կրծքի տակ, խնամել, դաստիարակել ես. արդյոք լաց կլինե՞ս, երբ լսես, որ քո որդին մեռել է, քո տոհմից պակասել է մի կտրիճ»:

Մայրն այսպես պատասխանեց.

«Իմացիր, որ մոր սիրտը միշտ իր որդու համար է տառապում: Եթե, Աստված ոչ անի, դու մեռնես, մեր տոհմից պակասի քեզ նման կտրիճը, ես այնպես դառը լաց կլինեմ, որ իմ արցունքով կլցվի մեր տունը. էլ ոչ մի օր արցունքն իմ աչքերից չի պակասի. լաց կլինեմ դրսում, դաշտում և իմ աղի արցունքներից բույսերը կթառամեն»:

Կուլլերվոն համբուրեց մորը և ճամփա ընկավ: Թուրը մեջքին, նիզակն ուսին, գետինը թնդացնելով նա անցնում է դաշտերով և անտառներով, ճահիճներով և մարգագետիններով:

Եվ ահա՛, մի օր էլ նրան լուր տվին.

«Հայրդ մեռել է, գնա օգնիր, որ ծերուկին թաղեն»:

Կուլլերվոն այսպես պատասխանեց.

«Դե, որ մեռել է, ես էլ ի՞նչ կարող եմ անել, տանը մի քավթառ ձի կգտնվի, որ մարմինը դնեն վրան և տանեն հողին հանձնեն»:

Կուլլերվոն էլի շարունակեց ճանապարհը. անցավ այրուտներով. և ահա՛, մյուս օրը նրան լուր տվին.

«Եղբայրդ մեռել է, գնա օգնիր, որ տանեն թաղեն»:

Կուլլերվոն այսպես պատասխանեց.

«Դե, որ մեռել է, ես էլ ի՞նչ կարող եմ անել, երևի տանը մի հովատակ կգտնվի, որ մարմինը դնեն վրան և տանեն թաղեն»:

Կուլլերվոն էլի շարունակեց ճամփան: Նրա եղջերափողի ձայնից թնդում էր անտառը: Եվ ահա՛, նրան կրկին լուր բերին.

«Քույրդ մեռել է, գնա օգնիր, որ տանեն թաղեն»:

Կուլլերվոն այսպես պատասխանեց.

«Դե, որ մեռել է, ես էլ ի՞նչ կարող եմ անել. մեր տանը մի գամբիկ կճարվի, որ քրոջս մարմինը դնեն նրա մեջքին և տանեն հողին հանձնեն»:

Կուլլերվոն արդեն անցնում էր մարգագետիններով և շուտով հասնելու էր չար Ունտամոյի երկիրը. նորից նրան լուր տվեցին.

«Քո բարի, հոգատար մայրը մեռել է. հավիտյան փակել է իր աչքերն այդ տանջված պառավը. գնա՛, օգնիր, որ տանեն հողին հանձնեն նրա տառապած մարմինը»:

Կուլլերվոն այսպես խոսեց.

«Ծանր վիշտ է ինձ համար, որ իմ սիրելի մայրը մեռավ. շատ եմ ցավում, որ նրա կյանքի վերջին պահին իր մոտը չեմ եղել, գուցե թե մրսում էր՝ ես նրան կտաքացնեի, գուցե թե մի կտոր հաց չուներ ուտելու՝ ես նրա համար հաց կճարեի, որ սովից չմեռնի:

Ծատ եմ խնդրում, իմ մոր մարմինը լվացեք ամենաընտիր սապոնով, հագցրեք մետաքսե շապիկ, ծածկեցեք մաքուր քաթանով. գերեզման տարեք տխուր երգերով և երբ հողին հանձնեք, ողբացեք, որ այդպիսի ազնիվ կին, այդպիսի հոգատար մայր է հեռանում աշխարհից: Ա՛խ, ես չեմ կարող վերադառնալ, որովհետև դեռ ապրում է մեր ողջ տոհմի դժբախտության պատճառը՝ չար Ունտամոն. ես պիտի գնամ ու մեր վրեժը լուծեմ»:

Ռազմական փողը փչելով, վերջապես նա հասավ Ունտամոնյի երկիրն և այսպիսի խնդիրք արավ.

«Ո՛վ դու բարձրյալ Ուկկո, դու իմ թրին ու նիզակին այնպիսի զորություն տուր, որ ես մենակս կարողանամ հարյուրավորների դեմ կռվել»:

Այս ասաց, ապա թուրը քաշեց, նիզակը շարժեց. նրա դեմ կռվի ելավ Ունտամոն իր հարյուրավոր զինվորների հետ:

Քաջ Կուլլերվոն ամբողջ զորքը ջարդեց, Ունտամոնյին և իր տոհմը ոչնչացրեց, տունն ու տեղը այրեց, մոխիր դարձրեց:

Կուլլերվոն դարձավ դեպի հորական տունը: Բայց շա՛տ տխուր էր, քանի որ հորական տնից ոչինչ չէր մնացել. հարազատների մահից հետո ամեն ինչ քար ու քանդ էր եղել. նա գնաց չոքեց մոր գերեզմանի մոտ, ողբաց ու ասաց.

«Իմ բարի, անուշիկ մայրիկ, հապա ոչ մի բան չե՛ս թողել քո որդուն: Ա՛խ, իմ հարազատ մայրն ինձ չի լսում, իմ ձայնն է՛լ նրան չի հասնի»:

Բայց քիչ անց մայրը գերեզմանի խորքից ձայն տվեց.

«Մեր ունեցած-չունեցածից միայն սև շունն է մնացել: Վերցրու հետո հավատարիմ շանը և գնա անտառը, անցիր թավուտները, անտառի վերջում մի դղյակ կա, այդ դղյակում ապրում են անտառի դուստրերը. նրանք քեզ կխղճան և ուտելիք կտան»:

Կուլլերվոն գտավ շանը և նրա հետ անտառ գնաց, բայց չհասավ ամրոցին. այնտեղ, այն փոքրիկ պուրակում, ուր մոլորվել էր իր հարազատ քույրը, ահա՛ կանգ առավ:

Տեսավ, որ ծառերն ու ծաղիկները լաց են լինում, ողբում են անմեղ աղջկա կորուստը: Եվ ո՞նց լաց չլինեն, չէ՞ որ ինքը չիմացավ, թե դա իր հարազատ քույրն է և նրան պատվից գրկեց:

Կուլլերվոն թուրը քաշեց, շարժեց ձեռքում և հարցրեց. «արդյոք չի՞ ցանկանում մեղավոր մարդու արյունը խմել»:

Թուրն հասկացավ նրա միտքն ու ասաց.

«Այո, մեղավոր մարդու արյունը խմելը շատ ավելի հաճելի է. չէ՞ որ պատահում է, որ ես խմում եմ անմեղ մարդկանց արյունը»:

Կուլլերվոն թրի դաստակն ամուր խրեց գետնի մեջ: Շապիկն իր վրայից դեն նետեց և կրծքով ընկավ սուր ծայրին: Եվ կյանքում լավ օր չտեսած տղան տեղն ու տեղը մեռավ:

Ահա՛, այսպես մեռավ Կալեվի խիզախ այրը, այսպես կյանքից բաժանվեց անբախտ հերոսը:

Ծերունի Վեյնեմեյնենը լսեց, թե ինչ վախճան ունեցավ խիզախ Կուլլերվոն և այսպես խոսեց.

«Ո՛վ դուք գալիք սերունդներ, մի՛ թողեք, որ ձեր երեխաների դաստիարակները լինեն բանականությունից զուրկ տխմար մարդիկ:

Մի՛ թողեք, որ օտարները ձեր մանկիկների օրորոցին մոտենան: Նրանք չեն ուզում, որ ձեր երեխաները խելոք և բանիմաց լինեն, իրենց հայրենիքի համար զորավոր այրեր դառնան: Մանուկ օրերից վատ դաստիարակված երեխան, ինչքան էլ մեծանա, ինչքան էլ մարմնով զորեղանա, հայրենիքին պիտանի, իմաստուն մարդ չի դառնա»:

## **Ռունա ԼԷ**

Իվմարինենը ողբում է իր կնոջ կորուստը. ոսկուց և արծաթից կոփում-քանդակում է նոր կին

Անբուն գիշերներ էր անցկացնում Իվմարինենը: Բերանը չէր կարողանում պատառ դնել: Լալիս էր և ողբում. չէ՞ որ կորցրել էր իր սիրած կնոջը: Այլևս չէր կարողանում մուրճը ձեռքն առնել. մեկ ամիս էր, որ նրա դարբնոցից ծուխ չէր բարձրանում:

Եվ այսպիսի խոսքերով անիծում էր իր չար բախտը:

«Ի՞նչ անեն, որ ազատվեն այս ծանր վշտից: Քնած թե արթուն մտածում են ու չգիտեն, թե ի՞նչը թողնեն, ինչի՞ց սկսեն: Մեկ-մեկ գիշերները երազումս տեսնում են իմ սիրելի կնոջը, ձեռքս երկարում են, որ իմ անուշ թռչնակիս բռնեն, բայց ձեռքս դիպչում է իմ սառ մահճակալին և ես զարթնում եմ ու մինչև լույս տանջվում»:

Երկու-երեք ամիս այսպես տառապեց հմուտ դարբինը, միշտ հիշելով և ողբալով իր սիրածի կորուստը:

Երբ հասավ չորրորդ ամիսը, նա գնաց՝ ծովի հատակից ոսկի հանեց, ավազների միջից արծաթ հավաքեց և բերեց իր դարբնոցը, որ ոսկուց և արծաթից իր համար նոր կին սարքի:

Երեսուն սայլ փայտ բերեց, քուրայի մեջ ածուխ լցրեց, և հրամայեց իր ծառաներին, որ փուքսն ուժեղ փչեն, որ կրակը թեժանա քուրայում:

Եվ երբ կրակը թեժացավ, Իվարիները քուրայի մեջ լցրեց ոսկին ու արծաթը: Բայց ինչքան էլ կրակը թեժ էր, ինչքան էլ ծառաները նորից փուքսը փչեցին և կրակն ավելի բորբոքեցին, սակայն ոչ ոսկին, ոչ էլ արծաթը չհավեցին:

Այն ժամանակ Իվարիները ինքն սկսեց փուքսը փչել: Իր գորեղ բազուկներով փչեց մեկ անգամ, երկու անգամ և երբ երրորդ անգամն էլ փչեց՝ ջեռ կրակի միջից դուրս վազեց մի գառնուկ: Գառնուկի մի կողմը բուրդը ոսկուց էր, մյուս կողմինը արծաթից:

Բոլորն սկսեցին գովել դարբնի վարպետությունը, թե ի՞նչ գեղեցիկ գառնուկ է սարքել: Բայց ինքն՝ Իվարիները դժգոհ էր: Եվ այսպես խոսեց նա.

«Այս գառնուկը գայլին է հարկավոր, իսկ ես կուզեի, որ ոսկուց և արծաթից ստեղծվեր իմ սիրելի կինը»:

Նա գառնուկին կրկին նետեց քուրայի մեջ, ավելացրեց ոսկի և արծաթ և հրամայեց ստրուկներին փուքսը փչել: Մի կողմից ստրուկները փուքսն են փչում, կրակը թեժացնում, մյուս կողմից դարբինը կրակխառնիչով ածուխն է շուռ ու մուռ տալիս, որ ոսկին ու արծաթն իր ուզածով հավեն և նրանցից ստացվի իր հարսնացուն:

Ստրուկները թեև քափ քրտինքի մեջ մտած աշխատում են, բայց չեն կարողանում շատ թեժացնել կրակը: Իվարիները նորից մոտեցավ փուքսին. փչեց մեկ անգամ, երկու անգամ և երբ երրորդ անգամն էլ փչեց՝ ջեռ քուրայից դուրս վազեց մի մտրուկ: Նրա գլուխն արծաթից է, բաշը ոսկուց, սմբակները պղնձից են, մտրուկն աշխույժ թռչկոտում է այս ու այն կողմ: Բոլորն հիացած են, թե ինչ գեղեցիկ մտրուկ է սարքել դարբինը, բայց դժգոհ է միայն ինքը՝ Իվարիները և այսպիսի խոսքեր է ասում:

«Սա միայն գայլին է հարկավոր, իսկ ես կուզեի, որ քուրայից դուրս գար իմ սիրելի կինը»:

Մտրուկն էլ դարբինը նետեց քուրայի մեջ. այս անգամ ավելի շատ ոսկի և արծաթ ավելացրեց. հրամայեց ստրուկներին փուքսը փչել, կրակը բորբոքել:

Նորից ստրուկները չկարողացան կրակը բորբոքել այնպես ուժեղ, որ ոսկին ու արծաթը հավկեն-ձուլվեն: Այս անգամ էլ դարբինն ինքը մոտեցավ փուքսին և զորեղ բազուկներով փչեց մեկ անգամ, երկու անգամ և երբ երրորդ անգամն էլ փչեց, ասաց մի տեսնեմ, թե ի՞նչ է ստացվել քուրայի մեջ:

Մոտեցավ-չմոտեցավ՝ քուրայի միջից դուրս եկավ մի չքնաղ աղջիկ: Գլուխն արծաթից էր, մազերը ոսկուց, բոյն ու բուսը մի հրաշք: Բոլոր տեսնողները զարմանքից քարացան:

Իմարիներն շատ ուրախացավ և սկսեց աշխատել ու տքնել, ինչպես ոսկերիչն է տքնում նուրբ քանդակի վրա: Նա աշխատեց գիշեր ու ցերեկ. աղջկա թևերը և ոտքերը, բերանն ու շրթունքներն այնպիսի նրբությամբ քանդակեց-հղկեց, որ տեսնողը կասեր, թե իսկական մսից ու ոսկորից կազմված չքնաղ աղջիկ է: Եվ դարբինն ինքն իրեն խոսեց.

«Ի՞նչ լավ կլիներ, որ այս չքնաղ աղջիկը շուտով կարողանար խոսել, հոգի և շունչ առնել մարմինը»:

Դարբինը ոսկեղեն-արծաթեղեն աղջկան տուն բերեց, տարավ դրեց անկողին, գլխի տակը բմբուլե բարձ դրեց, վրան էլ մետաքսյա վերմակ քաշեց:

Ինքն էլ գնաց բաղնիքը, տաք ջրով մի լավ լողացավ-մաքրվեց, ապա իր անկողինն էլ սարքեց կնոջ կողքը, վրան քաշեց արջի մորթուց կարած տաք վերմակ և պառկեց:

Եվ ինչքան տաքացնում էր արջի մորթուց կարած վերմակը, այնքան սառն էր, երբ դիպչում էր ոսկեղեն-արծաթեղեն կնոջը:

Եվ դարբինն ինքն իրեն խոսեց.

«Ինչպե՞ս կարող եմ ապրել մի կնոջ հետ, որ ոչ կարող է խոսել, ոչ էլ հոգի ու շունչ կա մեջը: Ավելի լավ է տանեմ նվեր տամ իմաստուն Վեյնեմեյնենին. նա կիմանա ինչ անել, որ այս չքնաղ աղջիկն իրեն ընկեր դառնա»:

Մյուս օրը քանդակը տարավ Վեյնեմեյնենի մոտ և այսպես խոսեց.

«Ո՛վ դու ծերուկ Վեյնեմեյնեն, վերցրու, քեզ նվեր եմ տալիս այս չքնաղ աղջկան»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը մի հայացքով արձանը չափեց ոտից-գլուխ և այսպես խոսեց.

«Ինչո՞ւ համար ես դու այս ոսկեղեն քանդակն ինձ մոտ բերել»:

Իմարիներն պատասխանեց.

«Բերել եմ, որ քեզ համար կյանքի ընկեր լինի այս չքնաղ աղջիկը»:

Այսպես խոսեց ծերուկ Վեյնեմեյնենը.

«Ով դու դարբին, եղբայր իմ սիրելի, ավելի լավ է դու այս արձանը նորից կրակը նետիր և ավելի պիտանի բաներ սարքիր մարդկանց համար: Կամ էլ թե չէ տար գերմանացի կամ ռուս հարուստներին վաճառիր, որ նրանք զվարճանան սրանով: Պատիվ չի բերում մեր տոհմին, ինչպես նաև ինձ, ծերուկիս, որ մենք արժաթից և ոսկուց կին ունենանք»:

Եվ ծերուկ Վեյնեմեյնենը, նույն ինքը Սուվանտոլայենը, նոր եկող սերնդին ավանդեց՝ չստրկանալ ոսկու առաջ, արծաթով չհրապուրվել, և այսպես ավարտեց խրատը.

«Ո՛վ դուք իմ սիրելի զավակներ, դուք կյանք մտնող հերոսներ, լավ օրի լինեք, թե վատ օրի, քանի ձեր գլխավերևում փայլում է արևը, զգուշացե՛ք և երբեք ձեր կյանքը չկապենք ոսկեղեն-արծաթեղեն աղջկա հետ. ոսկին էլ, արծաթն էլ պաղ են, ինչպես սառույցը»:

## **Ռունա ԼԸ**

Իմարիները գնում է Պոխյոլա մեռած կնոջ կրտսեր քրոջ հետ ամուսնանալու նպատակով. բայց քանի որ քենին չի համաձայնում՝ դարբինը նրան փախցնում է

Իմարիներն՝ ճարտար դարբինը, տան մի անկյունը նետեց ոսկուց և արծաթից պատրաստած գեղեցկուհին:

Որոշեց կրկին գնալ Պոխյոլա և ամուսնանալ Լոուխիի կրտսեր աղջկա հետ: Ձին լծեց սահնակին և ճամփա ընկավ:

Մեկ օր գնաց դուրսագնը, երկու օր գնաց, երրորդ օրվա վրա հասավ Պոխյոլա: Լոուխին հենց բակում դիմավորեց դարբինն և ուզեց անմիջապես իմանալ, թե ինչպե՛ս է ապրում իր աղջիկը. արդյոք սկեսուրի հետ հա՛շտ է, հո բանի պակասություն չունի:

Իմարիները գլուխը կախեց, գլխարկը մի կողմի վրա թեքվեց. տխուր ձայնով ասաց.

«Էլ մի հարցնիր, ով իմ գոքանչ, թե ոնց է ապրում քո աղջիկը: Անժամանակ մեռավ նա. անբախտ աղջկան հողը դիրնք. այն գեղեցիկ մարմինը, ոսկեգույն մազերը գերեզման իջեցրինք: Այժմ ես եկել եմ, որ դու ինձ կնության տաս քո կրտսեր աղջկան, որ նա գա ու նստի այն նստարանին, որտեղ նստած էր նրա քույրը»:

Լոուխին բարկացավ և ասաց.

«Ես շատ վատ արի, որ իմ աղջկան քեզ կնության տվի. իմ ջքնաղ աղջիկը ջահել-ջահել մեռավ. լավ էր նրան գայլի ճանկը գցելի, քան քեզ տայի: Կրտսեր աղջկանս չե՛մ տա. ավելի շուտ ես հարազատ աղջկանս աղմկոտ ջրվեժի մեջ կնետեմ, ծովի ձկներին կերակուր կդարձնեմ, քան թե քեզ կնության կտամ, որ գա քո մրոտ ոտն ու գլուխը և կեղտոտ շորերը մաքրի»:

Այս խոսքերից ճարտար դարբնի մագերը բիզ-բիզ կանգնեցին: Նա մյուս սենյակը մտավ և դիմեց աղջկան.

«Ով դու ջքնաղ աղջիկ, իմ կինը դարձիր, մտիր իմ տունը, նստիր քո քրոջ նստարանին, ինձ համար մեղրահաց թխիր և ընտիր գարեջուր պատրաստիր»:

Հատակին նստած էր մի տղա. այսպես խոսեց այդ փոքրիկը.

«Կորի՛ր այստեղից, հեռացիր մեր տանից. արդեն մի անգամ եկար և մեծ վիշտ պատճառեցիր մեզ: Իսկ դու, իմ սիրելի քույրիկ, ջինի թե դրա խոսքին համոզվես ու մարդի գնաս:

Դրա անուշ խոսքի ետևում թաքնված է գայլային ռեխը, աղվեսային խորամանկությունը և արջի նման կոպիտ մարդը: Նա կարող է միայն մարդկանց մեջքը ջարդել, նրանց արյունը թափել»:

Իսկ աղջիկն այսպիսի խոսքեր ասաց Իվմարինենին.

«Ես քեզ պես անպիտան մարդու հետ չեմ ամուսնանա: Դու քո կնոջը, որ իմ հարազատ քույրն էր, մեռցրիր. կարող ես և ինձ սպանել: Արժե, որ ինձ նման աղջիկն ավելի լավ ամուսին ունենա, այնպիսի ամուսին, որի հասակն ավելի բարձր լինի, որ ավելի շքեղ սահնակ և ավելի լավ տուն ունենա, և ո՛չ թե մարդի գնալ ածուխի մրի մեջ կորած մի դարբնի»:

Բարկացավ Իվմարինենը, դեմքը խոժոռեց, հասավ բռնեց աղջկան, քաշ տվեց, դուրս հանեց սենյակից, նստեցրեց իր սահնակին և ճամփա ընկավ. մեկ ձեռքով ձիու սանձն էր բռնել, մյուսով աղջկա մեջքն էր գրկել:

Աղջիկը դառն-դառն լաց եղավ, ասաց.

«Ա՛խ, ինձ տանում ես դեպի ճահիճները, ուր միայն կնյունն է անում, այնտեղ ես՝ թռչնակս վշտից կմեռնեմ... ո՛հ, ճարտար դարբին Իվմարինեն, թե որ ինձ բաց չթողնես, ես ոտքերովս այնպես կխփեմ, որ քո սահնակը ջարդ ու փշուր կլինի»:

Իվմարինենը պատասխանեց.

«Իմ սահնակն այնպիսի պինդ երկաթից եմ սարքել, որ քեզ պես գեղեցկուհին իր ոտքերի հարվածով չի կարող ջարդել»:

Աղջիկը, որ գեղեցիկ գոհարներով և ոսկեղեն զուգսով էր զարդարված, զայրույթից մատներն է ցավեցնելու չափ կոտրատում և այսպիսի խոսքեր է ասում:

«Եթե ինձ չազատես, սիգ ձուկ կդառնամ և կսուզվեմ ծովի խորքերը»:

Իսկ դարբինը պատասխանում է.

«Ինձնից չես ազատվի. ես գայլաձուկ կդառնամ ու կհասնեմ քո ետևից»:

Չուզված-զարդարված աղջիկն աղեկտուր լաց է լինում և այսպիսի խոսքեր է ասում.

«Թե ինձ չազատես, ես եղնիկ կդառնամ, անտառները կփախչեմ, լեռները կմագլցեմ»:

Ճարտար դարբին Իվարինենն ասաց.

«Ինձնից չես ազատվի, գայլ կդառնամ, քեզ կբռնեմ»:

Ավելի աղիողորմ է լաց ու կոծ անում աղջիկը և ասում է.

«Եթե ինձ չազատես, արտույտ կդառնամ, կթաքնվեմ ամպերում»:

«Ինձնից չես ազատվի, արծիվ կդառնամ, մագիլներիս մեջ կառնեմ»:

Քիչ էլ գնացին, հանկարծ ձին փնչացրեց ու կանգնեց.

Աղջիկը գլուխը սահնակից դուրս հանեց, ձյան վրա ինչ-որ հետք նկատեց ու հարցրեց.

«Ո՞վ անցավ այս ճամփով»:

Դարբինը պատասխանեց.

«Նապաստակ փախավ այս ճամփով»

Աղջիկն հոգոց հանեց ու ասաց.

«Ավանդ, երանի ես, թշվառս, այդ նապաստակի հետ գնայի, այդ շղիկի հետ ապրեի, քան թե քեզ նման ամուսնու հետ ճմրթված վերմակի տակ մնայի: Նապաստակի մագերն ավելի լավն են, բերանն ավելի գեղեցիկ է»:

Ճարտար դարբինը գայրացավ, կծոտեց շրթուներն ու քշեց ձին: Քիչ հետո ձին ավելի ուժեղ փռնչաց.

Աղջիկը նորից հետք նկատեց ձյան վրա և ասաց.

«Մի ինչ-որ կենդանի փախավ այս ճամփով»:

Իվարինենը պատասխանեց.

«Աղվեսը փախավ այս ճամփով»:

Աղջկա լացն աչքերից չէր կտրում. ողբալով ասաց.

«Ավա՛ղ, ես ավելի լավ կապրեի, եթե ճամփորդեի աղվեսի սահնակով. չե՛մ ուզում դարբնի կինը դառնամ. չե՛մ ուզում նրա հետ մի վերմակի տակ քնեմ: Աղվեսի մազերն ավելի լավն են, բերանն ավելի գեղեցիկ է»:

Ճարտար դարբնի գայրույթին սահման չկա. շրթունքներն է կծոտում և քշում ձին: Քիչ անց ձին ավելի աղմկալից փռնչաց.

Աղջիկը կրկին դուրս նայեց. էլի ձյան վրա ինչ-որ կենդանու հետք նկատեց և հարցրեց.

«Ո՞վ անցավ այս տեղով»:

Դարբինը պատասխանեց.

«Գայլը փախավ այս ճամփով»:

Աղջիկն ավելի ծանր հառաչեց. արցունքներն ավելի վարար հոսեցին, ողբաց և ասաց.

«Ավա՛ղ, ես թշվառս, եթե այդ գայլի հետ գնայի, ավելի լավ կապրեի: Մի՞թե ապրեմ չսիրածս մարդու հետ, նրա հետ մի ճմրթված վերմակի տակ գիշերները լուսացնեմ: Գայլի մազերն ավելի լավն են, նրա բերանն ավելի գեղեցիկ է»:

Իմարիները կրակ կտրած մտրակում է ձիուն, քշում է սահնակը և գիշերն հասնում է մի գյուղ:

Հոգնած-դադրած դարբինը խոր քուն մտավ: Իսկ չար աղջիկն ուրիշ տղաների հետ ժամանակ անցկացրեց և ծաղր ու ծանակեց քնած ամուսնուն:

Առավոտ շուտ դարբինը զարթնեց, աչքերը խոլորեց, շրթունքները դողդողացին, քանի որ Լոուիսիի աղջիկը դարձյալ նույնն էր ասում, չէր ուզում դարբնի հետ ամուսնանալ:

Այս անգամ դարբինը շատ խիստ բարկացավ, ինքն իր հետ խոսեց.

«Արդյոք չերգե՞մ կախարդական երգեր, չար հարսնացուիս դարձնեմ անտառի կամ ծովի գազան: Բայց թե այդ գազանն անտառ թողնեմ՝ այնտեղի կենդանիները կվախենան, թե ծովը թողնեմ՝ ձկները դեռ ու դեն կփախչեն. ավելի լավ է թուրս քաշեմ ու սպանեմ սրան»:

Թուրը հասկացավ դարբնի միտքը, լեզու առավ, խոսեց.

«Ես նրա համար չեմ սարքված, որ թույլ կանանց ոչնչացնեմ, որ թույլ մարդկանց կյանքից զրկեմ»:

Դարբինը թուրը տեղը դրեց և ուժեղ ձայնով սկսեց կախարդական խոսքեր ասել: Ասաց, ասաց և ահա՛ հարսնացուն դարձավ որոր հավք: Եվ որոր հավքը թռչկոտում էր ժայռից ժայռ, պտտվում էր ծովի փրփուրների վրա թե լավ թե վատ եղանակներին:

Դարբինը նստեց սահնակ և տխուր տրտում հասավ իր հայրենի աշխարհը. անցավ հայրենի երկրի մարգագետիններով: Ճանապարհին նրան հանդիպեց ծերուկ հավատարիմ Վեյնեմեյները և հարցրեց.

«Եղբայր իմ Իվմարինեն, ինչո՞ւ ես այդպես տխուր, գլխարկդ ինչո՞ւ է թեքված: Դու Պոխյոլայից վերադարձար, չէ՞: Պատմի՛ր, ինչպե՞ս են ապրում այնտեղ»:

Պատասխանեց ճարտար դարբինը.

«Եվ ինչո՞ւ Պոխյոլայում լավ չապրեն: Սամպոն անդադրում աղում է նրանց համար: Մեկ օր աղում է, որ ժողովուրդը գոհանա, մի օր էլ աղում է վաճառքի համար, երրորդ օրն էլ աղում է խնջույքի համար: Այո՛, քանի որ Պոխյոլայում կա Սամպո, այնտեղ շատ լավ կապրեն, այնտեղ արտն ու հանդը և ամեն տեսակ բույսերը առատ բարիքներ են տալիս և կտան: Իսկ Սամպոն միայն մեկ հատ կարելի է սարքել, երկրորդն այլևս չի սարքվի»:

Մտածեց ծերուկ Վեյնեմեյները, ասաց.

«Իսկ ի՞նչ եղավ քո հարսնացուն, որտե՞ղ մնաց այն չքնաղ աղջիկը. ինչո՞ւ ես մենակ վերադարձել»:

Դարբինը պատասխանեց.

«Ես իմ անպետք կնոջը ծովային որոր դարձրի: Եվ այժմ նա ծովափին՝ ժայռերի վրա թևերն է թափահարում, ճչում է ու կռնչում, անցնող դարձողի ականջն է իլացնում»:

## **Ռ-ուՆԱ Ռ-Թ**

Վեյնեմեյները և Իվմարինենը մեկնում են Պոխյոլա Սամպոն բերելու

Ծերուկ Վեյնեմեյներն ասաց.

«Ճարտար դարբին Իվմարինեն, արշավենք դեպի Պոխյոլա և բերենք մեր պսպսղուն կափարիչով հրաշք-ինքնադաց Սամպոն, դո՛ւ կառուցեցիր այն, մեր ժողովուրդը պիտի օգտվի նրա բարիքներից»:

Դարբինը պատասխանեց.

«Անհնար է Սամպոն վերցնել այն մռայլ Պոխյոլայից. հրաշագործ ինքնադացր Լոուխին փակել է պղնձակուռ անձավի մեջ, սարքել է ամուր պատվանդան և պատվանդանն էլ երեք ոտքերով՝ ամեն մեկը ինը սաժեն, խրել է գետնի մեջ. մեկ ոտքը խրված է քարանձավի տակը, մյուս ոտքը հասնում է ծովափ, երրորդն էլ ժայռի կողմն է թեքված. անձավի դուռն էլ ինը կողպեքով կողպել է»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնեն ասաց.

«Եղբայր իմ Իվարիներն, գնանք ինձ հետ Պոխյոլա և անպայման մենք կտիրանանք Սամպոյին. ինչքան էլ հրաշք-ինքնադացր ամուր փակված լինի մռայլ անձավում, միևնույն է, մենք կգտնենք ու կբերենք, միայն թե մի մեծ նավ սարքենք, որպեսզի նրա վրա տեղավորենք պսպղուն կափարիչով Սամպոն»:

Իվարիները պատասխանեց.

«Ավելի լավ է ցամաքով գնանք. ծովի ճամփան վտանգավոր է, փոթորիկը կարող է մեր նավը խորտակել, մեզ ծովը թափել և մենք ստիպված մեր թևերը պիտի թիեր դարձնենք, արմունկները դեկ և լողանք փրփրոտ ալիքների վրա»:

Ծերուկ Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Թեև ցամաքով գնալն ավելի անվտանգ է, բայց հեշտ չէ. թե շատ հեռու է և թե շատ թերութուններ ու բարձունքներ պիտի անցնենք մինչև տեղ հասնենք: Իսկ ծովի վրա նավը կալանա քամու ուժով, ալիքներն էլ առաջ կմղեն և շուտ տեղ կհասնենք. բայց թե չես ուզում ծովով ճամփորդենք, գնանք ցամաքով, ծովի ասիերով: Միայն թե դու ինձ համար մի պինդ թուր սարքիր, թուր որ կայծեր արձակի, որպեսզի շներին հալածեմ, այն մռայլ մշուշապատ աշխարհում իմ դեմ կռվի ելնող պախյուլցիներին հաղթեմ»:

Իվարիները հրամայեց իր ծառաներին դարբնոցի հնոցը շիկացնել. երբ հնոցը շիկացավ, ճարտար դարբինն այնտեղ նետեց պողպատ ու երկաթ, ոսկի և արծաթ: Ստրուկներն ավելի թեժացրին կրակը և մետաղները հալվեցին, հունցվեցին, ոնց որ խմորն է հունցում:

Իվարիները թեքվեց դեպի հնոցը, որ տեսնի, թե մետաղն ինչ ձև է առել, և երբ ոսկյա դաստակը ձևավորվեց, դարբինն հանեց մետաղյա զանգվածը, դրեց զնդանին ու մուրճը ձեռքն առնելով սկսեց կռփել. քիչ հետո արդեն կայծակնացայտ թուրը պատրաստ էր:

Ծերուկ Վեյնեմեյնենը թրի դաստակից բռնեց, նայեց-զննեց վարպետի սարքած զենքն ու ասաց.

«Շատ վարպետորեն, դյուցազնին հարմար թուր է սարքված. ինձ դուր է այս թուրը»:

Եվ ինչպե՞ս դուր չգար. ամուր, պողպատյա երկսայր թրի դաստակը ոսկեղեն էր. թրի վրա այսպիսի զարդեր էին դաջված. մեջտեղը արև. մի կողմը լուսին, մյուս

կողմն աստղեր, ներքևի մասում վրնջացող ձի էր, վերևում մլավող կատու և հաչող շուն:

Վեյնեմեյնեն ասաց.

«Այս թրով ես կարող եմ ամուր ժայռերը կտրել, մաս-մաս անել սարերը»:

Ճարտար դարբինն ասաց.

«Իսկ ես անճարս, ինչպե՞ս պաշտպանվեմ, ի՞նչ անեմ, որ ծովի և ցամաքի վրա հանդիպող փորձանքներից ազատվեմ... մի քիչ էլ սպասիր, ծերուկ Վեյնեմեյնեն, որ ես էլ պատրաստվեմ ահեղ կռվին»:

Դարբինը նորից փութսն ու հնոցը, գնդանն ու մուրճը գործի դրեց. Իր համար երկաթե վերնաշապիկ սարքեց, մի այնպիսի զգեստ, որ հագնի թե չէ, էլ իրեն չի կարող պատուհասել ո՛չ նետը, ո՛չ նիզակը, ո՛չ էլ սուրը: Հազավ զգեստները, զենքն ու զրահը կապեց և ասաց.

«Չրահակիր դուրսագնը անխոցելի է»:

Քիչ հետո Վեյնեմեյնենը և Իվարինենը գնացին անտառ, գտան երկու ուժեղ արագավազ ձիեր, նստեցին և երբ վարգով մոտեցան ծովափին, հանկարծ ծովի կողմից լսեցին աղաղակ. ինչ-որ մեկը ողբում էր:

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնեն ասաց.

«Այդտեղ երևի մի դժբախտ աղջիկ է լաց լինում, պետք է գնամ տեսնեմ, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ է ողբում»:

Եվ երբ գնաց ծովափ՝ ի՞նչ տեսնի. աղջիկ չէր, որ լալիս էր. դա նավակն էր ողբում: Ծերունին հարցրեց.

«Ինչո՞ւ ես լալիս, փայտաշեն նավակ, չլինի՞ թե դեկդ սարքին չէ, լավ թիեր չկա՞ն, որ լողաս ծովում»:

Նավակը պատասխանեց.

«Ես ուզում եմ ծովում լողալ, այնպես ինչպես կարող պատած մյուս նավակները. ինչպես աղջիկն է ուզում հորական տանից ամուսնու տունը գնալ: Երբ կառուցում էին ինձ, ասին. «Դու ռազմական նավակ պիտի դառնաս, կռիվներին պիտի մասնակցես, գանձեր պիտի բարձեն քեզ վրա, ավար պիտի բերես դու» Ա՛յ, մյուս նավակներն արդեն կռիվ են գնացել և վերադարձել են՝ բեռնված գանձերով ու ավարով: Իսկ ես եղած նավակների մեջ ամենալավ և ամրակուռն եմ, բայց ընկած եմ ծովափին և չորանում եմ, միայն որդերն են բուն դրել իմ կողերին. մեկ-մեկ էլ գորտերն են թռչկոտում շուրջ-բոլորս. եթե ես անբան պիտի մնամ, ավելի լավ էր, որ անտառում բուսած կեչի մնայի, որ իմ շուրջը սկյուռներ վխտային և շնիկները վազվզեին»:

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնենն ասաց.

«Մի՛ լար, դու փայտաշեն նավակ. շուտով դու հերոսներին քո մեջքի վրա կառնես, ռազմական նավ կդառնաս և թե՛ծ կռիվներին կմասնակցես, միայն թե ասա՛, արդյոք քեզ սարքողը լա՛վ վարպետ է եղել. կարո՞ղ ես դու ծովը մտնել, եթե ոչ ոք մատով չդիպչի քեզ, ուսովը քեզ դեպի ծովը չհրի»:

Նավը պատասխանեց.

«Ոչ մի նավ էլ ծովը չի մտնի, եթե նրան չհրեն և չջրարկեն»:

Վեյնեմեյնենն ասաց.

«Եթե քեզ ջրարկենք, կարո՞ղ ես դու առաջ գնալ առանց թիավարելու, առանց դեկի չե՛ս շեղվի ճամփից, ալիքների մեջ առանց առագաստի չե՛ս կորչի խորտակվի»:

Նավը պատասխանեց.

«Իմ բոլոր ընկերակից նավերին միշտ էլ օգնել են թիավարները, անխափան դեկը միշտ ուղիղ ճամփա է ցույց տվել, իսկ բարենպաստ քամին էլ առագաստին է ուղղություն տվել: Ես ինքս էլ ոչնչով պակաս չեմ իմ ընկերակից-եղբայր նավերից»:

Նորից հարցմունք արավ ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը:

«Ասա՛ ինձ, ով դու ամրակուռ նավ, եթե ես քեզ ջրարկեմ, եթե թիավարներն սկսեն թիավարել, դեկն էլ ընթացք տա քո վագրին, քամին էլ քո առագաստներին ուղղություն տա, դու ջրի վրա ուղիղ անխափան կլողա՞ս»:

Նավը պատասխանեց.

«Թեկուզ հարյուր մարդ էլ նստի, թեկուզ հազարն էլ նստի ինձ վրա, ես բոլորին էլ տեղ կհասցնեմ, ուղիղ անխափան կերթամ այնտեղ, որտեղ կցանկանան հերոսները»:

Այն ժամանակ Վեյնեմեյնենը և Իլմարինենը ձիերը թողեցին ծովափին, նավը ծովն իջեցրին: Ծերուկը նավը մտավ թե չէ, սկսեց իր հերոսական երգերը: Եվ իմաստուն երգասացի երգերը լսելով՝ հավաքվեցին կտրիճները. ինքը Վեյնեմեյնենը նստեց նավակի վերջում և դեկն առավ ձեռքը: Իլմարինենը նստեց նավախելի մոտ: Նավի մի կողմում նստեցին կտրիճ տղաներ, մյուս կողմում սիրունիկ, գուգված-գարդարված աղջիկներ, իսկ մեջտեղում տարիքավորները:

Վեյնեմեյնենը թե դեկն էր պահել ձեռքում և թե շարունակում էր երգել.

«Սլացի՛ր իմ նավ ալիքների վրայով. սլացի՛ր, ինչպես պղպղջակն է լողում ջրի հոսանքի ուղղությամբ»:

Սկզբում տղաներն էին թիավարում, բայց նավը շատ դանդաղ էր գնում, հետո աղջիկներն սկսեցին թիավարել, էլի նավակը դանդաղ էր առաջ շարժվում: Սկսեցին տարիքավորները թիավարել, բայց կարծես նավը տեղում կանգնած էր մնացել:

Վերջում Իվարիները թիերը ձեռքն առավ և սկսեց թիավարել. նավն առաջ սլացավ. լսելի էր միայն ջրերի ճողփյունը և թիակալների աղմուկը:

Եվ այնպես գորեղ սկսեց թիավարել Իվարիները, որ նավի կողերն ու նստարանները ճոճվում էին, արոսենուց սարքած թիերն էլ տնքում էին: Նավացուցողը ձայներ էր արձակում ինչպես կարապր, թիակալներն էլ կոնչում էին, որպես ագռավները:

Ծերուկ Վեյնեմեյներն էլ կարմիր ներկված դեկի մոտ նստած ուղղություն է տալիս նավին: Երեկոյան դեմ երգասացը մի հրվանդան նկատեց, ապա մի փոքրիկ գյուղ:

Այդ գյուղումն էր ապրում Լեմմինկայները, նույն ինքը Կաուկոմեյին: Ծատ տխուր էր նա. ո՛չ ուտելու հաց ուներ, ո՛չ էլ ձուկ էր ընկնում ուռկանը: Նա ջարդված նավակն էր ուզում սարքի գցել, որ մի տեղ գնա, ուտելիք ճարի:

Լեմմինկայները շատ լավ լսողություն ուներ, այքերն էլ արդեն հեռվից հեռու ամեն ինչ տեսնում-ջոկում էին: Դյուցազնը նայեց դեպի հյուսիս, դեպի արևմուտք, հետո արևակողմը և ահա տեսավ, որ իրենց կղզուն է մոտենում մի նավ: Զարմացավ Լեմմինկայները, երբ մոտից տեսավ նավը. այդպիսի գեղեցիկ, ամրակուռ նավ նա կյանքում չէր տեսել: Երբ տեսավ նաև դեկի մոտ նստած ծերունուն, Լեմմինկայները ինչքան ուժ ուներ գոռաց.

«Ո՛ւմ նավն է սա, այս ի՞նչ նավ է, որ ճոճվում է ալիքների վրա»:

Կտրին տղաներն ու աղջիկները պատասխանեցին.

«Իսկ դու ո՛վ ես, ինչացո՞ւ ես. երևի, ո՛վ դյուցազն, այքերդ լավ չեն տեսնում. մի՞թե չճանաչեցիր, թե ո՛վ է նստած դեկի մոտ, ո՛վ է թիավարողը»:

Լեմմինկայները մեկ էլ նայեց ու ասաց.

«Ա՛յ հիմա ճանաչեցի. դեկի մոտ նստած է ծերուկ իմաստուն Վեյնեմեյները, թիավարողն էլ ճարտար դարբին Իվարիներն է: Դե՛, հիմա խնդրում եմ ինձ ասե՞ք, ով փառապանձ այրեր, ո՞ւր եք գնում դուք փրփրուն ալիքների վրայով»:

Ծերուկ Վեյնեմեյները պատասխանեց.

«Մենք գնում ենք դեպի հյուսիս, մեր նավը լողում է դեպ Գոխյոյա. գնում ենք, որ մեր հրաշք-ինքնադաց Սամպոն գերությունից ազատենք բերենք: Ես ուզում եմ, որ պսպղուն կափարիչով հրաշք-ինքնադացի ստեղծած բարիքը բոլորը վայելեն, որ ամենքի տունը լցվի նրա ստեղծած բարիքներով և մարդիկ երջանիկ ապրեն»:

Ուրախ Լեմմինկայնեն ասաց.

«Ո՛վ դու ծերուկ Վեյնեմեյնեն, վերցրու ինձ քո նավակը: Ես երրորդ հերոսը կլինեմ: Դու գնում ես դժվար գործի, գնում ես, որ Սամպոն բերես: Թե կռվել հարկ լինի, ես տղամարդավարի կկռվեմ, թևերս էլ, ուսերս էլ ուզածիդ պես զորեղ եմ»:

Ծերուկ հավատարիմ Վեյնեմեյնենը սիրով իր նավակն ընդունեց Լեմմինկայնենին, այն քաջ հերոսին, որին շատ նեղություն էր տվել Պոխյոլայի տիրուհին և նա ուզում էր գնալ, փրկել հրաշք-ինքնադասց Սամպոն, այն ջաղու Լոուխիի ճանկերից և իր վրեժը լուծել այդ երկրի դաժան մարդկանցից, ուր կախարդ տիրուհու բակում ցցերին բարձրացված հարյուրավոր գլուխներ կան և հարյուրներն էլ ճոճվում են կախադաններից:

Եվ ահա՛ Լեմմինկայնենը վերցրեց մի քանի հատ լավ ռանդած տախտակներ ու նավը մտավ:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Իմ նավը լավ, ամրակուռ տախտակներից և գերաններից է պատրաստված: Ինչո՞ւ համար ես բերել այդ տախտակները»:

Լեմմինկայնենը պատասխանեց.

«Ինչքան էլ նավը լավ պատրաստված լինի, ինչքան էլ զգույշ լինես, Պոխյոլայի ծովում ուժեղ մրրիկները հաճախ նավի տախտակներն են պոկում, գերանները ջարդ ու փշուր անում»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Այ, հենց այդ էլ ի նկատի ունենալով, մեր ռազմական նավի բոլոր հանգույցներն ամրացրել ենք երկաթով ու պողպատով, որպեսզի քամիները մեր նավին չվնասեն, փոթորիկները նավը ջարդ ու փշուր չանեն»:

## **Ռ-ունա Խ**

Վեյնեմեյնենը գայլաձկան ծնոտից սարքում է բազմալար երաժշտական գործիք՝ Կանտելե

Ծերուկ Վեյնեմեյնենը նավի դեկը շուռ տվեց և հեռացավ հրվանդանի մոտ գտնվող փոքրիկ-աղքատիկ գյուղից. փրփրոտ ալիքների վրայով երգասացը նավը վարում էր դեպի առաջ և ուրախ երգերով մխիթարում-ոգևորում էր նավի վրա գտնվող բոլոր ռազմիկներին:

Ծովափին մի քանի աղջիկներ կային, ձայն տվին.

«Այս ինչ անուշ երգեր են լսվում այդ նավից. այդպիսի երգեր մենք երբեք չենք լսել»:

Նավը մի օր գնաց, երկու օր գնաց և երրորդ օրն հասավ ծովային մի անդունդի, ուր ուժեղ ջրապտույտներից նավերը խորտակվում էին: Այն ժամանակ Լեմմինկայները, որ առաջներն անցել էր այդպիսի տեղերով, գիտեր թե ինչ երգեր են երգել ահարկու ջրապտույտին, սահանքին մոտենալիս, այսպես խոսեց.

«Ով դու սահանք, այդպես մի փրփրակալիր և մի աղմկիր: Ծովի դուստր, դու բարձրացիր, նստիր ցցված ժայռերի վրա. քո կրծքով և ձեռքերով սանձահարի կատաղած ալիքները և թույլ մի տա, որ նրանք մեզ վնասեն:

Ով դու փրփուրների մեջ ապրող պառավ, բարձրացիր ալիքների վրա, մի թողնիր, որ նրանք մոլեգնեն, որպեսզի անմեղ մարդիկ չընկնեն ծովի խորխորատը:

Դուք, ծովի միջում ցցված ժայռեր, ձեր գլուխները խոնարհեցեք, որ մեր նավն անվնաս անցնի ալիքների վրայով:

Եթե այս բոլորը քիչ է, որ Կամմոյի որդի Կիվի-Կիմնո, դու ծովի հատակի ժայռերը գայլիկոնով փորփրիր, մեծ անցքեր բաց, որ ալիքների սաստկությունը մեղմանա և մեր նավն անվնաս անցնի այս տեղանքով:

Ով սահանքների տիրակալ Մելաթար, դու վտանգավոր ջրապտույտների վրայով վուշից հյուսած պարաններ կապիր, որ մեր նավն անվնաս անցնի այդ պարանների վրայով. այնպես արա, որ նույնիսկ անփորձ թիավարողն էլ նավակն անցկացնի ջրապտույտներով:

Եթե այս բոլորը քիչ է, ով դու երկնքի ու երկրի տեր բարձրյալդ Ուկկո, զսպիր ալիքները, հատակից դուրս ցցված ժայռերը մամուռ դարձրու, սանձահարի սահանքի որոգայթները, որ մեր նավն անվտանգ անցնի»:

Եվ Ուկկոն կատարեց հերոսի խնդիրը. Վեյնեմեյները նավն առաջ մղեց. նավն անցավ բոլոր խոչ ու խուրթերի, սահանքների և փրփրադեզ ալիքների վրայով և առաջ սուրաց: Բայց քիչ անց հանկարծ նավը կանգնեց. ինչքան թիավարում էին, էլ տեղից չէր շարժվում՝ ո՛չ առաջ, ո՛չ ետ:

Ճարտար դարբին Իմարիները, նրա հետ նաև ուրախ Լեմմինկայները նորից ու նորից թիերը գործի դրին, բայց նավն անշարժ էր իր տեղում:

Այն ժամանակ ծերուկ իմաստուն Վեյնեմեյները ասաց.

«Դու, ուրախ Լեմմինկայներն, թեքվիր ու նայիր, ինչո՞ւ է մեր նավը տեղում անշարժ կանգնել, գուցե թե ծովի հատակի մամուռներն են փաթաթվել կամ թե քարի է դեմ առել»:

Լեւոնինկայները թեքվեց. գուլյալ ջրերի միջից մի լավ գննեց նավի տակն ու շուռ գալով ասաց.

«Մեր նավը ոչ քարի է դեմ առել, ոչ էլ մամուռներ են փաթաթվել նրան: Նավը նստել է գայլաձկան մեջքին, ծովային այդ շան թիկունքին»:

Վեյնեմեյներն ասաց.

«Ծովում փորձանքն անպակաս է. դե, որ նստել ենք գայլաձկան մեջքին, քաշիր թուրդ և սպանիր ծովային այդ շանը»:

Ուրախ կտրիճ Լեւոնինկայները քաշեց թուրը և այնպես ամուր խփեց ալիքներին, որ զորեղ թափից ինքն էլ ընկավ ալիքների մեջ:

Իմարիներն անմիջապես բռնեց նրա գլխի մագերից, ջրից հանեց, բերեց նավն ու ասաց.

«Հարյուրավոր մարդիկ հասակն առել են, բեխ էլ ունեն, մորուք էլ, բայց հո բոլորն էլ հերոս չեն դառնա»:

Իմարիները քաշեց թուրը և թափով զարկեց: Թափն այնքան ուժեղ էր, որ սուրը ջարդվեց՝ երկու կտոր եղավ, բայց գայլաձկան թեփուկներին անգամ չդիպավ:

Բարկացավ ծերունի Վեյնեմեյները և ասաց.

«Դուք հասուն տղամարդիկ եք, բայց մի երեխայի չափ խելք չունեք. հապա վայե՛լ է հերոսին այսպես անշնորհք գործել»:

Ծերուկ երգասացը քաշեց իր թուրը և զորեղ բազուկներով այնպես ամուր և անվրեպ զարկեց, որ թուրը խրվեց գայլաձկան մարմնի մեջ. հետո արդեն թուրը որսով հանդերձ բարձրացրեց և գայլաձուկը նետեց նավի հատակին: Մինչ նավն առաջ էր ընթանում դեպի Պոխյոլա, նավի վրա գտնվող տղաներն ու աղջիկներն ահագին ձուկը կտրտեցին, գլուխը բաժանեցին մարմնից և մի լավ ճաշ պատրաստեցին:

Ճաշից հետո գայլաձկան գլխի ու մարմնի ոսկորները մի ահագին կույտ կազմեցին: Վեյնեմեյները նայեց ոսկորներին և այսպես խոսեց.

«Ասա՛ ինձ, ճարտար դարբին Իմարիներն, եթե այս գայլաձկան ահռելի ժանիքները և ծնոտը նետենք քո դարբնոցի հնոցի մեջ, ուր դու այնքան հրաշալի բաներ ես կոփում, ի՞նչ կստացվի դրանցից»:

Իմարիները պատասխանեց.

«Ոչինչ չի ստացվի այդ ձկան ոսկորներից. նույնիսկ ամենահմուտ վարպետը դրանցից ոչինչ չի կարող ստեղծել. ավելի լավ է ծովը նետիր, թող կորչի գնա»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյները ասաց.

«Այս ոսկորներից կարելի է շատ լավ երաժշտական գործիք՝ բազմալար Կանտելե սարքել և նրբին նվագով ու երգերով մարդկանց ուրախացնել»:

Եվ ինքը, ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը, սկսեց սարքել Կանտելեն: Գայլաձկան ծնոտը, ոսկորները տաշեց նրբացրեց, իրար հարմարեցրեց, Հիյսիի ձիու մազերից լարեր սարքեց՝ քաշեց գործիքի ատամների վրա և ահա՛, պատրաստ էր բազմալար Կանտելեն:

Բայց ո՞վ պիտի նվագի գործիքի վրա: Ծովափ էին հասել, այնտեղ հավաքվել էին շատ ծերեր և ջահելներ՝ տղա ու աղջիկ: Եվ ահա, նրանք փորձեցին նվագել, բայց միայն տնկտնկոց էր լսվում և տհաճ աղմուկ:

Լեմմինկայնենն ասաց.

«Դուք անխելք տղաներ և անբան աղջիկներ, դուք չգիտեք նվագել, չեք կարող այս սիրուն գործիքից անուշ երգեր կորզել. տվեք դնեմ ծնկներիս վրա և տեսե՛ք, թե տասն մատներս լարերին խփելով, ինչպիսի քաղցր նվագով ձեզ կգարմացնեմ»:

Լեմմինկայնենը սկսեց մատներով խփել լարերին՝ բան դուրս չեկավ, Կանտելեն այս ու այն կողմ շուռ տվեց, նորից մատներով խփեց մեկ այս լարին, մեկ մյուսին, բայց բացի տհաճ աղմուկից ոչինչ չստացվեց:

Մի կույր մարդ, երբ լսեց այդ աղմուկն ասաց.

«Դադարեցրեք այդ անպիտան աղմուկը: Մարդու ականջները կարող են իլանալ նման դժոխոցից: Քանի որ այդ գործիքի վրա անհնար է մի լավ երգ նվագել, ավելի լավ է ծովը նետեցեք, թող կորչի անդունդների մեջ»:

Նույն բոպելին լարերը ձայն տվին և Կանտելեն խոսեց.

«Չե՛մ ուզում կորչել ծովի անդունդներում. ինձ հանձնեցեք վարպետ երգչին և նրա հմուտ ձեռքերը, որ ստեղծեցին ինձ՝ այդ նույն հմուտ ձեռքերն ու մատները, երբ շարժվեմ իմ լարերի վրա՝ դուք շատ դուրեկան, հոգեզմայլ նվագներ կլսեք»:

Եվ հանդիսավորապես Կանտելեն դրին հավերժական երգասացի ծնկներին. այն մարդու, որ մե՛ծ վարպետությամբ սարքեց բազմալար գործիքը:

## **Ռ-ունա ԽԱ**

Վեյնեմեյնենը նվագում է. Կանտելեի նվագն այնքան հուզիչ է, վարպետի երգն այնքան զմայլելի, որ լսողների աչքերից արցունք է հոսում: Արցունք է հոսում նաև Վեյնեմեյնենի աչքերից. նրա արցունքները գլորվում, ընկնում են ծովի հատակը և մարգարիտներ դառնում

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը ելավ ծովափին փռված ընդարձակ մարգագետինը, որ անտառին կից էր, բարձրացավ բլուրը, նստեց մի քարի վրա և Կանտելեն ձեռքն առավ ու իր վարժ մատներով սկսեց նվագել:

«Եկե՛ք, բոլորդ եկե՛ք ու լսեցեք այս հավերժական ռուները, որ ես պիտի երգեմ Կանտելեի նվագի ներդաշնակությամբ»:

Եվ ձկան ոսկորներից սարքված բազմալար գործիքի վրա սահեցին հավերժական երգչի մատները. անմահական նվագի անուշ գեղգեղանքը փովեց-տարածվեց չորս կողմի վրա:

Դեռ երբեք Կալեվալայում այդպիսի դուրեկան երգեր չէին լսվել:

Եվ ահա անտառի բոլոր կենդանիները, բոլորն ուլքեր չորս թաթ ունեին, որը վազքով, որը ցատկոտելով շտապեցին հասնել այնտեղ, որտեղից լսվում էր թովիչ երգի ձայնը:

Ճյուղերից ճյուղ էր թռչկոտում սկյուռը, որ ավելի մոտից լսի երգչին:

Անտառի խորքից վազքով եկավ եղջերուն:

Գայլն իր որջում զարթնեց երգի ձայնից և վազեց դեպի բլուրը, որ լավ լսի հզոր երգասացին:

Անտառի թավուտներից, խիտ եղևնիների ու կեչիների արանքից դուրս վազեց արջը, ինչ արգելք կար առաջին, ցատկեց անցավ նրանց վրայով, բայց տեղ հասավ ամենքից վերջը. հասավ թե չէ ճանկերն իրան հավաքեց, բերանը փակեց, որ սուր ատամները չերևան և սուս ու փուս սկսեց ականջ դնել երգչին:

Անտառի խորքից դուրս եկավ նաև անտառի տիրուհին: Չուզվել-զարդարվել էր մայրը, ինչպես նաև իր սիրունիկ աղջիկները, ականջներին ոսկե օղեր էին կախել, կապույտ գուլպաներ էին հագել և կարմիր ժապավեններ կապել: Եկան նաև անտառի տիրուհու որդիները: Եկան հզոր երգչի մոտ և զմայլված լսում էին նրա անմահական երգերը:

Օդում թռչող բոլոր թևավորները թռան եկան, նստեցին ծառի ճյուղերին և լսում-լսում էին երգչին:

Հզոր արծիվն իր իսկ ձագերին թողեց բնում և ինքը թռավ հասավ ու նստեց կեչու ծառին. նրա հետ տեղ հասավ նաև բազեն. նա էլ նստեց եղևնու ծառին և բոլորն հայի-մայի եղած լսում էին Կալեվալայի երգասացին:

Նույնիսկ փոքրիկ սարեկները, տարինոսները, արտույտները, որ այնքան զմայլելի գեղգեղում էին՝ հարյուրներով, հազարներով եկան ու ծառերի ճյուղերին թառած հմայված լսում էին անուշ երգն ու նվագը:

Բաղերն էլ գետերի վրա լողալով տեղ հասան և մյուս թևավորների հետ սկսեցին լսել ծերունուն:

Լուսնի և արևի դուստրերը, որոնք ոսկյա-մետաքայա թել էին մանում, հենց որ երգի ձայնը լսեցին, թեշիկը ձեռքներից վայր ընկավ, ոսկյա թելը կտրվեց: Ամեն ինչ թողին նրանք, հասան այն բլուրը և կանգնեցին ծառի տակ ու զարմացած-հիացած լսում էին գմայելելի երգերը:

Չրում լողացած ոչ մի արարած չմնաց, որ լողալով չհասներ ծովափ և չունկնդրեր Վեյնեմեյնենի երգն ու նվագը:

Գայլաձուկը, սիգը, լուստին և բոլոր տեսակի մեծ ու փոքր ձկները, ծովի ամենախոր տեղում լսեցին երգի ձայնը և շտապեցին ավելի մոտից ունկնդրելու հզոր երգչին:

Ծովի տիրակալ Ախտոն, սահանքների, ջրապտույտների վրա իշխող ծովաբնակը նույնպես իր գավակներով եկավ ու երբ լսեց երգչին, ասաց.

«Կյանքումս առաջին անգամն է, որ լսում եմ այսպիսի սքանչելի նվագ և այսպիսի դուրեկան, իմաստուն երգեր»:

Վերջապես ծովի տիրուհին բարձրացավ ծովի անդունդներից, զգուշորեն նստեց մի հրվանդանի վրա, ուսերից ետ տվեց ծովախոտերը և սկսեց լսել ծերուկ երգասացին. այնքան տարվեց երգի հմայքով, որ աչքերը փակեց և երազների մի նոր աշխարհ պատկերացավ նրան.

Եվ ով լսում էր Վեյնեմեյնենի երգն, ավելի էր զորանում նրա եռանդը, բուռն էր դառնում ապրելու տենչը: Չէ՞ որ այդ դյուրթիչ երգերն ունկնդրում էին երկնի, երկրի և ծովի արարածները. բոլորը, բոլորը, ովքեր կյանք էին տենչում:

Եվ այսպես ծերուկ, իմաստուն Վեյնեմեյնենը երգեց մեկ օր, երկու օր, երգեց արևի ճառագայթների ներքո, լուսնի և աստղերի շողերի տակ: Չմնաց ո՛չ մեկ հերոս, ո՛չ մեկ քաջ այր, չմնաց ո՛չ մեկ տիկին, թե փարթամ հյուսքերով աղջիկ, որի սիրտը չհուզվի և լաց չլինի այդ հոգեգմայլ երգերից:

Լալիս էին ջահելները և ծերերը, ազապները և ամուսնացածները, լալիս էին նորահարսերը և դեռահաս աղջիկները. այնքան հրաշալի, այնքան կախարդիչ էին չքնաղ երգի ու նվագի հնչյունները:

Լաց էր լինում նաև ծերունի Վեյնեմեյնենը: Վարար հոսում էին արցունքները և կաթիլները սահում էին նրա դեմքի վրայով ու այդ կաթիլները, որոնք հապալասի պտուղի չափ էին, ծիծեռնակի ձվից էլ մեծ՝ գլոր-գլոր ընկնում էին այտերի վրա, հետո մորուքի վրայից գլորվելով ընկնում էին կրծքին, ապա ծնկներին, այնտեղից էլ սահելով-գլորվելով ընկնում էին ոտքին, ապա ծովափի ավազներին: Ծովի ալիքները հորձանք տալով խփեցին ավերին և այդ կաթիլները, որ թափվեցին հզոր երգչի աչքերից՝ տարան ծովի հատակը:

Իմաստուն Վեյնեմեյնենն ասաց.

«Արդյոք այս ջահելների մեջ, այս կայտառ տղաների շարքերում, չկա՞ այնպիսի մեկը, որ կարողանա ծովի հատակից հանել այդ արցունքի կաթիլները»:

Չահելները, նրանց հետ միասին նաև ծերերը, պատասխանեցին.

«Ո՛չ, մեր մեջ չկա այնպիսի մեկը, որ կարողանա ծովի հատակից հանել արցունքի կաթիլները»:

Այն ժամանակ ծերուկ Վեյնեմեյնենը դիմեց ագռավին.

«Այ դու սևուկ ագռավ, ծովի հատակից բեր իմ արցունքի կաթիլները, և ես դրա փոխարեն քեզ կտամ գույնզգույն փետուրներ»:

Բայց ագռավը չկարողացավ կատարել ծերուկի խնդիրը:

Այն ժամանակ ծերուկը դիմեց կապույտ փետուրներով բադին.

«Ով կապտափետուր բադիկ, դու հաճախ ես սուզվում ջրի մեջ մինչև հատակը, այս անգամ էլ իջիր և հատակից հավաքիր բեր իմ արցունքի կաթիլները: Դրա փոխարեն ես քեզ կտամ փայլփլուն փետուրներ»:

Բադիկը սուզվեց ծովի հատակը և անդունդներից հավաքեց-բերեց արցունքի կաթիլներն ու դրեց հավերժական երգչի ափի մեջ: Արցունքի կաթիլները մարգարիտներ էին դարձել՝ հապալասի պտուղի չափ, ծիծեռնակի ձվից էլ մեծ և կարող էին զարդարել արքայական թագերը, փայլփլել կանանց պարանոցին:

Իսկ բադիկն այն օրից ունեցավ փայլփլուն փետուրներ, կարծես հյուսված ծիածանի յոթը գույներից:

## **Ռուսա ԽԲ**

Կալեվալայի դյուցազունները մեծ դժվարությամբ նավն են բերում հրաշք-ինքնադաց Սամայն

Ծերուկ Վեյնեմեյնենը, ճարտար դարբին Իվարիները և Լեմմինկայները, նույն ինքը կտրին Կաուկոմեյլին, նավարկեցին ցերեկ և գիշեր հանդարտ ծովի վրայով դեպի Պոխյոլան, ուր հերոսներին ծովն են նետում և կտրիճներին ոչնչացնում են:

Առաջին թիավարը Իվարիներն էր և երկրորդ թիավարը ուրախ Լեմմինկայները: Վեյնեմեյնենն էլ շարունակ դեկի մոտ էր և հմուտ ձեռքերով ուղղություն էր տալիս նավին: Անցան փրփրուն ալիքների վրայով և վերջապես հասան Պոխյոլայի ծովափը: Ձյութած, կարած նավը հանեցին ծովափ և իրենք գնացին տանտիրուհու մոտ:

Պատավ Լոուիսին հարցրեց.

«Ի՞նչ կասեք, հերոսներ, ի՞նչն է ձեր գալու նպատակը»:

«Մենք եկել ենք պսաղուն կափարիչով Սամայոյի համար. մենք ուզում ենք, որ հրաշք-ինքնադացի բարիքներից մեր արդար բաժինն ստանանք»:

Լոուիսին այսպես խոսեց.

«Սկյուռի մորթին երեք կես չեն անում, ոչ էլ կաքավն են երեք մարդու մեջ բաժանում: Պսաղուն կափարիչով ինքնադաց Սամայոն այստեղ շատ լավ է աշխատում. նա պղնձակուռ անձավումն է, և ես եմ նրա միակ տերն ու տիրակալը»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենն ասաց.

«Եթե դու չես ուզում մեր արդար բաժինը հոժար կամքով տալ, ապա մենք ամբողջ Սամայոն գոռով կվերցնենք և կտանենք մեր նավը»:

Այստեղ Պոխյոլայի տիրուհին շատ զայրացավ, գնաց ու հավաքեց իր մարդկանց. որն եկավ թրով, որը նիզակով, որը նետով ու աղեղով, որն էլ ձեռքն ընկած զենքով, որպեսզի Վեյնեմեյնենին և իր մարդկանց ոչնչացնեն:

Բայց ծերուկ Վեյնեմեյնենը չվախեցավ. նա անմիջապես Կանտելեն ձեռքն առավ և սկսեց երգել: Չմայլելի էր նրա երգը. հայիլ-մայիլ եղած լսում էին տղամարդիկ ու կանայք, ծերերն ու երեխաները: Եվ թովիչ երգի ազդեցության տակ տղամարդիկ ուրախացան, կանանց դեմքին ժպիտն էր փայլում: Ծատերը լաց եղան:

Այն ժամանակ ծերուկը պայուսակից հանեց քնաբեր նետեր և արձակեց պոխյոլցիների վրա: Բոլոր զինված կտրիճները կողքի ընկան և աչքերը փակեցին, գյուղի բոլոր տղամարդիկ, մեծը թե փոքրը, խորը քուն մտան:

Վեյնեմեյնենն իր մարդկանցով գնաց պղնձակուռ անձավը, ուր պատվանդանի վրա դրված-ամրացված էր պսաղուն կափարիչով Սամայոն: Պատվանդանն ուներ երեք ոտք՝ ամեն մեկ ոտքի երկարությունը ինը սաժեն էր և տարբեր ուղղություններով խրված էր գետնի մեջ: Քարանձավի պողպատակուռ դուռն էլ տասը սողնակով և ինը կողպեքով կողպված:

Ծերուկ Վեյնեմեյնենը մեղմ ձայնով երգեց պղնձակուռ անձավի մոտ և նրա երգի ազդեցությամբ ամուր դռների օղակներն ու սողնակները թուլացան:

Ճարտար դարբին Իվարիենն էլ գործի անցավ, ձեթ քսեց դռան սողնակներին, ապա կողպեքներին, որ առանց ճոնչալու հեշտ բացվեն. ձեռքով ետ հրեց սողնակները և քիչ հետո Կալեվալայի հերոսների առաջ բացվեցին անձավի դարպասի կողպեքները, կրնկի վրա շուռ եկան դռները:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Ով դու ուրախ Լեմմինկայնեն, իմ հավատարիմ բարեկամ, մտիր անձավը և այնտեղից դուրս բեր պսպղուն կափարիչով հրաշք-ինքնադաց Սամպոն»:

Ուրախ Լեմմինկայնենը, որ ամեն դժվար գործի պատրաստ էր, իսկույն առաջ անցավ և ասաց.

«Բարձրյալ Ուկկոն ինձ այնպիսի դյուցազնական ուժ է տվել, որ ես միայն աջ ոտքիս կրունկով տեղահան կանեմ Սամպոն ու կտանեմ»:

Եվ մոտեցավ, որ վերցնի Սամպոն. չէ՛, տեսավ շատ դժվար է տեղից շարժել: Ծնկեց գետնին, երկու ձեռքով գրկեց Սամպոն, բայց հրաշք-ինքնադացը պինդ կպած էր պատվանդանին: Չէ՛ որ պսպղուն կափարիչով Սամպոն երեք ոտքերով, ամեն մեկն ինը սաժեն, խրված էր գետնի մեջ:

Գնացին գտան մի հսկա ուժեղ ցուլ. նրա ամեն կոտոշը մեկ սաժենից ավելի երկար էր. ռեխը մեկ ու կես սաժեն: Յուրը լծեցին գուլթանին և այդ գուլթանով Սամպոյի պատվանդանի հիմքը փորեցին և հրաշք-ինքնադացը տեղից շարժեցին: Երեք դյուցազունները՝ ինքը իմաստուն Վեյնեմեյնենը, ճարտար դարբին Իլմարինենը և այն մեծագոր դյուցազն Լեմմինկայնենը, պղնձակուռ անձավից վերցրին պսպղուն կափարիչով Սամպոն և տարան-դրին նավը: Դյուցազունները նավը դեպի ծովը հրեցին, սկսեցին նավարկել:

Այստեղ Իլմարինենը հարցրեց.

«Որտե՞ղ պիտի տանենք Սամպոն, որտե՞ղ պահենք պսպղուն կափարիչով հրաշք-ինքնադացը, որ ջաղու պառավ Լոուխին չիմանա, նրա չար աչքից հեռու լինի մեր Սամպոն»:

Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Սամպոն կտանենք այն հեռավոր կանաչ կղզին և չար աչքից հեռու կպահենք: Այնտեղ միշտ խաղաղ է եղել, թշնամին այդ կղզին ոտք չի դրել և թուրն ու նիզակը չի վրդովել այնտեղի բնակիչների հանգիստը»:

Վեյնեմեյնենը շատ ուրախ է, որ ջաղու Լոուխիից ազատել է Սամպոն. նա ոգևորում է կտրիճներին.

«Հապա արագ հեռանանք դաժան Պոխյոլայից. շտապե՛նք մեր սիրելի հայրենի աշխարհը. բարենպաստ քամի, դու օգնիր, որ նավն ավելի արագ շարժվի, թիերին ուժ տուր, որ նավն հեշտությամբ անցնի կապույտ ծովի ջրերի վրայով»:

Լեմմինկայնենը, որ Իլմարինենի հետ թիավարում էր, ասաց.

«Ինչքան էլ թիավարել եմ, միշտ նավի մեջ նստածներից մեկը երգել է. այսօր լուռ է և երգի ձայնը չի լսվում, չի տարածվում ալիքների վրա»:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Հիմա երգելու ժամանակ չէ: Ուշքդ ու միտքդ կտաս երգին և կմոռանաս, որ ձեռքիդ թիեր կան: Իսկ եթե թիերը լավ չբանեցնես, ճամփից կշեղվես և փորձանքի կհանդիպես»:

Ուրախ Լեմմինկայները ասաց.

«Միևնույն է, այս գեղեցիկ ցերեկը կանցնի, վրա կհասնի մութ գիշերը, կուզես երգիր, կուզես լուռ մնա, ուր ով է խավարը կիջնի ծովի վրա»:

Նավը շարունակեց սահել կապույտ ծովի վրայով. անցավ մեկ օր, երկու օր և ահա՛, Լեմմինկայները նորից դիմեց Վեյնեմեյներին.

«Ինչո՞ւ դու, ծերուկ երգասաց, չես երգում. չէ՞ որ տիրացել ես Սամպոյին, հրաշք-ինքնադացը հայրենիք ես տանում»:

Այսպես պատասխանեց երգիչը.

«Դեռ շուտ է խրախճանք սկսել. այն ժամանակ միայն պիտի զվարճանանք, երբ հայրենի տուն հասնենք, երբ Սամպոն գործի գցենք»:

Լեմմինկայները, այն ջահել դյուցազնը ասաց.

«Եթե ես քեզ պես նավի դեկի մոտ նստած լինեի, ամբողջ ձայնովս կերգեի, բայց քանի որ դու չես ուզում երգել, թեև իմ ձայնը քո ձայնի պես դուրեկան չէ, բայց պիտի երգեմ»:

Եվ այդ ուրախ տղան սկսեց երգել. նրա երգը ոչ թե երգի էր նման, այլ գոռգոռոցի:

Երգի ձայնը հասավ ծովափ, նրանից էլ դենը, անցավ սար ու ձոր, հասավ ուրիշ ծովեր: Այդ ձայնի վրա կռունկը վախեցած, թևերը թափ տվեց և թռավ հասավ Պոխյոլա ու նրա տիրուհուն զարթնեցրեց: Լոռիսին աչքերը բացեց և ի՞նչ տեսնի. չէ՛, ամեն ինչ, կովերն ու աջառները տեղումն են, ցորենից ոչ մի հատիկ չի պակասել: Նա շտապ գնաց պղնձակուռ անձավը և սկսեց գլխին վայ տալ ու ճչալ.

«Վա՛յ, վա՛յ, ինձ, թշվառիս, այստեղ օտարներն են մուտք գործել. բոլոր կողպեքները ջարդված են, բոլոր դռները կրնկահան են արված. ուրեմն փախցրել, տարել են իմ հրաշք-ինքնադաց Սամպոն»:

Լոռիսին քիչ էր մնում զայրույթից միջից երկու կես լիներ. տեսնում էր, որ իր գորությունը թուլանում է. նա այսպիսի խոսքերով դիմեց մեզ-մառախուղի տիրակալ Ուուտարտուին.

«Ով դու հզոր տիրակալ, շուտով առաքիր թանձր մուժ ու մառախուղ. երկնքից ուղարկիր թանձրացրած մեզ ու դուման, որ ծածկի ամբողջ ծովի մակերեսը և Վեյնեմեյներն իր կտրիճներով ճամփան մոլորի»:

Եթե այդ քիչ է, ով դու ծովի աստծու որդի՝ Իկո-Տուրսո, ծովի հատակից բարձրագագաթ ժայռեր դուրս ցցիր, որ Կալեվալայի կտրիճների նավը դիպչի այդ ժայռերին՝ խորտակի և կտրիճները ծովի անդունդներում խեղդվեն, իսկ դու՝ Սամպոն, վերցրու նավից և վերադարձրու Պոխյոլա:

Եթե այդ էլ քիչ է, ով դու Ուկկո, բարձրյալդ երկնային, մեր ամենքիս տեր ու տիրակալ, փոթորիկ բարձրացրու, որ ալիքները զորեղանան և խորտակեն Վեյնեմեյնենի, նույն ինքը Սուվանտոլայնենի նավը»:

Մեզ-մառախուղ իջավ ծովի վրա. երեք օր ու գիշեր այնպես թանձր էր մուժն ու դումանը, որ ոչ մի բան չէր կարելի նշմարել:

Երրորդ օրվա վրա ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Նույնիսկ ամենաթույլ տղամարդը չի վախենա մուժից, չի ընկճվի, թե չորս կողմը մառախուղն է պատել»:

Նա հանեց թուրը և խփեց ծովի ջրերին. կարծես թե թրից մեղր ծորեց: Քիչ անց նրա ուժեղ հարվածից մեզն ու մառախուղը փարատվեցին, նորից երևաց կապույտ լայնարձակ ծովը՝ հորիզոնից հորիզոն:

Բայց քիչ անց նավի չորս կողմից էլ ուժեղ աղմուկ լսվեց. ջուրն սկսեց ցայտել նավի հատակին: Նավը ճոճվում էր ալիքների վրա և աղմուկն այնքան խլացուցիչ էր, որ անգամ Իլմարինենը գլուխը ծածկեց և աչքերը փակեց:

Իսկ Վեյնեմեյնենը չվախեցավ. նա նայեց փոթորկոտ ծովի ալիքներին և հրաշք տեսավ. ծովից գլուխը դուրս հանեց Իկո-Տուրսոն և բռնելով նավի եզրից, ուզում էր բարձրանալ նավի վրա: Ծերունի երգասացն անմիջապես բռնեց նրա ականջներից, ջրից դուրս քաշեց և խիստ ու բարկացած հարցրեց.

«Ով դու Իկո-Տուրսո, ինչո՞ւ ես ջրի երես ելել, ինչո՞ւ երևացիր Կալեվալայի գավակների աչքին»:

Իկո-Տուրսոն ոչ ուրախացավ և ոչ էլ շատ վախեցավ, որ Վեյնեմեյնենի ձեռքն է ընկել, բայց պատասխան չտվեց:

Ծերուկ Վեյնեմեյնենը երկրորդ և երրորդ անգամ հարցրեց.

«Դու պատասխան տուր ինձ, ինչո՞ւ ես անդունդներից ջրի երես ելել»:

Վերջապես Իկո-Տուրսոն պատասխանեց.

Ես նրա համար եմ ծովից դուրս եկել, որ Կալեվալայի ամբողջ ցեղը ոչնչացնեմ, որ Սամպոն փախցնեմ տանեմ Պոխյոլա: Բայց տեսնում եմ, որ քեզ չեմ կարող հաղթել հզոր երգասաց Վեյնեմեյնեն. այժմ եթե ինձ ազատ թողնես, եթե կյանքս խնայես, ես էլ երբեք մարդու աչքին չեմ երևա»:

Վեյնեմեյնենն անմիջապես նրան բաց թողեց և այսպիսի պատվեր տվեց.

«Ով դու Իկու-Տուրստ, որդիդ ծովի տիրակալի, այսօրվանից մինչ հավիտյան այլևս երբեք չբարձրանաս ծովի հատակից և մարդկանց աչքին չերևաս: Քանի արևն ու լուսինը մեզ իրենց լույսն են պարզևում, դու մնա քո ծովային անդունդներում»:

Ծերուկ Վեյնեմեյները նորից նավն առաջ մղեց, բայց քիչ անց, Ուկկոն, հաստիչը երկնային, ուժեղ փոթորիկ ուղարկեց ծովի վրա: Փչեցին հողմերը արևելքից, արևմուտքից, հարավից, բայց ամենակատաղին հյուսիսային քամին էր: Իր ճամփին նա տերևաթափ արեց բոլոր ծառերը, արոտներից, դաշտերից, այգիներից պոկեց բոլոր ծաղիկները, հասկերն ու թփերը, ապա գետնից ավազե մի ամպ բարձրացրեց և բոլորը շարտեց ծովի վրա:

Դեռ ոչ ոք իր կյանքում այդպիսի ահռելի փոթորիկ չէր տեսել: Նավը ծառս-ծառս էր լինում և, ոնց որ տաշեղը, օրորվում ալիքների վրա: Մի ուժեղ ալիք թափով ընկավ նավի վրա և այն հիասքանչ երաժշտական գործիքը ծովը նետեց: Գայլաձկան ոսկորից սարքված Կանտելեն կորավ ալիքների հորձանքում:

Ծերուկ Վեյնեմեյները շատ տխրեց և ասաց.

«Ափսո՛ս, կորավ իմ Կանտելեն: Նա ինձ շատ էր մխիթարում. երբ նվագում էի, երգերս հորդում էին աղբյուրի գուլյալ ջրի նման»:

Ճարտար դարբին Իլմարինենը շատ վախեցավ ահեղ փոթորկից և ասաց.

«Վայ մեզ, որ այս խարխուլ նավով ընկել ենք ահեղ ալիքների վրա. չեղած-չսված փորձանքի մեջ ենք ընկել»:

Վեյնեմեյները հորդորեց.

«Ծանր, դժվարին պահին ողբն ու լացը գործին չեն օգնի»:

Ապա երգասացն այսպես խոսեց.

«Դադարի՛ր ով փոթորիկ և հեռացի՛ր, գնա այնտեղ, որտեղից եկել ես. բավական է ինչ իմ նավը տատանվեց ալիքների վրա»:

Իսկ ուրախ Լեմմինկայները գործի անցավ և տախտակները, որ բերել էր հետը, հարմարին ամրացրեց նավի կողերին, որոնք վնասվել էին ալիքների հորձանքից, ապա կոծկեց նավի բոլոր ճեղքվածքները:

Փոթորիկն արդեն հանդարտվել էր և նավը կրկին առաջ սուրաց, թանկագին բեռը՝ հրաշք-ինքնաղաց պսպղուն կափարիչով Սամպոն տանելով դեպի հայրենիք:

## Ռունա ԽԳ

Պոխյոլայի տիրուհին ռազմական նավով հետապնդում է Կալեվալայի դուցազուններին

Լոուիսի ջադուն իր բոլոր մարդկանց հավաքեց, հարյուրի ձեռքը սրեր դրեց, մյուսներինը նիզակներ, հազարն էլ նետ ու աղեղով զինեց և բոլորին հրամայեց ռազմական նավը նստել:

Առագաստները բացվեցին, թիերը գործի դրին. պառավն իր մարդկանցով շտապում էր հասնել Վեյնեմեյնենի նավին, որ կալեվալացիներից խլի Սամպոն, վերադարձնի Պախյոլա:

Կապույտ ջրերի վրայով սահում էր Վեյնեմեյնենի նավը: Ծերուկը դիմեց Լեմմինկայնենին.

«Իմ հավատարիմ բարեկամ, բարձրացիր կայմի վրա և չորս կողմը նայիր. արդյոք հանգի՞ստ է ծովը, մեզ որևէ վտանգ չի՞ սպառնում»:

Այնտեղ, ուր պետք է ճարակություն և համարձակություն, ուրախ Լեմմինկայնենը միշտ պատրաստ է: Նա բարձրացավ կայմին, նայեց դեպի ետ, դեպի առաջ, ապա աջ և ձախ կողմերն ու ասաց.

«Մեր դիմացը երկինքը պարզ է, բայց ետևի կողմից սև ամպ է բարձրանում և մեր կողմն է շարժվում»:

Վեյնեմեյնենն ասաց.

Մի լավ նայիր, երկինքը պարզ է, ի՞նչ ամպի մասին է խոսքը, գուցե թե նավ է, որ գալիս է մեր ետևից»:

Լեմմինկայնենը երկրորդ անգամ ավելի ուշադիր նայեց և ասաց.

«Հեռվում կարծես թե կղզի է հայտնվել. կղզու վրա էլ ծառեր կան, ծառերի վրա էլ թառել են կաքավներ ու սոխակներ»:

Վեյնեմեյնենն ասաց.

«Ծովի վրա կաքավ ու սոխակ չեն լինում: Մեկ էլ նայիր, գուցե թե Պոխյոլայի այրերն են նավով մեզ հետապնդում»:

Լեմմինկայնենը երրորդ անգամ շատ ավելի ուշադիր նայեց և ասաց.

«Ծիշտ եք կռահել ծերուկ իմաստուն Վեյնեմեյնեն, եկողները հենց պոխյոլցիներ են: Հարյուր տղամարդ թիավարում է, հազարն էլ զինված՝ կռվի են պատրաստվում»:

Վեյնեմեյնենը, երբ ամբողջ ճշմարտությունն իմացավ, այսպես խոսեց.

«Հապա ճարտար դարբին Իվարինեն և դու ուրախ Լեմմինկայնեն և բոլոր թիավարողներիդ ո՛ւժ տվեք ձեր թևերին, արագ-թիավարեք, որ հեռանանք ջաղու Լոուխիի նավից»:

Բոլոր հերոս թիավարողները ուժ գործադրեցին, ինչքան էլ արագացրին նավի ընթացքը, բայց չկարողացան ազատվել պոխյուցիների նավի հետապնդումից:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը տեսավ, որ վտանգը մոտ է, ծանր ու թերթև արավ և ասաց.

«Ելքը կգտնեմ, հրաշքո՛վ պիտի ազատվենք»:

Շտապ պարկից հանեց մի կայծքար և այն շարտեց ծովն ու այսպես խոսեց.

«Այս կայծքարից թող ծովի մեջ մի ժայռ առաջանա, Պոխյուցիների նավը թող թափով դիպչի այդ ժայռին, ջարդ ու փշուր լինի և նավի տաշեղները թող ալիքների հորձանքի հետ կորչեն»:

Անմիջապես ծովի մեջ մի ժայռ գոյացավ, երկայնքով դեպի արևելք ձգվեց, լայնությամբ դեպի հյուսիս:

Ջաղու Լոուխին ժայռը չնկատեց. նրա նավը թափով դիպավ ժայռին և խորտակվեց: Պառավը մինչև ծնկները ծովը մտավ և ուզեց նավը ավի հանել ու սարքել, բայց տեսավ, որ այնպես են իրարից բաժանվել տախտակները, քամին առագաստներն այնքան հեռու է քշել, որ անհնար է նավը սարքի գցել: Այն ժամանակ ջաղու պառավը իր երկար մագերով նավի մի քանի տախտակը կապեց ուսերին իբրև թևեր, դեկը պոչ դարձրեց, նավի մեջ եղած բրիչներից մագիլներ սարքեց և ստացավ արծվի կերպարանք: Նա իր թևերին հարյուր զինված կտրին տեղավորեց, պոչին հազար նիզակավորներ, թռիչքով օդ բարձրացավ և սկսեց հետապնդել կալեվալցիներին: Թռչում էր արծիվ դարձած ջաղուն, թափահարում էր իր թևերը. մեկ թևը դիպչում էր ամպերին, մյուսը ծովի ալիքներին էր քսվում:

Ծովի գեղեցկուհի մայրը երևաց երգասացի աչքին ու ասաց.

«Ով դու ծերուկ Վեյնեմեյնեն, գլուխդ վեր բարձրացրու և մի պահ դեպի արևմուտք դարձիր»:

Վեյնեմեյնենը նայեց և ի՛նչ տեսնի. իր գլխավերևում մի սարսափելի թռչուն է պտտվում: Նրա գլուխը Պոխյուլայի տիրուհու գլխին է նման, մարմինը՝ արծվի: Եվ այդ հրեշը երբ նստեց նավի կայմին, նավն սկսեց տատանվել, կարծես թե ուժեղ փոթորիկ բարձրացավ:

Իվարինենն այդ պահին խնդիրք էր անում.

«Ով դու տիեզերքի տեր Ուկկո, դառն պատուհասից փրկիր քո ստեղծածին: Ով ամենակալ տեր, տուր ինձ հրեղեն շապիկ, որպեսզի ես անխոցելի մնամ և այս անիրավների դեմ կարողանամ կռվել և հաղթել»:

Իսկ Վեյնեմեյնենն այսպիսի խոսքերով դիմեց Լոուիսիին.

«Ով դու Պոխյոլայի տիրուհի, արի համաձայնիր, գնանք հասնենք մշուշապատ կղզին և Սամպոն բաժանենք քո երկրի և Կալեվալայի միջև»:

Պոխյոլայի տիրուհին խոսեց.

«Ես պիտի լինեմ Սամպոյի միակ տերը, ով ողորմելի Վեյնեմեյնենն. չեմ ուզում քեզ հետ հրաշք-ինքնադացը փայ-բաժին անել»:

Ասաց ու իր երկաթյա մագիլներով բռնեց Սամպոն, որ վերցնի տանի Պոխյոլա:

Այստեղ արդեն վրա հասավ ուրախ Լեմմինկայենը, իր հզոր թրով հարձակվեց ջադու պառավի վրա և սկսեց ուժեղ հարվածներ տեղալ նրա թևերին: Խփում է ու գոռում.

«Հապա, ով դուք այրեր, թե կռվող եք, ցած իջեք, հարյուրդ էլ ցած իջեք, որ կռվենք»:

Պառավ Լոուիսին այսպիսի խոսքեր ասաց Լեմմինկայենին.

«Ով դու ուրախ Կաուկոմելյի. դու չար զավակ ես. հարազատ մորդ խաբել ես: Դու նրան երդում ես տվել, որ վեց տարի, մինչև տաս տարի այլևս ոչ մի տեղ չես գնա՝ կռիվ չես անի, ինչքան էլ ցանկանաս ոսկի կամ արծաթ ձեռք բերել»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը հասկացավ, որ հասել է պահը, երբ պետք է ավելի վճռական գործի: Նա դուրս քաշեց կաղնյա ամուր-հաստատուն դեկը և ամուր խփեց ջադու պառավին:

Վեյնեմեյնենի հարվածով ջադուի թևերը ջարդվեցին:

Իվմարինենի հարվածով պոչը պոկվեց:

Լեմմինկայենի հարվածով էլ մագիլները ջարդվեցին:

Միայն մեկ մագիլը մնաց, որով պառավը կառչել էր Սամպոյին:

Լոուիսիի մարդիկ վար թափվեցին նրա թևերից. Լեմմինկայենը և Իվմարինենը թրերը քաշած իրենց քաջերով նրանց վրա հարձակվեցին:

Այդ ժամանակ ջադու Լոուիսին իր ողջ մնացած մագիլով նավից դուրս քաշեց պսպղուն կափարիչով Սամպոն:

Բայց հրաշք-ինքնադացը նրա ձեռքից փրթավ ընկավ ծովը, ջարդ ու փշուր եղավ: Կափարիչի և հրաշք-ինքնադացի կտորները սուզվեցին ծովի խորքերը:

Ծովի տիրակալ Ախտոն շատ ուրախացավ, որ Սամայոյի ծանր կտորները մնացին խորը հատակում և ծովը լցվեց անբավ հարստություններով:

Բայց ջարդված Սամայոյի և կափարիչի ավելի մանր կտորները ծովի ալիքների հորձանքի հետ ափ հասան, մնացին ավազների վրա:

Վեյնեմեյնենն այդ որ տեսավ ուրախացավ և այսպես խոսեց.

«Հրաշք ինքնադացի կտորները կդառնան այն սերմերը, որոնցից անհամար բարիքներ կստեղծվեն. դաշտերում կփարթամանա բերքը, անտառներում ամեն տեսակ պտուղներ կաճեն, արևն ավելի ջերմ կլուսավորի, լուսինն ավելի պայծառ փայլ կտա խավար գիշերին»:

Ջադու Լոուիսին այսպես ասաց.

«Ես կարող եմ այնպես անել, որ ձեր դաշտերն ու արոտները, այգիներն ու անտառները անբերի և անպտուղ մնան. ես լուսատուներին անձավում կփակեմ, այնպե՛ս, որ ոչ արևը կջերմացնի, ոչ էլ լուսինը փայլ կտա ձեր աշխարհին. հետո այնպիսի սառնամանիք կանեմ, որ ամեն շունչ ու կենդանի կսառչի: Թե այդ ամենը քիչ է, պողպատի կարկուտ կթափեմ ձեր գլխին, որ ամեն բույս ու կենդանի նրա հարվածներից ոչնչանան:

Անտառի խորքից ծուռթաթ, զորեղ ատամներով արջը կուղարկեմ, որ ձեր դաշտերն ու մարգագետինները ոչնչացնի, որ ձեր ձիերին խժռի, որ ձեր կովերի, աջառների նախիրն հոշոտի: Քո ժողովրդին հիվանդություններով ու քաղցով կհյուծեմ, կմեռցնեմ, այնպես որ քանի լուսինը երկնքում փայլփլում է, քո ցեղի անունը չի լսվի»:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Ով ջադու պառավ քո ոչ մեկ սպառնալիքն ինձ չի սարսափեցնում: Բարձրյալն Ուկկոն մարդկանց ճակատագրի տերն է: Ես ամեն ինչ տեսնում է և չի՛ թողնի, որ չարն անպատիժ մնա: Ես կապավիեմ նախախնամությանը և նա ինձ կօգնի, որ մեր ցանքերին, դաշտերին և արտերին ոչ մեկ ցեց ու ճիճու չմոտենա և չվնասի: Ով Պոխյոլայի տիրուհի, թե կարող ես դու ցա՛վն ու դժբախտությունը անձավները տար և փակի տակ դիր և ոչ թե սպառնա մարդկանց կյանք պարզևող արևն ու լուսինը ժայռերի մեջ թաքցնել:

Դու սառնամանիքով և կարկուտով մի սպառնա. դրանք ավելի շուտ քո դաշտերն ու ցանքերը կվնասեն: Իսկ զորեղ ատամներով ծուռ թաթ արջը թող քո նախիրները խժռի»:

Պոխյոլայի տիրուհի Լոուիսին այսպես խոսեց.

«Այն, իմ հզորությունն այսօրվանից թուլացավ. ծովի հատակը սուզվեց իմ հարստությունը, իմ հրաշք-ինքնադաց Սամայոն»:

Եվ լաց ու կոծով պառավը Պոխյոյա վերադարձավ: Հրաշք ինքնադացի միայն մի քանի փշրանքները նա կարողացավ իր երկիրը տանել, դրա համար էլ նրա երկիրն աղքատ մնաց և լապլանդացիների հացը միշտ պակաս է:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը ծովափից հավաքեց Սամայոյի և պսպսղուն կափարիչի կտորները, տարավ սփռեց Կալեվալայի դաշտերում, որ ամեն ինչ այնտեղ առատ լինի, որ ցորենի հասկերը լիքը լինեն և տատիկները սննդարար հաց թխեն, որ գարին առատ բերք տա, և հարսներն անուշ գարեջուր պատրաստեն:

Իմաստուն Վեյնեմեյնենն այսպիսի խոսքերով դիմեց աստծուն.

«Ով դու բարձրյալդ Ուկկո, օգնի՛ր, որ մեր չքնաղ Կալեվալայում ապրենք երջանիկ. մինչև մեր կյանքի վերջը պատվով ապրենք մեր հայրենիքում:

Ազատի՛ր մեզ չար մարդկանցից և նենգ կանանցից:

Սանձահարիք ծովի և ցամաքի չար ոգիներին:

Օգնի՛ր, որ քո որդիներին ոչ մի չարագործ չվնասի. գիշեր ցերեկ նրանց պահապան եղիր, պաշտպանիք դաժան քամիներից ու ցրտերից:

Թող քո բարի կամքով իմ հայրենիքը ծաղկի և բարգավաճի, թող ոչ մի չարագործ մեր մարդկանց չվնասի, մեր բերքը չփչացնի, մեր վաստակը չխլի, քանի երկնքում փայլում է պայծառ լուսինը, քանի մարդկանց ջերմացնում է կենսատու արևը»:

## **Ռ-ունա ԽԴ**

Վեյնեմեյնենը սարքում է նոր Կանտելե և նորից իր երգով ու նվագով զարմացնում է աշխարհը

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենն այսպես խոսեց ինքն իր հետ.

«Այժմ լավ է, որ գնամ մտնեմ իմ հարագատ հարկի տակ և ուրախանամ, բայց ինչպե՞ս. ինձ մխիթարող Կանտելեն ընկել է ծովի խորերը, ձկների վտառների մոտ. իսկ ծովի տիրակալ Ախտոն երբեք Կանտելեն ինձ չի վերադարձնի»:

Ապա դիմեց ճարտար դարբնին.

«Ով դու Իլմարինեն, երեկ ամբողջ օրն աշխատել ես, այսօր էլ աշխատիր և ինձ համար պողպատե երկար ատամներով մի փոցիս սարքիր: Ուզում եմ դրանով

ծովի հատակը, քարերի արանքում պատսպարված ձկների կեցած տեղը փոցխել, գուցե թե գտնեն, դուրս քաշեն Կանտելեն»:

Ճարտար դարբինը սարքեց Վեյնեմեյնենի ուզած փոցխը: Նրա ամեն մի ատամը պողպատից էր և հարյուր սաժեն երկարություն ուներ, բռնակն էլ պղնձից էր և հինգ անգամ ավելի երկար, քան ատամները:

Վեյնեմեյնենը վերցրեց փոցխը և գնաց դեպի ծովը: Ափին տեսավ երկու նավակ. մեկը հին էր, մյուսը նոր սարքված:

Ծերունին մոտեցավ նոր նավակին և ասաց.

«Նավակ իմ, ծովը մտիր և առանց իմ օգնության առաջ սուրա, այնպես որ կարիք չլինի, որպեսզի ես թիեր բանեցնեն»:

Նավակն իսկույն ծովն իջավ. Վեյնեմեյնը նստեց նավակի ներքին ծայրի նստարանին. նավը կապույտ հանդարտ ջրերի վրայով առաջ սուրաց: Եվ ծերունին իր երկար փոցխով սկսեց փոցխել ծովի հատակը: Ինչքան ասես մամուռներ, ինչքան ասես ծովային խոտեր հավաքեց ավի հանեց, բայց այնպես էլ Կանտելեն չգտավ, չկարողացավ այն հանել ծովի հատակից:

Ծերուկ երգասացը տուն դարձավ. տխուր-տրտում նստեց. գլխարկը թեք ընկավ և նա ինքն իր հետ այսպես խոսեց.

«Այլևս երբեք չեմ գտնի գայլաձկան ոսկորներից սարքված իմ հրաշալի Կանտելեն, զմայելելի երաժշտական գործիքը»:

Մյուս օրն անտառ գնաց Վեյնեմեյնենը և հանկարծ լացի ձայն լսեց. մոտեցավ, տեսավ, որ կեչի ծառն է դառն-դառն լալիս. հարցրեց.

«Այ դու ճերմակագգեստ ծառ, ինչո՞ւ ես լալիս»:

Կեչին պատասխանեց.

«Շատերը կարծում են, թե ուրախ են անցնում իմ օրերը: Ո՛չ, այդպես չէ, ես միշտ, ամառ թե ձմեռ ծանր հոգսերի մեջ եմ: Հապա ինքներդ դատեցեք: Գարունը գալիս է թե չէ, երեխաները սուր դանակով իմ ճյուղերն են պոկում-տանում, մի քիչ խաղ են անում, ապա դեն շարտում: Վրա է հասնում շոգ ամառը, հովիվները իմ կեղևներն են պոկում, զամբյուղ սարքում՝ մեջը պտուղներ լցնում: Ջահել աղջիկներն էլ արդեն իմ տերևներից պսակներ են հյուսում իրենց համար: Չմեռն էլ հեշտ չէ իմ վիճակը. դառն քամին քշում տանում է իմ կանաչ զգեստները և ես, սառնամանիքին մնում եմ մենակ, անօգնական. մեջքս խոնարհում եմ ու դողում: Այդ բոլորը չէ, մեկ էլ տեսար եկավ փայտահատը և վե՛րջ կյանքիդ»:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Այլևս լաց մի լինի իմ կանաչ բարեկամ, մի տխրիր, ով դու անտառի սպիտակագգեստ բնակիչ: Շուտով ամիթ կունենաս ուրախանալու և ծիծաղելու: Իսկ եթե լաց լինես, ապա արցունքների միայն ուրախության արցունքներ կլինեն»:

Եվ ահա՛ ծերուկ Վեյնեմեյնենը հմուտ ձեռքերով կեչիից մի նոր Կանտելե սկսեց սարքել. գործը լավ առաջ գնաց. մինչ ծերունին աշխատում էր, կկուն սկսեց գեղգեղալ. նրա ձայնը կոկորդից ելնելով դառնում էր ոսկյա կաթիլ և հատիկ-հատիկ թափվում չորս կողմը:

Ծերունին այդ հատիկներով Կանտելեն զարդարեց և լարերի համար հենակներ սարքեց. բայց որտեղի՞ց նարեր լարերը, որ հագցներ գործիքին և սկսեր նվագել:

Նա գնաց անտառի խորքը և մտածում էր, թե ինչի՞ց սարքի լարերը, որ Կանտելեն կատարյալ լինի: Տեսավ, պուրակում մի աղջիկ է նստած. նա ոչ տխուր է, ոչ էլ շատ ուրախ. իր համար երգում է, միայն երևում է, ուզում է շուտ մթնի, որ սիրածը գա հասնի իրեն:

Ծերուկ Վեյնեմեյնենը շտապով մոտեցավ աղջկանն ու ասաց.

«Միրունիկ աղջիկ, քո հյուսկերից, քո քնքուշիկ մազերից մի փունջ տուր, որ Կանտելեի համար լարեր սարքեմ և այդ գմայլելի երաժշտական գործիքի նվագով բարի մարդկանց հաճույք պատճառեմ»:

Աղջիկն իր մետաքսանման ոսկեգույն մազերից մի փունջ տվեց. ծերուկն այդ մազերն իբրև լարեր հագցրեց Կանտելեի վրա և երաժշտական գործիքն արդեն պատրաստ էր:

Վեյնեմեյնենը Կանտելեն զգուշությամբ դրեց ծնկներին և մատներն սկսեց շարժել սիմերի վրա:

Եվ հմայիչ երգի հնչյունները սփռվեցին Կալեվալայի մեկ ծայրից մյուսը: Հեռու և մոտիկ գյուղերից հավաքվեցին մեծ թե փոքր, որպեսզի լսեն երգասացին:

Կանայք թողին տան գործը և ուրախ-զվարթ, ինչպես հորդահոս գետը, վազեցին առաջ:

Տղամարդիկ գլխարկները հանեցին, ջահելները ծունկի եկան և բոլորը-բոլորը հայիլ-մայիլ եղած լուսն էին ծերունուն և միաբերան ասում.

«Մենք մեր ամբողջ կյանքում այսպիսի սքանչելի-հմայիչ երգեր չենք լսել»:

Եվ գիշեր ցերեկ երգում ու նվագում է ծերունին:

Թե տանն է երգում, նրան ձայնակցում են դուռն ու լուսամուտը, առաստաղն ու պատերը:

Թե անտառումն է երգում, նրա առաջ խոնարհվում են նոճիները և պիստակները թափվում են նրա ոտքերի տակ:

Պուրակում թե դաշտումն է երգում, ամեն թուփ, ամեն ծաղիկ ավելի է փարթամանում և սիրով է նայում երգչին:

Ամեն, ամեն տեղ Վեյնեմեյնենի երգերը սփռում են կյանք ու երջանկություն:

Իր հայրենիքի փառքի և հզորության համար հնչում է Կանտելեի հոգեգմայլ նվագը:

## **Ռունա ԽԵ**

Պոխյուլայի ջաղու տիրուհին գեշ հիվանդություններ է առաքում Կալեվալա. Վեյնեմեյնենը կախարդանքով և դեղերով բուժում է ժողովրդին

Պոխյուլայի տիրուհի ջաղու Լուուխին իմացավ, որ Կալեվալայում մարդիկ երջանիկ են ապրում, ուրախ և խնդալից են անցնում նրանց օրերը, երկիրը լցվել է առատությամբ: Եվ այդ բոլոր բարիքը ստեղծել է Սամպոն, հրաշք-ինքնադացի այն կտորները, որ իմաստուն Վեյնեմեյնենը հավաքեց ու սփռեց իր հայրենի դաշտերի վրա:

Ջաղուի երկիրը, ընդհակառակը, մնացել էր ցուրտ և աղքատ, որովհետև այն հրաշք Սամպոյից միայն կափարիչի կտորած կտորն էր բաժին ընկել նրան: Ջաղուն մտածմունքի մեջ ընկավ. ի՞նչ անի, որ Կալեվալայի բնակիչներին ոչնչացնի. ի՞նչ տեսակ մահով մեռցնի Կալեվի խիզախ զավակներին:

Այսպիսի խնդիրք արավ նա.

«Ով դու բարձրյալդ Ուկկո, ոչնչացրու Կալեվի ժողովրդին: Մահացու կարկուտ տեղա նրանց դաշտերի և արոտների վրա: Առաքիր անբուժելի հիվանդություններ, որ նրանց ցեղը ոչնչանա. այրերը մեռնեն դաշտերում, կանայք էլ իրենց տան շեմին»:

Տուռնելիի երկու աչքով կույր աղջիկ Լուվյաթարը, հազար տեսակ արատներ ուներ. այդ սևադեմ, մազմզոտ մարմնով աղջիկը մայրն էր ամեն տեսակ չար բաների, քանի որ չարություն սերմանող նենգ զավակներ էր ծնում նա:

Այդ սևադեմ, մազմզոտ մարմնով աղջիկն ահա՛ կաժանի մեջտեղը անկողին սարքեց ու պառկեց: Այդ անամոթի վրայով անցավ միջանցիկ քամին, անցավ թենոտ ու մռայլ եղանակը, անցավ մեզ-մառախուղ, անցան բնության բոլոր արհավիրքները: Մկավեց ուժեղ մրրիկ ու սևադեմ աղջկա արգանդը պտղավորվեց և պտուղն սկսեց աճել:

Անցավ մեկ-երկու ամիս, լրացավ ինը, մտավ տասներորդ ամիսը, աղջիկը թեև շատ էր տանջվում ցավերից, բայց պտուղը լույս աշխարհի չէր գալիս:

Աղջիկը գնաց, ուզեց ժայռերի մեջ ազատվել, թեև շատ տանջվեց, բայց ծնունդ չունեցավ:

Մյուս օրը գնաց ճահիճները, գնաց ջրվեժի մոտ, ցավերից շատ տառապեց, բայց դարձյալ պտուղը լույս աշխարհի չեկավ:

Անպիտան աղջիկն սկսեց գոռ-գոռ լաց լինել: Էլ չգիտեր, թե ո՞ր գնար, ի՞նչ միջոցի դիմեր, որ արգանդը թեթևանար, ծներ իր չար գավակներին:

Հանկարծ ամպերի միջից աղջիկը լսեց մի ձայն.

«Պոխյոլայի մշուշապատ աշխարհում կա եռանկյունի մի խրճիթ, գնա՛ այնտեղ և կազատվես քո երկունքի ցավերից: Այնտեղ քեզ սպասում են, այնտեղ շատ են ուզում, որ աշխարհ գան քո գավակները»:

Տուննելիի կույր աղջիկը, Մանալի եղկելի-այլանդակ ծնունդն անմիջապես գնաց Պոխյոլա, ուզեց մտնի եռանկյունի խրճիթը: Ջաղու ատամնաթափ Լոուխին վրա հասավ, աղջկանը թաքուն բաղնիք տարավ, որ գյուղացիները չտեսնեն, իրենց խոսածները չլսեն:

Լոուխին բաղնիքը սարքի գցեց, ջուրը տաքացրեց, աղջկան մինչև մեջքը կանգնեցրեց ջրի մեջ և այսպիսի խոսքեր ասաց.

«Ով դու ամենագոր Ուկկո, քո բարձունքից վայր իջիր, տե՛ս, այստեղ, գյուղական բաղնիքում հղի մի կին է կանգնած և ցավերից տառապում է:

Դու քո հզոր աջովդ խափանիր, ոչնչացրու բոլոր արգելքները, որպեսզի կինն ազատվի այս դառն ցավերից, որպեսզի աշխարհ գան արգանդում եղած բոլորը, թե ուժեղները և թե թույլերը»:

Եվ ահա՛, վերջապես սևադեմը ծնեց այն դժխեմ գավակները: Այն ամառային գիշերն աղջիկը ծնեց ինը գավակ:

Եվ տղաներին անուններ դրեց. ամեն մեկին մի այնպիսի անուն, որ համապատասխան լինի այն գործին, որ պետք է գործեր այդ չար գավակներից ամեն մեկը:

Մեկի անունը Վերք դրեց, մյուսինը՝ Թորախտ,

Երրորդինը՝ Հողացավ, Չորրորդինը՝ Հյուծախտ

Հինգերորդինը՝ Ջրգողություն, Վեցերորդինը՝ Քոս,

Յոթերորդինը Թարախակալած վերք, Ութերորդինը՝ Ժանտախտ:

Մնաց իններորդը, որ ամենավերջին էր ծնվել և նրա անունն էլ մայրը կնքեց՝ Նախանձ:

Պոխյոլայի ջաղուն բոլոր տղաներին կանչեց միգապատ մի կղզի, պատվերներ տվեց և ուղարկեց Կալեվալա, որ Վեյնեմեյնենին ու նրա ժողովրդին պատուհասեն, կործանեն:

Եվ ցավն ու հիվանդությունները սփռվեցին ամբողջ Կալեվալայում. մարդիկ տնքում էին տանջող ցավերից, դաշտերը խոպան դարձան, նույնիսկ տների դռներն ու առաստաղները մզլուտեցին:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը տեսավ իր ժողովրդի տանջանքը, տեսավ ծերունիների և մանուկների տառապանքները: Բայց չընկճվեց, գորեղ էր նրա կամքը. որոշեց փրկել իր ժողովրդի մարմինն ու հոգին:

Նա գնաց և, ջրի հոսանքով բերված մաքուր փայտերով, թեժ տաքացրեց բաղնիքը. բաղնիքում քարեր դրեց, նրանք շիկացան և ծերուկն ասաց.

«Ահա՛, ես այս տաք քարերի վրա ջուր կլցնեմ. ո՛վ ամենակալ տեր, օգնի՛ր, որ ջուրն այստեղ մեղրի վերածվի, թող սկսի հոսել քաղցր հյութը և բուժիչ դեղ դառնալ, այնպիսի դեղ, որ մարդկանց ցավերն ու վերքերը չքանան և այլևս ո՛չ մի հիվանդություն կալեվալցուն մոտ չգա ո՛չ գիշերը և ո՛չ էլ ցերեկը: Ով հաստիչդ երկնային, ժայռերի մեջը շատ անցքեր կան, բոլոր հիվանդությունները, մարդկանց տանջանքները նետիր այդ անցքերի մեջ. թող նրանք անդունդներում կորչեն և այլևս ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը դուրս չգան այդ անդունդներից և մարդկանց չվնասեն:

Եվ ծերուկը պատրաստեց ինը տեսակ ամենալավ բուժիչ դեղեր, հիվանդների վերքերին քսեց այդ դեղերից և աղոթեց.

«Ով դու բարձրյալդ աստված Ուկկո, երկնքի հավերժական բնակիչ, առաքիր բարենպաստ հողմերը, առաքիր բարենպաստ անձրև, որ բուժվեն իմ ժողովրդի վերքերը, մեղմացնեն նրանց տառապանքները:

Եթե քո գորությունը չլինի, ես չե՛մ կարող բոլորին օգնել: Ամենակալ տեր, դու պետք է, որ ժամ առաջ հասնես և փրկես իմ ժողովրդին: Այնտեղ, ուր իմ ձեռքը չի գորում, թող քո՝ ստեղծագործողիդ ձեռքը հասնի, այնտեղ, ուր իմ մատները չեն գորում, թող քո հզոր մատները հասնեն. չե՛ որ ստեղծագործողի մատներն ավելի վարպետ են և ձեռքերն ավելի կարող»:

Եվ այսպես, այն հավերժական իմաստուն Վեյնեմեյնենը վանեց ցավն ու հիվանդությունները, մարդկանց տառապանքին վերջ տվեց, նրանց հոգին ու մարմինը փրկեց, Կալեվալայի ցեղին նոր կյանք պագեց:

**Ռ-ունա ԽԶ**

Պոխյուլայի ջաղու տիրուհին ծուռթաթ արջին բաց է թողնում Կալեվալայի հոտերի վրա. Վեյնեմեյնենն այս նոր փորձանքից էլ է ազատում իր ժողովրդին

Պոխյուլայի տիրուհին լուր առավ, որ Վեյնեմեյնենն իր ժողովրդին բուժեց, վանեց ցավն ու հիվանդությունները: Ատամնաթափ ջաղուն կատաղեց, ասաց.

«Ես ուրիշ միջոց էլ ունեմ Կալեվալայի ժողովրդին տանջելու: Անտառի թավուտներից բաց կթողնեմ ծուռ թաթերով հսկա արջին, որ կալեվալցիների հոտերը ոչնչացնի»:

Եվ պառավն անտառի խորքից բաց թողեց ծուռ թաթերով արջին: Վայրի գազանը մտավ Կալեվալա, որ ժողովրդի նախիրներն ու հոտերը ոչնչացնի, ոտքի տակ տա նրա ծաղկած հանդերը:

Վեյնեմեյնենը դիմեց Իվարիներին.

«Եղբայր իմ, սարքիր ինձ համար մի սուր և ամուր նիզակ, որպեսզի ես գնամ, սպանեմ այդ արջին, նրան մորթազերծ անեմ, բերեմ նրա թանկարժեք մորթին, որպեսզի նա իմ ժողովրդի ձիերը չխժռի, մեր կաթնատու կովերը չփչացնի, մեր հոտերը չոչնչացնի»:

Ճարտար դարբին Իվարիները կռեց-կոփեց մի սուր ու ամուր նիզակ: Նիզակը ոչ շատ մեծ էր, ոչ էլ շատ փոքր, միջին չափսի էր. նիզակի կոթը դարբինը զարդարեց գայլի, արջի և եղջերուի պատկերներով:

Երբ Վեյնեմեյնենը դեպի անտառը գնաց, արդեն փափուկ ձյուն էր տեղացել և չորս կողմի վրա փոված էր սպիտակ սավանի նման: Ծերուկ երգիչն ասաց.

«Ահա ես անտառ եմ մտնում, ո՛վ դու անտառի տիրուհի, քո շներին ամուր կապիր, որ անարգել անցնեն»:

Իսկ դու Օտտո, անտառի զորեղ արջ, լսո՛ւմ ես, ահա՛ ես ուղիղ դեպի քեզ եմ գալիս: Դու ճանկերդ մամուռների մեջը խրիր, բերանդ փակիր, որ ատամներդ չերևան և ինձ չսպառնան, որպեսզի ես կարողանամ իմ ճամփով գնալ: Դու իմ սիրելի մեղրաթաթ արջ, քեզ համար քնիր, հանգստացիր քո որջում, ինչպես թռչունն է բնում իր ձվերի վրա հանգիստ նստում»:

Այսպես խոսեց Վեյնեմեյնենը և սկսեց քայլել անտառի կածաններով: Քայլեց, քայլեց ծերուկը և հասավ գազանի որջին: Արջն այդ պահին որջից դուրս էր եկել, բարձրացել էր ծառի ճյուղին: Վեյնեմեյնենը մեկ էլ տեսավ, որ ճյուղը պոկվեց և արջը փովեց գետնին. երգիչն ասաց.

«Փանջ բարձրյալին, անտառի զարդը կազմող այս ահարկու արջն ինձ պարզեց»:

Ապա ծերունին այսպիսի խոսքերով դիմեց արջին.

«Իմ սիրելի Օտտո, դու մեղրաթաթ արջ, մի՛ նեղանար. ես քեզ չեմ ծեծել, իմ նիզակով չեմ սպառնացել. դու ծամի ճյուղից վայր ընկար և մորթիդ քերծվեց: Արի թո՛ղ քո սառը որջը, թո՛ղ այս կածանները, ընկերացիք ինձ, գնանք գյուղը՝ հերոսների, կտրիճ այրերի մոտ: Նրանք քեզ լավ կընդունեն, նրանք իրենց հյուրերին պատվում են փեթակների անուշ մեղրով»:

Եվ ծերուկ Վեյնեմեյնենն իր նոր ընկերոջ հետ սկսեց քայլել անտառով և դաշտերով. քայլում է ու երգում. նրա երգի ձայնը հասավ գյուղ:

Խրճիթում հավաքված մարդիկ դուրս թափվեցին և երբ Վեյնեմեյնենին տեսան, ասին.

«Այս ի՛նչ ուրախ երգերով ես գալիս. ոսկի-արծա՛թ ես գտել, թե Ջրասամույրի կամ թե Լուսանի մորթի ես ճարել»:

Վեյնեմեյնենն ասաց.

«Ոչ Ջրասամույր, ոչ էլ Լուսան եմ որսացել. ինձ հետ ավելի թանկագին բան կա. ինձ հետ է անտառի զարդը՝ մահուղի կարա հագած: Եթե օտարի համար տեղ ունե՞ք, ուզում ե՞ք հյուր ընդունե՞ք, բաց արե՞ք դարպասի դուռը, եթե չէ, փակեցե՞ք»:

Գյուղացիք ուրախացան. նրանցից մեկն այսպիսի պատասխան տվեց.

«Բարի՛ եկար մեղրաթաթ արջ, շատ լավ արիր, որ մեր մաքուր բակը մտար: Ամառ թե ձմեռ քեզ էի սպասում: Գիշերը լուսամուտի մոտ էի նստում, ցերեկը բակի դռան մոտ. ձմեռը սառույց կտրած ձյան վրա էի սպասում, ամառը փոշոտ ճանապարհին. բայց դու չէիր երևում: Եվ ես մտածում էի, հապա որտե՞ղ է թափառում արջը, չլինի՞ թե Էստոնիա է գնացել, հեռացել է մեր աշխարհից»:

Վեյնեմեյնենը հարցրեց.

«Որտե՞ղ տանենք մեղրաթաթին. գո՞ւմը, փափուկ խոտերի վրա՞ տեղ ունենք մեր հյուրին»:

Գյուղացիք միաձայն ասին.

«Դու մեր ոսկեղենիկ հյուրին բեր մեր ամենալավ խրճիթը: Այնտեղ ամեն ինչ սարք ու կարգին է և համեղ ուտելիքն էլ արդեն պատրաստ է»:

Երբ արջը խրճիթ տարան, գյուղացիք ասին.

«Մեղրաթաթ հյուրին նստեցրու երկաթե այթոռին, որ մենք մոտից տեսնենք և շոշափենք նրա մորթին... իսկ դու Օտտո, մի՛ նեղանար, որ մենք քեզ հետ սկսում ենք ծանոթանալ նախ և առաջ ստուգելով, թե ինչպիսի մորթի ունես: Մենք գիտենք լավ մորթու-մուշտակի արժեքը. մենք այն ոչ անբան մարդու կտանք, ոչ էլ իզուր տեղը կփչացնենք»:

Ծերուկ Վեյնեմեյնենը նույն պահին հսկա արջին մորթազերծ արեց և մուշտակը պահ տվեց.

Բերին մի մեծ դագան. արջի միսը կտոր-կտոր արին, լցրին մեջը և դրին ջեռ կրակի վրա: Մսի վրա էլ աղ ցանեցին. աղը հատուկ նավով բերել էին գերմանացիների երկրից, Դվին գետի այն կողմերից:

Եվ այսպես, այն արջը որ չար Լոուխին ուղարկել էր Կալեվալայի ժողովրդին վնասելու, հզոր երգիչ Վեյնեմեյնենի իմաստությամբ դարձավ նրանց մեծ խնջույքի համեղ պատառը, մուշտակն էլ արդեն տեղով ոսկի և արծաթ էր:

Մեծ սեղան բացեցին, արջի խաշած-խորոված միսը դրին մեջտեղը, անուշ գարեջուրն էլ մեծ թասերով դրին սեղանի թե մեկ, թե մյուս ծայրին:

Ծերուկ Վեյնեմեյնենն այսպես խոսեց.

«Ո՛վ դուք անտառի տիրակալներ, ո՛վ դու Տապիոյի, և դու Միելիկկի, դուք ձեր կտրին որդի Տապիոյի և չքնաղ դուստր Տելլերվոյի հետ նույնպես եկեք այս մեծ խնջույքին: Մեր սեղանը լիքն է, ամեն բարիքն առատ է. եկեք և ուրախացեք. չէ՛ որ ձեր և բարձրյալի օգնությամբ ես կարողացա կախարդել ահարկու արջին և ժողովրդի համար ուրախության սեղան բաց անել»:

Կերան-խմեցին և ահա՛ ջահելները հարցրին.

«Ով դու ծերուկ Վեյնեմեյնենն, ասա՛, իմանանք, այդ ինչպե՛ս է, որ անտառի տիրակալներն այդքան ողորմած են դեպի քեզ. ինչպե՛ս եղավ, որ դու կարողացար հնազանդեցնել և բերել-մորթազերծ անել ահարկու արջին»:

Իմաստուն երգասացը պատասխանեց.

«Անտառի տիրակալները միշտ իմ խնդիրը կատարել են, որովհետև ինչ-որ ես խնդրում եմ, ժողովրդի բարիքի համար եմ խնդրում: Այս անգամ էլ նրանք այնպես արին, որ ես անտառի թավուտներում չմոլորվեմ և ուղղակի գնամ ու գտնեմ արջի որջը: Եվ երբ հասա այնտեղ, ուր արջն էր պահ մտել, ես ոչ նիզակս գործի դրի, ոչ էլ նետ-աղեղ: Ծյուղը, որի վրա նստել էր արջը, պոկվեց և արջն ընկավ իմ ոտքերի մոտ. ընկնելիս գազանը վիրավորվել էր և թուլացել: Եվ ահա՛, ես արջին բերի ձեզ մոտ, ձեր աչքի առաջ մորթազերծ արի... դե՛, հիմա կարող եմք ուրախանալ, որ ազատվեցինք ջաղու Լոուխիի այս նոր որոգայթից»:

Կալեվալացիներն ավելի ոգևորվեցին և մի կողմից արջի մսի համեղ պատառներն էին ուտում, մյուս կողմից անուշ գարեջուր կոնծում:

Ծերուկ Վեյնեմեյնենն ավելի սրտալի սկսեց երգել, որ խնջույքն ավելի ուրախ անցնի: Իմաստուն երգիչն իր ժողովրդի կյանքի հավերժական գովքն արեց.

«Ավելի պայծառ լուսավորիր, ով դու լուսատու, որ քո կենարար շողերի տակ միշտ երջանիկ լինի մեր կյանքը, ավելի դուրեկան լինի մեր երգը: Ո՛վ դու երկնավոր տեր, քո բարիքը թող անպակաս լինի մեր գլխից. իմ աշխարհի

կտրիճներին միշտ ուղիղ ճամփա ցույց տուր, որ նրանք կյանքում չնոյրվեն: Օգնի՛ր, որ մեր անտառները միշտ փարթամ լինեն և թռչունները թառեն ծառերին և անուշ գեղգեղան:

Թող իմ երկրի ջահելները և գալիք սերունդներն իրենց հայրենի դաշտերում և լեռներում իրենց արդար վաստակի տերը լինեն, միշտ ուրախ և երջանիկ ապրեն և թող երգն անպակաս լինի նրանց շրթունքներից»:

## **Ռունա ԽԷ**

Լուսինն ու արևը երկնքից վայր են իջնում, որ լսեն Վեյնեմեյնենի նվագն ու երգը: Պոխյոլայի ջաղու տիրուհին փախցնում է լուսատուները և տանում թաքցնում է պղնձակուռ անձավում

Այնքան դուրեկան էր Վեյնեմեյնենի երգը, այնքան հնչեղ նրա Կանտելի երգը, որ ով լսում՝ զմայլվում էր: Երգի ու նվագի ձայնը գնաց հասավ շատ աշխարհներ, հասավ մինչև լուսինը, հասավ արեգակին:

Լուսինն իջավ կեչու թեք ճյուղին, արեգակն իջավ սոճու կատարին, որ Վեյնեմեյնենի Կանտելի նվագը մոտից լսեն, որ հիանան իմաստուն ծերունու երգերով:

Լոուխին, Պոխյոլայի այն անատամ ջաղու տիրուհին, իսկույն սոճու կատարից փախցրեց արևը, փախցրեց լուսինը կեչու թեք ճյուղի վրայից և տարավ թաքցրեց Պոխյոլայի պղնձակուռ անձավների մեջ ու ասաց.

«Այլևս ո՛չ արևը, ո՛չ էլ լուսինը, եթե ես թույլ չտամ, չե՛ն լուսավորի Վեյնեմեյնենի հայրենիքը՝ Կալեվալան»:

Այն ջաղուն սակայն դրանով չբավականացավ, գնաց և Կալեվալայի օջախներից գողացավ-փախցրեց կրակը, և ամեն օջախ ու տուն գրկեց կրակից, գրկեց լույսից:

Ու եղավ խավար գիշեր, Կալեվալան թաղվեց մթության մեջ:

Խավարը պատեց նաև երկինքը: Մութն էր նաև բարձրյալ Աստծո, Ուկկոյի տունը:

Ապրելն այլևս անհնար էր. մարդիկ արևի լույսին և կրակին կարոտ՝ տանջվում էին:

Ինքը, Ուկկո Աստվածն էլ շատ զարմացավ, երբ տեսավ, որ արևն ու լուսինը այլևս չեն լուսավորում: Նայեց, նայեց ու չհմացավ, թե որտե՛ղ են թաքնված լուսատուները:

Բարկացավ Ուկկո Աստվածը, քաշեց հրեղեն թուրը և խփեց ամպերին. հզոր հարվածից երկնքում շանթեր բռնկվեցին, կայծեր ցայտեցին:

Ինքը, երկնքի տեր Ուկկոն կայծը դրեց մի ոսկյա պարկի մեջ, պարկն էլ դրեց մի արծաթյա օրորոցի մեջ և այդ օրորոցը տվեց օդի դուստրը: Օդի դուստրը պետք է խնամեր, օրորեր արկղում պահած կայծը, այնպես որ նա դառնար նոր արեգակ, նոր լուսին:

Օդի դուստրը նստեց մի ամպի վրա, ոսկյա օրորոցը, որի մեջ կայծն էր, արծաթյա շղթայով կապեց երկնակամարին և սկսեց օրորել: Բայց օդի դուստրը չգիտեր ինչպես օրորել, որ կայծը մեծանար և արև ու լուսին դառնար: Օրորոցը ճոճվում էր երկնքի և երկրի մեջ ու կայծն ավելի էր բորբոքվում: Աղջիկը կայծը գիրկն առավ, մի քիչ էլ օրորեց և հանկարծ կայծը պոկվեց նրա ձեռքերից և ցած գորվեց:

Ահեղ որոտ լսվեց, օդեղեն տարածության դռները լայն բացվեցին և կայծը, բոցեր արձակելով, անցավ բոլոր ինը երկինքներից և, ճեղքելով ամպերը, մեծ աղմուկով սլացավ դեպի երկիրը:

Վեյնեմեյնենը տեսավ, թե ինչպես մի պահ լուսավորվեց երկինքը. նա դիմեց Իվմարինենին.

«Եղբայր իմ, ճարտար դարբին, գնանք տեսնենք, թե դա ինչ կրակ էր, որ երկնքից իջավ երկրի վրա. գուցե դա նոր արև է և նոր լուսին»:

Երկու հերոսները ճամփա ընկան, բայց ո՞ր կողմով գնան, որ հասնեն, գտնեն երկնային կայծը:

Հասան մի մեծ գետի, որն հոսում էր անտառի եզրով. երկուսով անմիջապես մի նավակ սարքեցին և այն գետն իջեցնելով սկսեցին թիավարել:

Թիավարում էին Նևա գետի հոսանքով. հանկարծ նրանց ձայն տվեց Իվմարթարը, օդեղեն բարձունքների առաջնեկ, չքնաղ դուստրը:

«Ուվքե՞ր եք դուք, ի՞նչ անունով են ձեզ կոչում ձեր հայրենիքում»:

Ծերուկ Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Մենք երկուսով էլ ծովագնացներ ենք: Ես ծերուկ Վեյնեմեյնենն եմ, իսկ իմ ընկերոջ անունն է Իվմարինեն: Իսկ դու ո՞վ ես, ինչպե՞ս է քո անունը»:

Կինը պատասխանեց.

«Ես օդեղեն տարածությունների դուստրն եմ և մայրն այն ամենի, ինչ կա աշխարհի վրա: Ասեք ինձ, ով այրեր, ուր եք գնում»:

Ծերուկ Վեյնեմեյնենը պատասխանեց.

«Ահա՛ յոթ օր է, որ մենք գրկվել ենք լույսից ու կրակից: Այս կողմերում կայծ է ընկել երկնքից, գնում ենք, որ փնտրենք-գտնենք այդ կայծը և մեր աշխարհը լուսավորենք»:

Կինն այսպես պատասխանեց.

«Այնքան էլ հեշտ չէ գտնել այդ կայծը: Երկնքից ընկնելով նա շատ վնասներ պատճառեց. դաշտ ու անտառ, տուն և մառան, գոմ և ամեն շինություն այրել-ոչնչացրել է. ոչնչացրել է նաև այն բոլոր նոր տները, որ կառուցել էր Պավոնեյնը:

Էլի շատ վատ գործեր արավ այդ կայծը: Նա շատ աղջիկների դեմքն ու կուրծքն է այրել-այլանդակել, շատ տղաների ծնկները և ծերունիների մորուքն է խանձել-այրել:

Երբ մայրն օրորոցին թեքված երեխան էր կերակրում, այդ չար կայծը ոճրագործի նման հարձակվում է օրորոցի վրա, այրում է երեխային. մանկիկը մեռնում է, գնում անվերադարձ աշխարհը: Ճիշտ է, բոլորի վերջը մահն է, բայց անմեղ երեխան անժամանակ հեռացավ կյանքից, այն էլ մինչ հոգին ավանդելը սուկալի տանջվեց այրվածքներից:

Մոր կուրծքն էլ թեև ծանր այրվածքներ ստացավ, բայց դժբախտ մայրը չմեռավ. նա կախարդանք արավ և կայծը դռան արանքից դուրս պրծավ, թռավ հասավ դաշտը»:

Ծերուկ Վեյնեմեյնենը շտապով հարցրեց.

«Բայց որտե՞ղ թաքնվեց նա. անտառի թավուտնե՞րն է մտել, թե գլորվել, ընկել է ծովը. որտե՞ղ պիտի գտնել այդ կայծը, գտնել և հնազանդեցնել, որ նա մարդկանց օգտին ծառայի և ո՛չ թե բարիքներն այրի ու ոչնչացնի»:

Կինն այսպես պատասխանեց.

«Կայծն ընկնելով երկնքից, երբ շատ դաշտեր, անտառներ և տներ այրեց, վերջիվերջո գլորվելով եկավ-ընկավ ծովը: Ծովը փրփրեց, եռաց և հրեղեն ալիքները բախվեցին ափի ավազներին: Ջկներն իրար անցան, չգիտեն ինչ անեն, որ փորձանքից ազատվեն. մի քանի ձկներ փորձեցին կուլ տալ կայծը, բայց չկարողացան: Վերջը սիգ ձուկը որսաց կայծը և կուլ տվեց: Այդ ժամանակ ծովի ալեկոծումը դադարեց, ալիքները մեղմացան: Բայց սիգ ձուկը հանգիստ չունեց, կայծն այնպես էր այրում նրա ներսը, որ խեղճ ձուկը թփրտում էր և չգիտեր ինչպես ազատվեր այդ փորձանքից:

Միզը տանջվելով ու թփրտալով անցավ հարյուրավոր կղզիների և հրվանդանների մոտով, բայց տառապանքից ազատվելու ճար չկար: Մի կղզի, հետո մի հրվանդան այսպես ասին.

«Մի՞թե այս ջրերում, այս անդունդներում չկա՞ մեկը, որ սպանի այս խեղճ ձկանը, կամ կուլ տա, որ նա ազատվի այս տանջանքներից»:

Կարմրախայտը լսեց այդ խոսքերը և սիգ ձկանը կուլ տվեց: Քիչ անց Կարմրախայտն էլ սկսեց տառապել, թփրտալ. կայծը նրա ներսն էր այրում, կեղեքում և սոսկալի ցավեր պատճառում:

Ակս ձուկն էլ լողալով շատ կղզիների և հրվանդանների մոտով անցավ, բայց ցավը չէր մեղմանում:

Նորից մի կղզի, հետո մի հրվանդան ասին.

«Մի՞թե այս ջրերում, այս անդունդներում չկա մեկը, որ սպանի այս խեղճ Կարմրախայտին կամ կուլ տա, որ նա ազատվի այդ սարսափելի տանջանքներից»:

Գայլաձուկը լսեց այդ խոսքերը և կուլ տվեց Կարմրախայտ ձկանը, որը քիչ առաջ կուլ էր տվել սիգին՝ փորումը եղած կայծի հետ միասին:

Հիմա էլ գայլաձուկն սկսեց տանջվել. պոչով խփում է ալիքներին, սուզվում է մինչև ծովի հատակը, հետո ահավոր աղմուկով սկսում է լողալ մեկ ափի մոտերքով, մեկ որորների հրվանդանի մոտերքով, մեկ էլ փաթ է տալիս հարյուրավոր կղզիների չորս բոլորը: Բայց ճար չկա. կայծն այրում է նրա փորոտիքը: Մի կղզի, հետո մի հրվանդան այսպես ասին.

«Մի՞թե այս ջրերում, այս անդունդներում չկա մեկը, որ սպանի այս խեղճ Գայլաձկանը, կամ կուլ տա, որ նա ազատվի այդ սարսափելի տանջանքներից»:

Եվ Իվնաթարը խորհուրդ տվեց դյուցազուններին որսալ գայլաձուկը և փորից հանել կայծը:

Դյուցազունները շտապ մի ուռկան սարքեցին: Ուռկանը ճիլոպից էր և փշատերևից. սարքեցին և ծովը գցեցին, բայց այդ թույլ ցանցերի մեջ ընկնում էին միայն փոքրիկ ձկներ:

Այն ժամանակ մի գայլաձուկ ասաց մյուսին.

«Այս ի՞նչ է, Կալեվալայում բոլոր քաջ տղամարդիկ մեռա՞ն. ուր են այն կտրիճները որ վուշից ուռկան էին սարքում և ամեն տեսակ խոշոր ձկներ որսում»:

Լսեց այդ Վեյնեմեյնենն ու ասաց.

«Ոչ, Կալեվալայի քաջերը չեն մեռել, նրա հերոսներն ապրում են: Թե մեկը մեռնում է, երկուսն են ծնվում. նրանք շատ լավ կարթածողեր ունեն և կարող են ամուր ու դիմացկուն ուռկան էլ սարքել և ամեն տեսակ խոշոր ձկներ որսալ»:

**Ռ-ունա ԽԸ**

Կալեվալայի դյուցազունները մեծ-դիմացկուն ուռկան են սարքում և որսում են Գայլաձկանը, որ կուլ է տվել երկնքից ընկած կայծը

Իմաստուն Վեյնեմեյները շատ ծանր ու թեթև արավ՝ որսեղի՞ց գտնել վուշի թելեր, որ դիմացկուն և սովորականից հարյուր անգամ մեծ ուռկան սարքի, որ այդ գայլաձկանը բռնի, սպա՛նի, կայծը փորից հանի: Այսպես խոսեց ծերուկը.

«Ինչ էլ լինի պետք է մի հողակտոր գտնել, վուշ ցանել, անեցնել-հնձել, որպեսզի մեծ ուռկան սարքեմ և որսամ գայլաձուկը»:

Ծերուկ Վեյնեմեյները խարխափելով, այրված դաշտում, երկու կոճղերի մոտերքում գտավ մի հողակտոր, ուր առաջ վուշ էր ցանված եղել: Փորեց-փորփրեց և գետնի տակից վուշի սերմեր գտավ:

Այդտեղ այրված ծառերից ու նավակներից բավական մոխիր էր գոյացել. ծերուկը մոխիրը խառնեց հողին, պարարտացրեց և այդ պարարտ հողում վուշի սերմերը ցանեց:

Ամառվա գիշերվա ընթացքում վուշն անեց, փարթամացավ, առատ բերք տվեց. շուտով քաղեցին և սկսեցին մշակել:

Աղջիկները թելեր քաշեցին, ծերունիները հաստ պարաններ պատրաստեցին: Եվ այդ թելերից ու պարաններից հինգ հարյուր սաժեն լայնությամբ ուռկան գործեցին, յոթ հարյուր սաժեն երկարությամբ պարաններ հյուսեցին: Ուռկանին քարեր և տախտակներ կապեցին:

Վեյնեմեյներն իր դյուցազուններով ուռկանը ծովը գցեց: Ամեն տեսակ ձուկ ընկավ ուռկանի մեջ, բայց այն մեծ ձուկը, որի համար սարքեցին ուռկանը, դեռ մոտ չէր գալիս: Էլի մի քանի անգամ փորձեցին, բայց Գայլաձուկն անորսալի մնաց:

Ծերունի երգասացն այսպես խոսեց.

«Ո՛վ դու Վելլեմո, ծովերի Աստված և դու Ախտո, անդունդների տիրակալ, օգնի՛ր մեզ բռնել ձկան, ձեռքդ առ երկար փայտը և ձկները քշիր դեպի ուռկանը, քշիր ծովածոցերից, քշիր անդունդներից, քշիր ամեն կողմից, օգնի՛ր մեզ տիրանալ երկնքից առաքված կրակին»:

Այդ ժամանակ ծովի ալիքների վրա երևաց մի պատանի. տեսքով պատանի, բայց՝ դյուցազուն ամենակարող. նա ասաց.

«Դուք ուզում եք, որ մեկն ու մեկը ձուկը դեպի ուռկա՞նը քշի, մեծ մահակով ծո՞վը խառնի»:

Ծերուկ Վեյնեմեյները պատասխանեց.

«Այո՛, մեզ պետք է մեկը, որ այն մեծ մահակը ձեռքն առնի և ձուկը դեպի ուռկանը քշի»:

Պատանի դյուցազնը մեծ մահակը ձեռքն առավ, ծովը մտավ և հարցրեց.

«Ամբողջ ուժո՛վս բանեցնեմ մահակը, որ ձկները դեպի ցանցը քշեմ, թե՛ սովորականի նման աշխատեմ»:

Ծերուկ Վեյենմեյները պատասխանեց.

«Թե որ սովորականի նման էլ ձկները քշես դեպի ցանցը, դա էլ բավական է»:

Փոքրիկ դյուցազնը սկսեց աշխատել այնպես, ինչպես սովորաբար աշխատում էր, և ձկները վտառներով դեպի ցանցը լողացին:

Նավակը թիավարում էր Իլմարինները, իսկ Վեյենմեյները, որ ուռկանը փռել էր ծովի վրա, այժմ սկսեց այն դեպի ավեր քաշել: Քաշե՛ց, քաշե՛ց և ուրախացած ասաց.

«Արդեն շատ ձկներ են ընկել ցանցը: Եվ ամենից շատ այնտեղ, որտեղ ուռկանը վեր եմ ձգել, իսկ տախտակները ներքև իջեցրել»:

Ծերուկ Վեյենմեյները, երբ արդեն ուռկանն ամբողջովին դեպի ավեր քաշեց, շատ տեսակի ձկներ հանեց միջից. վերջապես հանեց նաև Գայլաձուկը, որին բռնելու համար այդ մեծ ուռկանը սարքեցին:

Ծերուկն այսպես խոսեց.

«Արդյոք առանց երկաթե ձեռնոցների կարո՞ղ եմ այս ձուկը մորթել և կայծը փորհցն հանել»:

Արևի որդին հայտնվեց և ձայն տվեց.

«Ես անմիջապես այս ձկան փորը կճեղքեի, եթե հայրական դանակը ձեռքս ունենայի»:

Անմիջապես երկնքից ոսկե բռնակով մի պողպատյա դանակ ընկավ և ուղղակի քաշ ընկավ արևի որդու գոտկատեղից:

Արևի խիզախ որդին անմիջապես դանակը ձեռքն առավ, լայնաբերան Գայլաձկան մարմինը կտրտեց և փորից հանեց Կարմրախայտ ձուկը: Տղան պատռեց նաև Կարմրախայտի փորը և այնտեղից հանեց մի գնդիկ՝ կապույտ ծածկոցով. ծածկոցը քանդեց, երևաց մի ուրիշ՝ կարմիր ծածկոց. կարմիր ծածկոցն էլ ետ տվեց և հանեց այն կայծը, որ ընկել էր իններորդ երկնքից, երկիր էր հասել թանձր ամպերի միջով:

Ծերուկ իմաստուն Վեյենմեյները մտածեց, ինչպե՞ս անի, որ կայծը հայրենի աշխարհն հասցնի, երկիրը լուսավորի, օջախները տաքացնի:

Բայց այդ պահին կայծն արևի որդու ձեռքից դուրս թռավ, Վեյնեմեյնենի մորուքն այրեց, բայց ավելի ուժեղ այրեց Իլմարինենի դեմքը, ձեռքերը և մարմինը:

Կայծն ապա սլացավ առաջ, այրեց այն ամենը՝ ծառ, անտառ, արտ, ինչ որ լրիվ չէր այրել երկնքից ընկնելու պահին:

Ծերուկ Վեյնեմեյնենը գնաց կայծի ետևից. գնաց, գնաց և վերջապես տեսավ, որ կայծը թաքնվել է լաստենու փտած փչակում: Եվ երգասացր խոսեց.

«Ով կայծ, դու կենարար լուսատու, որ ստեղծված ես բարձրյալի կամքով, իզուր ես փախչում մեզանից: Լավ է, որ թույլ տաս քեզ տանեմ մեր խրճիթները, քեզնով տաքացնեմ մեր վառարանները. տանեմ, որ մեզ ջերմացնես, մեր տները լուսավորես. տանեմ, որ ցերեկները վառարանում կեչիների կտորտանքը բոցավառես, իսկ գիշերներն անթեղվես տաք ածուխի տակ և հանգստանաս»:

Ծերուկ Վեյնեմեյնենը մի պղնձե աման սարքեց, մեջը դրեց կայծը, որը ձեռք բերելու համար այնքան դժվարություններ քաշեց, և տարավ իր հայրենի օջախները տաքացրեց. մթամած տները լուսավորեց:

Իսկ այդ պահին Իլմարինենը, որ տանջվում էր կայծի այրվածքներից, վազեց հասավ ծովափ և այսպես խոսեց.

«Ով դու կայծ, երկնային լուսատուի զավակ. ինչո՞ւ ես այդպես զայրացած, ինչո՞ւ այրեցիր իմ դեմքը, ազդրերս ու մեջքս: Ի՞նչ անեմ, որ վերքերը բուժվեն, որ ես այլևս չտանջվեմ այս սոսկալի այրվածքներից»:

Ապա դիմեց բարձրյալին.

«Ով դու մեծագոր Աստված Ուկկո, ամպեր առաքիր արևելքից և արևմուտքից, թող ձյուն տեղա, որ գոնե այրվածքներս զովությունից մեղմանան: Տուր ինձ այնպիսի բալասան, որ քսեմ այրվածքներիս և ես բուժվեմ, ազատվեմ այս տանջող ցավերից»:

Եվ աստծուց առաքված դեղերով Իլմարինենի ցավերը մեղմացան. շուտով ապաքինվեց այրվածքներից, կրկին նույն ուժեղ, նույն ճարտար դյուցազնը դարձավ:

## **Ռ-ու ն ա Խ Ռ թ**

Իլմարինենը կռում-կոփում է նոր լուսին և արև, բայց նրանք չեն լուսավորում: Վեյնեմեյնենը գուշակությամբ իմանում է, թե պառավ Լոուխին որտեղ է թաքցրել լուսինն ու արևը: Կալեվալայի հերոսները մեծ ջանքերով երկնքի լուսատուներին ազատում են բանտ-քարայրից

Մռայլ էր սակայն հայրենի աշխարհը: Արևն ու լուսինը չէին լուսավորում Կալեվալան: Հայրենի դաշտերը ցրտահար եղան, անասունները հիվանդացան, հյուծվեցին: Մարդիկ շատ տխուր էին. թռչուններն այլևս չէին գեղգեղում: Չէ՛, անհնար էր ապրել առանց ջերմ արևի, անհնար էր կյանքն առանց լուսնի արծաթյա շողերի:

Ձուկը գիտեր, թե որ փոսում պետք է ձկնկիթ թափեր, արծիվը գիտեր, թե որ ճամփով պետք է հասներ իր ձագերին, քամին նավակին ուղղություն էր տալիս, ինչպես միշտ, միայն մարդիկ չգիտեին մշուշապատ առավոտ է, թե՞ խավար գիշերն է արդեն իջել երկրի վրա:

Ծեր ու մանուկ սկսեցին մտածել, նրանց հետ նաև աղջիկները, ինչպե՞ս ապրեն Հյուսիսային այդ տափաստաններում, որ հիմա այդքան մռայլ է ու անլույս: Եվ ահա՛ նրանք գնացին դարբին Իվարինենի մոտ և ասացին.

«Ով դու ճարտար դարբին, տաք վառարանի կողքը պառկելու ժամանակը չէ, վեր կաց և քո դարբնոցում մեզ համար նոր արև և նոր լուսին սարքիր, թե չէ այսպես անարև, անլուսին այլևս հնարավոր չէ ապրել»:

Դարբինը գնաց դարբնոց, հնոցը ջեռացրեց և գործի անցավ:

Վեյնեմեյնենը մոտեցավ դարբնոցի դռանը և հարցրեց.

«Եղբայր իմ Իվարինեն, այդ ի՞նչ ես սարքում. մուրճիդ ձայնն անընդհատ լսվում է, այդ ի՞նչ ես կոփում»:

Դարբինը պատասխանեց.

«Ոսկուց լուսին եմ պատրաստում, արծաթից՝ արեգակ, որ տանեմ հանեմ ամենաբարձր տեղը, մինչև երկինք, որ մեր աշխարհին լույս տամ»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենն ասաց.

«Ո՛հ, ճարտար դարբին, դու մի գործ ես սկսել, որից ոչ մի օգուտ չի լինի. ոսկին լուսին չի դառնա, ոչ էլ արծաթից արև կստացվի»:

Դարբինը համառեց, քափ ու քրտնքի մեջ մտած աշխատեց՝ կոփեց-սարքեց լուսին ու արև: Տարավ լուսինը դրեց սոճու ամենաբարձր կատարին, արևն էլ եղևնու սաղարթին:

Բայց ոչ լուսինը փայլեց, ոչ էլ արևը լույս տվեց:

Ծերուկ Վեյնեմեյնենն ասաց.

«Պետք է հմայություն անել և իմանալ, թե որտեղ է թաքնված արեգակը, ո՞ր է անհայտացել լուսինը»:

Ծերուկ իմաստուն Վեյնեմեյնենը լաստենուց տաշեղների պոկեց, իրար ետևից դարսեց, ապա խառնեց իրար, կրկին դասավորեց և այսպես խոսեց.

«Բարձրյալից խնդրում եմ, թող մի նշանով ինձ ցույց տա, թե որտե՞ղ է թաքնված արեգակը, ո՞ր է անհայտացել մեր լուսինը: Ո՛հ, տեր, մի ստույգ նշանով ցույց տուր ինձ, հայտնիք գաղտնիքը»:

Եվ ահա՛ ստույգ նշաններ երևացին տաշեղների վրա. իմաստուն ծերունին իմացավ, որ արևն ու լուսինը ամուր փականքի տակ պահվում են Պոխյոլայի քարանձավում: Նա անմիջապես ճամփա ընկավ դեպի մշուշապատ Պոխյոլա: Գնաց մեկ օր, երկու օր, վերջապես երրորդ օրը հասավ այն մռայլ Պոխյոլան: Երևացին քար-ապառաժներ. բայց դիմացը մեծ-լայնահուն գետն էր. երգասացը ձայն տվեց.

«Ինձ մի նավակ տվեք, որ ես գետն անցնեմ»:

Բայց ոչ ոք չսեց ծերունուն: Այն ժամանակ նա իրար վրա հավաքեց ծղոտներ ու փայտի կտորտանքներ և այն կայծով, որ ընկել էր երկնքից, խարույկ սարքեց: Բոցը բորբոքվեց և ծուխը ցրվեց ամեն կողմ:

Պոխյոլայի տիրուհին նկատեց այդ և ասաց.

«Այդ ի՞նչ բոց է գետի ափին. թե պատերազմի են եկել, այդ խարույկը փոքր է, թե ձկնորսներն են կրակ արել՝ շատ է»:

Պոխյոլացի մի տղա նայեց խարույկի կողմը և ասաց.

«Գետից այն կողմը ես տեսնում եմ մի գորեղ դյուցազն»:

Ձայն տվեց Վեյնեմեյնենը.

«Ով դու Պոխյոլայի զավակ, ինձ մի նավակ հասցրու»:

Տղան պատասխանեց.

«Այստեղ ազատ նավակ չկա. մատներդ թիեր դարձրու, ձեռքերդ դեկ և գետն անցիր»:

Վեյնեմեյնենն ինքն իր խոսեց.

«Տղամարդ չէ նա, ով իր բռնած ճամփից ետ է դառնում»:

Եվ ձկան կերպարանք առնելով գետը մտավ ու լողալով հասավ մյուս ափը:

Պոխյոլայի անպիտան երեխաները նրա դեմը ելան և ասին.

«Արի, մեր խրճիթը մտիր»:

Ծերունին խրճիթը մտավ և ի՛նչ տեսնի. զինված մարդիկ՝ որը թուրը մեջքին, որը տապարը գոտիկից կախած նստել մեղր են խմում և մտքիններն այն է, որ Վեյնեմեյնենին, Կալեվալայի հերոս Սուվանտոյանենին սպանեն: Նրանք այսպիսի հարց տվին եկվորին.

«Քո ասածն ի՛նչ է, ով երգասաց, ասելիքդ ասա՛, լսե՛նք, ով դու հերոս-լողորդ»:

Ծերուկը պատասխանեց.

«Ինչ որ ասելու եմ, արևի և լուսնի մասին պիտի ասեմ. ես երկնային լուսատուների մասին ձեզ շատ հրաշքներ կպատմեմ, միայն թե ասեք, որտե՞ղ է թաքնված արեգակը, ո՞ւր է անհայտացել մեր լուսինը»:

Երեխաներն շտապեցին պատասխանել.

«Արևն ու լուսինը ժեռ ապառաժների մեջ են, երկաթով հարուստ լեռների խորքում, բայց այնտեղից նրանք չեն կարող դուրս գալ, եթե Պոխյոլայի տիրուհին թույլ չտա»:

Վեյնեմեյնենը դիմեց զինված պոխյոլացիներին.

«Եթե դուք լուսինը չեք ազատի քարանձավից, եթե արևը չեք ազատի երկաթապատ ժայռերի միջից, ապա պատասխան տվեք իմ անեղ թրին»

Ասաց և սուրը քաշեց, այն երկսայր սուրը, որ կոփել էր Իլմարինենը, որի վրա այսպիսի գարդեր կային՝ մեջտեղը արև, մի կողմը լուսին, մյուս կողմից աստղեր, ներքևի մասում վրնջացող ձի էր, վերևում մլավող կատու և հաչող շուն:

Լոուխիի մարդիկ ևս թրերը քաշեցին. նախ չափեցին, թե ում սուրն է երկար: Վեյնեմեյնենի թուրը մի ծղնոտի չափ երկար էր:

Եվ անա՛ բոլորը դաշտ ելան. Դյուցազն Վեյնեմեյնենը թունդ կռվի բռնվեց Պոխյոլայի ավազակների դեմ: Մեկ զարկեց, երկու զարկեց, շատերի գլուխը թոցրեց այնպես, ինչպես շաղգամի գլուխը կամ հասկն են թոցնում մեկ հարվածով: Եվ այսպիսով նա ջադու Լոուխիի մարդկանց ցիր ու ցան արավ:

Այնուհետև դյուցազնը գնաց հասավ երկաթով լեցուն ժայռերին, վերջապես գտավ անձավը, ուր ջադուն թաքցրել էր արևն ու լուսինը: Թուրը քաշեց, խփեց դռներին, բայց դռները շատ ամուր էին փակված. ոչ դուռը, ոչ էլ հարյուր սողնակը, որոնք պահում էին դռները, տեղից չշարժվեցին. մեկ էլ խփեց, հազիվ մի փոքր ճեղք բացվեց: Ճեղքից ներս նայեց և տեսավ, որ թունավոր օձեր են այնտեղ վխտում. նորից փորձեց բացել, բայց անհնար էր առանց տապարի և լինգերի:

Ծերուկն անմիջապես տուն վերադարձավ. շատ տխուր էր, գլուխը կախ, որ չկարողացավ անձավից հանել արևն ու լուսինը:

Լեամինկայնենը տեսավ երգչին և երբ ամեն ինչ իմացավ, ասաց.

«Ով դու ծերուկ Վեյնեմեյնեն, ինչո՞ւ ինձ հետդ չտարար. ես կջարդեի բոլոր դռները, երկու մաս կանեի բոլոր սողնակները, թաքստոցից կազատեի արևն ու լուսինը»:

Վեյնեմեյնենն ասաց.

«Խոսքով ոչ դուռ կջարդես, ոչ սողնակ կփշրես. բռունցքներն էլ քիչ են այդ գործի համար»:

Ծերուկը գնաց դարբնոց և այսպես խոսեց.

«Ճարտար դարբին Իվմարինեն, սարքի ինձ համար մի գորեղ եռաժանի, կոփիլ լինգեր, ամուր շղթաներ և բանալիներ ամեն տեսակ, որ գնամ բերեմ արևն ու լուսինը»:

Դարբինն սկսեց կոփել ինչ որ պատվիրեց իմաստուն ծերուկը. տասը հատ եռաժանի, մի կապոց բանալիներ և մեկ դյուժին լինգեր:

Ջադու Լոուիսին, Պոխյոլայի ատամնաթափ տիրուհին, մեջքին և ազդրերին թևեր կացրեց ու թռավ հասավ Կալեվալա: Ուզում էր իմանալ ի՞նչ են անում այնտեղ:

Այդ պահին դարբինը լուսամուտից դուրս նայեց և թվաց, թե փոթորիկ է բարձրացել, բայց մեկ էլ նայեց տեսավ՝ չէ՛, գորշ անգղն է մոտենում դարբնոցին. հարցրեց.

«Այ թոչուն, ի՞նչ գործ ունես այստեղ, ինչո՞ւ ես նստել իմ դարբնոցի լուսամուտին»:

Թոչունի կերպարանք առած ջադուն այսպես պատասխանեց.

«Ով դարբին Իվմարինեն, իրոք, որ դու շատ ճարտար և հմուտ վարպետ ես»:

Դարբինը պատասխանեց.

«Ինչ կա զարմանալու. ես որ Սամպոն կառուցեցի, ես որ արև ու լուսին կոփեցի, ուրեմն հմուտ դարբին եմ»:

Եվ այն գորշ թոչունի կերպարանք առած պառավն հարցրեց.

«Բայց ասա, ի՞նչ ես հիմա սարքում, գուցե թե մի նոր զենք ես հնարում»:

Իվմարինենը պատասխանեց.

«Ես ամուր վզկապ եմ կոփում Պոխյոլայի նենգ տիրուհու համար: Ժայռի կողին պիտի գամել այդ ջադուն»:

Պոխյոլայի տիրուհին հասկացավ, որ մեծ աղետ է գալու իր գլխին, սարսափած վերադարձավ իր երկիրը:

Լուսինը հանեց ժայռի խորքից, արևն հանեց բանտ քարայրից:

Ջաղուն այս անգամ աղավնու կերպարանք առավ, թռավ հասավ Իլմարինենի դարբնոցին և նստեց դռան առաջ: Դարբինն հարցրեց.

«Այ աղավնյակ, դու ինչո՞ւ ես եկել իմ տան շենը»:

Աղավնու կերպարանք առած ջաղուն պատասխանեց.

«Ես քո տան շենն եմ եկել, որ ուրախ լուր հաղորդեմ.

Լուսինն է ելել ժայռի խորքից, արևն է ելել բանտ-քարայրից»:

Այնժամ Իլմարինենը իր դարբնոցի շենն ելավ, որ տեսնի թե ինչ է կատարվել: Ելավ և աչքերն հառեց երկնքին: Եվ ի՞նչ տեսնի. նորից լուսինն է այնտեղ փայլում, նորից արևն է շողեր արձակում:

Եվ նա գնաց ծեր երգչի մոտ և այսպես խոսեց.

«Ո՛վ դու հավերժական երգասաց ծերուկ Վեյնեմեյնեն. դուրս եկ ու աչքերդ հառիր երկնքին: Լուսնյակն էլ, արևն էլ նորից երկնքումն են, իրենց սովորական տեղում»:

Վեյնեմեյնենը երկնքում նորից վերահաստատված տեսնելով արևն ու լուսինը երգում է.

«Բարև՛, բարև՛ արծաթ լուսին, նորից տեսանք դեմքդ չքնաղ:  
Բարև՛, բարև՛, ոսկե արև, նորից ծագում ես շողալով:  
Ելար լուսին քո բանտ ժայռից, ելար արև մութ քարայրից.  
Ինչպես կկուն ոսկեփետուր, աղավնու պես,— արծաթագոծ:  
Այժմ նորից ձեր տեղումն եք, մտաք նորից ձեր հին ճամփան:

Այս օրվանից հուր-հավիտյան, ծագիր արև առավոտ վաղ,  
Երջանկացրու օրն ամենայն, որ անի մեր ունեցվածքը,  
Որ տեր լինենք մեր որսերին, ձուկը մոտ գա մեր կարթերին:  
Անցիր բարով դու քո ճամփան, ծագեիժագ փառավորվիր,  
Երթո՛ւ ավարտիր սքանչելի, և քուն մտիր գիշերն հանգիստ»:

Կալելվալան, Վեյնեմեյնենի հայրենիքը, ամբողջ ժողովուրդը ցնձագին երգեր երգեց իր հաղթության համար, իր դյուցազունների փառքը փառաբանեց ծագեիժագ:

## Ռունա Ծ

Մարյոտտան ծնուն է արու գավակ: Ծերուկ Վեյնեմեյնենը մկրտում է մանկանը իբրև Կարելիայի ապագա թագավոր: Վեյնեմեյնենը գայրացած հեռանում-հասնում է այնտեղ, ուր երկինքն ու երկիրը միանում են իրար և կանխագուշակում է, թե ինքը հետագայում էլ պետք կգա իր ժողովրդին, որ նոր Սամպո կառուցի, նոր Կասանտելե սարքի և լույս տա իր հայրենիքին

Անդադրում թավալվում էր ժամանակի մշտահոլով անիվը:

Կալեվալայում աշխարհ եկավ այն չքնաղ աղջիկը՝ Մարյոտտան: Ապրեց ու մեծացավ նա իր հարուստ հոր տանը, սիրող մոր գորովայից շնչի տակ: Նա գեղեցիկ մատանիներ ուներ մատներին, սիրունիկ ապարանջաններ իր փափիկ բազուկներին: Հագնում էր զգեստներ ամենանորը հյուսվածքներից և գեղեցիկ զարդերը փայլվում էին նրա կուսական կրծքին. հագնում էր գեղեցիկ կոշիկներ և անուշիկ դստրիկը հորական տան շենքից չէր հեռանում:

Գեղեցկուհի Մարյոտտան շատ համեստ ու ամոթխած էր. ուտում էր համեղ ձկներ և արմատապտուղներ. երբեք ձու չէր ուտում, որովհետև հավին ընկերություն էր անում արլորը. ոչխարի միս չէր ուտում, որովհետև ոչխարին ընկերություն էր անում դոչը:

Մայրը ցանկանում էր նրան ուղարկել կաթ կթելու, աղջիկը չէր ուզում, ասում էր.

«Ես այնպիսի աղջիկ չեմ, որ կովի պտուկները բռնեմ, չէ՞ որ դրանց հետ խաղ է արել ցուլը»:

Հայրը ուզում է, որ տեղ գնալիս աղջիկը հովատակին նստի, աղջիկը չի ցանկանում: Եղբայրը բերում է զամբիկ, աղջիկը դարձյալ չի ցանկանում, ասում է.

«Չամբիկն ընկերություն է արել հովատակի հետ. բերեք մեկ ամսական անմեղ հովատակ»:

Չքնաղ Մարյատտան ապրում էր իբրև մաքուր կույս-աղջիկ: Հայրը նրան գործի դրեց. իրենց գառնուկներն էր նա տանում արոտները, խնամում: Դաշտում լսում էր կկունների երգը, ոսկեղենիկ թռչունների ճովոդյունը:

Մի օր էլ դաշտ գնալիս մտավ մի պուրակ, ուր առատ պտուղներ կային: Կկունները կրկին սկսեցին ճովոդել: Աղջիկն հարցնունք արավ.

«Իմ անուշիկ կկու, երգի՛ր, շատ հանելի է լսել քո ձայնը, բայց ասա, ես դեռ շա՛տ ժամանակ պիտի այսպես ազապ մնամ և դաշտերում ու անտառներում գառներ արածացնեմ: Ինչքա՛ն պիտի սպասեմ, որ ամուսնանամ: Մե՛կ, թե երկո՛ւ տարի, հի՛նգ, թե՛ վեց տարի. գուցե տաս տարի՞ սպասեմ, կամ էլ թե չէ, թերևս, երկար սպասելու կարիք չիմի»:

Բայց կկուն շարունակում էր երգել և աղջիկը պատասխան չստացավ:

Յոթ օր էր արդեն ինչ գեղեցկուհին գառնարած էր դարձել: Հեշտ չէր նրա համար գառնարածությունը: Լորտուներ են սողում դաշտերում, մողեսներ են վխտում չորս կողմ:

Մի օր նա հասավ մի բլուրի. այնտեղ ոչ օձեր կային, ոչ էլ մողեսներ. բլուրի վրա անել, հասունացել էր հապալասի սիրունիկ պտուղը: Պտուղն ասաց աղջկան.

«Ով դու ջքնաղ, ոսկյա քամարով կույս աղջիկ, պոկիր ինձ, թե չէ ինձ որդր կուտի: Այստեղից հազարից ավելի կին ու աղջիկ են անցել, բայց ոչ ոք ինձ ձեռք չի տվել»:

Աղջիկը մոտեցավ բլուրին. շիվով ցած գցեց պտուղը. պտուղն ընկավ նրա կոշիկին. այնտեղից թռավ նրա մաքուր ծնկանը, մաքուր ծնկից թռավ զգեստի փեշին, այնտեղից էլ հասավ քամարին, հետո կրծքին, կրծքից էլ թռավ դնչին, այնտեղից էլ ուղղակի շրթունքներին, հետո լեզվի վրա և կույ գնաց:

Եվ այն ջքնաղ կույս Մարյատտան այդ պտուղից հղիացավ:

Անցան օրեր. խեղճ աղջիկն այլևս առանց քամարի էր ման գալիս, թաքուն բաղնիք էր գնում, հարազատների աչքին չէր ուզում երևալ:

Մայրն ինքն իրեն այսպես էր խոսում.

«Ի՞նչ է պատահել իմ սիրունիկ Մարյատտային, ինչո՞ւ է առանց քամարի ման գալիս. ինչո՞ւ է գաղտնի բաղնիք գնում, թաքնվում տնեցիներից»:

Մայրը դեռ չգիտեր պատճառը:

Անցան ամիսներ. լրացավ ինը, մտավ տասներորդը և աղջիկը կողերում ցավեր զգաց, սկսեց շատ խիստ տանջվել. դիմեց մորը.

«Իմ թանկագին մայր, բաղնիքը տաքացրու, թող որ գամ այնտեղ տաքանամ, որ ազատվեմ ինձ տանջող ցավերից»:

Մայրը բարկացավ և ասաց.

«Կորի՛ր աչքիցս, անամոթ աղջիկ, պատասխան տո՛ւր ինձ, ո՞ւմ հետ ես սիրաբանել. ամուրի էր նա, թե ամուսնացած մի կտրին՞»:

Աղջիկը, այն ջքնաղ գեղեցկուհին պատասխանեց.

«Ես ոչ ամուրիի հետ եմ սիրաբանել, ոչ էլ ամուսնացած մարդու հետ եմ հանդիպել. ես գնացի դաշտը, ուզեցի հապալասի պտուղ պոկել. պտուղը դրի բերանս, կարծես թե սովորական պտուղ էր, բայց երբ կույ տվի, տեսա, որ հղիացել եմ»:

Մայրը չհավատաց: Աղջիկը գնաց հոր մոտ, ասաց.

«Իմ սիրելի հայրիկ, ինձ մի տաք տեղ տուր որ մի քիչ հանգստանամ, որ ազատվեմ ինձ տանջող ցավերից»:

Հայրն այսպես խոսեց.

«Հեռացի՛ր աչքիցս, ով դու անառակ աղջիկ, գնա մտիր արջի որջը, գնա այնտեղ ծնիր, այնտեղ էլ մահդ գտիր»:

Այն չքնաղ աղջիկն իմաստուն խոսքերով պատասխանեց հորը.

«Ես բնավ էլ անառակ չեմ, և երբե՛ք էլ չեմ դառնա արհամարհելի: Ես մեծ և ազնվաբարո հերոս կծնեմ, այնպիսի հերոս, որ իր ուժով կգերազանցի ծերուկ-երգասաց Վեյենեմեյնենին»:

Խեղճ աղջիկն էլի թափառեց, որ մի տաք անկյուն գտնի. վերջը հանդիպեց այն փոքրիկ բարեճունդ աղջկան, որի անունն էր Պիլտտի:

«Ով դու փոքրիկ Պիլտտի, դու ամենից ազնիվը աղախինների մեջ, գնա գյուղը և Սառա գետի մոտ ապրողներից մեկին խնդրիր, որ ինձ տաք տեղ տա, որ ես ազատվեմ ինձ տանջող ցավերից»:

Պիլտտին հարցրեց.

«Բայց ո՞ւմ պիտի խնդրեմ, ո՞վ կարող է քեզ օգնության հասնել»:

Մարյատտան այն բարի աղջկանն ասաց.

«Այնտեղ ուր Սառա գետը թեքվում է, այնտեղ է ապրում Ռուօտուսը. հենց նրա տունն էլ գնա և խնդրիր, որ ինձ իր տունն ընդունի»:

Բարի աղջկան շատ խնդրելու կարիք չկար. անմիջապես շորերի փեշերն հավաքեց և ինչպես գոլորշի թռավ-հասավ Սառա գետի ափին գտնվող խրճիթը, Ռուօտուսի տունը:

Տանտերը, վուշից գործած շապիկը հագին, նստած էր սեղանի մոտ և ախորժակով ուտում-խմում էր. նա հպարտ և անբարտավան տոնով հարցրեց.

«Հե՛յ, անպիտան աղջիկ, այս որտեղի՞ց լույս ընկար. ի՞նչ ունես ասելու»:

Փոքրիկ Պիլտտին պատասխանեց.

«Ես եկել եմ խնդրելու, որ բաղնիքը տաքացնեք և մի խեղճ աղջկա օգնեք, որ նա ազատվի ցավերից»:

Այստեղ լնզլնգալեն վրա հասավ տանտիրոջ կինը և սկսեց հարց ու փորձ անել.

«Այ աղջիկ, ո՞ւմ համար ես ուզում բաղնիքը տաքացնենք, ո՞ւմ պիտի օգնենք»:

Պիլտտին պատասխանեց.

«Ես շատ եմ խնդրում, օգնեք Մարյատտային, որ նա ազատվի տանջող ցավերից»:

Ռուտոուսի կինը պատասխանեց.

«Ես անառակ աղջկա համար բաղնիք չունեմ. թող կորչի գնա նոճիների անտառը. այնտեղ մի գոմ կա, գոմում էլ ձի է կապած. անառակի տեղն այնտեղ է. ձին իր բերնի գոլորշիով տաքացնում է գոմը. թող այդ աղջիկը գնա և լողանա այդ գոլորշու մեջ»:

Պիլտտին, ինչքան ուժ կար ոտքերում, վազեց հասավ Մարյատտային ու ասաց.

«Ռուտոուսի կինը չի ուզում քեզ համար բաղնիք տաքացնել. չար պառավն ասաց, թող այդ անառակ աղջիկը անտառ գնա, այնտեղ այրուտում մի գոմ կա, գոմում էլ մի ձի է կապած... ձին իր գոլորշիով տաքացնում է գոմը, թող Մարյատտան գնա մտնի գոմը և լողանա ձիու բերանից բաց թողած գոլորշու մեջ»:

Մարյատտան այս որ լսեց, դառն լացեց և ասաց.

«Այ, հիմա ես գլուխս պիտի առնեմ և ինչպես մի վարձու աշխատող, ինչպես մի ստրկուհի մարդկանցից հեռու փախչեմ, գնամ անտառը, գուցե թե ցավերիցս ազատվեմ»:

Աղջիկը զգեստի փեշերը հավաքեց և, սաստկացող երկունքի ցավերից տանջվելով, գնաց անտառը, հասավ մի բլուրի և այսպես աղոթեց.

«Ով դու բարեգութ երկնավոր, օգնի՛ր ինձ, թշվառիս, որ ազատվեմ այս տանջանքներից, օգնի՛ր, որ այս ցավերից չմեռնեմ»:

Եվ մտավ գոմը. տեսավ մի ձի է կապված այնտեղ. աղջիկը խոսեց.

«Ով դու իմ սիրելի ձի, խորը շնչիր և արտաշնչիր, որպեսզի տաք գոլորշի բարձրանա, ինչպես լինում է բաղնիքում, տաքացրու ինձ, որ ես ազատվեմ իմ ցավերից, որ վերջապես հանգստանամ»:

Եվ այն բարի ձին տաք գոլորշի փչեց աղջկա վրա. ու գոմն այնպես տաքացավ, ինչպես բաղնիքն է տաքանում, երբ ջուրը եռում է:

Մարյատտան, այդ ամոթխած աղջիկը բարեհաջող ծնունդ ունեցավ և նորածին արու զավակին դրեց ձիու մտուրի մեջ՝ խոտերի վրա:

Հետո տղային լվաց, մաքրեց, բարուրեց ու սկսեց խնամել. ծիծ տվեց անուշիկ թռչնակին, ապա թևերին առած օրորեց: Քիչ անց երեխաան դրեց ծնկերին, իր գեաստով ծածկեց ու սկսեց գլուխը շոյել:

Եվ հանկարծ հրաշք կատարվեց. տղան չքացավ մոր գրկից:

Մայրատտան շատ տխրեց ու սկսեց փնտրել տղային:

Փնտրեց իր անուշիկ թռչնակին ամեն տեղ՝ ծառերի թավուտներում, թփերի մեջ, լեռներում, ժայռերի ձերպերում, բայց ոչ մի տեղ չգտավ:

Ուզեց ավելի հեռու գնալ, ուրիշ երկրներում փնտրել տղային:

Խոր գիշերն մի աստղ փայլեց երկնքում. աղջիկը նախ խոնարհ գլուխ տվեց, ապա հարցմունք արավ.

«Ով աստղիկ, աստծու ձեռքով ստեղծված, գիտե՞ս արդյոք, որտե՞ղ է հիմա իմ մանկիկը»:

Աստղը պատասխանեց.

«Եթե իմանայի էլ, չէի ասի. այդ քո տղան է արել, որ ես հավերժական ցրտում ու խավարի մեջ առկայծում եմ»:

Աղջիկն առաջ գնաց, հանդիպեց լուսնին. գլուխը խոնարհեց և հարցմունք արավ.

«Ով լուսին. աստծու ձեռքով ստեղծված, որտե՞ղ է իմ մանկիկը, ի՞նչ է պատահել նրան»:

Լուսինը պատասխանեց.

«Եթե իմանայի էլ չէի ասի. այդ քո տղան է արել, որ ես ցուրտ գիշերներին հսկողություն անեմ, իսկ ցերեկները քնեմ»:

Աղջիկն առաջ գնաց, հանդիպեց արևին. կրկին գլուխը խոնարհեց ու հարցրեց.

«Ով պայծառ արև, աստծու կամքով ստեղծված, գիտե՞ս արդյոք, որտեղ է հիմա իմ անուշիկ մանկիկը, ի՞նչ է պատահել նրան»:

Բարի, իմաստուն արևը պատասխանեց.

«Գիտեմ որտեղ է քո տղան, ով չքնաղ աղջիկ. այդ քո տղան է տնօրինել, որ ե՛ս, պայծառ ցերեկին, ոսկու նման շողշողալով, արծաթի նման փայլփլելով երկրի վրա պտույտ գամ: Այո՛, գիտեմ որտեղ է քո անուշիկ մանկիկը, նա մինչև գոտկատեղը իրվել է ճահճուտների մեջ»:

Մարյատտան գնաց փնտրեց, գտավ տղային, հանեց ճահճուտից, բերեց տուն և սկսեց խնամել: Տղան օրեցօր մեծանում էր: Սիրունիկ աշխույժ տղային ի՞նչ անուն դնել. Մարյատտան դեռ չէր որոշել. ինքը կանչում էր Ծաղիկ, ուրիշները՝ Անբան:

Ուզեցին տղային կնքել. կանչեցին Վիրականնասին. նա ասաց.

«Խեղճ տղան կախարդված է. ես նրան չեմ կնքի, մինչև տղային չքննեն, չստուգեն, թե նա ինչպե՞ս է լույս աշխարհ եկել»:

Իսկ ո՞վ կարող է քննել տղային. ո՞վ կարող է իմանալ, թե ամեն մեկն ինչպե՞ս է լույս աշխարհ գալիս. միայն ինքը՝ իմաստուն Վեյնեմեյները:

Եկավ ծերունի երգիչը, նայեց-գննեց տղային և երբ ամեն ինչ իմացավ, ասաց.

«Քանի որ տղան գտնվել է ճահճում և հապալասի պտուղից է աշխարհ եկել, ապա նրան պետք է թողնել դաշտում, ուր շատ պտուղներ կան, կամ էլ թե չէ տանել ճահիճը և մահակով գլուխը ջարդել»:

Հրաշքով լեզու առավ և այսպես խոսեց երկու շաբաթը դեռ չլրացած այն երեխան.

«Ով դու խենթավուն ծերուկ, հիմար է քո դատավճիռը. օրենքներին սխալ մեկնություն տվիր: Կար ժամանակ, երբ դու քո մոր որդիներին զոհեցիր, որ քո կյանքը փրկես, բայց քեզ ճահիճ չտարան և գլուխդ չջարդեցին: Իսկ ջահել օրերիդ, թե ինչ եղավ, մոռացե՞լ ես: Քո պատճառով այն դեռահաս աղջիկը, չքնաղ Այնոն սուզվեց ու խեղդվեց ծովի մռայլ ալիքներում և դարձյալ քեզ ոչ ոք չպատժեց»:

Լսեց այս ամենը ծերունի Վիրականնասը, երեխային մկրտեց և օրհնեց.

«Դու Կարելիայի թագավոր կդառնաս, կիշխես ամբողջ երկրին»:

Բարկացավ Վեյնեմեյները, գնաց ծովափ և վերջին անգամ այնտեղ բարձրաձայն ու սրտալի երգեց: Ապա նստեց նավակն ու հրաժեշտի այսպիսի խոսքեր ասաց.

«Կանցնի այս ժամանակը, կանցնեն օրեր, կբացվեն նոր ծագեր, բայց էլի իմ կարիքը կզգաք: Կսպասեք, կփնտրեք ինձ, որ ես ձեզ համար նոր հրաշք-ինքնադաց Մամպո կառուցեմ, նոր բազմալար Կանտելե սարքեմ, որ նորից լուսինը երկինք հանեմ, արևին ազատություն տամ: Չէ՞ որ առանց լուսնի և արևի այս աշխարհում երջանկությունը կչքանա»:

Եվ շնկշնկում է առագաստը ու նավը հավերժական երգչին տանում է հեռու և հեռու:

Ահա՛, վերջապես նա հասնում է այնտեղ, ուր միանում են երկիրն ու երկինքը:

Վեյնեմեյները հայրենիքին կտակեց Կանտելեն և իր երգերը:

Ավանդեց, որ Կալեվալայի դյուցազունների սիրագործությունները սերնդեսերունդ պատմեն:

Պատգամեց, որ հայրենի հերոսների հիշատակը միշտ անթառամ երգերով հավերժացնեն:

\* \* \*

Լրացավ և իմ՝ երգչիս ժամանակը: Այստեղ ընդհատում եմ երգս:  
Նույնիսկ ձին պետք է հանգստանա, եթե շատ ճամփա է անցել:  
Երկաթն անգամ կթուլանա, եթե ամռանը շատ խոտ է հնձել:  
Ջրեն անգամ կսպառվեն, եթե անընդհատ հոսում են:  
Խարույկը նույնիսկ կհանգչի, եթե ամբողջ գիշերը բոցավառվել է:

Այսպես էլ երգիչը կարող է հոգնել, եթե երգել է առավոտից մինչև երեկո,  
երեկոյից մինչև առավոտ:

Ես հաճախ լսել եմ այսպիսի խոսքեր.

«Ջրվեժն անգամ իր ահեղ թափի մեջ չի կարող բոլոր ջրերը թափել — սպառել.  
ճիշտ այդպես էլ երգիչը չի կարող իր իմացած բոլոր երգերը միանգամից երգել.  
ավելի լավ է ընդհատել և հանգստանալ»:

Ես ահա՛, ավարտում եմ երգս, բայց բոլոր այդ երգերն ինչպես կծիկ փայթաթում  
եմ և պահ եմ տալիս մեր հայրենի երգերի գանձարանին:

Ինչ կլիներ, եթե ես անընդհատ երգեի, երգեի անտառներում և դաշտերում  
ամեն, ամեն տեղ երգեի: Չէ՞ որ մայրս արդեն վախճանվել է և նա չի լսում իր  
զավակի երգը. ի՞նչ է, միայն սոսիների և նոճիների համա՛ր երգեմ:

Դեռ փոքր հասակում ես մոլորվեցի անտառում և ինչպես արտույտ երգում էի  
ամեն թփի տակ, ամեն պուրակում: Հետո խորթ մոր ձեռք ընկա. նա ինձ  
բանացրեց, վերջն ինձ քշեց Հյուսիսի այն ցուրտ աշխարհը, որ ես  
սառնամանիքներում ոչնչանամ:

Ես անքուն թռչունի պես շատ տեղեր թափառեցի, հանդիպեցի թե՛ ահեղ  
փոթորիկների, թե՛ սառնամանիքների, հաճախ էի իմ սև օրն անցկացնում լացով  
ու ողբով:

Հիմա պատահում է, այնպիսի մարդկանց եմ հանդիպում, որոնք ինձ կշտամբում  
են, իրենց անմիտ գոռոցներով իլացնում են իմ ձայնը. չարախոսում են, թե ես  
լավ չեմ երգում, իմ երգերը ոչ մեկին պետք չեն:

Բայց բարի մարդիկ, դուք շատ խիստ մի լինեք, տարօրինակ մի համարեք, որ ես  
անվարժ եմ երգում, ինչպես մանկիկը: Չէ՞ որ ես ոչ մի տեղ չեմ սովորել, խելոք

մարդկանց մոտ չեմ ուսուցանել: Ուրիշի խոսքերով չէ, որ երգում եմ, ոչ էլ օտարներից եմ փոխ առել իմ երգերը:

Ուրիշները գնացել, սովորել են, իսկ ես չէի կարող թողնել իմ հարազատ մորը, իմ հայրական օջախը: Ինչ որ սովորել եմ, միայն մեր տանն եմ սովորել: Երբ մայրս ճախարակն էր մանում՝ ճախարակի երգն էի լսում, երբ եղբայրս ռանդան կամ կացինն էր բանեցնում՝ կանցնի զրնգոցն էի լսում:

Լավ եմ երգել թե, վատ, ներողամիտ եղեք. միայն գիտեմ, որ իմ երգերով ես գալիքի երգիչներին նվիրական ավանդ եմ թողել: Ես էի, որ անտառի թավուտներում արահետ բացեցի և դեպի ապագան ճանապարհ ցույց տվի: Նրանք, ովքեր սիրում են երգը, ավելի լավ երգեր կերգեն: Գալիք սերունդը, ծաղկող-փթթող երիտասարդները բացված արահետով առաջ կրնա՞նան և հայրենի աշխարհի վեհությունը կհավերժացնեն նոր երգերով: